



Մ. ՄԻԽԱԹԱՐՅԱՆ

ՀՅՈՒՄՆԱԺԱՅԻ
ԱՄՍԱԳԻՐԸ







Մ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

5[Հանրապետություն]

Մ-79

թվ.

101(47.925)(09)

«ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»

ԱՄՍԱԳԻՐԸ



Տպագրվում է
Երևանի Պետական համալսարանի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի
որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
Ա. Մ. ԻՆՃԻԿՅԱՆ

A $\frac{\text{II}}{4816}$

МАРГО АМБАРЦУМОВНА МХИТАРЯН
ЖУРНАЛ „ЮСИСАПАЙЛ“

(На армянском языке)

Издательство Ереванского университета

Ереван — 1958



Q

Ա. Ռ. Ա. Չ. Ա. Բ. Ա. Ն.

«Հյուսիսսփայլ» ամսագիրը խոր հետք է թողել հայ հասարակական մտքի պատմության մեջ: Հանդիսանալով նոր զարգացող հայ բուրժուական դեմոկրատիայի օրգանը, այն ոչ միայն արտացոլել է հայ լուսավորիչների պայքարը ֆեոդալական հարաբերությունների և հայ իրականության մեջ իշխող կղերական մտայնության դեմ, այլև հայ ընթերցողին հաղորդակից է դարձրել ժամանակի առաջավոր դեմոկրատական գաղափարների հետ:

Ստ. Նազարյանի «Հյուսիսսփայլ»-ը իր բովանդակությամբ հանդիսացել է ուշագրավ երևույթ, որպես հանրագիտարանի բնույթի առաջին հայ ամսագիրը, որը մասսայականացնելով գիտության նվաճումները, փորձել է ժողովրդին դաստիարակել նոր ժամանակների ոգով: Այդ ամսագիրը ժամանակի գիտական մտքի բարձրությունից նոր խոսք է ասել արևելահայ զրական լեզվի մշակման, գեղարվեստական գրականության զարգացման, գրաքննադատական մտքի ըստեղծման, դպրոցական գործի կատարելագործման և բազմաթիվ այլ բնագավառներում:

«Հյուսիսսփայլ»-ի մասին սիրով ու ակնածանքով են արտահայտվել ինչպես 19-րդ դարի 60-ական թվականների, այնպես էլ հետագա շրջանի հայ առաջավոր գործիչները: Ղ. Աղայանը խոսելով ամսագրի մեծ ազդեցության մասին իր ժամանակի երիտասարդ սերնդի վրա, գրում է. «Մինչդեռ վարժապետները շարունակ կռիվ էին մղում «Հյուսիսս-

փայլ»-ի հայտնած ազատ մտքերի դեմ, նույն վարժապետներ-
րի աշակերտները անհազ սիրով «Հյուսիսափայլ» էին կար-
դում և նրա քարոզած ոգովը տողորվում: «...Իմ հիշած ժա-
մանակ Ներսիսյան դպրոցի նորավարտ աշակերտները բոլորն
էլ «Հյուսիսափայլ»-ին էին համակրում և սրտատրոփ սպա-
սում Կոմս Էմմանուելի գրվածներին»¹:

Իր նամակներից մեկում Բաֆֆին նշում է, թե վաղուց ի
վեր երազել է տեսնել մի այդպիսի ամսագրի հրատարակու-
թյուն, «որի մեջ ճշտությամբ պատկերանային հայոց ազգի
վերքը և նոցա բժշկության համար գործադրելի հնարները:
Տա աստված ընդ երկար տեւել «Հյուսիսափայլին» հօգուտ
մեր հայրենիքի»²:

Շիրվանզադեն հայտնում է, որ իր գրական ուսումնառու-
թյան տարիներին «առանձին ուշադրությամբ է կարդացել
ժամանակի հայ պարբերականները և «Հյուսիսափայլ» ամ-
սագիրը»:

Հովհաննես Թումանյանը «Հյուսիսափայլ»-ը համարում է
իր «պատանության հարազատներից մեկը», որի ազդեցու-
թյունը շատ մեծ է եղել հատկապես իր սկզբնական շրջանի
ստեղծագործության վրա: «Շատ սիրեցի էդ բաց կապույտ,
շողարձակ տետրակները և պատանեկան ոգևորությամբ կար-
դում էի,— գրում է նա: Առանձնապես դուր էին եկել Կոմս
Էմմանուելի «Հիշատակարանն» ու մյուս գրվածքները, Ս. Նա-
զարյանի խորհրդածություններն ու թարգմանությունները և
Սադաթյանի թարգմանած՝ Լերմոնտովի «Դեր»³:

Մեծ է եղել Մ. Նալբանդյանի երկերի, հատկապես «Հյու-
սիսափայլ»-ում տպագրված «Ազատն աստված» բանաստեղ-
ծության ազդեցությունը Հ. Հակոբյանի ստեղծագործության
վրա:

Սլ. Մյասնիկյանը (Մարտունի) խոսելով Նալբանդյանի
ուսուցչի զործունեության մասին, բարձր է գնահատել
«շանթահար» «Հյուսիսափայլ»-ին Նալբանդյանի աշխատակ-

1 Ղ. Աղայան, Երկեր, հ. 3, էջ 198:

2 «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 397:

3 «Թումանյանը քննադատ», էջ 345:

ցիլու շրջանը, երբ «նրա էջերում արժարժում էր Նալբանդ-
յանը մի շարք գաղափարներ, որոնք գալիս էին խորտակելու
կղերականության և խավարամտության, կամ ինչպես ինքն
էր ասում, օրսկուրանտների կիսախարխուլ-ամբոցները»¹։

Վ. Ի. Լենինը նշում է, որ 60-ական թվականների լուսա-
վորիչներն աչքի էին ընկնում «հասարակական տվյալ զար-
գացման պրոգրեսիվության իրենց ջերմ հավատով, ամբող-
ջովին և բացառապես հնության մնացորդների դեմ ուղղված
իրենց անողոք, թշնամությամբ, իրենց համոզմունքով, թե
բավական է միայն մաքուր ավելի անցողիկ մնացորդները, և գոր-
ծերը լավից էլ լավ կգնան...»²։

60-ական թվականների մտավոր վերածնության ժամա-
նակաշրջանում հայ լուսավորիչներին նույնպես զբաղեցնում
էին հիշյալ խնդիրները։ Նաղարյանը հանդես էր գալիս որ-
պես ժամանակի լուսավորիչների բուրժուական թևի ներկա-
յացուցիչը։

Իր ամսագիրը նա ծառայեցնում էր միջնադարյան կղերա-
ֆեոդալական գաղափարախոսության դեմ պայքարելու գոր-
ծին և մտահոգված լինելով հայ ազգի լուսավորության ու
դաստիարակության հարցերով, վերջիններս սերտորեն կա-
պում էր ուսման իրականության և ուսանական կուլտուրայի հետ։
Որ Նաղարյանը ուսանական օրինակացիայի գործիչ էր, այդ է
վկայում ոչ միայն «Հյուսիսափայլ»-ի հրատարակության
փաստը, այլև նրա հրատարակախոսական յուրաքանչյուր
հոդվածը։ Բայց, իհարկե, Նաղարյանը ուսանական ազգային
կուլտուրան ընկալում էր ընդհանրապես, առանց իրարից
զանազանելու այդ կուլտուրայի երկու, միմյանց հակադիր
թևերը։ Նաղարյանը սահմանափակվելով չափավոր ռեֆորմ-
ների պահանջով, մերժում էր Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն
աշխարհայացքը, և այդ բնական էր։

Սակայն, այս ամենով հանդերձ, Ստեփանոս Նաղարյանն
իր հյուսիսափայլյան շրջանի գործունեությամբ հսկայական

1 Ս. Լ. Մարտունի, Միքայել Նալբանդյան, Մոսկվա, 1919, էջ 7։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 2, էջ 669—670։

դեր է կատարել հայ ժողովրդի մտավոր վերածնության գործում:

«Հյուսիսափայլ» ամսագիրը մինչ այժմ չի դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Բանասերներն անցյալում այդ ամսագրին անդրադարձել են այս կամ այն առիթով: Ուշադրության արժանի է միայն Լեոյի «Ստեփանոս Նաղարյանց» ծավալուն մենագրությունը, որի երկրորդ հատորը գրեթե ամբողջովին նվիրված է Նաղարյանի հյուսիսափայլյան շրջանի գործունեությանը: Սակայն, փաստերով հարուստ այդ աշխատության մեջ Լեոն զարգացնում է այն սխալ տեսակետը, թե Նալբանդյանը և Նաղարյանը հանդիսանում էին միևնույն «ազատամիտ» ուղղության ներկայացուցիչները: «Սկզբունքները, դավանությունները, իհարկե, միևնույնն էին,— գրում է նա,— խմբագրի և ղլխավոր աշխատակցի մեջ ոչինչ դադամիարական անհամաձայնություն չէր երևում: Այն, ինչ Նաղարյանցը հայտնում էր իր լուրջ ու ծանրախոհ, բարձր ոճով և հաճախ կարիքնետային ոգով դրած հոգվածներում, Նալբանդյանցը ժողովրդականացնում էր իր թեթև ու վառվռուն գրչով»¹:

Սովետահայ գիտնականները ևս «Հյուսիսափայլ»-ին անդրադարձել են առանձին առիթներով, հիմնականում ձեռնդնահատելով Նաղարյանի և Նալբանդյանի գործունեությունը:

«Հյուսիսափայլ» ամսագիրը լուրջ քննարկման է ենթարկվել պատմական գիտությունների դոկտոր Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության առաջին հատորում: Այս աշխատության մեջ տրված է պատմական ժամանակաշրջանի խոր և գիտական վերլուծությունը, առաջին անգամ հանդամանորեն բնութագրված են 19-րդ դարի 60-ական թվականների հայ քաղաքական-հասարակական հոսանքները և նրանց օրգանները, ինչպես և քննարկված են «Հյուսիսափայլ»-ի հիմնադրման հետ կապված և այդ ամսագրում արժարժված առավել կարևոր հարցերը: «Նալբանդյանը և նրա ժամանակը» ուսումնասիրության շնորհիվ ոչ միայն իրենց լուծումն են գտնում նալբանդյանագիտության

¹ Լեոյ, Ստեփանոս Նաղարյանց, հ. 2, էջ 55—56:

բնագավառի մի շարք պրոբլեմներ, այլև սկիզբ է դրվում հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատի անվան հետ սեր:ոորեն կապված «Հյուսիսսփայլ»-ի ուսումնասիրությունը:

Ձեռնամուկ լինելով «Հյուսիսսփայլ» ամսագրի ուսումնասիրության գործին, մենք նպատակադրվել ենք, մեր ուժերը ներածին չափով, արժեքավորել այդ ամսագիրը և ցույց տալ նրա կատարած դերը հայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ:

Միանգամայն հասկանալի է, որ որևէ պարբերականի մասին գրված մենագրությունը չի կարող լինել ամբողջական, առանց այդ օրգանի արխիվի և համապատասխան մեմուարային գրականության ուսումնասիրության: Դժբախտաբար «Հյուսիսսփայլ»-ի արխիվը չի պահպանվել, իսկ հայ գրականությունն աղքատ է մեմուարային երկերով: «Հյուսիսսփայլ»-ի աշխատակից Գ. Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերունի) «Ստ. Նազարյանցի շուրջը» հոշերը չնայած արժեքավոր, բայց թերի են, իսկ Դ. Աղայանը և Պ. Պոռչյանն իրենց հուշերում միայն հարեանցիորեն են անդրադառնում «Հյուսիսսփայլ»-ին:

Մեր աշխատանքի ընթացքում օգտագործել ենք 19-րդ դարի հայ պարբերական մամուլը, ինչպես և 60-ական թվականների ռուսական պարբերականները, Լենինգրադի և Թբիլիսիի Պետական պատմական արխիվների, ՀՍՍՌ Գրականության ու արվեստի թանգարանի և ՀՍՍՌ Պետական Մատենադարանի արխիվային փաստաթղթերը:

«ՀՅՈՒՄՆԱՓԱՅԼ»-Ի ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայ պարբերական մամուլն սկզբնավորվել է 18-րդ դարի վերջին: Առաջին հայ պարբերականը՝ «Ազդարար»-ը հիմնադրել է Հարություն քահանա Շմալոնյանը, Հնդկաստանի Մադրաս քաղաքում, 1794 թվականին: Հրատարակվելով հեռավոր հնդկահայ գաղութում, «Ազդարար»-ին չհաջողվեց կապվել լայն մասսաների հետ: Անգլիական ամսագրերի օրինակով Շմալոնյանը գերազանցապես տպագրում էր վաճառականներին հետաքրքրող նորություններ ու հայտարարություններ, բանաստեղծություններ և թարգմանական երկեր, որոնց նպատակն էր սեր արթնացնել ընթերցողների մեջ դեպի աշխատանքը, ուսումնի ու կրթությանը: Հ. Շմալոնյանին հաջողվում է իր թերթի միջոցով կապ հաստատել նաև Արևելյան Հայաստանի գործիչների հետ և տպագրել նրանց թղթ-թակցությունները (Հովսեփ արքեպիսկոպոսի օրհնության թղթերն ու նամակները): Հետագայում հրատարակված հայ պարբերականները (Ղ. Ինճիճյանի «Տարեգրություն», «Եղանակ Բյուզանդյան», «Հիշատակարան») նույնպես տարածվել են լոկ հայկական գաղութներում և չեն կարողացել դառնալ ողջ հայ ժողովրդի օրգանը: Իրենից որոշ հետաքրքրություն է ներկայացնում Վենետիկում 1812—1816 թթ. հրատարակվող «Դիտակ Բյուզանդյան» պարբերականը, որն արժարժում էր Արշարունյաց ընկերության ազգասիրական, լուսավորական գաղափարները: Հայ ազգին ուղղված մի հորդորակում թերթը ժողովրդից պահանջում էր արթնանալ՝ ծանոթանալու համար

ժամանակի կուլտուրային, գիտությունը, տեսնել, թե «ինչ հավեսով ելլեր երկինքին ընթացքը կզննեն. ի՞նչ ջանքով երկրիս վրայի խիստ մանտրը կենդանիները կքննեն. ի՞նչ դանազան բաներ միատեղ խառնելով՝ նոր բան մը կգոյացուցանեն»¹, և այլն: Որպես առաջին հայ քաղաքական օրդան, «Դիտակ»-ը կարողացել է գիպուկ արտահայտություններով ծաղրել Նապոլեոնի նվաճողական քաղաքականությունը, ֆրանսիական մամուլում իշխող կեղծիքը և այլն:

Արևմտահայ աշխարհաբարով հրատարակվող այդ թերթը նույնպես կարճ կյանք է ունենում և չի կարողանում կապվել ժողովրդի հետ:

Վենետիկում 1843 թվականից հրատարակվող Մխիթարյան միաբանություն օրդան «Բաղմավեսը» ամսագիրը միանգամայն հեռու է մնում հայ ժողովրդին հուզող խնդիրներից, հայ իրականությունից և շարունակ պատվում է նեղ բանասիրական, գիտական հարցերի ոլորտներում: Իր գոյությունը երկարատև ընթացքում նա չի արձագանքում հայ իրականության մեջ ծավալվող լուսավորական շարժմանը, դրականության վերածնությանը, և շարունակում է կառչած մնալ կղերական հին սկզբունքներին, հայ ժողովրդի պատմության հարցերին տալով կրոնական մեկնաբանություն, դրականության մեջ ջատագույնելով կլասիցիզմը², պրոպագանդելով դրաբարի հավերժականությունը: Հայկական կենտրոնների հետ չկարողացավ կապվել և Մեսրոպ Թաղիադյանի արժեքավոր հրատարակությունը («Ազգասեր» և ապա «Ազգասեր Արարատյան»), որ լույս էր տեսնում Հնդկաստանում: 1840-ից Զմյուռնիայում հրատարակվում է «Արշալույս Արարատյան» լրագիրը Ղ. Պաղաղարյանի խմբագրությամբ, որը 50—60-ական թվականներին որոշակիորեն ռեակցիոն գիրք է գրավում գեմոկրատական ուղղության նկատմամբ:

¹ «Դիտակ Բյուզանդյան», 1813, էջ 7:

² 1858 թվականին ոչ մի խոսքով չարձագանքելով Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հրատարակությունը, «Բաղմավեսը»-ը մեծ ուշադրություն է դարձնում նույն թվականին հրատարակված Ս. Բաղրատունու «Հայկ դյուցադհ» ստեղծագործության վրա: «Դրանով մեզի հայ ազգիս ալ հառաջագիմություն պայծառ արշալույսը ծաղեր է», — խանդաղատանքով գրում է «Բաղմավեսը»-ը 1858 թվականին (էջ 183):

Մ. Նալբանդյանը ձեռքի տակ լուրջ փաստեր ունենալով, իր բարեկամներին խորհուրդ էր տալիս հեռու մնալ Ղ. Պալ-դադարյանից, որը, «իբրև թուրքական լրտես, յուրաքանչյուր ամիս մատնություններ է անում, ի պաշտոնե», իսկ նրա խմբադրած թերթը Նալբանդյանն անվանում է «մի անարգ թերթ», որը պատիվ չի կարող բերել հայ մամուլին¹։ Վերջինիս ամենադճաճատեղի արժանիքը համարելով նրա անդավաճան ծառայությունը ժողովրդական լայն մասսաներին, Նալբանդյանը նշավալիում է թուրքական և անգլիական կառավարություններին վաճառված այդ թերթը։

Կովկասահայ իրականության մեջ առաջին հայ լրագիրը՝ «Կովկասը» հիմնադրվում է 1846 թվականին, որ ոչ այլ ինչ էր, եթե ոչ Թիֆլիսի փոխարքայության պաշտոնաթերթ՝ «Кавказ» լրագրի հայերեն կրկնակը։ «Կովկաս»-ը խմբադրում էին Հ. Կարենյանը, Մ. Պատկանյանը և Հ. Արղանյանը։ Լրագրի նյութերի խիստ պաշտոնական բնույթը, այլև խրթին դրաբար լեզուն սահմանափակում էին նրա ազդեցության շրջանակը։ Կովկասահայ աշխարհաբար առաջին պարբերաթերթը Գաբրիել քահանա Պատկանյանի «Արարատ» շաբաթաթերթն է, որ հրատարակվում է Թիֆլիսում 1850—1851 թթ. և դադարում է լուսնից նշանակալից դեր կատարելու։

19-րդ դարի առաջին կեսի հայ պարբերական մամուլը զարգանում է գերազանցապես արևմտահայ իրականության մեջ և հնդկահայ դադութում։ Արեւելյան Հայաստանում հայ մամուլն իր զարգացման հիմնական փուլի մեջ է մանում 1850-ական թվականների վերջին, որպես բուրժուական հարաբերությունների զարգացման արտահայտություններից մեկը։

1858 թվականին Մոսկվայում սկսում է հրատարակվել «Հյուսիսատիպը» ամսագիրը, իրենով նշանավորելով հայ կուլտուրայի և առաջավոր մտքի զարթոնքը։ Այդ նույն թվականին հրատարակվում է Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը։ 1859 թ. հունվարին հայ ուսանող երիտասարդության ուժերով Մոսկվայում, և սալա Թիֆլիսում բեմադրվում են

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 4, էջ 226—227։

արեւելահայ գրական լեզվով գրված առաջին թատերգութիւնները: Այս իրադարձութիւններն, անկասկած, սլաւոհական երևույթներ չէին և ներդաշնակում էին սլաւոմական այն ժամանակաշրջանի ոգուն, որը ուսւ հասարակական մտքի սլաւոմութեան մեջ հայտնի է «վաթսունական թվականներ» անունով:

1848 թվականի ֆրանսիական ռեւոլյուցիայից անմիջապէս հետո Նիկողայ առաջինը Ռուսաստանում ռեւոլյուցիայի հնարավորութիւնը կանխելու նպատակով ձեռնարկում է մի շարք ռեակցիոն միջոցառումներ, որոնք ուսւ իրականութեան մեջ սկիզբ են դնում առանց այն էլ անադատ մտավոր կյանքի լճացմանը, կամ, այսպէս կոչված, «մուսլ յոթնամյակի դարաշրջանին»: Մոլեգնող «գրաքննական տեղորի» հետեանքով ուսւ առաջավոր հրապարակախոսներն ստիպված էին զիջել իրենց նախկին դիրքերը. մամուլը ենթարկվելով գրաքննական հետապնդումների, դժգոհանում է: Իր բնույթը փոխում է նույնիսկ այնպիսի մի սլարբերական, ինչպիսին էր Նեկրասովի և Պանասի «Սովրեմեննիկ»-ը, որը 1846—47 թվականներին Բելինսկու աշխատակցութեամբ հասել էր գաղափարական անօրինակ բարձրութեան: Բազմաթիւ թերթեր և ամսագրեր չգիմանալով ստեղծված վիճակին, դադարում են լուստեսնել:

Ռուսաստանի տնտեսական կյանքում շարունակում էին իշխել հին, ֆեոդալական-ճորտատիրական հարաբերութիւնները, որոնք ակնհայտօրէն արգելակում էին տնտեսական կյանքի առաջընթացը: Զարգացող բուրժուական հարաբերութիւնները բախվում էին ճգնաժամի մեջ գտնվող ժամանակի սոցիալ-տնտեսական սլայմանների հետ:

Արտագրութիւնը չէր կարող անարգել կերպով զարգանալ, իսկ գյուղն անդոր էր դառնալու սպառման շուկա: Վ. Ի. Լենինը նշում է, որ տնտեսական զարգացման ուժը Ռուսաստանին քաշում էր դեպի կապիտալիզմի ուղին¹: Գնալով անմարդկային էր դառնում ճորտ գյուղացիութեան անողորմ շահագործումը, որը տեղիք էր տալիս գյուղացիական հուղումների ծավալմանը:

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Ներկեր, հ. 17, էջ 131:

Միայն այն բանից հետո, երբ Ռուսաստանը խայտառակ պարտութիւն է կրում Ղրիմի պատերազմում, բոլորի համար պարզ է դառնում, որ պահպանել նախկին տնտեսածէր, այլևս հնարավոր չէ: Համողլելով ռեֆորմի անցկացման անհրաժեշտութեան մեջ, Ալեքսանդր երկրորդը 1857 թվականին հրապարակում է իր որոշումը՝ գյուղացիութեան դրութեան բարձրման հարցով զբաղվելու մասին: Նա առաջարկում է Ռուսաստանի տարբեր նահանգների աղնվականութեանը՝ համապատասխան միջոցառումներ մշակել այդ հարցի կապակցութեամբ:

Գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման առթիվ սկսում են հրատարակվել «Экономический указатель», «Сельское благоустройство» և մի շարք այլ պարբերականներ:

Ռեֆորմի նախապատրաստման շրջանում որոշ աշխուժացում է նկատվում նաև մտավոր կյանքում և առավելապես մամուլի ասպարեզում: Լիբերալ տրամադրութեւններն իրենց ազդեցութեւնն են դործում գրաքննութեան գործակերպի վրա: Չնայած այդ շրջանում դեռևս կիրառութեան մեջ էր գտնվում 1826 թվականին ընդունված՝ Նիկոլայ առաջինի գրաքննութեան «չուգունե կանոնադրութեւնը», բայց գրաքննութեւնը մի փոքր մեղմանում է: Ամսագրերը և թերթերը հնարավորութեւն են ստանում խոսելու քաղաքական անցուդարձի, պատերազմական լուրերի մասին, խմբագիրներն իրավունք են ստանում բանալու քաղաքական տեսութեան, ներքին տեսութեան, հասարակական կյանքի և այլ բաժիններ: Մեկը մյուսի հետեից սկսում են հրատարակվել մի շարք նոր օրգաններ: Պատմական գիտութեւնների դոկտոր Բ. Պ. Կոզմինը հետաքրքրական թվեր է բերում այդ ժամանակաշրջանի մամուլի աճի վերաբերյալ. այսպես, եթէ 1851-ից մինչև 1855 թ. Ռուսաստանում թույլատրվել էր միայն 31 նոր պարբերականների հրատարակութեւնը (որոնցից ոչ մեկը չունէր գրական կամ հասարակական բնույթ), ապա 1856—1860 թթ. հրատարակվում են 147 նոր պարբերականներ,

որոնց թվում կային բազմաթիվ գրական, քաղաքական և հասարակական բնույթի հրատարակություններ¹:

Վաթսուկական թվականների ուսական ամսագրերը քըն-նարկում են առաջիկա ռեֆորմի հետ կապված խնդիրները, բնդ որում ռեուլուցիոն-դեմոկրատական օրդան «Սուլբեմեն-նիկ»-ն իր վրա է առնում գյուղացիության շահերի պաշտպա-նության խնդիրը:

Ինչպես Ալեքսանդր երկրորդը, այնպես էլ նրա ցուցումով կազմակերպված աղնվականական-կալվածատիրական հանձ-նաժողովները մտահոգված էին լոկ այն բանով, որ կալվա-ծատերերի համար ալևլի ձեռնտու լինի գյուղացիական ռե-ֆորմը: Թագավորն իր ելույթներում հայտարարում էր, թե ինքը կանի ամեն հնարավորը՝ այդ հարցը՝ մաքսիմալ չափով նրանց օգտին լուծելու համար: Ռեֆորմի նախապատրաստ-ման կապակցությամբ ուս իրականության մեջ միմյանց են բախվում հասարակական-քաղաքական երեք խոշոր հոսանք-ներ՝ պահպանողականները, լիբերալները և ռեուլուցիոն-դե-մոկրատները: Պահպանողականները և լիբերալներն այդ հարցերն արժարծելով ձեականորեն տարբեր դիրքերից, բստ էության հանգում էին միևնույն նպատակին: Նրանցից և՛ մեկը, և՛ մյուսը ռեուլուցիայի հեռանկարից ահարեկված ձգտում էր Ռուսաստանը ամեն կերպ հեռու պահել ռեուլու-ցիոն պոթիումից: Եթե լիբերալներն այդ նպատակով աղա-վինում էին ռեֆորմին, համոզված լինելով, թե հակառակ դեպքում ռեուլուցիան անխուսափելի կդառնա, աղա պահ-պանողականները հենց ռեֆորմի մեջ էին տեսնում ռեուլու-ցիայի վտանգը: Վ. Ի. Լենինը բնութագրելով այդ հոսանքնե-րի պայքարը, գրում է.

«Ճորտատերերի ու լիբերալների տիրահուշակ պայքարը, որն այնքան ուուցրել ու գունազարդել են մեր լիբերալ և լի-բերալ-նարոդնիկական պատմաբանները, պայքար էր տիրա-պետող դասակարգերի ներսում, ալևլի շատ՝ կալվածատե-րերի ներսում, պայքար, որը մղվում էր բացառապես զիջում-

¹ Б. П. Козьмин, Журнально-публицистическая деятельность А. И. Герцена, Москва, 1952, էջ 9:

Յեւրի շափի և ձկնի համար: Լիբերալները նույնպես, ինչպես և ճորտատերերը, կանգնած էին սեփականության և կալվածատերերի իշխանության ճանաչման հողի վրա, զայրույթով դատապարտելով ամեն մի ռեուլյուցիոն միտք՝ այդ սեփականության ոչնչացման մասին, այդ իշխանության լիակատար տապալման մասին»¹:

Հարցի լուծմանը բոլորովին այլ գիտքերից էր մոտենում ռեուլյուցիոն-դեմոկրատական ուղղությունը, որի ամենախոշոր ներկայացուցիչներն էին Ն. Գ. Չերնիշևսկին և Ն. Ա. Դոբրոլյուբովը: Նրանք ռեուլյուցիայի էին կոչում Ռուսաստանը՝ համոզված լինելով, որ միայն այդ կերպ հնարավոր է ձեռք բերել գյուղացիության լիակատար ազատությունը:

Քննադատելով գործող ազնվականական կոմիտեների անբավարար և միակողմանի աշխատանքը, Չերնիշևսկին ռեֆորմի նախօրյակին գրած «Նյութեր գյուղացիական հարցի լուծման մասին» իր ծրագրային հոդվածում նշում է.

«Նրանք բացառապես մեկ կողմի ներկայացուցիչներն են հանդիսանում, որի շահերին է կաշույն գյուղացիական հարցը: Ավելորդ կլինի ասացուցել, որ բավարար լուծման համար հարկավոր է ավելի մոտից իմանալ մյուս կողմի, հենց իրենց՝ գյուղացիության մտքերն ու շահերը»²:

Չերնիշևսկին համոզված լինելով այն բանում, որ ռեֆորմը ոչինչ չի տալու ճորտ գյուղացիությանը, իր բազմաթիվ հոդվածներով և ռեուլյուցիոն ընդհատակյա գործունեությամբ հետևողականորեն պաշտպանում էր վերջինիս շահերը, նախապատրաստելով նրա ռեուլյուցիոն ելույթը ցարական կառավարության դեմ:

1861 թվականի փետրվարի 15-ին հրապարակվում է «գյուղացիական ռեֆորմը», որին գյուղացիությունը պատասխանում է օրավուր ծավալվող հուզումներով:

Բնութագրելով այդ ռեֆորմը, Վ. Ի. Լենինը գրում է. «Տխրահուշակ «ազատագրումը» գյուղացիների ամենաանխիղճ թալանում էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղ-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 17, էջ 132:

2 Н. Г. Чернышевский, ПСС, т. 5, էջ 713:

րանք էր նրանց նկատմամբ»¹։ Այդ ռեֆորմի «ողջ անձկությունը, ողջ ողորմելիությունը, նրա ողջ ճորտատիրական բնույթը»² հասակ կերպով էին դիտակցում ժամանակի ռեվոլյուցիոներները՝ Չերնիշևսկու գլխավորությամբ։

Բացահայտ կերպով հնարավորություն չունենալով խոսելու այդ մասին, «Սովրեճեննիկ» ամսագիրը լռությամբ է պատասխանում ռեֆորմին։ Այդ շրջանում ռեվոլյուցիոն-դեմոկրատ Կուրոչկինի «Ժոկրա» երգիծական հանդեսը զետեղում է մի ծաղրանկար, որը պատկերում էր թևերը մեջքին կապած մի գյուղացու։ Չնչին չափով թուլացնելով նրա ձեռքերի կապանքները, ուղեկցող շինովնիկը հարցնում է.

— Հիմա, համենայն դեպս, դուք ձեզ ազատ եք զգում։

— Ոչ, հարազատս, չեմ զգում,— պատասխանում է գյուղացին։

— Դե, այդ արդեն քմահաճություն է, միշտ դժգոհ լինել ամեն ինչից³։

Երկրում գնալով ամեն երկու գյուղացիական հուլումները։ Եթե 1855—1861 թվականներին տեղի են ունենում 474 գյուղացիական զինված ելույթներ, ապա ռեֆորմից հետո, միայն 1861 թվականին, դրանց թիվը հասնում է 1200-ի։ Յարակառ կառավարությունն ամենադաժան միջոցներ է ձեռնարկում՝ ապստամբ գյուղացիության դեմ, այսպես, 1861 թվականին սպանվում են 210 հոգի, ձերբակալվում 1712 հոգի, պատրվում՝ 4777 և արքայրվում՝ 220 հոգի⁴։ 1859—1861 թվականներին սրվող դասակարգային պայքարը երկրում ստեղծում է ռեվոլյուցիոն սիտուացիա, որը գլխավորում էին ռեվոլյուցիոն-դեմոկրատները։

Ի պատասխան ցարական ողորմելի ռեֆորմին, Ն. Գ. Չերնիշևսկին հանդես է գալիս ռեվոլյուցիոն կոչերով, որոնք ապագրվում են անլեզալ ձևով։ Իր «Ճորտ գյուղացիությանը նրանց բարին կամեցողներից ողջունք» հռչակավոր կոչի մեջ

1 Վ. Ի. Լեւիտին, Երկեր, հ. 17, էջ 130։

2 Նույն տեղը, էջ 132։

3 «Сборник материалов к изучению истории русской журналистики», Вып. II, էջ 152—153։

4 «Из истории русской философии», Москва, 1952, էջ 438։

նա գյուղացիութեանը հասկանալի լեզվով և նրանց ոճով մեկնաբանում է ռեֆորմի իմաստը, ցույց տալով, որ չնայած անունների փոփոխութեան, իրերի դրութիւնը մնացել է անփոփոխ։

Այդ մարտական ռեուլյուցիոն կոչով Չերնիշևսկին գյուղացիութեանը և ղինվորներին նախապատրաստում է առաջիկա ռեուլյուցիոն ելույթի համար։ Երբ ամեն ինչ նախապատրաստված կլինի, — գրում է նա, — «այն ժամանակ կուղարկենք այսպիսի հայտարարութիւն, թե ժամանակն է, ուսմարդիկ, բարի գործն սկսելու... և այն ժամանակ հեշտ կլինի ազատութիւն ձեռք բերել»¹։ Հետագայում, Պետրոպոլսկոյան ամբողջից դրած իր «Նամակներ առանց հասցեի» հոդվածաշարում, Չերնիշևսկին, տալով ռեֆորմի լիարժեք գնահատականը, գրում է, թե գյուղացիների և կալվածատերերի միջև եղած նախկին հարաբերութիւնները փոփոխվել են միայն աննշան չափով, որովհետև ռեֆորմի հեղինակների նպատակն էր, որքան հնարավոր է, քիչ ղոհաբերութիւն պահանջել ազնվականութիւնից և բաւարարել կալվածատերերին։

Այս նամակաշարում ևս Չերնիշևսկին ազդարարում է մոտակա գյուղացիական ռեուլյուցիայի հնարավորութիւնը. «Բոլոր անձինք և հասարակական իւսկերը, — գրում է նա, — որոնք կտրված են ժողովրդից, — դողում են այդ վերահաս հանգուցալուծումից»²։ Ռեֆորմի ամբողջական գնահատականը Չերնիշևսկին տվել է աքսորավայրում գրած «Պրոլոգ» ինքնակենսագրական վեպում, որից մեջբերումներ է կատարել Վ. Ի. Լենինը։

Սակայն, 1861 թվականին ծավալվող ռեուլյուցիոն իրադրութիւնը չի վերաճում գյուղացիական ռեուլյուցիայի՝ Ռուսաստանում պրոլետարիատի բացակայութեան պատճառով։

1862 թվականին ցարական կառավարութիւնն անցնում է հակահարձակման, ձերբակալելով ռեուլյուցիայի պարագլուխներին։ Գյուղացիական անկազմակերպ հուզումները ճնշվում են, ընդհատակյա ռեուլյուցիոն կազմակերպութիւնները հա-

¹ Н. Г. Чернышевский, ПСС, т. 7, էջ 824;

² Նույն տեղը, т. 10, էջ 92;

լածւում և կաղմալուծւում: Գրաքննությունը կրկին սկսում է մոլեզնել և ուսւ մամուլն առնւում է խիստ հսկողության տակ: Վաթսունական թվականների շափավոր մեղմությունները վերացւում են: Ալեքսանդր երկրորդը զրահւում է իր իսկական ռեալիտն դեմքը՝ արշան մեջ խեղդելով 1863 թվականի լեհական ապստամբությունը: Ռեալիտան ուսւ իրականության մեջ առանձնապէս թանձրանում է 1866 թվականին՝ Ալեքսանդր երկրորդի դեմ կատարւած մահափորձից հետո: Այդ թվականին փակւում են ուսւ առաջավոր սլաքերեականներ՝ «Սովրեմեննիկ»-ը և «Ռուսսկոյե սլովո»-ն:

Ռուսաստանում կատարւած բուրժուական ռեֆորմի հետեանքով արագ թափով զարգանում են կապիտալիստական հարաբերությունները: Երկիրը սկսում է վերածվել բուրժուական միապետության:

Նոր, բուրժուական հարաբերություններն իրենց արտահայտությունն են գտնում նաև հայ իրականության մեջ և հայ մամուլում:

19-րդ դարի առաջին քառորդի վերջին Հայաստանի միացումը Ռուսաստանին սլատմական խոշոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում: Իր բախտը կապելով առավել կուտուրական և քաղաքակիրթ մի ժողովրդի հետ, հայ ժողովուրդն ստանում էր ոչ միայն անձի անձեռնմխելիության իրավունք և գույքի ապահովություն, այլև ուսական առաջավոր կուտուրացի հետ հաղորդակցւելու լայն հնարավորություններ:

Այս ամենով հանդերձ, ցարական կառավարությունը հայերի և կովկասյան մյուս ժողովուրդների նկատմամբ կիրառում էր գաղութային քաղաքականություն, սահմանափակելով նրանց ինքնուրույնությունը և իրավունքները:

60-ական թվականներին, կապիտալիզմի զարգացման էպոխայում, հայ ժողովուրդն սկսում է ձևավորվել որպէս ազգ: Այդ երևույթն արտացոլւում է ժամանակի գրականության մեջ և մամուլում:

Առանձնապէս լուրջ սլայքար է սկսւում աշխարհարար գրական լեզվի և աշխարհիկ գրականության ստեղծման հա-

մար, ընդդեմ ճորտատիրական-ֆեոդալական հարաբերությունների, կղերական մտայնության և մտավոր լճացման: Ահա թե ինչպես է բնութագրում հայ իրականության մեջ սկզբնավորված այս շարժումը պատմական գիտությունների դոկտոր Ա. Հովհաննիսյանը. «Գրական-իդեական զարթոնքի ու հեղաբեկման մի ժամանակամիջոց էր այս, որի համար ցուցանշական է լուսավորության շրջանի և լուսավորական շարժման հատուկ ձգտումը դեպի գիտության և բանականության հաղթանակը՝ կրոնի և տրագիցիայի հանդեպ, հավատը դեպի հասարակական պրոգրեսը, պայքարը ազգային կյանքի ընդհանուր բարեկամման ու ազգային-քաղաքական ինքնորոշման համար: Եռանդուն պայքարի մի շրջան էր այս, երբ սրվում էին հատկապես կղերա-ֆեոդալական իշխանության, վանական գիտության, լեալֆայական ուսուցման ու գրաբարալեզու գրականության տիրապետությունը լիկվիդացնելու և նոր հասունացող ազգային հասարակայնության մտավոր ուժերին ու կուլտուրական ջանքերին ասպարեզ տալու խնդիրները: Ըստ էության, կղերա-ֆեոդալական ուժերի դեմ մղվող պայքարը, ինչպես և հայ լեզվի ու գրականության, դպրոցի ու լուսավորության ժողովրդականացման համար արվող ձգտումները հանգում էին բուրժուական-դեմոկրատական պահանջների առաջադրման ու կիրարկման»¹:

Այս պայքարի բովում հայ իրականության մեջ միմյանց են բախվում կղերա-ֆեոդալական, ազգային-պահպանողական, լիբերալ-բուրժուական և ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքները:

Կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչներն էին՝ Մ. Մսերյանը, Հ. Չեբրեղյանը, Ա. Արարատյանը, Ա. Թահիրյանը, Ս. Մանդինյանը, Ս. Զալալյանը և ուրիշներ:

Ազգային պահպանողական հոսանքի ներկայացուցիչներն էին՝ Մ. Աղաբեկյանը, Գ. Մուրադյանը, Պ. Շանշյանը և այլք:

Կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչները հանդես

¹ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, ՂԻԲ առաջին, էջ 133:

էին գալիս ֆեոդալական հարաբերությունների պաշտպանութ-
յան դիրքերից, անվերապահորեն ընդունելով ցարական
կարգերը:

Ինչ վերաբերում է ազգային պահպանողականներին, ապա
ներանք հին հարաբերությունների պաշտպանությամբ հան-
դերձ, վճռական դերը տալիս էին ազգի և եկեղեցու ինքնու-
րույնությանը, եկեղեցու անկախ գործունեությանը: Ազգային
պահպանողականները զժգոհություն էին հայտնում այն բանի
համար, որ ռուսական պետությունը հայ ժողովրդին չի տա-
լիս նրա կատարյալ անկախությունը՝ եկեղեցու հովանավո-
րությամբ: Մամուլում բազմիցս բարձրացվում է այն հարցը,
թե ցարական պետությունը ապօրինի կերպով ձգտում է հայ
լուսավորչական եկեղեցին միավորել ռուսական ուղղափառ
եկեղեցու հետ և սահմանափակել հայ կաթողիկոսների իրա-
վունքները: Իբրև ապացույց այդ բանի, ազգային պահա-
նողականները հիշատակում էին 1836 թ. ռուսաց պետության
կողմից հաստատված կանոնադրությունը (Պոլոժենիա), որը
սինոդի հիմնադրությամբ նույնատիպ ուներ սահմանափակելու
կաթողիկոսի իշխանությունը: Քննության ենթարկելով ողջ
կանոնադրությունը, Մ. Աղաբեկյանի «Ծիլն Ավարայրի» ամ-
սագիրն ազդարարում էր, որ այն ամբողջապես ուղղված է
հայ լուսավորչական եկեղեցու անկախության ու ինքնուրույ-
նության դեմ: Այդ իմաստով, ահա, ազգային-պահպանողա-
կանները ռուսաց կայսրությունը համարում էին նույնքան
վտանգավոր թշնամի, որքան պապականությունը: Մի անգամ
չէ, որ Մ. Աղաբեկյանն իր հոդվածներում ազգայիններին
զգուշացնում է այն հանձնաժողովի գործունեությունից, որի
նպատակն էր կովկասյան ժողովուրդներին դավանափոխ
անել: Որպես օրինակ, նա նշում է վրացական եկեղեցու ռու-
սականացումը, լեզգիների և ադրբեջանական ժողովրդի
նկատմամբ գործադրվող բռնի միջոցառումները, հայկական
Շահրիար և Վարդաշեն գյուղերի բնակիչների հավատալի-
թությունը: Այս հոդի վրա, 60-ական թվականներին, տաք
բանավեճ է ծավալվում Մ. Աղաբեկյանի և Մսերյանի միջև:
Պաշտպանելով ցարական կառավարության քաղաքականու-
թյունը և պնդելով Կովկասի փոխարքայի հավաստիացումները

կաթողիկոսին, Մսեր Մսերյանը իր «Համբավաբեր Ռուսիո» թերթում հայտարարում է. «Տկարամիտ ոմանք մերազնեից Թիֆլիսում էնպես լուր են տարածել, իբր ռուսք կամենում են հայոց իրանց հետ միացնել, միթե էդպես ձեռնարկություն ռուսի պես լուսավորչալ և իր հպատակներին իր որդվոց պես պահող տերությունը մտքովը անգամ կերեակայե, էդ լուրը շփոթ սիրող մարդկանց տարածած է»:

Մսեր Մսերյանը 1865 թ. Լազարյան ճեմարանի հորելյանական տոնախմբությանը արտասանած իր ճառում ջերմորեն փառաբանում է ոչ միայն ճեմարանը, այլև, ընդհանրապես, հայ ժողովրդի բարեբախտ վիճակը: Մ. Աղաբեկյանը «Մասիս» լրագրի 1865 թ. 715-րդ համարում հանդես գալով Մսերյանի այդ ճառի դեմ, հայտարարում է, որ այն զուրկ է հիմքից, քանի որ Լազարյան ճեմարանը հեռու է ազգային դժգոհությունից և ծառայում է լոկ ռուսաց պետության շահերին: Նա նշում է նաև, որ հայ ժողովուրդը դառնում է դավանափոխության ամենօրյա սպառնալիքի տակ, մյուս կողմից սաստիկ նեղվում է հարկերի ծանրությունից:

«Հայոց ժողովրդյան չորսեն երեք մասը, — գրում է Մ. Աղաբեկյանը, — վերջին աղքատության մեջ են թե հարկաց ծանրության կողմանե, թե դավառապետաց և նահանգապետաց հարստահարության կողմանե, թե ավազակաց ասպատակության ու դատավորաց անիրավության: ...Բայց թե ինչո՞ւ չեն խոսում և գրում, ցավելով ասում ենք, որ շատ ճշմարտությունք կան, որ Ռուսաստանի մեջ ոչ խոսիլ կարելի է և ոչ գրել և Սիրիբիայի սառնամանիքեն ստիպված, մարդկանց մեծ մասը ճշմարտությունը սրտումը գերեզման են իջնում»¹:

Այս հարցի շուրջը բացված բանավեճին մասնակցում են Ստ. Մսերյանը, Մամիկոնյանը և «Ճշմարտասեր հայ» ստորագրությունը կրող մեկը: Աղաբեկյանը «Ծիլն Ավարայրի» ամսագրում հանգամանորեն շարադրելով իր դրույթները, ամսագրում նաև համաբարական այն ելույթի վրա, որ տե-

1 «Ծիլն Ավարայրի», 1866, էջ 251:

զի էր ունեցել Թիֆլիսում՝ հարկերի ծանրութեան հետեւանքով, և կառավարութեան կողմից ճնշվել էր ղենքի միջոցով:

Մ. Աղաբեկյանն իր հողվածներում մեկ առ մեկ քննադատում է կղերա-ֆեոդալական ուղղութեան ներկայացուցիչներ Գ. Ալվազովսկուն, Ս. Զալալյանին, Ա. Թահիրյանին, Հ. Կարենյանին, Հ. Չամուռճյանին և սրանց համախոհներին, որոնք, շլացած ցարական կառավարութեան շքանշաններով և կաշառքներով՝ քանգում էին «ազգի միութեան շղթաները»: Աղաբեկյանը առանձին ատելութեամբ խոսեցում Մ. Մսերյանի գործունեութեան մասին, հայտարարում է, որ «մինչև անգամ նրա որդի Զարմայրը լրտես է ուսաց կողմից հայերու մեջ: Հայոց ազգ, աչքերդ բաց արա, — շարունակում է նա, — որ էսպես մարդիկ են Գրիգոր Լուսավորչից ավանդված հավատը քարոզում և դաս տալի քո մանկունքներին»¹:

Սակայն, Մ. Աղաբեկյանը որեէ լուրջ եզրակացութեան չի հանգում:

Ինչ վերաբերում է սոցիալական շարիքի վերացմանը, ազգային անկախութեան համար պայքարի հարցերին, ապա այստեղ Մ. Աղաբեկյանը և Մսերյանները հանգես են դալիս միեւնոյն համերաշխ լազերից:

Թիֆլիսի համբարների վերը հիշված հուղումները Աղաբեկյանը բացատրում է միայն բաղաբազուլի Շերմաղանյանի վարքագծով, ապա՝ հայերին կոչ է անում լինել խոնարհ ու հնազանդ այն պետութեանը, որի հպատակներն են իրենք:

Մ. Աղաբեկյանը գոհունակութեամբ է նշում, որ Օսմանյան կառավարութեան տիրապետութեան տակ «լիովին ազատութիւն կվայելէնք ազգային, բարոյական և մտավոր լուսավորութեան» ասպարեղում: Հայ ժողովրդի հպատակութեան երաշխիքը Աղաբեկյանը համարում է նրա հավատի անձեռնմխելիութունը. «Փորձով հաստատված է, — գրում է նա, — որ հայք ինչ տերութեան հպատակ որ են, չափազանց հավատարիմ են, քանի որ իրանց կրօնին և ազգութեանը չեն դիպչել»²:

¹ «Ծիլն Ավարայրի», 1866, էջ 314—315:

² Նույն տեղը, էջ 327:

քարելով հետադիմականների դեմ, զենքերը վայր էր դնում, երբ հարցը հասնում էր տիրող կարգերի վերացման ռեոլյուցիոն ուղղուն: Նա վախենում էր ռեոլյուցիայից և մերժում այն: «Հյուսիսափայլ»-ի առաջին համարում տպագրած իր հայտարարության մեջ խոսելով հայոց լեզվի ասպարեզում կատարելիք իր բարեփոխումների մասին, նա հայտարարում է, որ այդ քաղաքականությունը հանդուժ է հնի վերանորոգության. «մեր դիտողությունը շինություն է, — գրում է նա, — բայց ոչ երբեք կործանություն և ավերանք, որոնցից հեռի պահե մեզ Աստված և բոլոր երկնային զորությունքը»: Նա չարյանը ռեֆորմների կողմնակից էր, մի բան, որ ցայտուն արտահայտություն է գտել նրա հատկապես «Ֆրանսիական ռեոլյուցիայի պատճառքը» հոդվածում:

Ստ. Նազարյանի հետագա գործունեությունը հաստատում է, որ նա ռեոլյուցիայի գնահատման հարցում կանգնած է հետադիմականների դիրքերում: Միանգամայն գոհ լինելով ցարական կառավարության քաղաքականությունից, նա խաղաղության կոչ է անում իր ժողովրդին, հորդորելով հավատարիմ լինել այդ կառավարությանը: Ստ. Նազարյանին առանձնապես ոգևորում են 1861 թ. ռեֆորմի նախապատաստությունները:

Եթե ռեոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները, ոչ մի հույս չկապելով ռեֆորմի հետ, այն համարում են խաբեություն, Նազարյանը «հոյակապ գաղափար» անվանելով ռեֆորմի ծրագիրը, իր խոր համոզմունքն է հայտնում, թե ռեֆորմի իրականացումը գլուղացիությունը կաղատազրի ստրկական լծից և կնպաստի երկրի տնտեսական զարգացմանը:

Նազարյանը հետադիմականներին միանում էր նաև «միաբանության» և «եղբայրության» բարոգով, ձգտելով հարթել միևնույն ազգության ներսում արգեն իրենց զգալ տվող սոցիալական հակասությունները և կանխել հնարավոր բախումները:

Չնայած այս ամենին, հետադիմական հոսանքը նկատի ունենալով Նազարյանի առաջադիմական գործունեությունը, անզիջող էր նրա նկատմամբ: Այդ հոսանքը Նազարյանին չէր

խնայում հատկապես «Հյուսիսափայլ»-ի էջերում աշխարհա-
բար լեզվի զարգացման և օրինականացման, առաջավոր գա-
ղափարների տարածման, եկեղեցու ռեֆորմի և նրա այլ
պահանջների համար:

60-ական թվականներին հայ իրականության մեջ մեծ ազ-
դեցություն և կշիռ է ստանում ռեուլյուցիոն-դեմոկրատական
հոսանքը, որը գլխավորում էր Միքայել Նալբանդյանը:

Դեռևս վաղ պատանեկության տարիներին Նոր Նախիջե-
վանում նեամվելով պայքարի մեջ, նա կոփվում է որպես հե-
տևողական հասարակական գործիչ, «հասարակ» ժողովրդի
շահերի ջերմ պաշտպան: Մոսկվայում, և ապա Պետերբուր-
գում Նալբանդյանը ծանոթանում է ռուս համալսարանական
առաջավոր երիտասարդությանը և 50—60-ական թվական-
ների ռեուլյուցիոն-դեմոկրատական մամուլին և գրականու-
թյանը: Նրա ռեուլյուցիոն-դեմոկրատական աշխարհայացքի
ձևավորման գործում վճռական դեր են կատարում սոցիա-
լիստ-ուտոպիստների, նախամարքսյան մատերիալիստների և
Քելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Գերցենի հայացք-
ները:

Ի տարբերություն հայ լիբերալների, որոնք հայ ժողովրդի
փրկությունը տեսնում էին ցարական կարգերի մեջ, Նալ-
բանդյանը ժողովրդին պայքարի է կոչում մի կողմից սեփա-
կան տերերի, հայ աշխարհիկ և հոգևոր կեղեքիչների դեմ,
մյուս կողմից՝ ցարական կառավարության գաղութային քա-
ղաքականության դեմ:

Նալբանդյանը հայ ժողովրդի ազատագրման իր ծրագիրը
կապում էր ռուս մեծ ժողովրդի ռեուլյուցիոն շարժումների
հետ: Հնարավորություն չունենալով ստեղծելու իր սեփական
օրգանը, Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ն օգտագործում էր
որպես ամբիոն՝ իր լուսավորական-դեմոկրատական հա-
յացքների պրոպագանդայի համար, այդ ամբիոնի հետ կա-
պելով և իր գաղափարական բարեկամներին: Նրա հետ միա-
սին «Հյուսիսափայլ»-ին աշխատակցում էին Անանիա Սուլ-
թանշահը, Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի),
Մովսես Բուդաղյանը և ուրիշներ:

Մ. Նալբանդյանը համագործակցելով Նաղարյանի հետ, գնահատում էր նրա գրական-հրապարակախոսական գործունեությունը և նվիրվածությունը ժողովրդի լուսավորության գործին:

Նալբանդյանն իր հրապարակախոսական գործունեության նպատակն էր համարում ծառայել իր «տարաբախտ ազգի օգտի համար»: Բայց նա Նաղարյանից սահմանադատվում էր նրանով, որ հայ ազգը չէր դիտում իբրև միատարր մի ամբողջություն: «Այն մարդը, — գրում է նա, — որ սիրում է ազգը, որ նվիրում է յուր անձը ազգի բարոյական սպասավորության, պարտական է ծառայել ոչ ազգի կոռուքերին, այլ հասարակ ժողովրդի օգտին»¹:

Արձանագրելով հասարակական կյանքում տեղի ունեցող անարդարություն, «ուլբալի ու արտասվալի» գործերի փաստերը, խոսելով «հարստահարված մարդերի» ողբերի և հառաչանքի մասին, Նալբանդյանը մերկացնում է «մարդկության անարգանքը» հանդիսացող փառասերներին, կեղծավորներին, գողությանմբ և ավազակությանմբ անուն վաստակած անձանց, ճշմարտությունից փախչող խավարամուլներին, ազատ մտքի թշնամիներին, որոնք «գարբնի գործարանք են բացում անտանելի ծանր շղթաներ պատրաստելու, և եթե կարելի է, բոլորովին խեղդելու մարդկային բանականության օրինավոր ազատ հոսանքը»²:

Հայ ազգի մեջ սահմանազատելով շահագործողներին և աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչներին, Նալբանդյանը «մի ազգի հասարակական շինվածքի հիմքը» համարում է հասարակ ժողովուրդը, և նշում, որ մտավորականների լուսավորական գործունեությունն այնքանով է արդյունավետ, որքանով այն կապված է ժողովրդի հետ և հասկանալի է նրան:

Մ. Նալբանդյանը մշակում է ազգերի զարգացման իր դեմոկրատական ծրագիրը և հակադրվում ոչ միայն Նաղարյանի սահմանափակ դրույթին, այլև իր ժամանակի կոսմոպոլիտներին:

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 5, էջ 379:

² Նույն տեղը, 1859, № 1, էջ 68:

Մարդկային կյանքի բարօրության գործում անհրաժեշտ համարելով բոլոր ազգությունների համերաշխ գործունեությունը, Նալբանդյանը դեռևս 1859 թվականին իր «Նկատողությունը» հոդվածում նշավական է եվրոպական երկրների և ցարական Ռուսաստանի ազգային նվաճողական քաղաքականությունը. «Ոչ մի ազգություն իրավունք չունի կոչ տալու և ոչնչացնելու մի ուրիշ ազգություն, բայց այս բանը ստեպ կրկնվում է մարդկության պատմության մեջ»¹:

Դատապարտելով պատմական նպատակավոր հանգամանքներում գերիշխող դիրքեր գրաված ազգերի «եսական, ֆանատիկոս և անմարդի բնավորությունը», Մ. Նալբանդյանը հայտարարում է. «Արդարությունը պահանջում է խոստովանել ամենայն ազգություն, այո՛, ամենայն ազգություն»:

Նալբանդյանը «Հյուսիսսփայլ»-ին աշխատակցելու տարիներին իր գրիչը նվիրում է հայ ժողովրդի լուսավորության գործին: Նրա լուսավորական գործունեությունը հանգում է դեմոկրատական հետևությունների, ժողովրդին ժամանակի սոցիալական շարիքի գիտակցությունը հասցնելու և դրա դեմ պայքարի հանելու նպատակին:

Մ. Նալբանդյանը հայ իրականության մեջ բացահայտում է տարբեր հոսանքների և ուղղությունների առկայությունը և վեր հանում պայքարի անհրաժեշտությունն այդ միմյանց անհաշտ ուղղությունների միջև. «Մեր ազգի մեջ այժմ կան հայացքներ, կան ուղղությունք, կան ուրեմն և դրոշակներ, կա պատերազմ», — գրում է Նալբանդյանն իր «Նկատողությունը» հոդվածում²: Բացասելով Նաղարյանի խաղաղ վերանորոգումների ծրագիրը, Նալբանդյանը ազդարարում է. «Օրհնյալ է պատերազմը, թող լինի նա հզոր, անխնա, ազնիվ և բարեխիղճ»³:

«Հյուսիսսփայլ»-ում տպագրված իր հրապարակախոսական հոդվածների, նամակների, գեղարվեստական գործերի միջոցով Նալբանդյանն ակտիվ մասնակցություն է ցույց տա-

¹ «Հյուսիսսփայլ», 1858, № 10, էջ 304:

² Նույն տեղը, էջ 308:

³ Նույն տեղը, էջ 309:

չիս հայ իրականության մեջ ծագած այդ մտավոր պատե-
քազմին, միշտ և ամենուրեք հանդես գալով աշխատավոր
ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերից:

50-ական թվականների վերջերից հայ իրականության մեջ
ծավալված պայքարի բովում և ռուսական ռեյտցիոն-դե-
մոկրատական մտքի արդեցության տակ ձևավորվում է
Մ. Նալբանդյանի ռեյտցիոն-դեմոկրատական աշխարհա-
յացքը:



Ստեփանոս Նալբարյանն իր գրական-մանկավարժական
գործունեությունն սկսում է անցյալ դարի քառասնական
թվականներին Կադանի համալսարանում: Դեռևս այդ տարի-
ներին նրան մտահոգում էր հայ ժողովրդի կրթության և դաս-
տիարակության հարցը:

1844 թվականի նոյեմբերի 2-ին Նալբարյանը դիմում է
Կադանի ուսումնական օկրուգի հոգաբարձությանը, խնդրե-
լով միջնորդել լուսավորության մինիստրի առաջ, հայերեն
լեզվով մի ամսագրի հրատարակության թույլտվություն ստա-
նալու համար:

Դիմումին նա կցում է ամսագրի ծրագիրը հայերեն և
ռուսերեն, որտեղ հիմնավորում է բոլոր հայերին հասկանալի
լեզվով ամսագրի ստեղծման անհրաժեշտությունը: Նրան
մտահոգություն է պատճառում Ռուսաստանի հայերի հոգե-
կան սոսկալի ընդարմացումն այն ժամանակ, երբ Եվրոպա-
յում օրն օրին ծնվում են նորանոր գիտական, կամ հանրա-
մատչելի պարբերականներ: Այդ ժամանակ հրատարակ-
վող «Արշալույս Արարատյան», «Բազմավեպ» և «Հայրե-
նասեր» պարբերականները նա անմատչելի է համարում ժո-
ղովրդական լայն խավերի համար: Այնինչ, անհրաժեշտ էր
մի օրգան, որը ոչ միայն բոլորին հասկանալի լեզվով կարո-
ղանար միավորել աշխարհի տարբեր մասերում ցրված հայե-
րին և խրախուսեր արդեն մրցակցությունը ժողովրդի զար-
գացման գործում, ընդհանուրին ոգևորեր հուզող դադափար-
ներով, այլև կարողանար հայերին հաղորդակից դարձնել
գիտության նվաճումներին: Նալբարյանը այսպիսի մի օր-

դանի բացակայութեամբ է բացատրում 19-րդ դարի հայերի կատարյալ տգիտութիւնը և ժողովրդական լեզվի, գրականութեան ու պատմութեան նկատմամբ նրանց ցուցաբերած կործանարար անտարբերութիւնը:

Նրա հրատարակելիք ամսագիրն ունենալու էր հետևյալ բաժինները.

1. Հոգևածներ հայոց պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, ինչպէս և նոր գրականութեան նվաճումների մասին:

2. Հետաքրքրական հոգևածներ ընդհանուր պատմութեան, երկրագործութեան, վիճակագրութեան, գյուղատնտեսութեան և վաճառականութեան բնագավառներից:

3. Պետերբուրգի քաղաքական լուրերից վերցված համառոտ քաղաքական տեղեկութիւններ¹:

Նազարյանի դիմումը մերժվում է՝ տեղում հայ գրաքննիչ չլինելու պատճառաբանութեամբ:

Այնուհետև 1845 թվականին Նազարյանի՝ Խ. Արովյանին դրած մի նամակից հայտնի է դառնում, որ նա հաստատապես որոշում է փոխադրվել Կովկաս և զբաղվել հրապարակախոսական գործունեութեամբ՝ «ամբարտակ կանգնելու համար» հայերի «կորստյան խուռն ալիքների դեմ»: Այդ կապակցութեամբ նա դիմում է Կովկասի փոխարքա Վորոնցովին՝ իր հրատարակելիք ամսագրի նպատակը համարելով «մի տեսակ իմանալի (գիտակից) միջնորդ հանդիսանալ հայերի և ռուսների միջև»²:

Նազարյանի այդ մտադրութիւնը ևս չի իրականանում:

Վերջերս հրապարակվեց մինչև այժմ անհայտ մի փաստաթուղթ այն մասին, որ Ստ. Նազարյանը 1854 թվականին կաղարջան ճեմարանում պաշտոնավարելու ժամանակ ևս փորձել է հրատարակել հայերեն մի ամսագիր՝ «Ռուսիա» անունով³: Իր ծրագրում Հայաստանի միացումը Ռուսաստանին Նազարյանը համարում է կարևոր միջոց՝ ռուսական կուլտուրային հաղորդակցվելու և ռուսական գիտութեան ու լու-

1 «Конспект Гайканского журнала», ЦГИАЛ, фонд № 772, оп. 4.

2 «Դիվան Խ. Արովյանի», էջ 259—260.

3 ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1953, № 1.

սավորության պտուղներով հարստանալու գործում: Նա իր հրատարակելիք ամսագրի գլխավոր նպատակն է համարում մտավորապես և բարոյապես միմյանց հետ կապել Ռուսաստանը և Ռուսաստանի տարբեր մասերում ցրված հայերին: «Այս ամսագիրը պետք է նվիրվի Ռուսաստանի փառքին և կրի «Ռուսիա» անունը», հայտարարում է Նազարյանը¹:

Ամսագիրը նախատեսված էր հրատարակել շորս բաժնով.
1. Ընդհանուր երկրագործության, աշխարհագրության, վիճակագրության, աշխարհագրական հայտնագործություններին և ճանապարհորդություններին վերաբերող նյութեր:

2. Ռուսաստանի պատմությունից վերցված հոդվածներ, հայրենական պատմության հերոսների, ռուսական փառքի բարձրացմանը նվիրված անձանց կենսագրություններ:

3. Բնագիտական նյութեր, զրույցներ՝ աստղաբաշխության, բուսաբանության, կենդանաբանության, ֆիզիոլոգիայի մասին:

4. Վիպակներ, պատմվածքներ, բարոյական խորհրդածություններ և այլն:

Սակայն «Ռուսիա» ամսագրի հրատարակության կապակցությամբ տրված դիմումը ևս մերժվում է, որը և պետք է բացատրել «մույլ յոթնամյակի» տարիներին ցարական կառավարության բռնած ռեակցիոն քաղաքականությամբ: Արդեն ասացինք, որ այդ տարիներին ռուսական պարբերականների թիվն զգալիորեն կրճատվում է. ուրեմն խոսք անգամ չէր կարող լինել նոր հրատարակությունների, այդ թվում և հայերեն լեզվով առաջագիմական որևէ օրգանի հրատարակության մասին: Հարկավ, այդ ժամանակաշրջանում կառավարության կողմից տարվող քաղաքականությունը նկատի ուներ Հ. Լավարեը, որն անհրաժեշտ էր համարում ամսագրի հրատարակությունը հետաձգել «մինչև որ լինեն ավելի բարենպաստ հանգամանքներ»²:

Ահա թե ինչու, Նազարյանն իր ծրագրի իրականացմանը կրկին ձեռնամուխ է լինում Նիկոլայ առաջինի մահվանից

1 ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1953, № 12, էջ 77:

2 Նույն տեղը, էջ 77:

անմիջապես հետո, երբ շատ-շատերը Ռուսաստանում նոր հույսեր էին կապում լիբերալ խոստումներով գահ բարձրացած Ալեքսանդր երկրորդի հետ: Այս տեսակետից հետաքրքրական է հենց իր՝ Նազարյանի մի խոստովանությունը.

«Այժմուս, նոր թագավորի քաղցր շնորհից և ողորմությունից մի փոքր ավելի ազատություն և համարձակություն լինելով, և ես ոտք խաղացուցի և զուլս բարձրացրի, մի հայկական օրագրի պրոժեկտ գրելով և մի նամակի հետ ուղարկելով ազգային լուսավորության նախարար Նորովին: Կարծիք ու հույս կա, որ այս մարդը բարի լինելով և ժամանակը կսձեռնառու լինելով, թույլ տա ինձ տպել այդ շատ հարկավոր օրագիրը»¹:

Այս շրջանում ցարական կառավարությունը ոչ միայն առանձին արգելականներ չէր հարուցում հայ պարբերական մամուլի հրատարակության գործում, այլ նույնիսկ որոշ քաղաքական նկատառումներով մեծ նշանակություն էր տալիս այդ խնդրին: Ռուսաստանում հրատարակվելիք հայ պարբերականների միջոցով ցարական կառավարությունը ցանկանում էր բարոյապես ազդել արևմտյան հայության վրա ևս, նրանց Ռուսաստանի հետ կապելու, ռուսական քաղաքակրթությանը ծանոթացնելու դիտավորությամբ: Ահա թե ինչ է գրում այդ առիթով գրաֆ Սիվերսը՝ զրաքննական կոմիտեին ուղղված իր նամակում.

«Вообще, по моему мнению, было бы весьма полезно размножение у нас армянских изданий, в тех видах, что при постоянном увеличении потребности в книгах и газетах между армянами вообще, и турецкими в особенности, как это видно из количества издающихся в Турции армянских периодических изданий, желательно было бы, чтобы эта потребность удовлетворялась изданиями, выходящими в России, что может способствовать сближению заграничных армян с Россиею и установлению нравственного влияния на них нашей цивилизации, затруднение же армянских изданий у нас, может напротив побудить и наших армян обратиться к заграничным изданиям»².

¹ Լեո, Մտեփանոս Նազարյանց, հ. 2, էջ 5:

² .Дело центрального управления по цензурному ведомству», ЦГИАЛ, фонд 775, оп. 1, ед. хр. № 90.

Կարևոր է, սակայն, հիշատակել, որ ցարական կառավարությունը հայ պարբերականների հրատարակությունը թույլատրելով հանդերձ, նրանց հնարավորություն չէր տալիս զբաղվելու քաղաքական հարցերով: Գրաքննական արխիվինյութերից մեզ հայտնի է այն փաստը, որ Ռաֆայել Պատկանյանին չի թույլատրվում քաղաքական բաժին ունենալ իր «Հյուսիս» թերթում: Այնուհետև, ցարական կառավարությունը կանխամտածված ձևով հայ պարբերականները հայկական կենտրոններից հեռու պահելու քաղաքականություն էր վարում: Նրա նպատակն էր իր ազդեցության տակ առնել հայ պարբերականները և վերջիններս մեկուսացնել հայկական իրականությունից, և հետևապես, ժողովրդին հուզող օրվա կենսական խնդիրներից: Այս առումով կարևորություն է ներկայացնում գրաքննական արխիվում պահվող փաստաթղթերից մեկը, որի մեջ ասված է.

«Порядок рассмотрения армянских книг и периодических изданий, установленный высочайшим повелением 1857 года, коним оно сосредоточено при С. Петербургском цензурном Комитете имеет те преимущества, что дает возможность непосредственно оказывать влияние на направление армянской письменности в видах правительства чрез цензора, который в свою очередь находясь вне центров литературной деятельности армян, остается изолированным от влияния на него местных интересов и личных отношений, что не может не отозваться самым полезным образом на направление армянской письменности»¹.

1856 թվականին Ս. Նազարյանը դիմում է ներկայացնում Լուսավորության մինիստր Նորովին՝ հայերեն լեզվով «Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակության իրավունքն ստանալու համար: Նորովիը հարցնում է Կովկասի փոխարքա Բարյատինսկու կարծիքը, Նազարյանի հայցի նպատակահարմարության առթիվ: Իմանալով այս մասին, Նազարյանը մի անձնական նամակով Բարյատինսկուն բացատրում է իր նախաձեռնության շարժառիթները և խնդրում թույլատրել ամսագրի հրատարակությունը: «Իմ գրական ձեռնարկությունը

1 «О порядке цензирования армянской газеты в Москве», ЦГИАЛ, фонд № 775, оп. 1, ед. хр. № 235.

նը, — գրում է Նազարյանը, — պետք է ծառայի որպես ժամանակակից մի օրգան՝ Ռուսաստանում ցրված հայությանը մատուցելու ռուսական կրթության և դիտության պտուղները և միաժամանակ իմ ազգակիցներին մտցնելու ռուսական մտքի և կյանքի շրջանը: Իմ հրատարակելիք ժուռնալը ենթադրվում է դարձնել՝ հայերին դարավոր մտավոր լճացումից ազատելու և նրանց մեջ առավել սիփիիչ կարգեր հաստատելու հուսալի միջոցներից մեկը: Ռուսական զենքի փայլուն հաղթանակներից հետո Հայաստանում, թվում է, ժամանակե է անցնել պատվաստելու ռուսական մտքի ոչ պակաս փառավոր նվաճումները գիտության, արվեստի և քաղաքակրթության բնագավառում»¹:

Բարյատինսկին հարցնում է Թիֆլիսի գրաքննական կոմիտեի կարծիքը: Այդ առթիվ 1856 թվականի դեկտեմբերի 17-ին գրաքննական կոմիտեն հայտնում է հետևյալը.

1. Քանի որ դրաբար լեզվով գրված գրքերի տարածումը Կովկասում ցույց է տալիս, որ հայերի հետաքրքրությունն աճել է, ապա ժողովրդական լայն խավերին հասկանալի լեզվով ամսագրի հրատարակումն անկասկած կարժնացնի առավել ուժեղ սեր դեպի ընթերցանությունը և կրավարարի նրանց հարցասիրությունը:

2. Նազարյանի կողմից նախատեսված շորս բաժինները ցույց են տալիս, որ խմբագիրն իր ընթերցողներին պետք է բազմազան, հետաքրքրական և օգտակար գիտելիքներ հաղորդի:

3. Գրաքննական կոմիտեն հայտնի է, որ Գ. Պատկանյանի «Արարատ»-ը շնայած դիտական և գրական առումով իր ունեցած թերություններին, շատ բաժանորդներ ունեթ Թիֆլիսում:

4. Մինչև վերջին պատերազմի սկիզբը Անդրկովկասում ստացվում էին վեց զանազան թերթեր («Մասիս», «Նոյան աղավնի», «Արշալույս Արարատյան» և այլն), որոնք շատ ընթերցողներ ունեին:

¹ ՀՍՍՌ Պետ. Մատենագարան, Երիցյանի արխիվ, թղթ. 154, վավ.

«Այդ ցույց է տալիս հայերի կենդանի հետաքրքրությունը՝ հետեւելու Եվրոպայի և Ասիայի դորժերի ընթացքին: Միանգամայն բնականաբար այդ թերթերում քաղաքական իրադարձությունները ոչ միշտ էին օբյեկտիվորեն լուսարանվում և հաճախ էլ այդ թերթերը թշնամաբար էին արտահայտվում մեր հայրենիքի մասին: Եթե սլ. Նաղարչանը վճռի իր նախատեսած չորս բաժիններին ավելացնել և հինգերորդը՝ կառավարության գլխավոր որոշումների տեսությունը և յուրաքանչյուր անցած ամսվա քաղաքական իրադարձությունները, ապա, դրաքննական կոմիտեի կարծիքով, նոր ժուռնալը առավել մեծ օգուտ կբերի Ռուսաստանում բնակվող հայ հասարակությանը:

Եթե նույնիսկ կառավարությունը որոշի թույլատրել հին ծրագիրը՝ չորս բաժնից, ապա Նաղարչանի նախագիծը դարձյալ արժանի է խրախուսանքի»¹:

Բարյատինսկին 1856 թվականի դեկտեմբերի 31-ին հայտնում է Լուսավորության մինիստրին, թե ինքը չի առարկում հրատարակվելիք ամսագրի ծրագրին: Նա միաժամանակ առաջարկում է թույլատրել խմբագրին՝ ամսագրի ծրագրում մտցնելու հինգերորդ, քաղաքական բաժինը²:

1857 թվականի մարտի 23-ին Լուսավորության մինիստրի Կողմից տրվում է «Հյուսիսասիայ»-ի հրատարակության թույլատվությունը, որի վրա ցարը մակագրել էր. «Համաձայն եմ, եթե դասատուն, որին ենթադրում եք հանձնարարել ցենզորի պարտականությունը, իր անձնավորությամբ վայելում է կառավարության վստահությունը»³: Նաղարչանի, Նալբանդյանի և նրանց բարեկամների ջանքերն ապարդյուն են անցնում՝ զրաքննիչի պաշտոնում հաստատել տալու Լաղարչան Ճեմարանի ուսուցիչ Գ. Սուրենյանին: Այդ պաշտոնը տրվում է Մկրտիչ Բերոյանին: Խմբագրության համար ստեղծվում է մի մեծ անհարմարություն, քանի որ հրատարակվելիք բոլոր

¹ ՀՅՄԹ. Պետ. Մասնադարան, Ե: իցյանի արխիվ, Թղթ. 154, վավ. 225:

² Նույն տեղը, վավ. 222:

³ ЦГИАЛ, фонд № 777, оп. 2, ед. хр. № 71.



Ստեփանոս Նազարյան



նյութերը գրաքննության ենթարկվելու համար պետք է նախ ուղարկվեին Պետերբուրգ, որտեղ աշխատում էր Բերոյանը:

1857 թվականի մայիսին Նազարյանը տարածում է «Հյուսիսասիայը»-ի հրատարակության ծանուցումը, որի մեջ հանգամանորեն շարադրված էր ամսագրի ծրագիրը: «Մեր պատվելի և շատ սիրելի հայերը,— գրում է Նազարյանը,— Ռուսաստանի մեջ զուրկ լինելով մինչև այժմ մի գրավոր միջնորդից, որ յուրյանց մեջ և յուրյանց դրությանը հարմար հոգաբարձու լիներ նոցա իմացական և բարոյական պիտույքին, քաջահույս ենք, թե ուրախությամբ կողջունեն մի օրագիր, որ հանձնառու է մայրենի քաղցր լեզվով զրուցել նոցա հետ բնության կարգերի, մեր երկրավոր բնակարանի որպիսութենների և նորա մեջ եղած տեսակ-տեսակ ազգերի և առարկաների, այլև աշխարհի մեջ անցած արժանահիշատակ անցքերի, երևելի մարդերի, հանրաշահ գյուտերի և հայտնագործութենների մասին: Քաջահույս ենք, որ մեր հայրենակիցքը քաղցրությամբ կընդունեն մի օրագիր, որ պիտո է բազմամասնյա կերպով ձեռնտու լինի նոցա դաստիարակությանը, մի մտավորական կամուրջ ձգելով ասիացի հայերի և եվրոպական ազգերի մեջ, մի հոգեղեն հաղորդակցություն հաստատելով հայկական և եվրոպական մարդերի մեջ: ...Սորա խորհուրդը լինելու է, ռուսաբանակ հայերի մեջ տարածել այնպիսի տեղեկությունք և գիտելիք, որ անհրաժարելի հարկավոր են մեր օրերումը ամենայն մարդու որևիցե պաշտոնի վիճակից, թե ուսումնականի և փոքր ի շատե բանիմացի, թե վաճառականի և արվեստավորի, թե հոգևորի և թե աշխարհականի, որ կամք ունենին մասնակից լինել մեր լուսավորչալ դարու հառաջագիմությանը, օգուտ քաղել նորանից թե նյութապես և թե հոգեպես»:

Նազարյանն այնուհետև նշում է, թե քանի որ ամսագիրը նախատեսված է «ժողովրդի օգտին» ծառայելու համար, ապա լեզուն պետք է լինի բազմությանը հասկանալի, հայոց կենդանի լեզվին մոտ մի լեզու, որը, սակայն, հեռու կլինի գոհակարանությունից:

Այսպիսով, «երկու տեսակ պաշտոն կա մեզ կատարելու միանգամայն,— ամփոփում է խմբագիրը,— այսինքն օգտա-

կար տեղեկութիւնք տարածել ազգի մեջ և մշակագործել հայկական կենդանի լեզուն»:

Ծրագիրը բաղկացած էր չորս բաժնից:

Առաջին բաժինը նախատեսում էր ընդհանուր երկրագործութեան վերաբերյալ հոգւածներ, այլև նյութեր՝ նվիրւած Ռուսաստանի աշխարհագրութեանն ու վիճակագրութեանը:

Երկրորդ բաժինը պետք է ընդգրկէր Ռուսաստանի և ընդհանուր պատմութեանը նվիրւած հոգւածներ, մեծ մարդկանց կենսագրութիւններ, և այլն:

Երրորդ բաժինը նախատեսում էր հոգւածներ, նվիրւած բնական գիտութիւններին (աստղաբաշխութիւն, քիմիա, երկրաբանութիւն, ֆիզիոլոգիա, կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, և այլն), ինչպես և բնութեան և արվեստի բնագավառում կատարւած և կյանքին օգտակար գիտական հայտնագործութիւններին:

Չորրորդ բաժինն ամբողջութեամբ նվիրւում էր գեղարվեստական գրականութեանը, բնագիտութեանը, բիրլիոգրաֆիային և ռուսական ու օտար գրականութիւններին կառարելիք թարգմանութիւններին:

1857 թ. ամռանը Նաղարչանը մեկնում է Դորպատ, որտեղ հայ ուսանողներին ծանոթացնում է իր ամսագրի ծրագրի և հեռանկարների հետ: Հետագայում, երբ ուսանողներն իմանում են, որ բաժանորդագրութեան գործը շատ դանդաղ է ընթանում, հուսադրական մի նամակ են գրում Նաղարչանին: Յով հայտնելով, որ հայերը դեռևս չեն գիտակցում իրենց օգուտն ու վնասը, նրանք խրախուսում են Նաղարչանին՝ քաջութեամբ հաղթահարել բոլոր արգելքները և մի անգամ բռնած ճանապարհովն անխտոր գնալ. սեպտեմբերի 5-ի թվակիր այդ նամակն ստորագրել էին Վ. Ասկարչանը, Ն. Շարոյանը, Ս. Ամատունին և Գ. Դոդոխյանը:

Իր պատասխանն նամակում Նաղարչանը առանձնապէս բողոքում է Թիֆլիսի հայերից, որոնք իր օրագրի դեմ «ամենայն գաղանական կերպով» զրահավորելով, արդեւակեղ են նրա տարածումը (30.000 հայ բնակիչ ունեցող Թիֆլիսում ամսագրին բաժանորդագրւել էին միմիայն 10 հոգի): Դրութիւնն ավելի լավ էր Հաշտարխանում և Նախիջևանում, սա-

կայն վիճակն ընդհանրապես անմխիթարական էր, որովհետև ոչ մի հույս չկար հրատարակության գործին անհրաժեշտ 5.000 ուրլի գումարը հավաքելու բաժանորդագրության միջոցով: Դարձյալ անգրագառնալով Թիֆլիսի հայերի բարքերին, Նաղարյանը դառնությամբ գրում է, թե նրանք ցանկանում են, որ հայ հեղինակն օգնություն չստանա ոչ յուրաքանչյուրից և ոչ էլ օտարներից, «այլ միայն կապած սառած մնար և հուսահատվեր ու մեռաներ, և այդպես ոչնչանար ամենայն առաքինությունն նույն իսկ խանձարուրի մեջ, որովհետև հարկավոր չէ առաքինությունը, այլ միայն արծաթ, կրկին արծաթ և դարձյալ արծաթ: Աստված, աստված, հալես արծաթը և ջերմ-ջերմ թափես դոցա կոկորդի մեջ, ինչպես պարթևացիք արած են հռոմայեցոց Կրասոսի հետ»¹:

Այս նամակում Նաղարյանը հայտնում է, որ «Հյուսիսափայլ»-ի համարները Կովկասում տարածելու համար ինքն ստիպված է եղել դիմելու Բարյատինսկու և նրա դիվանապետ Կրուզենշտեյնի օգնությանը, որոնք խոստացել են իրեն օգնել այդ հարցում: Օդոսսոսի 13-ի թվալիր նամակում Նաղարյանը Բարյատինսկուց խնդրում է կառավարական հզոր օրգանների միջոցով օժանդակել իր ամսագրի տարածման գործին Էնվկասում: Այդ կապակցությամբ Բարյատինսկին հատուկ հրամաններ է ուղարկում նահանգապետներին²:

1857 թվականի սեպտեմբերի 24-ին «Молва» լրագրի էջերում տպագրվում է Մ. Նալբանդյանի հոդվածը՝ «Հյուսիսափայլ»-ի հրատարակության մասին³: Ամսագրի հայտարարությունից կատարված ընդարձակ քաղվածքներով Նալբանդյանը պատմում է ապագա հրատարակության նպատակի և անելիքների մասին: «Молва»-ի խմբագիր Շալիևսկին Նալբանդյանի նամակին կցում է իր ծանոթությունը, որտեղ ուղղունում է «Հյուսիսափայլ»-ի հրատարակության երևույթը:

Հայկական ՍՍՌ Մատենադարանում պահվող Լաղարյանների արխիվում մենք ծանոթացանք մի հետաքրքրական

¹ «Հանդես գրականական և պատմական», գիրք առաջին, էջ 269:

² Լեո, Ստեփանոս Նաղարյանց, հ. 2, էջ 14:

³ ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 5, էջ 79:

փաստաթղթի հետ: Այդ «Журнал Министерства народного просвещения» ամսագրի 1857 թվականի 9-րդ համարն է, որտեղ տպագրված է Կ. եղյանի ընդարձակ հոդվածը՝ «Հայկական պարբերական գրականության տեսությունը» վերնագրով: Ուշադրության արժանի այս հոդվածի առաջին մասում հեղինակը վեր է հանում հայ գրականության պատմական նշանակությունը և հետևապես դրա ռուսամասիրության կարևորությունը. նա ծանոթացնում է հայ պարբերական մամուլի պատմությանը՝ սկսած 1812 թ. մինչև հիսունական թվականներն ընկած ժամանակամիջոցում:

Անդրադառնալով «Հյուսիսսփայլ»-ի հայտարարությանը, եղյանը հետևյալ կերպ է բնութագրում Նազարյանին. «Ներկայումս արևելյան գրականության դոկտոր Ստ. Նազարյանի միջնորդության շնորհիվ, բարձրագույն հրամանով նրան թույլատրված է 1858 թվականից Մոսկվայում հրատարակել մի ամսագիր՝ «Հյուսիսսփայլ» անունով: Չի կարելի արդարությամբ չխոստովանել, պ. Նազարյանի մեծահոգի ծառայությունը գիտությանն ու ազգին: Նա արդեն իր գրքերով ձեռք է բերել իր հայրենակիցների երախտագիտությունը: Այդ գրքերը խոսակցական, օտար բառերից զերծ հայերենով հայերին ծանոթացնում են եվրոպական գիտության բոլոր բնագավառների հետ: Ուստի, չի կարելի հաջողություն չցանկանալ այնքան օգտակար այդ ձեռնարկությանը, որը պետք է հանդիսանա եվրոպական գիտության և ռուսական քաղաքակրթության միջնորդը հեռավոր Կովկասի լեռներում, Ասիայի խորքերում, ուր հազիվ թե լուսավորության ճառագայթ է թափանցել: Խմբագրի անունը հաջողության երաշխիքն է, և անկասկած, հայերը, գերազանցապես Ռուսաստանում բնակվողները, պատրաստակամությամբ կալաշտպանեն այդ հրատարակությունը: Թուրքիայում հրատարակվող հայկական ամսագրերում արդեն հոդվածներ են երևում, որոնք ըստ արժանվույն զնահատելով Նազարյանի ծառայությունները, բացատրում են, թե ինչ նշանակություն կստանա նրա ամսագիրը հայերի կրթության պատմության մեջ:

Մեր տեսությունն ավարտում ենք պ. Նազարյանի հայտարարության թարգմանությամբ (նրա ամսագրի հրատա-

բակուբյան մասին), և այդպիսով հնարավորություն ենք ըն-
ձեռում իրենց, ընթերցողներին՝ դատելու նրա նպատակի ու
նշանակության մասին ¹:

1858 թվականի հունվարին տպագրվում է «Հյուսիսա-
փայլ»-ի առաջին համարը: «Հյուսիսափայլ»-ի հրատարակու-
թյան ընթացքում, Նալբանդյանից բացի, ամսագրին աշխա-
տակցում էին ժամանակի առաջավոր հայ երիտասարդները,
որոնցից շատերն իրենց կրթությունն ստանալով Ներսիսյան
դպրոցում, կամ Լազարյան ճեմարանում, այդ տարիներին
բուսանում էին Մոսկվայի համալսարանում: Այդ գրական գոր-
ծիչներն էին՝ բանաստեղծներ Սմբատ Շահադիզը, Մանուկ
Սադաթյանը, Ռուբեն Հասան Զալալյանը, Քերովբե Պատ-
կանյանը (Բեստեն), Ստեփանոս Ստեփանյանցը (իշխան
Բագրատունի), Մ. Բուդաղյանը, Հ. Քուչուրեկյանը, Գ. Բար-
խուդարյանը և ուրիշներ: Արձակ գործերով և զանազան հոդ-
վածներով ու թարգմանություններով ամսագրին աշխատակ-
ցում էին Գ. Տեր-Հովհաննիսյանը (Քաջբերունի), Ա. Սուլ-
թանշահը, Մ. Սիմոնյանցը (Մարտիրոս Հրաչյա), Ռ. Պատ-
կանյանը (Մ. Վնչելյան), Մ. Միսնսարյանը, Բաֆֆին,
Թ. Լալադարյանը, Ս. Ավետիքյանը և այլք:

«Հյուսիսափայլ»-ը յուրօրինակ գրական դպրոց հանդի-
սացավ դրանցից շատերի համար, որոնք գրական ճանաչում
ստացան այդ ամսագրի միջոցով:

«Հյուսիսափայլ»-ի նպատակը ժողովրդի լուսավորություն
էր, ֆեոդալական հարաբերությունների արգասիքը հանդիսա-
ցող արատավոր երևույթների քննադատությունը:

Ամսագրի հրապարակախոսական ուղղությունը Նալբանդ-
յանը բնութագրում է հետևյալ կերպ.

«Համարձակ «Հյուսիսափայլ»-ը անմասն անոտի երկյու-
ղից, անմասն կեղծավորութենից, երեսպաշտութենից, անբա-
ժին դժոխային եղվիտական հոգուց, «Հյուսիսափայլ»-ը ամե-
նայն հարադատությամբ սպասավորելով աստվածային ճշ-
մարտությանը, յուր գործակատարների հաստատուն ձեռքով

1 ՀՍՍԻ Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 113, գործ
81, վավ. 15:

Ճեղքում է, պատառում է մի հազար կարկատաններով թանձրացուցած վարագույր, որի տակ ամենայն խնամով թաքուցած էին խավարապաշտները, մեր ազգի բարոյական խոցերը և վերքերը»¹։

«Հյուսիսափայլ» ամսագրի էջերում, առաջին անգամ հայ պարբերական մամուլի պատմության մեջ, տրվում է ամսագրի դերի և խմբագրի պարտականությունների լուրջ մեկնաբանությունը։ Միքայել Նալբանդյանը անօգուտ է համարում այն պարբերականների գործունեությունը, որոնք «ազգի ներկա հարկավորությունների և օգուտների հետ» առնչվող հարցեր չեն շոշափում։

Ամսագիրը պետք է կառված լինի կյանքի հետ, զբաղվի կենդանի, օգտակար գործունեությամբ և նպաստի ժողովրդի լուսավորության և առաջադիմության գործին։

«Առանց այսպիսի խնդիրների մոտենալու, — գրում է Նալբանդյանը, — օրագիրը կյանք չունի, այս կենդանի և շարժուն խնդիրները հոգի են մի օրագիր ստացյալ մատենագրական գործունեության։ Եվ օրագրի գործակատարը, այն ժամանակ միայն աղաթ են առողջ բանականության դատապարտութենից և արժանի բարոյական վարձատրության, եթե ամենայն բան զոհ բերելով ճշմարտության, ընթացք էին տալիս այս խնդիրներին»²։

Մ. Նալբանդյանը հրապարակախոսությունը տալիս է ակտիվ, ներգործուն նշանակություն։

Խմբագրից նա պահանջում է լինել սկզբունքային, անաչառ և լայն աշխարհայացքի տեր, որ պարտավոր է պատվով ծառայել իր ստանձնած սուրբ կոչմանը։ Խմբագրի պարտքն է ժողովրդին դաստիարակել հայրենասիրության և եղբայրասիրության ոգով, կրթությունը դարձնել ժողովրդի սեփականությունը։ Նա պետք է անվախ լինի հասարակական շարքերը մերկացնելու գործում։

Ամսագրին և խմբագրին առաջադրված այս խնդիրները, ինչպես ասացինք, նորություն էին հայ իրականության համար և աբգափք ռուս առաջավոր կուլտուրայի ազդեցության։

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 10, էջ 299—300։

² Նույն տեղը, էջ 300։

Ժողովրդի պահանջներն արտացոլող գրականությունը, ըստ Չերնիշևսկու, պետք է դառնար պատմական զարգացման դիսավոր շարժիչ ուժը. հենց այդ նպատակով էլ նա առաջարկում էր մամուլի միջոցով ժողովրդի մեջ սեր և հետաքրքրություն առաջացնել դեպի գիրքը և հասարակական հարցերը: «Չիչերինը որպես հրապարակախոս» իր հոգևածումն Ն. Գ. Չերնիշևսկին հստակ կերպով ձևակերպում է ամսագրի դերն ու անելիքները: Հրապարակախոսը, — գրում է Չերնիշևսկին, — արտահայտում է և բացահայտում այն պահանջները, որոնցով դրադված է հասարակությունը տվյալ պահին: Վերացական դիտության ծառայելը նրա գործը չէ. նա պրոֆեսոր չէ, այլ տրիբուն, կամ փաստաբան¹:

Ժողովրդի շահերին ծառայել ցանկացող յուրաքանչյուր գործչի համար նա անհրաժեշտ է համարում հասկանալ, թե ինչ վիճակի մեջ է գտնվում նրա ժողովուրդը, նրա ունկնդիրը, կամ ընթերցողը, ընդ որում, եթե նա սկսի քարոզել այնպիսի ճշմարտություններ, որոնք բնավ չեն վերաբերում նրա ունկնդիրներին, ապա այդպիսի հրապարակախոսը ծիծաղելի կդառնա:

Հրապարակախոսի գործը չհամարելով վերացական ճշմարտություններով զբաղվելը, Չերնիշևսկին մի անգամ ևս ընդգծում է նրա խնդիրը, որը առաջին հերթին պետք է լինի «հասարակության կենդանի պահանջներին» ծառայելը:

Իր դրական լուսավորական գործունեությունն սկսելով 50-ական թվականներին Մոսկվայում, Մ. Նալբանդյանը սերտ կերպով կապված էր ռուս իրականության և համալսարանական երիտասարդության հետ: Նրա աշխարհայացքը ձևավորվում է ռուսական առաջավոր մտքի ազդեցության տակ: Էժեն Սյուրի «Թափառական հրեա»-ի թարգմանության տպագրության գրաքննական պատմությունն արդեն խոսում է այն մասին, որ Նալբանդյանը իր գործունեության հենց առաջին քայլերից նպատակասլաց պայքար է սկսում հայ հետադիմականների և ռեակցիոն պապականության դեմ: Երբ Նալբանդյանը 1856 թ. այդ աշխատանքը իր ծավալուն առա-

¹ Н. Г. Чернышевский, ПСС, т. 5, էջ 647:

շաբանով ներկայացնում է տպագրության, գրաքննիչ Բերոյանն այն արդելում է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Թարգմանիչը չափազանց աղատ և անպատշաճ է արտահայտվում վենետիկյան այն աշխատասեր վանականների մասին, որոնք արդեն ամբողջ աշխարհին հայտնի են իրենց անմահ ստեղծագործություններով»: «Նա մանրամասնորեն նկարագրում է ինկվիզիցիայի ողջ շարագործությունները և չափազանց համարձակ կերպով է անդրադառնում Հոռմի պապին՝ նրա կրոնական մոլորությունների կապակցությամբ»¹:

Միայն այն բանից հետո, երբ Մ. Նալբանդյանն ստիպված է լինում հանել իր առաջաբանի այն մասերը, որոնց նկատմամբ գրաքննիչը 22 դիտողություն էր արել, իսկ մնացած 7 դիտողություններին վերաբերող մասերը փոխել, Բերոյանը թույլ է տալիս հոգվածը և թարգմանությունը հանձնել տպագրության:

Նալբանդյանն անկասկած մտածել է իր սեփական օրդանն ունենալու մասին: Սակայն 1856 թվականին գրված նրա նամակից հայտնի է դառնում, որ նա իր անունով չէր կարող որևէ պարբերականի հրատարակության իրավունք ստանալ, որովհետև այդ բանի համար անհրաժեշտ ցենզ չուներ: Եվ նա համագործակցում է Ստ. Նազարյանին:

«Հյուսիսսփայլ»-ի հրատարակության առաջին տարիներին Նալբանդյանը գործուն մասնակցություն է ցույց տալիս ամսագրի խմբագրական աշխատանքներին, ջանալով հնարավորության սահմաններում սկզբունքային ու նպատակասլաց դարձնել պայքարը կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ և ձգտելով «Հյուսիսսփայլ»-ին տալ արմատական դեմոկրատական ուղղություն: Այդ նրան մասամբ հաջողվում է: Իրենց ամսագիրը նա որակում է որպես հայ իրականության մեջ թագավորող խավարը փարատող լույսի ճառագայթ: Այս իմաստով հետաքրքրական է ամսագրի սիմվոլիկ անվան ընտրությունը՝ «Հյուսիսսփայլ», որ վկայում է ռուսական առաջավոր մտքի («Полярная звезда») նկատմամբ խմբագիրների տածած համակրանքի մասին:

¹ ЦГИАЛ, фонд № 777, оп. 2, ед. хр. № 89.

«Հյուսիսափայլ»-ի հրատարակության դործը մեծ մասամբ ընկած էր Ստ. Նազարյանի վրա, որը ոչ մի ջանք չէր խնայում մասագրի որակի բարձրացման համար:

Նազարյանի մի նամակից երևում է, որ նա որոշել էր ամսագրի հրատարակությունն սկսել առնվազն 600 բաժանորդ ունենալուց հետո միայն: Նա մտադիր էր բնագիտական հոգևածնեքը և մեծ մարդկանց կենսագրությունները տպագրել համապատասխան նկարների հետ միասին: Խմբագրի ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ մտադրությունները չեն իրականանում: 1858 թվականին «Հյուսիսափայլ»-ի բաժանորդների թիվը հասնում էր միմիայն 300-ի:

Նազարյանը ժամանակի ռուս ամսագրերի օրինակով ցանկանում էր ունենալ մշտական աշխատակիցներ և թղթակիցներ, որոնց վարձատրության համար անհրաժեշտ էր առնվազն 5000 ռուբլու չափ մի գումար: Սակայն, զուրկ լինելով նյութական անհրաժեշտ միջոցներից, Ստ. Նազարյանը և Մ. Նալբանդյանը չեն կարողանում պահել հատուկ աշխատակիցներ և իրենք են կատարում ամսագրի հրատարակման հետ կապված բազմապիսի աշխատանքները: Անգամ Նալբանդյանն ամսագրում աշխատելու տարիներին ոչ մի դրամական հատուցում չէր ստանում:

«Հյուսիսափայլ»-ի հրատարակության երկրորդ տարում նրա բաժանորդների թիվը հասնում է 340-ի: Ամսագիրն իր քննադատական ուղղության պատճառով հայ ղեակցիոն հրապարակախոսների, հոգևորականության և հարուստների շրջաններում ձեռք է բերում բազմաթիվ հակառակորդներ, որոնք ամեն միջոց գործադրում էին՝ այն դադարեցնելու համար: Այն բանից հետո, երբ 1860 թ. նոյեմբերին Մ. Նալբանդյանը մեկնում է արտասահման, «Հյուսիսափայլ»-ի վիճակն ավելի է ծանրանում: 1862 թվականին նրա բաժանորդների թիվն իջնում է մինչև 170-ի: Նազարյանն իր նամակներից մեկում գրում է.

«Այն ծանրությունը և անտանելի ծանրությունը մնում է դեռևս իմ վերա միայն, այսինքն գրավոր աշխատությունքը»

որովհետև արծաթի անհնարին աղքատությունը այնքան է, որ ինձ գործակից աշխատավորը պահելու կարողություն չկա»¹։

1863 թվականին Նաղարչյանը դադարեցնում է «Հյուսիսսփայլ»-ի հրատարակությունը։ Բարեկամների օժանդակությամբ 1864 թ. նա վերսկսում է հրատարակել «Հյուսիսսփայլ»-ը, բայց դա տևում է մեկ տարի միայն։

Իր գոյություն 6 տարիների ընթացքում «Հյուսիսսփայլ»-ը նշանակալից աշխատանք է կատարում հայ հասարակական մտքի պատմության մեջ։

«Հյուսիսսփայլ»-ի առաջին համարում տպագրված՝ Նաղարչյանի «Հայկական լեզվի խորհուրդը» ծրագրային հոդվածն արդեն նախանշում էր գործունեության այն ուղին, որով պետք է տարվեր ամսագրի հրատարակությունը։ Հավատարիմ մնալով այդ ծրագրին, Նաղարչյանը իր ամսագրի հրատարակության ողջ ժամանակամիջոցում հաճախ է անդրադառնում ազգի «իմացական և բարոյական պիտույքների» հարցին։ Առաջնահերթ էր ժողովրդին հասկանալի դրական լեզվի մշակման խնդիրը։

Նոր լեզվի պրոպագանդայից բացի «Հյուսիսսփայլ»-ի էջերում Նաղարչյանը հսկայական տեղ է նվիրում մայրենի գրականության զարգացման, ժամանակի տռաջալոր դիտողական մտքի նվաճումների մասսայականացման, ուսական և եվրոպական կուլտուրային և քաղաքակրթությանը հաղորդակցվելու հարցերին։

Հայ ժողովրդի լուսավորության և կրթության հարցին նվիրված իր գրեթե բոլոր հոդվածներում Նաղարչյանն ընդգծում է Ռուսաստանի պատմության, աշխարհագրության, տնտեսական կյանքի ուսումնասիրության անհրաժեշտությունը։ Հայկական դպրոցների համար մշակած իր ծրագրում նա հայ աշակերտների խնդիրն է համարում ուսաց լեզվի ուսումնասիրությունը։

Նաղարչյանի լուսավորական ծրագիրը հանգում էր հետևյալին՝ ազգի նյութական միջոցներով աղքատին դպրոցի հաստատման (տղաների և աղջիկների համար), տպարանի հիմ-

¹ «Լուսա», 1901, գիրք Բ, էջ 452։

նադրման, ինչպես և մի լուրջ ընկերության կազմակերպման, որը կարողանար իրականացնել անհրաժեշտ գրականության տպագրության գործը, և այլն:

Նազարյանի լուսավորական ծրագիրը նպատակ ունի դաստիարակելու ողջ հայ ազգը, ուստի նա իր ծրագրի կենսագործումը պայմանավորում էր հայ ազգի բոլոր խավերի ջանքերով. «Եթե մեր սիրելի հայերը, մեծ ու փոքր, հոգևոր և աշխարհական, ուսումնական, արհեստավոր ու վաճառական, գործեին մեկ մարդու նման», ապա, ըստ նրա, հայերի լուսավորության գործը կիրականանար:

Վ. Ի. Լենինը 60-ական թվականների լուսավորիչներին տված իր բնութագրման մեջ անդրադառնալով այդ հարցին, գրում է.

«Լուսավորիչներն իբրև իրենց հատուկ ուշադրության առարկա չեն առանձնացրել բնակչության ոչ մի դասակարգ, խոստով էին ո՛չ միայն ժողովրդի մասին ընդհանրապես, այլ նույնիսկ ազգի մասին ընդհանրապես»¹:

Որպես լուսավորիչ, Ս. Նազարյանն իր «Հյուսիսափայլ»-ը ծառայեցնում է հայ ազգի լուսավորության գործին, իր առաջին խնդիրը համարելով ուսական կուլտուրայի յուրացումը: Սակայն, ինչպես արդեն նշել ենք, ուսական կուլտուրայի մեջ նա չէր տեսնում ժամանակի երկու կուլտուրաների՝ կառավարական պաշտոնական ռեակցիոն կուլտուրայի և ուսվածքավարական պաշտոնական ռեակցիոն-դեմոկրատական կուլտուրայի առկայությունը:

Երախտագիտության զգացումով արտահայտվելով Ռուսաստանի մասին, որի շնորհիվ հայերն ազատվել էին «մի անտանելի, անարգական ստրկութենից», Նազարյանը հայերին հավատարմության կոչ է անում ուսական պետությանը, թագավորին: Ելնելով այն բանից, որ հայերը հանդիսանում են ուսական պետության հպատակները, Նազարյանը հայերին քաղաքականապես ուս է համարում՝ պահանջելով ընդօրինակել ուսական կուլտուրան, որպես ժամանակի առաջավոր, եվրոպական կուլտուրա:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 2, էջ 681:

Նազարյանի հյուսիսափայլյան շրջանի գործունեության համար բնորոշն այն է, որ նրան հուզել են հայերի վիճակի բարվոքման, նրանց դաստիարակության, կրթության, եվրոպական գիտության հետ հաղորդակցվելու հարցերը:

Կոչ անելով ընդօրինակել եվրոպական անտեսաձևը, նա առանձնապես կարևոր է համարում վաճառականության զարգացումը: Մի ազգի կուլտուրականության և բարձր զարգացման արտահայտությունը համարելով նրա վաճառականության զարգացման աստիճանը, Նազարյանը հորդորում է երկրագործներին՝ ամեն կերպ օժանդակել վաճառականներին:

Նազարյանը համոզված էր միաժամանակ, որ կրթության միջոցով կարելի կլինի հասնել հայ ազգի բարոյական և նյութական վերածնությանը: Այս առումով էլ նա անհրաժեշտ էր համարում երիտասարդ սերնդին մասնագիտական կրթություն տալով՝ նրանցից պատրաստել պոլիտեխնիկական մասնագիտություն ունեցող մարդիկ: Իր ապագա մասնավոր դրսևրոցի հայտարարության մեջ ևս նշում է, որ պետք է պատրաստի գործնական կյանքի զանազան բնագավառների գործիչներ՝ վաճառականներ, արվեստավորներ և այլն:

Ի՞նչ նյութական հիմքի վրա էր հաստատելու Նազարյանն ազգային ուսումնական ձեռնարկությունները: Հայերի նյութական և բարոյական կյանքը բարեկարգելու նպատակով նա առաջարկում է հիմնադրել մի ընկերություն, որ պետք է կոչվեր «ընդհանուր հայկական ընկերություն վասն բարեկարգելու Ռուսաստանի չքավոր հայոց նյութական և բարոյական կյանքը»: Նազարյանն այդ ընկերության գլխավոր նպատակն էր համարում՝ «փակել աղքատության և մերկության ճանապարհը, դաստիարակելով և ուսուցանելով ժողովրդի չքավոր զավակները. դաստիարակությունը և ուսումը կպատրաստեն նոցա մի ոսկի ապագայք»¹:

Հետագայում կրկին անդրադառնալով հայկական կյանքի վերանորոգության իր ծրագրին, Նազարյանը վճռական դեր է հատկացնում ազգային դպրոցին, համարելով դա «միակ

¹ «Հյուսիսափայլ», 1862, № 7, էջ 49:

հնարը հայկական կյանքի վերանորոգության, բուն հիմքից և արմատից: Եթե հայերին մի բան կօգնե, դա է մի ազգային մայր դպրոց եվրոպական հիմքերի վերա»¹:

Սակայն Նազարյանի պահանջները միանգամից չէ, որ ընդունվում են: Ժամանակակիցների մեծ մասը կասկածի տակ առնելով հայ ժողովրդի առաջընթացի օգտին արած նրա յուրաքանչյուր առաջարկը՝ կատաղի հարձակում է սկսում «Հյուսիսափայլ» դեմ, փորձելով դադարեցնել տալ նրա հրատարակությունը: Բայց Նազարյանը հետևողական էր իր սկզբունքների մեջ և հավատարիմ՝ ժողովրդի լուսավորության իր մեծ նպատակին:

¹ «Հյուսիսափայլ», 1864, № 3, էջ 226:

ՅՍ—ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՊԱՐՅԵՐԱԿԱՆ
ՄԱՄՈՒԼԸ ԵՎ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԻ»-Ը

50—60-ական թվականների հայ պարբերական մամուլի էջերում արտացոլվել է այդ ժամանակաշրջանի հայ հասարակական հոսանքների միջև տեղի ունեցող պայքարը:

«Հյուսիսավայլ»-ի դեմ կատաղի արշավ է սկսում կղերական Ֆեոդակական հոսանքը «Ճռաքաղ», «Մեղու Հայաստանի» և «Մասյաց աղավնի» պարբերականների էջերում:

«Ճռաքաղ» ամսագիրը հրատարակվում էր Մոսկվայում Մսեր և Զարմայր Մսերյանների կողմից, 1858-ից մինչև 1862 թվականը:

Ամսագիրը կազմված էր երեք բաժնից. առաջինը նվիրված էր հին գրականության, երկրորդը՝ գրաբար լեզվով գրված նոր գրականության, իսկ երրորդը՝ աշխարհաբար լեզվով գրված նոր գրականության: Բոլոր այդ բաժիններում քնդգրկված նյութերը և բանաստեղծությունները, չնչին բացառությամբ, կտրված էին ժամանակի հասարակական կյանքից, հայ իրականությունը հուզող հրատապ հարցերից և գերազանցապես պատվում էին կրոնական ու մասամբ էլ պատմական թեմաների շուրջը: Այսպես, տպագրվում են կիլիկիացի Ներսես արքեպիսկոպոսի թուղթը, Հոհանիսիկ վարդապետի համառոտ պատմությունը («Անցից անցելուց ի վերին կողմունս Հայաստանի ըստ կարգի ժամանակագրութեան»), Հովհաննու վարդապետի՝ «Բացատրութիւն աղօթից Ամբակումսյ մարգարէի», Հովհան Ոսկերեբանի՝ «Ներբողու-

թիւն ի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ»-ը, այլեւ բազմաթիւ քա-
րոզներ, թղթեր, հոգեւոր բովանդակութիւն ունեցող բառերի
ստուգարանութիւններ, եկեղեցական ծեսերի բացատրու-
թիւններ, և այլն: Բանաստեղծութիւնները ևս մեծ մասամբ
կրօնական բովանդակութիւն ունեին («Ներբողեան ի սուրբ
Գրիգոր Լուսաւորիչ», «Աղերս առ Տիրամայրն», «Տաղ ս. Սար-
գիսի զօրաւարին», «Մարիամ առ խաչին», «Տաղ ի յարութիւնն
Քրիստոսի» և այլն):

Տպագրւում էին հոգեվածներ, նվիրված Ռուսաստանի հին
պատմութեան զանազան դրվագներին և հուշարձանների նկա-
րագրութեանը, վաճառականութեան վիճակին Ճապոնիայում,
չինաց բժշկութեանը, Իտալիայի կրօնական շարժումներին
կամ Լյուդովիկոս 14-րդի ժամանակի Ֆրանսիայի իրադար-
ձութիւններին:

Ժամանակակից հայ իրականութեանը «Ճոռաքաղ»-ն անդ-
րադարձել է միայն «Հյուսիսսփայլ»-ի կապակցութեամբ,
աշխատելով «ապացուցել» այդ ամսագրի վտանգավորու-
թիւնը և դադարեցնել տալ նրա հրատարակութիւնը:

«Ճոռաքաղ»-ի խմբագիրները օգտագործում էին ամեն մի
հնարավորութիւն ցարական կառավարութեանը հաւատարմաց-
նելու իրենց նվիրվածութեան և հպատակութեան մեջ: Որպես
կղերա-ֆեոդալական հոսանքի օրգան, «Ճոռաքաղ»-ը թշնա-
մական դիրքերից էր դիտում նոր, բուրժուական հարաբերու-
թիւնների զարգացումը, ձգտելով հին փոխհարաբերութիւն-
ների և ճորտատիրական կարգերի պահպանմանը: Ամսագրի
էջերում հետեւողականորեն ցատագովվում էին ֆեոդալական
կարգերն ու պրոպագանդում էր միջնադարյան-կրօնական
մտայնութիւնը:

Առաջնորդվելով այն սկզբունքով, թե ազգի բարոյակա-
նութեան ամենատառաջին դաստիարակը կրօնն է, նրանք մի
երկրի քաղաքական կարգերի բարգաւաճումը և երջանկու-
թիւնը պայմանավորում են հավատի ուժով: «Ա՛յն երկիրն,—
գրում է «Ճոռաքաղ»-ի հոգեվածագիրը,— ուր ժողովուրդն հաս-
տատ է սուրբ հավատոյ մեջ, բարգաւաճի ամենայն քաղա-
քական և եկեղեցական բարեկարգութեամբ. և սմին հակա-
ռակ, ա՛յն երկիրն՝ ուր ժողովուրդն զուրկ է ՚ի հաւատոց,

կամ թոյլ է 'ի հաւատս, ալէկոծի միշտ խռովութեամբք և խանդարի անկարգութեամբք»¹:

«Ճռաքաղ»-ը պրոսպագանդելով քրիստոնեական կրօնի դոգմաները, քարոզելով հավատարմություն ցարական կառավարութեանը, մեծ ջանք էր գործադրում ժողովրդին հեռու պահելու սոցիալական հարցերից, ուստի առաջաւոր մտքի, ռետլյուցիոն-գեմոկրատական գաղափարների աղդեցութեանից: «Ճռաքաղ»-ի խմբագիրները կոչ էին անում պաշտպանել «մեր սուրբ կրօնը, մեր նվիրական լեզուն, մեր սրբազան ծեսերը» և համոզմունք հայտնում, որ «այն ժամանակ և լուսավորութեան կունենանք և ազգ կլինենք»²:

Ազգային անապարծութեանը և կրօնամոլութեանը բնորոշում են Մսերյաններին:

«Յորդոր հայրենասիրութեան» հոգւածում ամսագիրը կոչ է անում «Երկնչել 'ի Տեառնէ, և ծառայել նմա բոլոր սրտիւ. զի սկիզբն իմաստութեան՝ երկիւղ Տեառն: Գուն գործեսցէ ուրեմն իւրաքանչիւր ոք փրկել զհոգի իւր. պարտ համարեսցի ճանաչել զսուրբ կրօն իւր, ուսանել զքաջութիւնս նահատակաց և հետեւել նոցին շաւղաց, պատկերացուցանել 'ի միտս իւր զչարչարանս արանց քաջաց և լաւաց՝ զոր վասն հաւատոյ և ազգի յանձն առին»³:

Հայերին վերագրած այս կարծեցյալ կրօնասիրութեան մտայնութեամբ «Ճռաքաղ»-ն ուղիղ գծով միանում է ժամանակի ռուսական ռեակցիոն հոսանքի ուղարկւած այն քարոզին, թե ուստի ժողովրդի ամենաբնորոշ գծերն են հանդիսանում ժողովրդայնութեանը և նվիրւածութեանը ուղղափառութեանն ու ինքնակալութեանը: Կառավարական պաշտոնական այս գաղափարախոսութեանը լայնորեն պրոպագանդւում էր անցյալ դարի քառասնական թվականների ռեակցիոն օրդան «Մոսկվիտյանին»-ի էջերում, որի խմբագիրներ Պոդոլինը և Շելիբրյովը ամսագրի նյութերն անգամ դասավորում էին այդ լողորմդին համապատասխան: Ամսագրի յուրաքան-

¹ «Ճռաքաղ», 1860, № 1, էջ 5:

² Նույն տեղը, 1861, № 75, էջ 250—251:

³ Նույն տեղը, 1859, № 11, էջ 302:

չյուր նոր համար բացվում էր հոգևոր բնույթի որեէ հոգւա-
ծով: Կառավարական գաղափարախոսությունն էր պրոպա-
գանդում և ժամանակի մոլի ռեակցիոներներ Կորսակովի և
Բուրաշովի օրգան «Մայակ»-ը: Բուրաշովի համար աստվա-
ծաշունչն էր այն միակ շափանիշը, որով ռուսական հասա-
րակական կյանքի բոլոր երևույթներն իրենց գնահատականն
էին ստանում: Այսպէս, քննադատելով Պուշկինի, Լերմոնտո-
վի և Գոգոլի ստեղծագործությունը, «Մայակ»-ի հոգւածագի-
րը հայտարարում է, թե ժամանակի ռուս գրականությանը
ակնհայտորեն պակասում է հայրենասիրության, ժողովրդայ-
նության և կրոնասիրության ոգին¹:

Իր այդ նախորդներից բացի, «Ճռաքաղ»-ն ուներ և իրեն
արժանի ժամանակակիցը՝ հանձին 60-ական թվականների
ծայրահեղ ռեակցիոն օրգան «Դոմաշնյայա բեսեդա»-ի, որի
խմբագիր Ասկոչենսկին իր շարաթաթերթի յուրաքանչյուր
համարը լցնում էր եկեղեցական քարոզներով²:

«Ճռաքաղ» ամսագրի համար շատ բնորոշ է նրա կապը
ռուսական ռեակցիոն օրգան «Սեվերնայա պչելա»-ի հետ,
որը մի քանի տասնյակ տարի անընդհատ գլխավորում էր
ռուսական ռեակցիոն հոսանքի ժուռնալային տրիումվիրատը:
Բուլգարինի թերթից «Ճռաքաղ»-ը թարգմանություններ էր
հրապարակում իր էջերում: Հատկանշական է, որ «Սեվերնա-
յա պչելա»-ն էլ իր հերթին տպագրում էր Խալիբյան ուսում-
նարանի օժման ու բացման հանդեսի նկարագրությունը, ընդ-
հուպ մինչև բաժակաճառերն ու ուղերձները³: Այս երկու
պարբերականների բարեկամությունն օրինաչափ երևույթ է և
բացատրվում է նրանց և՛ քաղաքական համոզմունքների, և՛
գրական ըմբռնումների հարազատությամբ: 60-ական թվա-
կաններին «Սեվերնայա պչելա»-ն անվանարկելով Բելին-
սկուն, նրա երկերի հրատարակությունն ավելորդ էր համա-

¹ См. А. Г. Деметьев, Очерки по истории русской жур-
налистики 1840—1850 гг., էջ 88:

² См. Б. П. Козьмин, Журналистика 60-х годов XIX века,
М., 1948 г.

³ См. «Открытие в Феодосии Халибовского армянского учи-
лища», «Северная пчела», 1858, № 280.

րում: Թերթի գրախոս Կ. Պոլևոյը նշում էր, թե Ռելինսկին ոչ մի օգուտ չի բերել ռուս գրականությանը, ոչինչ չի արել նրա համար, չարիքից բացի¹: Նույն հոգովածում Պոլևոյը ոչնչության է հավասարեցնում և Գոգոլի ստեղծագործությունը, հայտարարելով, թե նրա երկերը նպաստել են այն քաոսի ապրածմանը, որն իշխում է ներկայումս գրականության մասին եղած հասկացողությունների մեջ:

Հանդես գալով ճիշտ այդպիսի դիրքերից, «Ճոաքաղ»-ը դժբախտություն էր համարում Նալբանդյանի և Նազարյանի գործունեությունը և կոչ էր անում հրո ճարակ դարձնել նրանց երկերը: Մսերյանների համար անհանդուրժելի էին Նազարյանի ամենաշափավոր պահանջներն իսկ: Այդ է պատճառը, որ նրանք «Հյուսիսստիայ»-ի խմբագրին խորհուրդ էին տալիս առաջնորդվել միմիայն աստվածաբանական կանոններով: Հասկանալի է նաև, թե ինչու «Ճոաքաղ»-ի խմբագիրները քաջալերում էին Նազարյանի գրքերի «գրախոս» սեակցիոներ Առաքել Արարատյանին:

Գրաբարամոլ Մսերյաններն իրենց սլոքներն առաջին հերթին ուղղում են աշխարհարարի դեմ, որին քաղաքացիական իրավունքներ էր տալիս «Հյուսիսստիայ»-ը: Նրանք չէին հանդուրժում, որ «Հյուսիսստիայ»-ը քննադատում է հայ ազգի կյանքում եղած թերությունները: Ի վերջո, «Ճոաքաղ»-ը կորցրնում է իր հավասարակշռությունը Ստ. Նազարյանի այն հոգվածի հրապարակումից հետո, որտեղ պահանջվում էր բարեփոխումներ մտցնել հայ եկեղեցու ծեսերի և սովորույթների մեջ, վերանայել դավանաբանական մի շարք հարցեր:

«Ճոաքաղ»-ը Նազարյանի հայացքները համարում է հավատընդդեմ և ազգընդդեմ, իսկ նրա լուսավորության քարոզը՝ մոլորության կոչ: Հավատին մերձենալը «մեր լուսավոր օրերումը վիճել հավատի վերա», շատ հին բան է և «ծիծաղելի անախրոնիզմ»², — գրում է Զարմայր Մսերյանը:

Այնուհետև, ամսագրի էջերում հրապարակվում է Մ. Մսերյանի «Զննութիւնք գրուածոց Ստեփաննոսի Նազարեանց» հոգվածը, որտեղ քննարկվում են Նազարյանի «լանցանջան

¹ Տե՛ս «Северная пчела», 1859 № 229.

² «Ճոաքաղ», 1860, № 12, էջ 148:

րը»։ Տպագրվում են նաև Հ. Չերքեզյանի նամակը Նազարյանի հոդվածի դեմ, Չերքեզյանի երկրորդ հոդվածը («Մեկնութիւն մեկնութեանց») և այլն, և այլն։

Հոդվածագիրները Նազարյանից պահանջում են հրաժարվել ունեցորմ պահանջող իր հոդվածներից, ծնկի գալ ազգի առջև, ընդունել գրաբարի գերազանցությունն աշխարհարարի հանդեպ և թողնել իր մեծամիտ տոնը։

Մսերյանները բացահայտ բանավեճին ղուգընթաց, իրենց մաղձը Նազարյանի և Նալբանդյանի վրա թափում էին նաև անձնական նամակների և զանազան գրությունների մեջ։

Հետաքրքրական է Մսերյանների արխիվում պահվող, Մսեր Մսերյանի ձեռագրով գրված, բայց անստորագիր մի բանաստեղծութուն, որի մեջ հեղինակի ատելութունը Նազարյանի և Նալբանդյանի դեմ գուրս է գալիս պատշաճության սահմաններից ¹։

«Զարին ծնունդ՝ Նազարյանց
Ի շարության գերազանց,
Եվ բո ընկեր Վարչամյանց
Լիրբ է նման հաջող շանց։

Դու վարդապետ անվեղար,
Սուտ առարկալ մեզ եղար.
Չե՛ս դու արժան փրկավին
Չլ ուտեցո՛ղ ես լավին։

Կե՛ր Լուսերի բալասը,
Եվ մի՛ պահեր մեծ պասը.
Խըմե՛ փիվայն ՚ի վերա,
Սաղայի հետ բե՛ր արա։

Լուսավորչու լո՛ւյս հավատ
Պիտի մնա միշտ հաստատ.
Վնասել նմա թե ջանաս,
Իմացի՛ր՝, շո՛ւտ փրչանաս։

Էջմիածնի սուրբ Աթոռ
Զուգե քեզ պես գիժ տոթոր.

¹ ՀՄՍԻ Պետ. Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 208, փավ. 1703:

Հասկանալի է, որ Մսերյաններին հայտնի էր Վարչամ-
յանի ուլ լինելը:

Մսերյանների արխիվի փաստաթղթերի ուսումնասիրու-
թյունը ցույց է տալիս, թե որքան լուրջ ուշադրություն են
նվիրել նրանք Նաղարչյանի և Նալբանդյանի դեմ մղվելիք
պայքարի հարցին: Ինչպես իրենց հողվածներում, այնպես էլ
անձնական նամակներում նրանք ամենաթունոտ խոսքերով և
զրեթե հայհոյանքներով են արտահայտվում «Հյուսիսա-
փայլ»-ի և նրա աշխատակիցների մասին: Այսպես, Մանուկ
բեյին հասցեագրած հայատառ թուրքերեն իր մի նամակում
Մսերյանը ծաղրում է Նաղարչյանի արևելյան լեզուների խմա-
ցությունը և կասկածի տակ առնում նրա դոկտորական դի-
սերտացիայի արժեքը: Հետաքրքրական է, որ նա միաժա-
մանակ խնդրում է միջնորդել Հաղարչյանների և կաթողիկոսի
առաջ՝ իրեն մագիստրոսի աստիճան շնորհելու համար:
Դարձյալ հայատառ թուրքերենով գրված մի այլ նամակում
Մսերյանը հայտնում է, որ խենթ Նաղարչյանն իր ամսագը-
րում «պրոտեստանտություն» է տարածում, ուստի իր պարտ-
քըն է համարում այլ խմբագիրների օրինակով հանդես գալ
նրա դեմ: Հայտնում է սինոդի որոշումը «Հյուսիսափայլ»-ը
դադարեցնելու մասին և ուսկա ավելացնում է. «Նաղարչյանն
այսպիսի խենթությունը ի՛նչ օգուտ կրերի ինստիտուտին:
Այս մարդու գիժ լինելն առաջին անգամ դուք հասկացաք,
բայց ուրիշ հասկացող չկա»²:

Անձնական նամակներից բացի, հետաքրքրություն են
ներկայացնում Մսերյանների արխիվում պահպանվող այլ
փաստաթղթեր ևս: Այսպես, պահպանվում է Մսերյանի «Մխա-
լանք վարդապետարանի» մեծածավալ աշխատությունը³, գըր-

1 Վերջին տողը առաջին վարիանտում եղել է. «Նո՛ր դու վրտեր,
նո՛ր Լութեր»:

2 ՀՄՍՈ Պետ. Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 207,
վավ. 1747:

3 Նույն տեղը, թղթ. 208, վավ. 2290:

ված 1858 թ. Ստ. Նազարյանի «Վարդապետարան կրոնի» աշխատության դեմ: Ուշադրության արժանի է մի այլ փաստաթուղթ: 1858 թվականին «Մեղու Հայաստանի»-ում տպագրվում են Վահան Արամյան ստորագրությամբ երեք նամակ՝ ուղղված «Հյուսիսսփայլ»-ի դեմ: Մսերյանների արխիվում պահպանվող այդ նամակների ձեռագիրը մեզ հասանելիություն է տալիս պարզելու ինքնությունը նամակագրի, որը ոչ այլ ոք է, եթե ոչ՝ Մսեր Մսերյանը: Վերջինս մի այլ ձեռագրի մեջ անդրադառնալով այդ նամակների բնույթին, նշում է, որ հոգվածագրի անունն ընտրված էր հատուկ դիտավորությամբ. «Ահա «Մեղու Հայաստանի» 24 և 25 համարներումը տեսնում եմք երկու նամակքը Վահանա Արամյան, որ արդարև իբրև Վահան լինելով, սկսած է պաշտպանել ոչ յուր անձը, այլ յուր ազգի փառքը, պատիվը, պարծանքը, նորա նվիրական պատմությունը և սուրբ եկեղեցին, և կարծես, թե ամենայն ջանյուր աշխատում է յուր դատափեսա ծնողը թափել հայրատանջ զավակների ձեռքից»¹:

Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մսերյանի գրչին պատկանող այս վերջին փաստաթուղթը, որը պոլեմիկական բնույթ է կրում, և որի մի փոքր հատվածը տպագրվել է «Ճռաբաղ»-ի էջերում²:

Այս հոգվածից երևում է, որ ռեակցիոն լադերի գործիչները մի որոշ ժամանակ հույս են ունեցել, թե Նազարյանը կփոխի իր բռնած դիրքը և «դարձի» կգա. Մսերյանը Նազարյանին նույնիսկ խորհուրդ էր տալիս օրինակ վերցնել Մխիթարյանների և Ալվազովսկու հրատարակություններից: Ուշագրավ են այն տողերը, որոնք նվիրված են «Հյուսիսսփայլ»-ի և Մ. Նալբանդյանի քննադատությանը: Վերոհիշյալ հոգվածը չնայած պատկանում է Մսեր Մսերյանի գրչին, բայց ստորագրված է Զարմայր Մսերյանի կողմից: Հավանաբար, հաշվի առնելով գրական էտիկան, հայր Մսերյանն անպատշաճ է համարել ստորագրել մի հոգված, որը պետք է պաշտպաներ իրեն Նալբանդյանի սուր գրչից:

¹ Նույն տեղը, թղթ. 192, վավ. 123:

² «Ճռաբաղ», 1859, № 6:

Հավելվածի բաժնում ամբողջությամբ մեջ ենք բերում «Հյուսիսափայլ»-ի պատմության հետ մեծ առնչություն ունեցող այս հոդվածը, որը մի անգամ ևս ցույց է տալիս «Հյուսիսափայլ»-ի հրատարակիչների համար ստեղծված ծանր պայմանները¹:


Վերոհիշյալ բաժնում ղեկավարված է նաև իր նշանակությամբ խիստ արժեքավոր և դարձյալ Մսեր Մսերյանի գրչին պատկանող, անստորագիր և անթվական մի նամակի սևագրություն, որն ուղղված է կաթողիկոսին և գրված՝ հավանաբար 1860 թ. վերջերին կամ 1861 թ. սկզբին: 13 կետից բաղկացած մի նամակ է այդ, որի հեղինակը հիմնավորելով «Հյուսիսափայլ»-ի վտանգավոր ընթացքը և խոսելով հայ եկեղեցու դիսին կախված կարծեցյալ վտանգի մասին, խնդրում է պատժել այդ ամսագրի խմբագրին և գլխավոր աշխատակցին, և «անսխառն հեռացուցանել ի քաղաքէ աստի (զայս ոք և զայն)»²:

Հետաքրքրական է այն դիտողությունը, թե Նազարյանին կարգի հրավիրելու դիտավորությունը Այվաղովսկին գիմել է և և. Լազարյանին, որն իր հերթին բազմիցս զգուշացրել է հիշյալ «մոլորամիտ ազգայացի», բայց ապարդյուն:

Մսերյանների արխիվի փաստաթղթերը վկայում են, որ Նազարյանի և Նալբանդյանի գործունեությունը լրջորեն մտահոգել է նաև խաչատուր Լազարյանին: Վերջինս Մ. Մսերյանին ուղղված 1859 թվականի օգոստոսի 10-ի թվակիր նամակում գրում է. «Շատ ափսոս, որ աշխատասեր և գիտնական պրոֆեսոր պ. Նազարյանցը պատանեկության դաստիարակությամբ բարեխիղճ կերպով օգուտ տալու փոխարեն իր գիտելիքներն ու տաղանդը գործադրում է վնասակար երկպառակությունների՝ և իր, և ուրիշների համար: Պետք է ափսոսալ և արհամարհել համբերությամբ և խոհեմորեն, որովհետև հոռին և վտանգավորը չի կարելի փոխել հատկապես մեծ հասակում և գրեթե միշտ կարծրացած ասիական համառության առկայության դեպքում:

¹ Տե՛ս Հավելված № 1:

² Նույն տեղը, № 2:



Միհայել Նալբանդյան

Ուրիշ համախոհների մասին չեմ հիշում: Ոմանք տգիտութ-
յունից, այլք՝ չար դիտավորությամբ վարժվում են խռովու-
թյան: Հարկավոր է նրանց հաղթել խորին արհամարհանքով,
հեռանալ նրանց ընկերակցությունից և հանդիպումներից:
Արատավոր բարոյականությունն անկարելի է փոխել»¹:

Ուշագրավ է, որ «Հյուսիսափայլ»-ի ռեսերիմ թշնամի
Հ. Չերքեզյանը ևս այդ օրերին Նաղարյանին ուղղված մի
նամակում չկարողանալով իրեն զսպել, բացականչում է.
«Վայ քեզ և Նալբանդյանցին, եթե կենդանի լինեի Ներսեսը
աշխարհիս հողագնդի վերա տեղ չէիք գտանելու ձեր պայ-
մաններով. արդարև այդ պայմանի համար շատ և շատ հար-
կավոր էր Ներսեսը»²: Սակայն, Գաբրիել Այվազովսկին,
Մսերյանները և մանդինյանականները բարեխղճորեն փոխա-
րինում էին Ներսես կաթողիկոսին, ջանալով իրենց ստոր
դավերով և ամբաստանություններով հրապարակից հանել
Նալբանդյանին և Նաղարյանին:

«Մեղու Հայաստանի» շարաթաթերթը հրատարակվում էր
Թիֆլիսում Ստեփանոս քահանա Մանդինյանի խմբագրու-
թյամբ: Թերթի էջերում տպագրվում էին քաղաքական լուրեր,
կառավարական հրամաններ, արտասահմանյան թերթերից
թարգմանված պաշտոնական հոդվածներ: Խմբագիրն իր թեր-
թում միաժամանակ զետեղում էր բարոյախոսական պատմը-
վածքներ, վիպակներ, պատմական հոդվածներ, հին Հայաս-
տանի հնությունների նկարագրություններ, առևտրական հաշ-
տարարություններ և այլն:

Մանդինյանի թերթն առաջնորդվում էր կղերա-ֆեոդալա-
կան հոսանքին բնորոշ ազգի միասնության դադափարով:
Նկատի ունենալով «Հյուսիսափայլ»-ում արծարծված մտքե-
րը, «Մեղվի» հոդվածագիրներից մեկը վրդովված բացական-
չում է. «Արդյոք ե՞րբ պիտի վերջանա այս միմյանց թշնա-
չում է. «Արդյոք ե՞րբ պիտի վրա զրպարտությունքը... ո՛հ, այս
մությամբ մինը մյուսի վրա զրպարտությունքը... ո՛հ, այս
մի սոսկալի սովորություն, տաժանելի ցավ և անփարատելի

¹ ՀՍՍԻ Պե.ո. Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 206,
փափ. 1690:

² «Մասյայ աղագնի», 1861, № 11, էջ 127:

ախտ է մեր ազգայնոց մեջ»¹։ Թերթը կոչ է անում Հայաստանը դարձնել «պարծառքի տուն», «հաղթանակների ասպարեզ», որպեսզի Հայաստանը մոռանալով «արյան ճապաղիքը», հայրենասիրության շքեղ հիշատակներով կրկին ոգի առնի։

Այս ոգով են գրված և թերթում տպագրված բազմաթիվ այլ հոդվածներ։ Այսպես, Գ. Տեր-Կիրակոսյան Այգեհատցու «Հայաստանի հնությանց ախուր հիշատակ» հոդվածում ծեր կնոջ կերպարանքով պատկերված Հայաստանի ոգին հայերին քարոզում է հեռու մնալ շահասիրությունից և փառասիրությունից (որոնց հետևանքով Հայաստանն ավերվել է)։ Միաժամանակ նա հայերին հորդորում է նմանվել Արամին, Վահանին, Վարդանին և այլոց, և զենալ նրանց ճգնապարհով. «Քրիստոնեական սերն ձեզ դրոշակ, հայության անունը ձեզ թող վահան լինի, ազգության հոգին ձեզ անհաղթելի զեն և ասպար, քաջալերվեցեք, կօգնե ձեզ Նազովրեցին Հիսուս»²։

Այնուհետև, քրիստոնեական հավատի դրոշի տակ Մանգինյանը կոչ է անում սիրով ու փառաքշանքով դաստիարակել ազգը, խնայել հայրենիքը, շխտաբանել նրան և սիրո միաբանությամբ ծառայել ազգային առաջադիմության գործին։ Թե որքան հեռու էր Մանգինյանի թերթը իր ժամանակի գիտական մտքի բարձրությունից և որքան խոր էր ընկղմված հետադիմականների ճահճում, այդ երևում է թեկուզ հենց «Տեղեկություն Հայաստանի վրա» հոդվածից։ Հայաստանի բնության գեղեցկությունն ու բնական հարստությունները ցույց են տալիս, որ «աշխարհիս էս մասն առաջուց աստծումեն օրհնած տեղ է էլած։ Էն մասն աշխարհի, ինչպես որ ոմանք ասում են, աստված ընտրեց դրախտը տնկելու և առաջին մարդն Ադամ նրա մեջը բնակեցնելու, որո Մասիս ասված լեռնի վրա վեր եկավ Նոյան տապանը»³։ «Մեղու Հայաստանի» թերթում տպագրված մնացած նյութերը համապատասխանում են այս ընդհանուր ոգուն։ Այդ առումով հե-

1 «Մեղու Հայաստանի», 1860, № 19, էջ 151։

2 Նույն տեղը, 1859, № 32, էջ 254։

3 Նույն տեղը, 1858, № 1, էջ 4։

տաքրքրական է և զեղարվեստական գրականության բաժինը։ Արձակի բաժինն աղքատ է և զերազանցապես լրացվում է ուսու և օտար լեզուներից կատարված թարգմանություններով։ Կան մի քանի թատերական գործեր, որոնք պատկանում են խմբագրի՝ Ս. Մանգինյանի գրչին և արժարժում են կենցաղա-
յին, առօրյա հարցեր («Հայոց լեզու» և այլն)։ Հարուստ է բանաստեղծության բաժինը. այստեղ զետեղված բանաս-
տեղծությունների մի զգալի մասում գովերգված են Հայաս-
տանը, ազգասիրության գաղափարը, «Մեղու Հայաստանի»
թերթն ու նրա կարծեցյալ արժանիքները։ Կան բարոյա-խրա-
տական բնույթի բազմաթիվ բանաստեղծություններ, առակ-
ներ և չափածո հանելուկներ։ «Մեղու Հայաստանի»-ին աշ-
խատակցել են հիմնականում բանաստեղծ Պետրոս Մադաթ-
յանը (Սեյադ), Գ. Եվանգուլյանը, Հ. Սայազնուվյանցը, Ա.
Արարատյանը, որոշ շրջանում՝ Գ. Բարխուդարյանը և այլք։

Առանձնապես բեղմնավոր էր Սեյադի գրիչը։ Նա հանդես է գալիս գրեթե բոլոր համարներում և չափածո խոսքով ար-
ձագանքում «Մեղու Հայաստանի»-ի գաղափարներին։

Այսպես, 1858 թվականին ողջունելով «Մեղվի» հրատա-
րակությունը, նա գրում է.

«Շնորհիվ ուսաց, բո հայերդ,
նաղում են ոսկով, արծաթով
Երբ վայելեն անկեղծ սերրդ,
Քեզ կպահպանեն ապահով։

Հայք բանասիրության մասին
Ուրիշ ազգերից են ավել.
Դու էլ նրանց հետ միասին
Ըսկսյա ազգին համբավել»¹։

«Մեղու Հայաստանի» թերթում տպագրված բանաստեղ-
ծություններն արտահայտում են թերթի հիմնական գաղափա-
րախոսությունը՝ ազգի միաբանության և ցարական միապե-
տությանը հավատարիմ լինելու մասին։ Հայհոյելով «Հյուսի-
սափայլ»-ը նրա «ամբարիշտ» ուղղության համար, Ա. Արա-

¹ «Մեղու Հայաստանի», 1858, № 9, էջ 65։

ժառանգը իր ընթերցողներին հորդորում է խաղաղությամբ համագործակցել. «խռովությամբ բան չի ծաղկիլ», — դրում է նա.

«Մեր հայրենյաց վերքերն լանը,
նվ բժշկել դայն հոգանը,
նախ մեր աչքի գերանն հանենը,
Ապա ալոց շյուղերն»

Մեր ծառա եմք մեծ տերության
Վատ ձայնը նմա դուր չըգան»¹, և այլն:

Թերթի էջերում լայնորեն արտացոլվել է կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչների վարած բռնավեճը Նաղարյանի և Նալբանդյանի դեմ:

Մանդինյան քահանայն իր Թերթի հրատարակության առաջին իսկ տարվանից հետևողականորեն քննության է ենթարկում «Հյուսիսափայլ»-ում տպագրված գրեթե բոլոր հոդվածները, տպագրում է սլոլեմիկական բաղմաթիվ հոդվածներ, բանաստեղծություններ ու այլաբանական պատկերներ՝ ուղղված Նաղարյանի և Նալբանդյանի դեմ: Հիշենք հոդվածներից մի քանիսը.

Ս. Մանդինյանի «Մի քանի խոսք գերապատվելի Ստեփանոս Տեր Եսայան Նաղարյանցի դրած մատյանների վերա», Վ. Արամյանի (Մ. Մսերյան) երեք նամակները «Հյուսիսափայլ»-ի առաջին համարներում տպագրված նյութերի և հատկապես Նաղարյանի հոդվածների մասին, Ղ. Մարգարյանի «Պարոն Ստ. Նաղարյանցը և նորա գրավոր վաստակը», Մ. Իսահակյանի «Պատասխանի կրիտիկային Շահբեգի, որ տպված է «Հյուսիսափայլ»-ի 5-րդ ամսատետրակումը» հոդվածը: 1859 թվականին տպագրվում է «Հյուսիսափայլ» օրագրին 11-րդ համարին մեջ տպված պ. Նալբանդյանցի նամակին վրա դիտողությունք» վերնագրով Պալասանյանի հոդվածը, 1860-ին՝ նույն հեղինակի՝ «Պարոն Նաղարյանցի աշխարհաբար լեզվի վրա» հոդվածը, Չերքեզյանի նամակը խմբագրին՝ ուղղված Նաղարյանի դեմ, Սկայորդու թղթակցությունները

¹ «Մեղու հայաստանի». 1859, № 1, էջ 2:

կանը», որի «նենգավոր խորհուրդներով» խմբագիրը «խռովասեր» հոգւածներ է տպագրում «Հյուսիսափայլ»-ում:

1858 թվականին տպագրելով Այվազովսկու հայտարարությունը Թեոդոսիայում Հայկազյան ուսումնարան հիմնադրելու մասին, Մանդինյանը հրապարակական նամակով ողջունի խոսք է ուղղում նրան: Նա Այվազովսկուն համեմատում է հայ հին թարգմանիչների հետ, որոնք արևմուտք դնալով ուսում էին ստանում, ապա վերադառնում՝ լուսավորելու իրենց հայրենիքը: Նկատի ունենալով «Հյուսիսափայլ»-ի անբարյացակամությունն Այվազովսկու հանդեպ, Մանդինյանը բացականչում է. «Բանի տեղ մի՛ դնեք, թե հայոց արեղայից անուսումն են անվանում, մեծատուններին և հարուստներին՝ ազա՜հ ու ժլատ, և ազգին՝ մանուկ. թո՛ղ բաց անեն այն խոսողները եթե ոչ մտքի՝ դոնե մարմնո աչքերը և տեսնեն, թե մեկ արեղա նման յուր նախնի հարց ուսումնարան է բաց անում ՚ի Թեոդոսիա և հոգևոր դպրոց ՚ի Նախիջևան և հայ մեծատունն տեսնելով Ձեր ազգային եռանդն, այժմեն իսկ քնծայել է մեծ դումար, և յապայն ունի ապահովացուցանել ուսումնարանի վիճակը: Մարգարեական է ասածը՝ «օր աւուր բղխէ զբան, և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն»¹:

Մեղ թվում է, որ Մանդինյանի այս նամակն է առիթ ծառայել Նալբանդյանին շարադրելու «Հիշատակարան»-ի է գլխի Կոմս Էմմանուելին՝ հասցեագրած նամակը, որտեղ պատմվում է հաստատվոր բժիշկ Լինդմանի հետ ունեցած հանդիպման մասին: Այդ հանդիպման ժամանակ բժիշկը խոսում է մի անգլիական «երկրաչափի» մասին, որը փոխադրվել է Հնդկաստան, ինչպես և այն մասին, որ ինքը արքունի ծախքով ուղարկվել է քննելու Տաճկաստանի Բրուա քաղաքի հանքային ջրերը, սակայն իր փորձերն անհետևանք են անցել:

Ելնելով Լինդման անունից, որը Մանդին(յան) ազգանվան անոգրամն է, պետք է ենթադրել, թե «Հիշատակարան»-ի այդ հատվածն ուղղվել է Մանդինյանի և նրա համախոհների դեմ: Նշելով, թե Լինդմանը օրվա ընթացքում 12 շիշ դարեջուր էր խմում, Նալբանդյանը հավանաբար ակնարկում է

¹ «Մեղու Հայաստանի», 1858, № 39, էջ 308:

Այվազովսկու գովքը պարունակող Մանդինյանի վերոհիշյալ հոդվածը, որը տպագրվել էր հուլիսի 12-ի համարում: Բրուսայի հանգային ջրերի քննարկման հիշատակումը, մեր կարծիքով, վերաբերում է «Հյուսիսափայլ»-ի համարների քննարկմանը Մանդինյանի ամսագրում: Իր հոդվածներից մեկում քաղվածաբար մեջ բերելով Նաղարյանի օրագրի «անարգական խոսքերի ժողովածուն», «Մանդինյանը գրում է. «Ահա կրիտիկայն թողնելով այլոց անձանց, միայն նորա թթու, կծու, անարդական և նախատական բառերն այստեղ գրում եմ, հանելով միևնույնությանը նորա օրագրեն երեսահամարով, որ մեր ազգն իմանա, թե նախատինքն փողով առել է նրանից և այժմ էլ առնում է»¹:

Ի վերջո, Նալբանդյանն ամփոփում է. «Նա մտածում է գարնան բացվելովը Ռուսիա մտանել, կամի տեսանել և էջմիածինը, և խնդրեց ինձանից, որ ես ուղեկից լինիմ նորան այս ճանապարհորդության մեջ: Տեսանեմ, ինչպես հարմար կգա գործս, գուցե գնամ ևս, մեր Հայաստանի մոխրացած ավերակներին մի համբույր տայու»²,

Հավանաբար Նալբանդյանն ակնարկում է Այվազովսկու Ռուսաստանում կատարած ճանապարհորդությունը և ծաղրում այն աղմուկը, որ ստեղծվել էր այդ ճանապարհորդության կապակցությամբ:

1858 թվականին «Սովրեմեննիկ» ամսագրի «Ժամանակակից տեսություն» բաժնում տպագրվում է Կ. Նզյանի հոդվածը՝ նվիրված հայոց լեզվի, գրականության և պատմության ուսումնասիրությանը եվրոպայում: Այդ հոդվածում հեղինակը շանդրադառնալով Այվազովսկու քաղաքական գիտավորությանը, 1857 թվականին նրա կատարած ճանապարհորդությունը Ռուսաստանում բացատրում է բացառապես գիտական նպատակներով: Նա առանձնապես կանգ է առնում այն մեծ սպասելիքների վրա, որ Այվազովսկու ճանապարհորդության հետ կապում էր ողջ գիտական աշխարհն ու մասնավորապես ֆրանսիական արևելյան ընկերությունը: Նզյանը

¹ «Մեղու. Հայաստանի», 1858, № 16, էջ 129:

² «Հյուսիսափայլ», 1858, № 10, էջ 336 - 337:

նշում է, որ այդ ընկերությունը Այվադովսկուն հանձնարարել է իր ճանապարհորդության ընթացքում դարերի փոշինների տակից հանել մի շարք ձեռագրեր, ուսումնասիրել էջմիածնի շրջակայքի հնությունները և հավաքել արժեքավոր արձանագրություններ ու հնագիտական տեղեկություններ, որոնք կորած համարվող որոշ ձեռագրեր, Հայաստանի օրենքների գիրքը և այլն, և այլն¹:

Նազարյանի և Նալբանդյանի դեմ Մանգինյանն իր թերթում ղետեղում է ոչ միայն լրագրային հոդվածներ, այլև պատկվիլային բանաստեղծություններ: «Մեղու Հայաստանի»-ի 1860 թ. 51-րդ համարում տպագրվում է Ղ. Պողոսյանի «Տեսիլ» պատկերը՝ ուղղված Նազարյանի դեմ: Գրական շնորհքից զուրկ հեղինակը փորձել է ծաղրել Նազարյանին՝ նրա խսկ ոճով²: Գեների իշխան Բեհեղվերովը իր ղլխավոր գործակից Սադայելին կարգադրում է գնալ այն աշխարհը և վարդապետ ձեռնալով այնտեղի ինքնահավաններին շրջել դեպի իրենց կողմը: Ակնարկելով Նազարյանի ոճը, նա խորհուրդ է տալիս քարոզն սկսել այսպես. «Ո՞վ հիմար և տգետ աղամորդիք, ո՞վ անբարոյական և ֆանատիկոս մարդիկ, եթե կամենում եք լույս տեսնել, թողեք ձեր հնացած և մաշված կարծիքները, թողեք ձեր փտած մտքերը, և դուք ևս նորոգություն ստացեք, վերանորոգվեցեք ոտքից մինչև գլուխ»³:

1860 թվականի 4-րդ համարում տպագրվում է Պետրոս Մադաթյանի (Սեյադ) «Տեսիլ» պատկվիլային բանաստեղծությունը: Բանաստեղծը Նազարյանի գիտական-գոկտորական աստիճանը ծաղրելով, նրան համարում է անսիրտ, ազգայնաց և չար գործերի ընդունակ մի մարդ, որն իրրե գիտնա-

1 „Современник“, 1858, № 4.

2 Որ Մանգինյան քահանան և նրա աշխատակիցներն ապաշնորհ էին պոլեմիկայում, այդ երևում է և մի փոքրիկ փաստից: Երբ նրա թերթի բաժանորդներից մեկը բողոքում է, որ թերթն իրեն չի արգարացնում, կամ ինչպես նա է գրում՝ «Մեղուն ղեռն իր շրթունքները չի մեղրոտել», խմբագիրը նրան հրապարակորեն հայհոյում է ամենակոպիտ արտահայտություններով (տե՛ս «Մեղու Հայաստանի», 1858, № 12, էջ 96):

3 «Մեղու Հայաստանի», 1860, № 51, էջ 408:

կան լինելու նշան՝ դժողքից նվեր է ստացել մեկ ավանակի գլուխ: Այդ նոր գլուխն ստացող յուրաքանչյուր ոք կարող էր ըստ Սեյադի, աներկյուղ կերպով մարդիկ վատաբանել, «հաշել, քրփրել և աշպանել» (հայհոյել և ծաղրել):

Ենթադրում ենք, որ այդ ժամանակ «Մեղլի» խմբագրին հայտնի էր Նալբանդյանի «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետի բովանդակությունը և աղբյուրը: Մ. Նալբանդյանն իր այդ ստեղծագործության մեջ կերտել է հայ ռեակցիոն գործիչների երգիծական կերպարները: Ինչպես արդեն հայտնի է, այդ երկի սյուժեն վերցված է Սեն-կոլասի (Բարոն Բրամբեուս), «Большой выход у сатаны» ֆելիետոնից: Չնայած Նալբանդյանի պամֆլետն առաջին անգամ տպագրվել է 1881 թվականին, բայց ժամանակին, անկասկած, կատարել է իր դերը որպես հայ անցնողուր մամուլի առաջին արտահայտություններից մեկը: «Տեսիլ» բանաստեղծության միջոցով հայհոյելով հակառակորդին, Մանդինյան քահանան տողատակի ծանոթության մեջ անուղղակիորեն հայտնում է Նալբանդյանի պամֆլետի սյուժեի իր իրադեպիության մասին: Այսպես, խոսելով պրոֆեսորության աստիճանի մասին, նա գրում է.

«Այս դիտնական բառը պրոփեսոր է նշանակում և հուսամ զի բարեմիտ ընթերցողք զիս արժանի ներողության կը համարեն, վասն զի որպես արքայությունն, նույնպես և դժողքն ունին զզանազան գիտնականս, որպես վկայե և քաղցրարան Բարոն Բրամբեուսն»¹:

Ի պատասխան «Մեղու Հայաստանի» թերթի հրույթին, «Հյուսիսափայլ»-ի 1861 թվականի 9-րդ համարում տպագրվում է Ա. Ա. Ե. պորրագրությունը կրող մի նամակ, որը վերագրվում է Միքայել Նալբանդյանին², ժամանակին այդ նամակն անվերապահորեն համարելով Նալբանդյանի գրչի արգասիքը, մենք փորձել ենք վերծանել նրա մեջ զետեղված ֆելիետոնը³:

¹ «Մեղու Հայաստանի», 1860, № 4, էջ 28:

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, 359—363:

³ ՀՄՍՒ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 4:

Նամակի խորագրին ուսումնասիրությունը, սակայն, հետադաշում մեզ բերեց այն եղրակացության, որ այն չէր կարող պատկանել Մ. Նալբանդյանի գրչին: Նամակը հավանաբար գրվել է Նալբանդյանին և «Հյուսիսամիայլ»-ին մոտ կանգնած առաջավոր գործիչներից մեկի կողմից, որը Նալբանդյանի բացակայության շրջանում հակառակորդներին հարվածելու անհրաժեշտությունից գրգռված իրեն իրավունք է վերապահել ազատ կերպով օգտվելու ոչ միայն մեծ հրատարակախոսի պոլեմիկական միջոցներից, այլև արտագրել է նրա ֆելիետոններից մեկի մի հատվածը¹: Ա. Ա. Ն.-ն իր նամակում համարձակորեն քննադատում է Մանգինյան—մանկավարժի հետադիմական դործունեությունը և ապա անդրադառնալով Մանգինյան—խմբագրին՝ ծաղրում է նրա թերթը և մասնավորապես «Տեսիլ» բանաստեղծությունը:

Ամբողջությամբ մեջ բերելով այդ նամակում գետնից վաճառված ֆելիետոնը, մենք ցանկանում ենք ցույց տալ ոչ միայն հեղինակի բանավեճ վարելու կարողությունները, այլև եզոպոսյան լեզվին տիրապետելու նրա վարպետության աստիճանը և անողորմությունը ռեակցիոն լազերի գրչակների նկատմամբ:

«Անցյալ 1860 թվականի հունվար ամսո 23-ին² պատահելով Սատանի հայ Շումե³ դուղի մեջ, տեսա մի զարմանալի անասնանոց, թեպետ վաղուց տեսած էի, բայց այդ ամենից զարմանալի էր, որի մուտը արժեք վեց կոպեկ⁴. շուտով հատուցի և մտա. բայց ինչպես զարմացա վերահասու լինելով, մի քանի բոպեից հետո դուրս երևեցավ մի լայն վարտիքով հագնված մարդ. Փանտեսոն Մատառինիոն⁵ անունով, մորուքը շփացնելով կանգնեց հանդիսավորների առաջը. ապա դանշեց բիրտ ձայնով. «Որսկան⁶ դուրս արի

¹ Այս հարցին մենք կանգրդադառնոնք առանձին հոդվածով:

² «Տեսիլ» բանաստեղծությունը տպագրված է «Մեղու Հայաստանի» թերթի 1860 թ. հունվարի 23-ի 4-րդ համարում:

³ Անողորմ՝ «Մեղու Հայաստանի»:

⁴ «Մեղու Հայաստանի» թերթի մեկ տարվա բաժանորդագինն էր

⁶ ուրլի:

⁵ Անողորմ՝ Ստեփաննոս Մանգինյան:

⁶ «Տեսիլ» բանաստեղծության հեղինակի անվան բառախաղը (ույլադ — պարսկերեն լեզվով նշանակում է որսորդ):

շուտ և պատմիր այս հանդիսավորներին քո որսածները».
 Իսկույն դուրս եկավ մի հաստափոր արջի կերպարանքով կեն-
 գանի, կանգնեց տիրոջ առաջ, հետի երկու թաթերի վերա. Ես
 որոշ նկատեցի, որ այդ կենդանին հավատարիմ ծառա պիտի
 լիներ, որովհետև կարմիր վզնոց էր ստացել յուրյան տիրո-
 ջից. այդտեղ հանդիսավորներից ոմանք Արարատյան ավե-
 րակների բորենի ասացին, և ոմանք Շամախու նահանգի Ղա-
 բալիու անտառի արջ ասացին¹. մի փոքր դժվար նկատելի
 էր, որովհետև այդ անասնանոցի մեջ կախված կանթեղները
 խավար լուսավորության մեջ էին, միայն զարմանալին այն
 էր, որ զլուսը ներկել էին. այդտեղ ինձ հավատացրին, որ այդ
 կենդանին շորս լեզվի երգիչ է. մի փոքր ժամանակից հետո
 անհարմար բերանը բացեց ու երգել կամեցավ. մի քանի
 վայր ի վեր, դալբ դուր խոսեց, այդտեղ մի քանի խոշորա-
 միտ մարդերից ծիծաղ ծափահարություն. առաջացավ. այս-
 պիսի հիմարությունները տեսնելով, բանիմաց հանդիսավոր-
 ները ծաղրածու ժպիտով հեռացան այդ հիմարանոցից»²:

Միանգամայն պարզ է, որ շնայած ֆելիետոնը գրված էր
 եղոպոսյան լեզվով, ժամանակին այն հասել է իր նպատա-
 կին՝ աննախանձելի վիճակի մեջ դցելով «Մեղու Հայաստա-
 նի» թերթի խմբագրին և Սեյադին իր կոմպանիայով:

Այդ ֆելիետոնի տպագրությունից երկու ամիս անց, «Հյու-
 սիսափայլ»-ի 1861 թ. 11-րդ համարում տպագրվում է նույն
 հարցին նվիրված Վահունու «Աղդ» բանաստեղծությունը:

Առանց Սեյադի անվան հիշատակության, Վահունին աշու-
 ղական շարիով գրված իր բանաստեղծության մեջ ակնարկ-
 ներով խոսում է «ղանաղան խոստմունք, անարդ պարգևներ»
 ստացած մի անարժան գործչի մասին, որն առանց նվիրա-
 կան սկզբունքների, միայն իր քաղցած փորն է կշտացնում:
 Վերջում միայն Վահունին բացահայտելով իր հերոսի ինք-
 նությունը, ավելացնում է.

«Առանց խորհրդի, խոսելն է անխել,
 Թուղթ անմտությամբ թանաքով ներկել».

¹ Պ. Մաղաթյանը շամախեցի էր և երբեմն իր բանաստեղծու-
 թյունները ստորագրում էր՝ «Սեյադ Շամախեցի»:

² «Հյուսիսափայլ», 1861, № 9, էջ 225:

Այս բանաստեղծությունը թերևս արվեստի տեսակետից թույլ է և անկատար, բայց Վահունին Նալբանդյանի պոլեմիկական մեթոդներից օգտվելով, իր ժամանակի գրական-քաղաքական պայքարում անկասկած զգալի դեր է կատարել՝ ուժեղացնելով «Հյուսիսափայլ»-ի ճակատը:

«Հյուսիսափայլ»-ի գործիչները, սկսած 1860 թվականից, ստիպված էին պայքարել նաև ուժեղ մի հակառակորդի՝ Գարբիել վարդապետ Այվազովսկու դեմ, որը 1857 թվականին ցարական կառավարության կողմից նշանակվել էր Բեսարաբիայի և Նախիջևանի թեմակալ առաջնորդ: Նա միաժամանակ ղեկավարում էր Թեոդոսիայում բացված խալիբյան դպրոցը և խմբագրում էր «Մասյաց աղավնի» ամսագիրը: Այվազովսկին վայելում էր ցարական կառավարության հովանավորությունն ու վստահությունը այն աստիճան, որ նրան թողնված էր իր իսկ խմբագրած ամսագրի գրաքննությունը:

Գ. Այվազովսկին, ինչպես և Մսերյանները, ելնում էր ֆեոդալական հարաբերությունների պաշտպանության դիրքերից, ընդդեմ բուրժուական բարեփոխումների: Այվազովսկին, մյուս կողմից, անվերապահորեն պաշտպանելով ցարական ինքնակալությանը, հավատարիմ հպատակության կոչ էր անում հայ ժողովրդին: Ըստ նրա, ազդությունը միայն բարեպաշտության և կրոնասիրության ճանապարհով է, որ կգնա դեպի կուլտուրական վերածնություն և աստծո «հզոր հովանավորությունը» միշտ աջակից կլինի նրան:

Հայ լրագրության պատմության մեջ Այվազովսկին կատարում էր այն դերը, ինչ ռուսական ժողնալիստիկայի ասպարեզում՝ ցարական կառավարության լրտես և ռեակցիոն մամուլի պարագլուխ Ֆ. Բուլգարինը:

Բուլգարինյան փութաջանությամբ նա ռեվերանսներ էր անում ցարական կառավարությանը, լուսանքներ թափում լիբերալ ու դեմոկրատական ուղղությունների վրա: Իր շուրջը համախմբելով հայ ռեակցիոն օրգաններ «Ճոաքաղ»-ը

1 «Հյուսիսափայլ», 1861, № 11, էջ 410:

հիշատակների պահպանումն ու փառարանումը պետք է լինեն: Հայերի վերածնության միտքը նա ուղղակիորեն պայմանավորում է այդ հիշատակների պահպանման հետ. «Մեկ ժողովուրդ մը, որ դեռ յուր հին պարծանքները կսիրե, — գրում է նա, — մեկ ժողովուրդ մը, որ հարգանք ու փափաքանք կպահե, կպահպանե յուր նախնայց հիշատակները, ոչ, այն ժողովուրդը հուսահատիլ չկրնար»¹: Արդեն ամսագրի ճակատը պսակող նկարն իսկ սիմվոլացնում էր Այվաղովսկու համակրանքները — տգիտության և խռովության ջրհեղեղի ջրերի քաշվելուց հետո արևմուտքից ելած քաղաքակրթության արևի ճառագայթները վառում և իրենց ծիածանի տեսքով ավելի են քաղցրացնում հայկական երկրի քաղցր հիշատակները: Ամսագիրը հրատարակվում էր 5 բաժնից, որոնք ընդգրկում էին հետևյալ հարցերը.

1. Կենցաղօգուտ բանք, պատմական, բանասիրական և ուսումնական հոդվածներ:

2. Տեսարանք Եվրոպա — եվրոպական երկրների գիտության, արվեստի, վիճակագրության հարցերը:

3. Հանդիսարան աշխարհաշեն մարդկանց — խոշոր գործիչների կենսագրությունները:

4. Հայկազյան թանգարան բաժինը պատկերում էր հայերի հին ու նոր վիճակը:

5. Փարիզյան ամսագիր վերջին բաժինը հրապարակում էր վերջին ամսում կատարված անցքերն ու իրադարձությունները:

Ինչպես նշվում է հայտարարության մեջ, ամսագրի լեզուն հիմնականում մնում է ժողովրդին հասկանալի արևմտահայերենը: Խմբագրի նպատակն էր, սակայն, աշխարհաբարն աղնվացնել և հետզհետե մոտեցնելով գրաբարին, հետագայում միացնել նրա հետ:

1860 թվականին ամսագիրը Ռուսաստան փոխադրելուց հետո ևս Այվաղովսկին իր արևմտահայ բաժանորդներին հասկանալի մնալու համար շարունակում է գրել արևմտահայերենով: Նա շարունակում է փայփայել այն հույսը, թե

¹ «Մասյաց աղավնի», 1855, № 1, էջ 2:

կարելի կլինի և՛ արեւմտահայ, և՛ արեւելահայ շեղուները կոկելով հասցնել զրաբարին:

Չնայած հայտարարության մեջ առանձին բաժին էր նախատեսվում հայերի հին ու նոր վիճակի ուսումնասիրութեանը, ամսագիրն իրականում շատ հեռու է մնում հայկական կյանքի պատկերումից: Ի՞նչ խնդիրներ էին հուզում Այվազովսկու օրգանին, որը հրապարակ էր իջել հայերին լուսավորելու նպատակով: «Մասյաց աղաւնի» էջերում մեծ շափով լուսաբանվում են եկեղեցու պատմութեան հարցերը, դավանաբանական խնդիրները և այլն: Մեծ տեղ էր հատկացվում զանազան թագավորների «վարքագրություններին»։ Ընդարձակ էջեր էին նվիրվում ուսա թագավորների բազմաթիվ հրովարտականերին, նրանց առօրյա կյանքին, թագադրման, օծման և պալատական զանազան հանդեսների նկարագրություններին: Կենդանի հայ իրականութիւնը շատ փոքր արձագանք էր գտնում Այվազովսկու ամսագրում: Ինչ վերաբերում է հայերի «հին ու նոր վիճակի» պատկերմանը, ապա այդ բաժինը լրացվում է մի շարք թուլցիկ ակնարկներով, նվիրված հայերի վիճակին՝ Պարսկաստանում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Լեհաստանում, Մոլդավիայում: Ինչպես «Մեղու Հայագտանի»-ն, «Մասյաց աղաւնի»-ն ևս բոլորովին պատահական և մակերեսային հոգւածներով է անդրադառնում բնական գիտութիւնների զարգացման, կամ կանանց դաստիարակութեան հարցերին:

«Մասյաց աղաւնի» էջերում համեմատաբար մեծ տեղ է հատկացվում գեղարվեստական գրականութեանը և առանձնապէս թարգմանական պոեզիային. տպագրվում էին թարգմանութիւններ Լամարթինից, Լաֆոնտենից, Կրիլովից, Դերժավինից և այլ բանաստեղծներից, Խ. Գալֆայանի, Պեշիկ-թաշլյանի բանաստեղծութիւնները, Սայաթ-Նովայի երգերը և այլն:

1860 թվականից հետո ևս, երբ ամսագիրը փոխադրվում է Ռուսաստան, նրա բովանդակութեան մեջ բեկում չի նկատվում. հոգւածներ են տպագրվում Հռոմի պապերի, Նապոլեոնի, Իշխանի, ասորաց երկրի և Պաղեստինի, Չամչյանի թղթի,

չերքեղների և չերքեղահայերի, Գրիգոր Լուսավորչի, հոփ-սիմյան կույսերի և նման նյութերի մասին:

«Մասյաց աղավնու» էջերում գրվառվում է Խալիբյան դպրոցը, որի տեսչութունը հանձնված էր Գ. Այվազովսկուն: Հոգևածներ են տպագրվում նվիրված այդ դպրոցի հիմնադրման տարեդարձի տոնակատարությանը, աշակերտների պարգևաբաշխության հանդեսներին, ներկայացումներին և այլն: Անվերապահ մեծարանքի խոսքեր են շուրջվում Հարություն աղա Խալիբյանին, որպես ազգային «մեծ բարերարի»: Այվազովսկին տպագրելով Խալիբյանի կենսագրութունը, ազգայիններին կոչ է անում փառքի արձան կանգնեցնել նրա համար:

«Վազեցեք,— գրում է նա,— մի՛ հապաղեք. ապա թե ոչ, կգան այլազգիք, կկանգնեն նմա այդ արձանը և դուք կմնաք անարգյալք, ապերախտք»¹:

Բացի իր ամսագրից, Այվազովսկին բազմաթիվ այլ ձևերով կատաղի կերպով պայքարում էր հայ առաջադիմական մտքի ամենափոքր իսկ արտահայտության դեմ: Հասկանալի է, որ «Հյուսիսսամայլ»-ի հրատարակութունը նա ընդունեց թշնամաբար: Երբ 1858 թ. Նազարյանը նրան է ուղարկում «Հյուսիսսամայլ»-ի առաջին համարները, Այվազովսկին նրան խորհուրդ է տալիս թողնել իր համարձակախոսութունը, և միաժամանակ դանոս է ուղարկում ներքին գործոց մինիստր Լանսկոյին՝ վերջինիս ուշադրութունը հրավիրելով «Հյուսիսսամայլ»-ի վրա:

Այվազովսկին «Հյուսիսսամայլ»-ի ծնունդը համարում է ազգային պատիժ և մի հրեշավոր երևույթ, որի արդյունքն է խռովութուն, պղտորութուն, մոլորությունների տարածել ընդդեմ ազգային լեզվի, դավանության, պատմության, «ճշմարտության անունով՝ սուտքուն ծավալել, հյուսիսային լույսը սեղծել՝ Լուսեբրական կրոնի վարդապետութունները տարածել մեր խեղճ ազգին վրա»²:

«Մասյաց աղավնու» էջերում «քննարկվում» են Ստ. Նա-

¹ «Մասյաց աղավնի», 1864, № 6, էջ 184:

² Նույն տեղը, 1860, № 12, էջ 193:

զարյանի հոգւածները: Այսպես, 1860 թվականին տպագրւում են «Զննությունք հրատարակյալ գրւածոց Ստեփանոսի Նազարյանց» և «Հերքումն կարծյաց այնոցիկ, որ քարոզում են, թե պետք է վերանորոգություն (րեֆորմ) առնել Հայաստանյայց եկեղեցումը» հոգւածները: Այդ նույն թվականին «Մեղու Հայաստանի»-ից արտատպւում են Սկայորդու հոգւածը Նազարյանի դեմ և Հախ-Վերդի Հախ-Նազարյանց ստորագրությունը կրող մի բանաստեղծություն՝ ուղղված Նազարյանի դեմ, ընդ որում, Այվազովսկին հայտարարում է, թե սկսած «Հյուսիսսփայլ»-ի առաջին համարից ինքը պետք է քննության առնի «Հյուսիսսփայլ»-ի բոլոր տետրակները:

Այնուհետև, 1861 թվականին Այվազովսկին «Մեղու Հայաստանի» թերթից արտատպում է Պալասանյանի հոգւածը Նալբանդյանի դեմ՝ կցելով դրան իր առաջաբանը:

1861 թվականին Այվազովսկին տպագրում է նաև Հ. Չերքեզյանի նամակը՝ ուղղված Ստ. Նազարյանին: Խմբագրին ուղղված իր երկտողում Չերքեզյանը շարադրում է իր հոգւածի նպատակը, որը հանգում էր հետևյալին. «Ամենայն հնարք պետք է գործ դնենք, որ ազգային դավաճանությունը չհամարվի ազգային բարերարություն, Նազարա-Նալբանդա-Սադայական խավարը չպատե բոլորովին մեր սլատվական ազգը լուսավորության սուտ անունով. վասակները չհափշտակեն՝ Վարդանների տեղը»¹: Այնուհետև հայհոյանքով լի իր նամակում Չերքեզյանը Նազարյանին դատապարտում է Նալբանդյանի հետ համագործակցելու, «Հյուսիսսփայլ» օրագրի մեջ հայ հոգևորականներին և Ներսես կաթողիկոսին պարսամելու, լյութերականություն տարածելու, հայերենի մեջ անգրագետ լինելու համար, և այլն: Հատկապես կանգ առնելով Նազարյանի լեզվաշինական ծրագրի վրա, այն անվանում է Նազարյանի կատակերգություն, որի գործող անձինք չեն հասազգային կատակերգություն, որի գործող անձինք չեն հասկանում իրար: «Նույն խուժադուժ նորաշեն բարբառով, Նալբանդյանցը, ազգային կատակերգության երկրորդ խաղարկուն, երբ մեք ապացուցել էինք քո գրւածների անբարոյականությունը, խոսել էր բանդագուշանք»², — ավելաց-

¹ «Մասյաց աղաւնի», 1861, № 4, էջ 41:

² Նույն տեղը, № 9, էջ 101:

նում է նա թունով: Չերքեզյանը «Հյուսիսափայլ»-ի մասին գրում է. «Լավ է շտեմանել արեգական լույսը, քան թե Հասկանալ «Հյուսիսափայլարի» վնասարեւր և աղղակործան նպատակը»¹: Այնուհետեւ, տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով «Մասյաց աղավնի»-ն շարունակում է ուղղակի կերպով, կամ հավատարիմ թղթակիցների ձեռքով հարվածել և՛ Նաղարչանին, և՛ Նալբանդյանին: Այվազովսկին «Հյուսիսափայլ»-ի դեմ վարած իր պայքարում ակնհայտորեն առավել վտանգավոր հակառակորդ էր համարում Միքայել Նալբանդյանին, որի դեմ պայքարում էր և՛ լրագրային հոդվածների, և՛ դանոսների միջոցով:

Հատկապես այն բանից հետո, երբ 1858 թ. «Հյուսիսափայլ»-ում տպագրվում է Մ. Նալբանդյանի հոդվածը Նոր Նախիջևանի եկեղեցական գումարների մասին, բանավեճը բորբոքվում է «Հյուսիսափայլ»-ի դեմ:

Այվազովսկուն քաջ հայտնի էր, որ Նալբանդյանի ձեռնարկած պայքարը դուրս էր գալիս Ս. Նաղարչանի լուսավորական քարոզների նեղ շրջանակներից: Նալբանդյանն իր վերոհիշյալ հոդվածում մերկացնում էր Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Հարություն աղա խալիբյանի հակաժողովրդական գործունեությունը: Երկար տարիներ հանդիսանալով Նախիջևանի եկեղեցական գումարների լիազորը և օգտվելով ներսես կաթողիկոսի հովանավորությունից, նա յուրացրել էր չքավոր ժողովրդի վերջին կողեկներից հավաքված եկեղեցական գումարները, առանց որեւէ հաշիվ ներկայացնելու ժողովրդին: Իր յուրացրած գումարներից նա կառուցել էր Թեոդոսիայի խալիբյան դպրոցը և ձեռք բերել մեծ ազդասերի համբավ²:

Հակադրվելով իր ժամանակի հայ հետադիմական մամուլի «աղգասիրական» քաղցր-մեղցր կոչերին, Նալբանդյանը

1 «Մասյաց աղավնի», 1861, № 10, էջ 116:

2 «Մեղու Հայաստանի»-ն երկու անգամ անդրադառնում է այս փաստի փառաբանմանը, ուստի Նալբանդյանն շտապում է տալ դրա հերքումը՝ փառաբանմանը, ուստի Նալբանդյանն շտապում է տալ դրա հերքումը, որպեսզի «աղղը մոլորության մեջ չմնա այս մասին, այլ կարգավոր և աշխատանքի կառուցված լուսավոր բանականությունը դաստան կատարեն»:

գրում է. ազգին նվիրված լինելը քիչ է. «իշխանություն կա՝
ձեռքումդ, հարո՞ւստ ես, ուրեմն ամենալավ, ամենապատվելի
մարդը դու ես հայերի մեջ. զարկի՛ր, խեղդի՛ր, հալածի՛ր, ինչ
կամիս արա՛, անդատապարտ ես, որովհետև հարուստ, կամ
իշխան լինելով, արդեն քո կողմը գրավել էիր Հոռվմի պապի
անմեղանչականությունը»¹:

Հրապարակորեն ելնելով ազգի «համերաշխության» քա-
րողների դեմ, Նալբանդյանը միմյանց է հակադրում տարբեր
սոցիալական շահեր ունեցող դասակարգերին՝ միեւնույն ազ-
գության կազմում: Ահա թե ինչո՞ւ «Մեղու Հայաստանի»-ն և
«Մասյաց աղավնի»-ն տպագրելով Ստ. Պալասանյանի հոդ-
վածն այս հարցի կապակցությամբ, ահազանգ են տալիս
իրենց ընթերցողներին: «Ազգին մեջ մեկ-մեկու դեմ թշնամու-
թյուն սերմանելով ազգը չուսավորվիր», — գոչում են նրանք.
«այդպիսի հասարակաց բերանը ազգային լուսավորության
գործիք չիրնար ըլլալ», — բնութագրում են նրանք «Հյուսիսա-
փայլ»-ը: «Ո՛չ, ո՛չ, ասոր չէին սպասեր, և իրավունք ունեին
ասոր չսպասելու «Հյուսիսափայլին» բոլոր Ռուսաստանի հա-
յերը»², — հանդիմանում են նրանք Ստ. Նազարյանին, որից
անկասկած, այլ սպասելիքներ ունեին:

Մ. Նալբանդյանին վճռականորեն զատելով Նազարյանի
ուղղությունից և գրեթե հակադրելով նրան, Պալասանյանը
գրում է, թե հա՛յ ազգի մեջ իմաստության և գիտության լույս
տարածելու նպատակով հրապարակ իջած «Հյուսիսափայլ»-ը
«արատավորեց յուր թերթերը՝ պ. Նալբանդյանի նամակին
նման գրվածքներով»³:

Զայրացած այս նամակի հրատարակության փաստից,
Այվազովսկին ձեռք է առնում մի շարք միջոցներ, լռեցնել
տալու համար այդ վտանգավոր ամսագիրը: Նա շտապում է
տալու դանոս ուղարկել ներքին գործերի մինիստրին, որի
ուշադրությունը հրավիրում է «Հյուսիսափայլ»-ում հրատա-
րակված հոգվածների և հատկապես Նալբանդյանի վերջին

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 11, էջ 429:
² «Մասյաց աղավնի», 1861, № 3, էջ 29:
³ Նույն տեղը, № 6, էջ 34:

Նամակի վրա: Այվազովսկին հարցը կտրուկ է դնում՝ մինիստրին առաջարկելով որքան հնարավոր է արագ կերպով արգելել այդ հրատարակությունն իր ներկա ոգով, այն հաշվով, որ շարք կանխվի իր սկզբում: Ինչ վերաբերում է նամակի հեղինակ Նալբանդյանին, որին Այվազովսկու խոստովանությամբ արդեն դեպարտամենտում պետք է ճանաչելիս լինեին որպես «չարամիտ, ու անհանդիստ մարդու», առաջարկում է պատժել օրենքի ամբողջ խստությամբ¹:

Որ «Հյուսիսսփայլ»-ը 60-ական թվականներին լայն ժողովրդականություն էր վայելում հայ իրականության մեջ, այդ ակամայից խոստովանում է և հայ ռեակցիոն մամուլի տրիումֆիրատի ներկայացուցիչ Զ. Մսերյանը: Հիշատակելով այն փաստը, որ Խալիբյան դպրոցի մասին գրած իր հոդվածն քնդոնելություն չի գտնում ժողովրդի մեջ, Մսերյանը գրում է.

«Մեր ժողովուրդին շատերն (որպես աչոքս տեսած եմ և լսում եմ) հույժ գայթակղվեցան «Հյուսիսսփայլ»-ի շնորհքով: Օրինակի համար պատմեմ ձեզ զհետևյալը: Երբ որ «Ճռաքաղի» երկրորդ տետրակի մեջ ես տպեցի քանի մի խոսք Խալիպյան ուսումնարանի վերա՝ շատերն (որոց անունքը տալ հարկավոր չէ) մեղադրեցին զիս՝ ավելորդ համարելով բոլորովին զայն հոդվածո հրատարակումը, ըստ որում հիմնադրի սեպհական արդյամբքն շինված չէ, ասում էին, այն ուսումնարանն, ինչպես բացահայտ գրված է «Հյուսիսսփայլ»-ի մեջ»²:

Ահա թե ինչո՞ւ, հրապարակային մարտում պարտվելով Այվազովսկին Նալբանդյանի դեմ սկսում է պայքարը քողարկված կերպով:

Օգտագործելով արքունիքում և 3-րդ բաժանմունքում ունեցած իր բազմաթիվ կապերը, Այվազովսկին կատարում է ամեն հնարավորը՝ Նալբանդյանին ներկայացնելու համար որպես քաղաքականապես միանգամայն անբարեհույս մի անձնավորություն:

Պայքարը Նալբանդյանի և նրա ամբիոնը հանդիսացող

1 Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, ԵՂԺ, հ. 2, էջ 429:

2 «Ճռաքաղ», 1889, № 5, էջ 189:

«Հյուսիսափայլ»-ի դեմ՝ դառնում է ռեակցիոն գործիչներին առաջնահերթ խնդիրը, որոնք աստիճանաբար ավելի են համախմբվում միմյանց շուրջը: Նալբանդյանի դեմ պայքարն այժմ տարվում է երեք ճակատով. նրան հարվածում են կովկասահայ և մոսկովահայ ռեակցիոներները և արևմտահայ հետադեմ մամուլը: Մսերյանները մեծ ջանասիրությամբ օգնում են Այվազովսկուն՝ Նալբանդյանի դեմ վարած նրա գաղտնի և բացահայտ պայքարում:

Իրենց նպատակներին համար նրանք օգտագործում են և արևմտահայ իրենց համախոհներին: Մսերյանի արխիվում մենք ծանոթացանք «Արշալույս Արարատյան» թերթի խմբագրի նամակների հետ, որոնցից պարզվում է Զ. Մսերյանի՝ նրան ուղարկած թղթակցությունների բնույթը: Զ. Մսերյանին ուղղած նամակում Պալղազարյանը գրում է. «Զոդուածն Ձեր ընդդեմ «Հյուսիսափայլ» լրագրույն հաջորդ թուով Արշալուստ ունիմ հրատարակել»: Սակայն Մսերյանը մենակ չէր:

Հավանաբար այս կարգի թղթակցությունների թիվը մեծ է եղել, որովհետև Պալղազարյանն իրարամերժ այդ գրությունները հասկանալու համար գիմում է Զ. Մսերյանի օգնությունը:

«Աղաչեմ ծանուցանել ինձ համառոտիվ, թե զինչ են կարծիք ձեր զհանգուցեալ Միքայելէ Նալբանդյանց. զի այնինչ ոմանք բարձրացուցանեն զազգասիրություն նորա ցերկինս, այլք իջուցանեն զնա 'ի դժոխս, իբրև երիտասարդ մի խառնակիչ, անհավատ և ինքնահավան: Ուղարկել են ինձ 'ի Տիխիսէ ստորագրություն կենաց նորա, որ չարաչար դատապարտե զնա»¹:

Ի պատասխան Պալղազարյանի հարցմանը, Մսերյանն իր 1867 թ. հոկտեմբերի 20-ի թվակիր նամակում հայտնում է. «Զնալբանդեանն Դուք ևս դատապարտելով դատապարտէիք ապաքէն, եթէ գիտացեալ էիք գեթ զմի կամ զերկուս ի յոգունցն ապիրատութեանց՝ զորս գործեաց նա ի վնաս բազմաց՝ է՝ զի յայտնի և է՝ զի գաղտ՝ իւրովքն բազմահնար մե-

¹ ՀՍՍԻ Գեո. Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 205, վավ. 1170:

քննալիւք, յորոց ի գիւտ ճարտար էր նա առաւել քան զվարդապետ իւր զՌօտեն: Արդ հատուցումն արդարապէս հատուցաւ նմա, քանզի և արդարոյն ոսկերք բողոքեցին ի գերեզմանէ առ այն՝ որոյ դատաստան ո՛չ նիրհէ...»¹:

Հետագայում Դ. Պալղաղարյանն իր թերթում տպագրում է Նալբանդյանի կյանքի ու գործունեութեան փաստերն աղավաղող, զրպարտչական մի հոդված՝ «Պատմութիւն վարուց հանգուցյալ Միքայելի Նալբանդյանց» խորագրով²:

«Հյուսիսափայլ»-ի և նրա առաջադրած խնդիրների շուրջը ծավալվող բանավեճն իր արտահայտութիւնն է գտնում նաև Թիֆլիսում հրատարակվող ազգային պահպանողականների օրգան «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում, որ լույս էր տեսնում Մարկոս Աղաբեկյանի խմբագրութեամբ: Իր գործունեութեան նպատակը «Կռունկ հայոց աշխարհին» համարում էր «հայկական ազգայնութեան տաճարի շինութիւնը», հայտարարելով, թե այդ գործունեութեան ընթացքում «իրան միմիայն մայր ճանաչել է Հայաստանյայց սուրբ եկեղեցին և իրան միմիայն հայր՝ մեր ազգի անցած գնացած և ներկա կյանքը»³: «Կռունկ»-ի գլխավոր աշխատակից Գ. Մուրադյանը գրում էր, թե՝ «Ձեռն պետք է մխենք ազգաշինութեան, բայց նյութերն հնութեան ավերակներից և մնացորդներից պետք է ժողովենք»⁴: Ազգային պահպանողականները կրթութիւնը պայմանավորում էին «քրիստոնեական կրոնի ուսումով» և նույնիսկ կոչ էին անում «քրիստոնեութեան լույսով» լուսավորել նաև հայերի «դրացի և վաղածանոթ մահմեդականներին», «ընդ հովանեալ խաչին և Ալեքսարանին Քրիստոսի»:

Ելնելով հայոց եկեղեցու դոգմայացած սկզբունքներից, «Կռունկ հայոց աշխարհին» ամսագիրը սարսափով է ընդունում Ս. Նազարյանի առաջարկը եկեղեցու ռեֆորմի մասին:

1 ՀՍԹՌ Պետ. Մատենադարան, Մսերյանների արխիւ, Թղթ. 207, վավ. 1985:

2 «Արշալույս Արարայան», 1867, № 819—820:

3 «Կռունկ հայոց աշխարհին», 1860, № 11, էջ 923:

4 Նույն տեղը, № 9, էջ 750:

«Կոռնկ»-ում տպագրվում է Գ. Մուրադյանի հոդվածը «Նկատմունք Ս. Նազարյանցի մի ամենամեծ խնդրի պատճառով հրատարակած ամենաթույլ հատվածի վրա» խորագրով, որ հերքելով Նազարյանի դրույթներն այս հարցում, հոդվածագիրը գրում է.

«Հայոց ազգն իրան եկեղեցու ամեն մի ծեսն, ամեն մի քարն, նրա սեղանի և խորանների շինվածքի ձևն անգամ անփոփոխ է համարում, սուրբ և նվիրական և այսու համոզմամբ պատրաստ է իրան կուրծքն դեմ դնել փոփոխություն կամեցողների դեմ»¹:

Պետք է նշել, սակայն, որ սրա հետ միասին «Կոռնկ հայոց աշխարհի»-ն ուներ բազմաթիվ շփման կետեր Նազարյանի և նրա «Հյուսիսսփայլ»-ի հետ և հաճախ իր էջերից պրոպագանդում էր Նազարյանի հայացքները:

Այսպես, Մ. Աղաբեկյանի ամսագրում նույնպես բարձրացվում է աշխարհաբար լեզվի հարցը: Այս խնդրում Մ. Աղաբեկյանը և նրա զլխավոր աշխատակից Գ. Մուրադյանը հակադրվում են միմյանց: Մուրադյանը ընդունելով հանդերձ աշխարհաբարով գրելու անհրաժեշտությունը, հույս ուներ հարուստ տալ գրաբարին: Նա այն կարծիքն էր հայտնում, թե գրաբարի գեղեցիկ և ընտիր բառերով կարելի կլիներ աշխարհաբարին տալ մի գրական ուղղություն և այն շթողնել «օտարախոս ալլանդակության մեջ», որում գտնվում էր: Մարկոս Աղաբեկյանը վկայակոչելով «Հյուսիսսփայլ» ամսագիրը և Ս. Նազարյանի դրույթները լեզվի մասին, իր պաշտպանություն տակ էր առնում աշխարհաբարը: Աղաբեկյանը բանավեճում է սկսում աշխարհաբարի երգվյալ թշնամի Աղանուրի դեմ, նրա գրաբարով գրված հոդվածին պատասխանելով ժողովրդին հասկանալի լեզվով: Մի քանի խոսք, սակայն, Աղանուրի հոդվածի մասին: Նախանձախնդիր լինելով գրաբարի դարգացմանը և սարսափելով աշխարհաբարի հաղթանակի հեռանկարից, Աղանուրը խորհուրդ էր տալիս ուսուցիչներին և ծնողներին՝ աստիճանաբար մաքրել երեսանների լեզուն և նրանց ընտելացնել գրաբարին: Ինչ վերաբերում էր

¹ «Կոռնկ հայոց աշխարհին», 1860, № 10, էջ 846:

Հանդուգն աշխարհաբարին, որն առանց թուլլովության, հա-
ժուռն թափով կյանք էր ներխուժում, ապա Աղանուրն այս-
տեղ խորհուրդ է տալիս օգտվել միջնադարյան ինկվիզիտոր-
ների փորձից: Նա գրում է. «Մեծ իմն գործ ազդասիրական
վարձով՝ ըստ մեր կարծեաց, եթէ ամենայն ուրեք ուր գտա-
նին դպրոցական մատենանք ի լեզու աշխարհիկ և գոհիկ ի
մի հավաքեալ հրոյ ճարակ արասցեն:

Յուսամբ սկսանիցի այդ բարեգործութիւն ի Թեոդոսիա»¹:

Գաբրիել Այվազովսկու գաղափարակիցը վստահ կերպով
իր բարեկամին է հանձնարարում ինկվիզիտորի պաշտոնը:

Թերևս հարցադրման այս սրովթյունն էր պատճառը, որ
Աղաբեկյանը շատ խիստ գնահատական է տալիս գրաբարին,
ասելով. «Գրաբար լեզու ասվածն այսօր մեր մեջ ուրիշ բան
չէ, այլ միայն բյուրավոր խորթ բառերու, հազարավոր անի-
մաստ ոճերու անընտիր հավաքածո»²:

Մարկոս Աղաբեկյանը, նշելով աշխարհաբարի զարգա-
ման հեռանկարները, գրում է, թե «ոսկեդարյան լեզուն» պետք
է դիմի ուղիղ դեպի ոսկեդար, իսկ աշխարհաբարը՝ «դեպի
հառաջ»³:

Ազգային պահպանողականները հիմնականում լուրջ ան-
ջրպետ շտեմնելով իրենց և Ստ. Նազարյանի հայացքների
միջև, «Կոռնկի» էջերում մեծ տեղ են հատկացնում նրա
առաջարկությանը՝ «Ընդհանուր հայկական ընկերություն»
հիմնելու մասին: Այս հարցին լուրջ հոգված է նվիրում
«Կոռնկ հայոց աշխարհին» ամսագրի աշխատակից Գևորգ
Տեր-Աղեքսանդրյանը: Նշելով, որ Նազարյանի գործունեու-
թյունը համապատասխանում է ժամանակի առաջադրած պա-
հանջներին, հոգվածագիրը կոչ է անում հաղթահարել հին
հարաբերություններից մնացած արգելակները՝ և իրագործել
հայերի առաջընթացի համար անհրաժեշտ ծրագրերը. «Բրա-
վո Նազարյանց, — ավարտում է Տեր-Աղեքսանդրյանն իր հոդ-
վածը, — կեցցե՛ Նազարյանցը, կեցցե՛ և կրկին կեցցե՛ դա մեզ

¹ «Կոռնկ հայոց աշխարհին», 1862, № 7, էջ 517—518:

² Նույն տեղը, էջ 521:

³ Նույն տեղը, № 9, էջ 670:

համար այդպիսի ամենահարկավոր խնդիրներ շարժելու ու հարցուսիրծ անելու¹։ Տեր-Աղեքսանդրյանը անդրադառնում է նաև Հայաստանի բնական հարստությունների հետազոտման, հայ մասնագետներ պատրաստելու, օտար կապիտալի ներդրություն դեմ պայքարի հարցերին։

Անմիջականորեն Ստ. Նաղարյանի հայացքների հետ են առնչվում 1861—1862 թվականներին «Կոռնկ»-ի էջերում տպագրված և Կոմս էմմանուելի «Հիշատակարանների» ձեռնարկան նմանությունը կրող երեք խոշոր հոդվածներ։ Թիֆլիսի բարբառով գրված այդ հոդվածները կրում են «Քախկըցի Շաքար Մանուշակյան», «Քախկըցի Դաբաղ Ղաղո» և «Քախկըցի վաճառական Գեօ Ավետիսով» ստորագրությունները։

Նկատի ունենալով հոդվածների ուղղությունը, լեզուն ու ոճը, կարելի է եղբակացնել, որ դրանց հեղինակը միևնույն անձնաւորությունն է, որ հաշվի առնելով հոդվածում արժարժած խնդիրների սրությունը, և հավանաբար, հետևելով «Հիշատակարանների» օրինակին, գերադասել է թաքցնել իր անունը։ Ի դեպ, հետաքրքրական է նրա մեկ խոստովանությունը. «Ձիւ էլ այդնի է, դրուա խոսողն ինչ հալումն է... ձիր համանքինը չրի, հիմի ինձ էլ դուսս մէ թամբած ձի է հարկաւոր, թե չէ բանս փիս գութա...»²։

Հետագայում մեր պրպտումները ցույց տվին, որ այդ հոդվածների հեղինակն է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանը³։

Վերոհիշյալ հոդվածներում հեղինակը առաջ է քաշում ոչ միայն երիտասարդ սերնդի, այլև «ուանշալար խալխի» կրթության անհրաժեշտությունը, ժամանակի ոգուն համապատասխան։ Այնուհետև, հոդվածագրի քննության առարկա է դառ-

1 «Կոռնկ հայոց աշխարհին», 1862, № 11, էջ 863։

2 Նույն տեղը, № 2, էջ 152։

3 Գ. Տ Ե ր - Ա ղ Ե ք ս ա ն ղ ր յ ա ն, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, 1885, էջ Բ։ Ի դեպ, չնայած Տեր-Աղեքսանդրյանն այս դրքի առաջաբանում իր կեղծանունները թվելիս չի նշում «Շաքար Մանուշակյանը», սակայն մենք կարծում ենք, դա ևս նրա ծածկանուններից է։ Հիշյալ առաջաբանը գրված է այդ հոդվածների տպագրությունից ավելի քան 23 տարի հետո, և նա կարող էր պսեղոնիաներից մեկը չհիշել, կամ չհիշատակել։

նում հայ վաճառականութեան դաստիարակութեան հարցը: Մեծ սրութեամբ և Մ. Նալբանդյանի «Հիշատակարանների» ակնհայտ ավելցուցիչամբ քննադատութեամբ են հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչները, որոնք «փուղը իրանց հաճախ աստուծ ին շինի ու կուռքի պես պաշտում ին»¹:

Գ. Տեր-Աղեքսանդրյանին առանձնապես զբաղեցնում է հայ հոգևորականութեան վիճակը, նրանց դաստիարակութեան հարցը: Այս իմաստով նա քննադատում է հոգևորականութեան ընչաքաղցութունը, տգիտութունն ու անտարբերութունը ժողովրդի կարիքների հանդեպ: Հեղինակին հատկապես հուզում է այն փաստը, որ հայ իրականութեան մեջ ամեն մի բախտախնդիր, որ փոքր ի շատե փող է հավաքել, կարող է դառնալ քահանա. «Մէ տասը թուման կի յիդ դրցես... իժում վոճցոր գուլիս, էնենց կուշինիս բանըտ... գուլիս դահանայ կուշինին քիդ, գուլիս վարթապիտ...»²:

Հոգվածագիրն այս հարցը դարձնում է հրապարակական խնդիր, քանի որ քահանաների արարքները «լուր դիմի մետի յիդ պատմե մարթ, մէ լայլ մինձ իստորիա կու դառնա»:

Այդ հոգվածների ունեցած ակտիվ ներգործութեան մասին է վկայում Գ. Տեր-Աղեքսանդրյանը, որը «Մեղու Հայաստանի» թերթում հետազայում տպագրված հոգվածում պատմում է, թե Թիֆլիսում շատերը որոնում էին Դաբաղ Ղաղոյին՝ նրան ծեծելու համար: Այս հոգվածները Ստ. Նազարյանի և «Հյուսիսափայլ»-ի գործունեութեան վաղ շրջանի արձագանքն էին հանդիսանում կովկասահայ իրականութեան մեջ:

Իր հրապարակախոսական գործունեությունն սկսելով «Հյուսիսափայլ»-ի և Ստ. Նազարյանի դիրքերի պաշտպանութեամբ, Տեր-Աղեքսանդրյանը հետազայում աստիճանաբար նահանջում է: 1866 թվականին «Մեղու Հայաստանի» թերթում տպագրված «Դաբաղ Ղաղոյի մասլաաթի շարունակությունը» հոգվածում նա արդեն թողնելով իր նախկին խիստ ոճը, զգուշորեն առաջ է քաշում միմիայն հոգևորականութեան դաստիարակութեան անվտանգ խնդիրը: Այդ վայրէջքն ար-

¹ «Կոռնիկ հայոց աշխարհին», 1862, № 2, էջ 143:

² Նույն տեղը, № 6, էջ 483:

քեն անառարկելիորեն դրսևորվում է նրա խմբագրած «Վաճառական» շաբաթաթերթում: Հասարակական, քաղաքական, կամ սոցիալական բնույթի խնդիրները մի կողմ թողնելով, Ստ. Նաղարչանի աշակերտն զբաղվում է լոկ առևտրական հարցերով և պաշտոնական ինֆորմացիաների հրապարակումով: Նրա վաղեմի փոքրիշատե առաջադիմական հայացքների հետքն այստեղ չի երևում: Իր թերթում Տեր-Աղեքսանդրյանն անցողիկ կերպով անդրադառնում է հողեռականների ընտրություն, ժողովրդի մեջ հավատն անխախտ պահելու գործում նրանց դերի, կրթված երիտասարդությունը քահանայություն ասպարեզի մեջ քաշելու խնդիրներին¹: Հետաքրքրականը նրա ծրագրային հոգվածից անմիջապես հետո տպագրված մեկնաբանությունն է, որից ավելորդ չենք համարում մեջ բերել մի հատված.

«Մենք սիրում ենք մեր հողեռականներին մեր գլխիցն առավել ոչ թե անմեղ տեղը, այլ հիմնավոր պատճառներով: Հողեռականները և առհասարակ հողեռականությունը մեզ հայերիս համար հիմի մեկ զորավոր կապ է, որն որ մոտեկանում է հայերին միմյանց հողեռապես: Դրանք անխախտ պահպանելով մեր եկեղեցու ծեսերը, հաստատ պարիսպ են հայերի համար ազգութեանից և հավատափոխությունից պահպանելու: Ուրեմն հայությունի պարիսպներին, մեր ազգի հաստատ պահողներին ի՞նչպես չսիրենք: Ով ինչ ուզում է ասե, բայց մենք սիրում ենք և սիրելու ենք դրանց: Եվ դրանք գիտենալով մեր բարի ցանկությունը, բոլորովին չպետք է նեղանան մեր և ուրիշների գրվածներից, որովհետև բոլորն էլ զեպի դրանց լավությունն է ուղղած»²:

60-ական թվականներին արևելահայ պարբերական մամուլի էջերում ծայր առած բանավեճն իր արտահայտությունն է դառնում և արևմտահայ մամուլում: Հնարավորություն չունենալով հանդամանորեն կանգ առնելու այդ պարբերականների ուղղություն, բնույթի վրա, մենք ցանկանում ենք

1 «Մեր հողեռականների վրա մեկ քանի խոսք», «Վաճառական», 1866, № 36 — 38:

2 «Վաճառական», 1866, № 41, էջ 161:

նշել միայն, որ դրանք կապված էին ռուսահայ մամուլի հետ և հանդիսանում էին նույն հասարակական հոսանքների արտահայտությունը:

Կղերա-ֆեոդալական հոսանքի օրդանն արևմուտքում հանդիսանում էր Հ. Տերոյենց Չամուռճյանի «Երևակ»-ը, որը կատաղի պայքար էր մղում ոչ միայն արևմտահայ դեմոկրատական և լիբերալ հոսանքների ներկայացուցիչների, այլև Մ. Նալբանդյանի դեմ:

Այսպես, Չամուռճյանն իր պարբերականի էջերում հանգամանորեն քննարկում է Նալբանդյանի այն դրույթը, թե մարդիկ հավասար իրավունքներով են ծնվում: Այդ միտքը նա կապում է «Ռուսոյի հռչակավոր անհավատ հեղինակի» և «անցյալ դարուն վերջը և ներկա դարուն կեսին (1848-ին) Գաղիա և ետքը բոլոր եվրոպա տակն ի վրա ընող սոսիալիստներուն կամ կարմիր հասարակապետականներուն» աշխատությունների հետ¹:

Նկատի ունենալով Նալբանդյանին Պոլսում ցույց տրված հարգանքը, նա զգաստանում է և իսկույն մտնելով իր դերի մեջ, հրապարակավ հայտարարում. «Կարևոր կսեպենք խոնարհաբար հիշեցնել կրոնական ժողովույն, որ այսպիսի մոլոր վարդապետություններեն ազգը պահելու միակ հնարքը իր ձեռքն է»²:

Փարիզում հրատարակվող «Արևմուտք» երկշաբաթաթերթը, որ խմբագրում էր Ստեփան Ոսկանը, իր պաշտպանած առաջավոր գաղափարներով արժանացել էր Մ. Նալբանդյանի ուշադրությանը: Այդ թերթը լուրջ պայքար էր ծավալել կղերա-ֆեոդալական հոսանքի դեմ և հենց Գ. Այվազովսկու դավերի հետևանքով էլ փակվել էր:

Արևմտահայ իրականության մեջ Մ. Նալբանդյանի ամենամոտ զինակիցն էր հանդիսանում ռեուլյուցիոն-դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչ Հարություն Սվաճյանը: Նրա «Մեղր» կիսամյա և, ապա, տասնօրյա հանդեսը սուր պայքար էր ծավալել կղերա-ֆեոդալական և լիբերալ գաղափարախոսություն դեմ:

¹ «Երևակ», 1860, № 87, էջ 88:

² Նույն տեղը, 1860, № 87, էջ 101:

Իր արտասահմանյան ճանապարհորդության ժամանակ, 1860—1861 թթ., Մ. Նալբանդյանը մասնակցում է արևմտահայ իրականության մեջ ծավալված այս պայքարին, «Մեղու»-ն դարձնելով իր մարտական ամբիոնը: Հ. Սվաճյանն իր հերթին Մ. Նալբանդյանին պաշտպանելով հակառակորդների հարձակումներից, հայտարարում է, թե ինքը Նալբանդյանի գրած հոդվածների յուրաքանչյուր տողին և բառին պատասխանատու ու պաշտպան է:

Տարբեր ժամանակներում «Մեղու»-ն տպագրում է Մ. Նալբանդյանի «Մանկության օրեր», «Ազատն աստված», «Ապուլունին», «Օշական», «Խտալացի աղջկա երգը» և այլ ստեղծագործությունները:

«Հյուսիսափայլ»-ի խմբագրությունը գրաքննության կողմից արգելված կարևոր նամակները և հոդվածները նպատակահարմար էր գտնում տպագրել տալ Սվաճյանի «Մեղվում»: Մյուս կողմից, Մ. Նալբանդյանը հաշվի առնելով «Մեղվի» աշխատակիցների կրած հալածանքները և այն հանգամանքը, որ կրոնական ժողովի երկյուղից նրանք չեն կարողանա ազատ արտահայտել իրենց սկզբունքները, գրում է, թե «այդպիսի վատարբախտ դիպվածում «Հյուսիսափայլ»-ի էջերը բաց են ֆոցա համար»¹:

Մենք արդեն տեսանք, որ 60-ական թվականներին հայ պարբերական մամուլի աշխուժացման հետ միաժամանակ սկսվում է մի կատաղի բանավեճ, որը հիմնականում մղվում էր «Հյուսիսափայլ»-ի և Ստ. Նազարյանի ու Մ. Նալբանդյանի շուրջը, և այդ հասկանալի է: Նալբանդյանն ամեն կերպ աշխատում էր ամսագրին տալ դեմոկրատական թեքում, և խեղապես, «Հյուսիսափայլ»-ի հրատարակության առաջին տարիներին այդ ամսագրի ուղղության վրա մեծապես երևում էր Նալբանդյանի ազդեցությունը, մի հանգամանք, որ չէին կարող չնշմարել ռեակցիոն բանակի ներկայացուցիչները: Վերջիններս լրջորեն անհանգստանալով այդ բանից, «Հյուսիսափայլ»-ն առնում են կրակի տակ, ցանկանալով Նազարյանին հեռացնել նրա «անղգաստ և անհեռատես» դաշնակցից:

Ծայր առած այդ բանավեճում հակառակորդների հարձա-

¹ Մ. Նալբանդյան, ՆԺԺ, հ. 3, էջ 25:

կումներին հիմնականում պատասխանում էր Մ. Նալբանդ-
յանը: Հայ ռեակցիոներների դեմ իր վարած պայքարում նա
գրեկորում է մեծ սկզբունքայնություն, գաղափարական նպա-
տակասլացություն և պոլեմիկական շգեբաղանցված ունա-
կություններ: Նա հետևողականորեն մերկացնում է հայ ռեակ-
ցիոն մամուլի և նրա հրապարակախոսների հայացքները, հաջ-
հոգեկորականություն, մասնավորապես Մխիթարյան միաբա-
նություն հակաժողովրդական գործունեությունը, և այլն:

Միքայել Նալբանդյանը պայքարում էր ոչ միայն հայ իրա-
կանություն մեջ գործող ռեակցիոն հոսանքների, այլև, միա-
ժամանակ, «Հյուսիսափայլ»-ի էջերում իշխող լիբերալ հո-
սանքի դեմ: Նրա և Նազարյանի հայացքների միջև եղած ար-
մատական տարբերությունները իրենց արտացոլումն են
գտել «Հյուսիսափայլ»-ում տողագրված նրանց հոդվածնե-
րում, որոնց ուսումնասիրությունը լուսաբանում է այն պայ-
քարը, որ առկա է եղել ամսագրի խմբագրության ներսում
այն հրատարակվելու օրվանից մինչև Մ. Նալբանդյանի
«Հյուսիսափայլ»-ին աշխատակցելու վերջին շրջանը:

Գ Լ ՈՒՆ Ե Ր Ր ՈՐ Դ

«ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-ՈՒՄ ԱՐԾԱՐԾՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Իր հրատարակության կարճատև ժամանակամիջոցում «Հյուսիսսփայլ» ամսագրի էջերում քննարկվել են ժամանակի հայ իրականությանը հուզող բազմաթիվ հարցեր, որոնցից յուրաքանչյուրը կարող էր դառնալ առանձին ուսումնասիրության առարկա:

Քանի որ ներկա աշխատության բնույթը և ծավալը մեզ հնարավորություն չեն տալիս զբաղվելու դրանցից յուրաքանչյուրի քննարկմամբ, ուստի, փորձել ենք միայն ընդհանուր գծերով վեր հանել այդ հարցերից կարևորագույնների նշանակությունը 50—60-ական թվականների մեր մտավոր շարժման համար:

Դրանք են՝ լեզվի, դպրոցի և դաստիարակության հարցերը, գրա-քննադատական միտքը, բնական գիտությունների սլոտապանդան և կանանց հարցը: Միաժամանակ փորձել ենք բնութագրել ամսագրի գեղարվեստական արձակի, պոեզիայի և թարգմանությունների բաժինները:

1. ԼԵԶՎԻ շԱՐՅՐ

Արևելահայ գրական լեզվի ձևավորման և զարգացման պատմությունն օրգանապես կապված է «Հյուսիսսփայլ» ամսագրի և 50—60-ական թվականների հայ առաջավոր գործիչների հետ: Դեռևս անցյալ դարի 40-ական թվականներին հայ

մեծ լուսավորիչ և դեմոկրատ եղանակները Աբովյանը առաջ-
նորդվելով հայ ժողովրդին լուսավորելու ազնիվ նպատակնե-
րով, հիմք է դնում հայ աշխարհիկ գրականությանը: Նրա
օրինակին է հետևում և իր դասընկեր Ստեփանոս Նաղար-
յանը, որը 40-ական թվականներին տպագրված իր «Հայ
գրականության պատմության» 2-րդ մասում հայտարարում
է, թե գրաբար լեզուն այլևս չի կարող կրթական գործիք լի-
նել նոր ժամանակներում, հետևապես զբաղվելն այդ լեզվով՝
կնշանակեր չհասկանալ ժողովրդի ժամանակակից պահանջ-
ները: Նա առաջարկում է մշակել մի նոր, ժողովրդական լե-
զու՝ արարատյան բարբառի հիման վրա¹: Առաջին այդ հա-
մարձակ ելույթները լուրջ արձագանք են գտնում, և հայ
իրականության մեջ ծավալվում է մի պայքար, որը իր հիմ-
քով առնչվում էր ժամանակի հայ հոսանքների հասարակա-
կան-քաղաքական նպատակների և դեպի ժողովրդի լուսավո-
րության հարցն ունեցած նրանց վերաբերմունքի հետ²: 40-
ական թվականներին սկզբնավորված այդ պայքարն առանձ-
նապես սրվում է 60-ական թվականներին, հայ ժողովրդի,
որպես ազգության ձևավորման շրջանում, երբ հայ ազգային
լեզվի ճշակման հարցը մղվում է առաջին պլանը: Այդ երե-
վույթը պայմանավորված էր ֆեոդալիզմի քայքայման և նոր,
բուրժուական հարաբերությունների զարգացման էսոխայով:

Ճիշտ է, ժամանակի խոսակցական լեզուն հանդիսանում
էր աշխարհաբարը, սակայն ֆեոդալական հարաբերությու-
նների ջերմ պաշտպանները լսել անգամ չէին ցանկանում աշ-
խարհաբար լեզվին քաղաքացիական իրավունքներ տալու,
այն՝ գրականության և մամուլի լեզու դարձնելու մասին: Կղերա-
ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչներ՝ Մ. Մսեր-
յանը, Զ. Մսերյանը, Ստ. Մանգինյանը, Ա. Արարատյանը,
Հ. Չերքեզյանը և ուրիշներ գրաբարը համարելով աշխարհի
ամենահին լեզուն, գտնում էին, որ աշխարհաբարը դրա
աղավաղումն է և բնավ չի կարող փոխարինել գրաբարին

1 (Т. Назарянц, Обзор истории Гайканской письменнос-
ти в новейшие времена, Казань, 1846, էջ 152—154:

2 Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք
երկրորդ, էջ 393:

որպէս գրականութեան կամ գիտութեան լեզու: Ստ. Նազար-
յանը հրապարակով հանդես է գալիս աշխարհաբար լեզվին
քաղաքացիական իրաւունքներ տալու պահանջով և այդ պա-
հանջի պաշտպանութեամբ: Համոզված լինելով, որ մեռած
գրաբարով անկարելի է որեւէ լուրջ գործ կատարել, նա կոչ է
անում «հայոց ազգի տունը շինել նորա լեզվի շինութեամբը»:
Ազգի ծաղկումն ու լուսավորութիւնը նա անբաժանելի է
համարում լեզվի վարդապետից, որովհետեւ «մինը առանց
մյուսին անիմանալի է, ոչինչ է»: «Առանց լեզվի չէին կարող
հաստատուիլ ոչինչ խելացի քաղաքական կարգեր և թագա-
վորութիւնք, առանց լեզվի չէր կարող մարդը քաղաքացի
դառնալ, չէր կարող երկրագործութիւն լինել, առուտուրք հա-
ռաջանալ. կարճ ասեմ, չէր կարող մի հացատու բուս-
տանել, մի կտոր հաց գոյանալ մարդու համար»¹:

Նշելով, որ գրաբարը պիտանի չէ ժողովրդի կրթության
գործում, Նազարյանը հայտարարում է, որ բոլորին հասկա-
նալի աշխարհաբար լեզուն «միտք է, բանականութիւն է,
գիտութիւն է, և բոլոր հմտութիւնների մայր ու դայակ»:
Գիտական բացատրութիւն տալով լեզվի ծագմանը, նա հեր-
քում է Ինճիճյանի և Ավգերյանի «մաշած ու կտրատած
ուսումնականութեամբ» հորինած առասպելը՝ հայերենը Նոյի
լեզու լինելու մասին և ցույց է տալիս, որ այն հանդիսանում
է հնդկա-եմբրոպական սանսկրիտ լեզվի մի ճյուղը:

Ունելուցիտն, դեմոկրատական հոսանքը, հանձին Մ. Նալ-
բանդյանի, հետևողականորեն պայքարում է աշխարհաբարի
հաղթանակի և նրա հետագա մշակման համար: Նա հստա-
կորեն նշում է աշխարհաբարի վարդապետն ուղիները, այդ
վարդապետը կապելով ժողովրդի կենսունակ լեզվի հետ,
չբացառելով փոխառութիւնները գրաբարից և օտար լեզու-
ներից: Ելնելով ժողովրդի լուսավորութեան պահանջներից,
Նալբանդյանը առաջ է քաշում գրականութիւնը ժողովրդին
հասկանալի դարձնելու անհրաժեշտութեան հարցը:

«Հյուսիսափայլ»-ի աշխատակիցներին այս դիրքավորումը
կատաղի հարձակումների տեղիք է տալիս: «Մեղու Հայաս-

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 5—6:

տանի», «Ճռաքաղ», «Մասյաց աղաւնի» պարբերականները բաղմաթիւ հոգւածներ են տպագրում «Հյուսիսափայլ»-ի դեմ, ձգտելով անխախտ պահել գրաբարի դիրքերը: Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի դեմ մի կատարչաւ արշավանք է կազմակերպւում, որին մասնակցում են Հ. Զեքեղյանը, Զ. Մսերյանը, Ա. Արարատյանը, Ս. Պալասանյանը և ուրիշներ:

Առաքել Արարատյանն առանձին քննության առարկա է դարձնում Ստ. Նազարյանի «Հանդես նոր հայախոսութեան» և «Վարդապետարան կրօնի» աշխատութեանները: Նա առաջնորդւում էր այն քարացած սկզբունքով, թե «լեզու և կրօն են երկու հաստահիմն սիւնք տաճարի ազգութեան, ի խախտիւ միոյն, հարկաւ խախտի և միան, որով և կործանի ազգութիւնն»¹:

Ինչ վերաբերում է Նազարյանի գրքին, Առաքելյանն առաջարկում է «ճարակ հրոյ տուեալ զամենայն մատեանս նորա, խափանէին զնա մի ևս խոսիլ կամ գրել ինչ զազգէ, զկրօնէ և զլեզուէ մերմէ»²:

Արարատյանն ավելի հեռուն գնալով՝ Նազարյանին ամբաստանում է այն բանում, թե նա կամենում է փոխել հայկական կրօնը, ինչպես փոխում է հայոց լեզուն:

«Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակութեամբ ծայր առած գրապայքարը ավարտւում է աշխարհաբարի լիակատար հաղթանակով. այն օրինական իրավունքներ է ձեռք բերում մամուլի, գիտութեան, զեղարկեստական գրականութեան ասպարեզում: Անգամ այնպիսի մի հետադիմական ամսագիր, ինչպիսին էր «Ճռաքաղ»-ը, որ համառորեն պաշտպանում էր գրաբարը, իր հրատարակութեան վերջին տարիներին հարկադրւած գրում է աշխարհաբար լեզւով: Աշխարհաբար լեզւով էին հրատարակւում նաև «Մեղու Հայաստանի» և «Մասյաց աղաւնի» պարբերականները:

Մեծ է «Հյուսիսափայլ»-ի դերը նոր գրական լեզւի դար-

1 «Դիմագրաւ ընդդէմ սատան հալուցելոյ ամենապատուական լեզուիս հայոց», էջ 8:

2 Նույն տեղը, էջ 22:

գալցման և գրաբարի նկատմամբ տարած հաղթանակի գործում: Առաջին խակ համարից «Հյուսիսափայլ»-ի խմբագիրը և աշխատակիցները փորձում են գրել ժողովրդին հասկանալի մի այնպիսի լեզվով, որը վերացներ հասարակ ժողովրդի և գիտության միջև եղած պատենշները:

Ուսումնասիրելով հայոց լեզուն սկսած հնագույն դարերից, Նաղարյանն այն կարծիքն է հայտնում, թե՛ գրաբար լեզվի հիմքը հանդիսացել է ժողովրդի կենդանի լեզուն, որի բաղաչի վրա գրաբարը մշակվել է և դարձել գրական լեզու: «Հայոց այն ժամանակի ուսանելը յուրյանց գրավոր լեզուն, ոչինչ հարակցություն չունի մեր այժմյան ուսանելուն գրոց հին լեզուն, որ մեռած էր մեր համար, բայց այն ժամանակը բխում էր կենդանի աղբյուրից և նույն ժամանակի ու կյանքի պատշաճ գրավոր լեզու էր»¹:

Մեծ նշանակություն տալով գրական լեզվին մի ժողովրդի կրթության գործում և գրաբարը սլիտանի չհամարելով այդ նպատակի համար, Նաղարյանը միաժամանակ գտնում է, որ ժողովրդի «վայրենացած լեզվով» ևս անկարելի է կրթել ժողովրդին: Նա գրում է. «Ընտրեցինք մի ընդհանուր ոճ խոսակցության, ինչքան կարելի էր, հեռի պահելով մեզ տեղական առանձին բարբառներից, հետեւելով միայն այն առավել ընտիր աշխարհաբար հայախոսությանը, որ հայաբնակ քաղաքներումը Ռուսաստանի լսվում է ընդհանրապես»²:

Նաղարյանը անհրաժեշտ է համարում աշխարհաբար լեզվի մշակման գործն սկսել ժողովրդական դպրոցների հիմնադրումով: Դպրոցական ծրագրերում նա պահանջում է մտցնել դասական, եվրոպական և ռուսաց լեզուների ուսումնասիրությունը, այդ լեզուների քերականությունն ու գրականությունը: Օտար լեզուների ուսումնասիրության կապակցությամբ նա առաջ է քաշում նաև այդ լեզուների համար բառարաններ ստեղծելու խնդիրը: Եվրոպական լեզուների ուսուցման նպատակը նա համարում էր այդ լեզուներով հրապարակված գեղարվեստական գրականության կլասիկ օրինակներին և բնա-

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 22:

² Նույն տեղը, էջ 31:

Ֆլան գիտություններին նվիրված աշխատությունների հետ ծանոթանալը:

Ինչ վերաբերում է ուսաց լեզվի յուրացմանը, ապա Նազարյանն այդ անհրաժեշտ է համարում, քանի որ հայերը քստ նրա, քաղաքականապես լինելով ուս, պարտավոր էին տիրապետել այդ լեզվին:

«Հյուսիսափայ»-ում տպագրած, ինչպես և նախորդ շրջանի իր բազմաթիվ հոդվածներում Նազարյանը մշակել է լեզվաշինության իր ծրագիրը, որը, սակայն, տարիների ընթացքում ենթարկվել է զգալի փոփոխությունների: Վաղ շրջանի իր աշխատանքներում նշելով հայ նոր լեզվի զարգացման ուղիները, նա մեծ նշանակություն է տալիս բարբառներին: Հետագայում, նոր գրական լեզվի մշակման համար նա միաժամանակ առաջարկում է օգտվել գրաբարի հարուստ բառապաշարից, «մի ոտքը պահելով միշտ հին նախնական հիմքի վերա, օր ավուր լցուցանելով յուր պակասությունքը հին լեզվի ճոխ գանձարանից»¹:

Այնուհետև խորացնելով առավելապես այս վերջին թեզը, Ստ. Նազարյանը նոր լեզվի զարգացման ուղիները կապում է գրաբարյան ձևերի հետ:

Ստ. Նազարյանի լեզվական հայացքների էվոլյուցիայի տեսակետից հետաքրքրական է այն դնահատականը, որ նա 1860 թ. տալիս է գրաբար և աշխարհաբար լեզուներին: Խոստովանելով, որ գրաբարը չի կարող լինել ընդհանուր խոսակցական լեզու, նա ամսոսանքով է հրաժեշտ տալիս գրաբարին, այն համեմատելով մի պերճ թագավորի հետ, իսկ աշխարհաբարը՝ «հաղիվ թե արժանի նորա ոտքը համբուրելու»²:

Նույն թվականին առարկելով Մ. Նալբանդյանին աշխարհաբարի գնահատման հարցում, Ստ. Նազարյանը մեծում է «այն ռամկախոսությունը, որի վերա հիմնված է մեր շատ սիրելի հիշատակի բարեկամ Ապովյանի «Վերք Հայաստանի» գիրքը»:

Քննադատելով հայ հետադիմականների լեզվական հա-

¹ «Հյուսիսափայ», 1858, № 1, էջ 34:

² Նույն տեղը, 1860, № 11, էջ 389:

յացքները և հեռանալով Միքայել Նալբանդյանի լեզվաշինական ծրագրից, Նազարյանը դրսևորում է լիբերալ գործչին յուրահատուկ մի հաշտվողական վերաբերմունք: Նա պահանջում է գտնել մի «միջակ ճանապարհ», «մի կամուրջ բանալ անցած օրերի և ներկայիս մեջ»: Գիտակցելով, որ գրարի ասպարեզն անդառնալիորեն ավարտված է արդեն, նա, այնուամենայնիվ, երազում է հարույթուն տալ գրաբարին, նոր լեզուն բարձրացնել գրաբարի հիմքերի վրա, ազգության «նոր շինություն» տարրերը վերցնել հնությունից: Իր հոգվածների լեզվով Նազարյանը տալիս է հնի հետ կամրջած նոր լեզվի օրինակը, որն անշուշտ մի քայլ հետ էր «Հյուսիսսփայլ»-ի 1858—1859 թթ. լեզվից:


Հայերենի կադմալորման գործում նա լուրջ նշանակություն է տալիս օտար ազդեցություններին և փոխառություններին, և նշում է, որ հայերն իրենց քաղաքական ազատությունը կորցնելով և ենթարկվելով օտար ազդեցին, վայրենանում են, իրենց հետ վայրենացնելով և իրենց լեզուն:

Նազարյանին առանձնապես անհանգստացնում էր այն հարցը, որ երկար ժամանակ գտնվելով արաբական և տաճիկական տիրապետության տակ, հայերը յուրացրել են օտար նվաճողների լեզուների ոչ միայն բառերը, այլև խոսակցության ձևն ու շարադասությունը: Ահա թե ինչու, նա ձգտում էր հայերենն ազատել այդ ձևերից:

Նազարյանի լեզուն աստիճանաբար հեռանում է ժողովրդի կենդանի լեզվից և խճողվելով գրաբարյան արտահայտություններով, վեր է ածվում գրքային անկենդան լեզվի:

Իր գրական-հրապարակախոսական գործունեության ողջ ժամանակամիջոցում Մ. Նալբանդյանը հետևողականորեն զբաղվել է աշխարհաբար գրական լեզվի զարգացման հարցերով:

Դեռևս 1856 թ. թարգմանելով էժեն Սյուի «Թափառական հրեան», նա իր առաջին նպատակն է համարում ժողովրդին ընթերցանության նյութ տալ՝ նրան հասկանալի լեզվով: Նշելով, որ «բացվում է կենդանի ժողովրդի կենդանի բարբառի արշալույսը», Նալբանդյանը Նազարյանի հետ միասին հրակայական ջանքեր է գործադրում գրական նոր լեզուն կառա-



«Հյուսիսափայլ»-ի խմբագրատունը Մոսկվայում

քելագործելու և ժողովրդի դաստիարակության համար «ընտիր գործիք» դարձնելու համար:

Այս սկզբունքով էլ նա առաջնորդվում է՝ Խ. Աբովյանի, Ս. Նազարյանի, Ղ. Ալիշանի, Մ. Բաղիադյանի, Ռ. Պատկանյանի, Խ. Գալֆայանի և այլ հեղինակների ստեղծագործությունները և թարգմանությունները գնահատելիս:

Բուռն ոգևորությամբ ողջունելով աշխարհաբար լեզվով գրված յուրաքանչյուր երկ, Նալբանդյանն իր «Հիշատակարան»-ներում նույնիսկ տպագրում է այդ կարգի ստեղծագործությունների ցանկը, նախապես ժողովրդի ուշադրությունը դրանց վրա հրավիրելու գիտավորությամբ:

«Հիշատակարան»-ներից բացի, որոնց բազմաթիվ էջերը նվիրված են լեզվի զարգացման հարցերին, Մ. Նալբանդյանն այդ խնդրին անցրադառնում է Ս. Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» և «Ռոբինզոն Կրուզո»-ի Ռ. Պատկանյանի թարգմանության առթիվ գրած քննադատական հոդվածներում:

Ուշագրավ է աշխարհաբարի գնահատման և նրա զարգացման հեռանկարների հարցին նվիրված Նալբանդյանի մի հոդվածը ¹:

«Սարգիս Տեր Միքայելյան Վարշամյանց» ստորագրությունը կրող այդ նամակը ժամանակին մեծ աղմուկ է բարձրացնում ռեակցիոն գործիչների լազերում: Նամակի տպագրությունից հետո Զարմայր Մսերյանը որոշում է պատասխանել «Հյուսիսափայլ»-ին, բայց նրան անհրաժեշտ էր նախ պարզել նամակագրի ինքնությունը: Հետաքրքրականն այն է, որ Բաքվից ումն Սարգիս Վարշամյան «Ճռաքաղ»-ի խմբագրությանն ուղղած իր նամակում հայտարարում է, թե ինքը չէ «Հյուսիսափայլ»-ում տպագրված նամակի հեղինակը: «Ճռաքաղ»-ը Նալբանդյանին պատասխանում է մի հոդվածով ² և տպագրում է թունոտ մի քառատող՝ ուղղված Նազարյանի և Նալբանդյանի դեմ ³:

Նալբանդյանը սուր քննադատության է ենթարկում «Ճռա-

¹ «Նամակ Կոմս Էմմանուելին», «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 384—396:

² «Ճռաքաղ», 1861, Տետրակ ԺԳ և ԻԲ, էջ 217—219 և 358—364:

³ «Առ ցոփն շրթամբք», «Ճռաքաղ», 1861, տետրակ ԹԺ, էջ 143:

քաղ»-ի լեզուն, ջախջախելով այդ ամսագրի խմբագիրներին տեսակետն աշխարհաբարի վերաբերյալ: Նա նշում է, որ անգամ չմշակված աշխարհաբարը ոչ միայն անհամ, թույլ և անհեթեթ չէ (ինչպես կարծում էին Մսերյանները), «այլև կարող է փոխ տալ մեռած գրաբարին և՛ համ, և՛ ազդուություն, և՛ գեղեցկություն, և՛ ուղղախոսության կարի կարևոր կանոններ»¹:

Դեռևս 1858 թ. «Ասվում է լսելու համար» հոդվածում, Մ. Նալբանդյանը անդրադառնալով աշխարհաբարի և գրաբարի հարցին, հայտարարում էր, թե «Շատ հեշտ է գերեզմանից մեռելները հանել կենդանացնել, քան լայդ ժամգոտյալ լեզվով նոր ժողովուրդը լուսավորել»²: Այնինչ, նոր լեզուն և, հետևապես, ժողովրդին հասկանալի լեզվով գրված նոր գրականությունը այն միակ միջոցն էին հանդիսանում, որոնց օգնությամբ ժողովրդին կարելի կլիներ հաղորդակից դարձնել գիտության նվաճումների հետ: Նալբանդյանը ծրագրում էր նոր լեզվի հիման վրա մշակել մի համազգային գրական լեզու, որը պետք է նպաստեր հայերի ազգային միավորմանը և ծառայեր նրանց ազգային-քաղաքական ինքնորոշման և կուլտուրական առաջընթացի գործին³:

Առաջնորդվելով ժողովրդին լուսավորելու գաղափարով, Նալբանդյանը գրում է. «Թող հայոց մանուկը սովորի յուր մայրենի լեզվով ազատական գիտությունները: Թող նա այն աշխատությունը ինչ որ գործ է դնում հին և մեռյալ լեզուն սովորելու համար, գործ ածես հարկավոր գաղափարներ ստանալու մասին: Չէ՛ պիտո նորա հինգ դարու հայախոսությունը, այդ նորան հաց ու ջուր չի տա, նոցա հարկավոր է գիտությունը, որը կարող է ստանալ նոր լեզվի միջնորդութենով, որ կյանք և կիրառություն ունենալով ընկերության մեջ, այլ և ուղ և ծուծ ունենալով՝ կարող էր հյութ և արյուն դառնալ և սնունդ տալ հայոց տկար զավակներին»⁴: Ահա թե ինչու՞

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 389:

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 408:

³ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գեղեցիկորոգ, էջ 388—392:

⁴ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 409:

«Հյուսիսափայլ»-ին աշխատակցելու շրջանում Մ. Նալբանդյանն առանձնահատուկ ուշադրություն քննության առնելով աշխարհաբար լեզվով գրված գրքերը, չի ներում նրանց սխալները:

Այսպես, խոսելով Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» գրքի արժանիքների մասին, Նալբանդյանը չի մոռանում նշել, որ հեղինակի լեզուն այնուամենայնիվ «տեղ-տեղ ավելի մոտ է հին լեզվին, քան ժողովրդական բարբառին»: Այնուհետև Նալբանդյանը «Ռոբինզոն Կրուզո»-ի թարգմանության կապակցությամբ Ռ. Պատկանյանին քննադատում է նրա անհետևողականության համար (վերջինս շեղվել էր Կարամզևինից վերցրած իր էպիգրաֆից, որն աղգարարում էր. «Գրել այնպես, ինչպես որ խոսում են և խոսել այնպես, ինչպես գրում են»): Նալբանդյանը կանգ է առնում նաև Պատկանյանի «Նոր այբբենարանի» և բանաստեղծությունների վրա, որոնցից առաջինի լեզուն հեռու էր ժողովրդական լինելուց, իսկ երկրորդի լեզվի մաքրությունը զոհ էր գնացել «տաղաչափության սկզբունքին»:

Նորապես ուսումնասիրելով հայ ժողովրդի կենդանի լեզուն, Նալբանդյանը հակառակ Մսեր Մսերյանի և Ստեփանոս Նազարյանի, այն չէ համարում գրաբարի աղճատումը: Աշխարհաբարի զարգացումը Նալբանդյանը պայմանավորում է կենդանի ժողովրդի գոյությամբ, «որ անդադար շարժողության մեջ է և հառաջ է երթում»: Ինչ վերաբերում է գրաբարի և աշխարհաբարի փոխարաբերությանը, ապա նա նշում էր, որ ժողովրդի լեզուն գրաբարից առաջ է եղել, «և որչափ դրոց լեզուն հեռացել է ազգի կենդանի լեզվից, այնչափ կորուսել է յուր սկզբնական հատկությունքը, ստրկանալով այլ մերձավոր ազգերի լեզուների ազդեցության»¹: Նազարյանին առարկելով այն հարցում, թե իբր աշխարհաբարը շունի գրաբարյան զարգարուն ոճեր, Նալբանդյանը ասում է. «Այդ չէ նշանակում, թե նա ավերվել է, այլ մանավանդ թե առաջ է գնացել»:

Եթե Նազարյանը խորհուրդ էր տալիս քնտրել միջին ճա-

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 11, էջ 391:

նապարհը և, «հրաժարվելով բաղմունքյան վայրենացած լեզվից» ու օտար շարադասության ազդեցությունից, մշակել աշխարհաբարը գրաբարյան բառապաշարի բազայի վրա, ապա Մ. Նալբանդյանը առաջարկում է նոր լեզուն զարգացնել ինքնուրույնաբար, օգտվելով գրաբարյան, բարբառային և օտար լեզուների համապատասխան տարրերից: Ժամանակի հեղինակներից Նալբանդյանը պահանջում էր գրել ժողովրդի լեզվով և գրականությունը հասկանալի դարձնելով ժողովրդական լայն խավերին, այն ծառայեցնել նրանց շահերին:

«Գրել ժողովրդական լեզվով, առանց ծառայանալու դավառական բարբառներին, միևնույն ժամանակ ամբողջ պահելով լեզվի ժողովրդականությունը, մշակել այդ լեզուն, ներս բերելով դորա մեջ նոր մարդավայել և արժանի ելրո՞ւղական անունի գաղափարներ, ահա այն մի հատիկ գործը, որով պիտո է պարապելին հոգիազգեյաց հեղինակները և թարգմանիչքը մեր ազգի ուր և իցէ»¹:

Նալբանդյանը լուրջ պայքար էր ծավալում աշխարհաբարը գրաբարի հիմքի վրա բարձրացնելու Նազարյանի ջանքերի դեմ: Այդ կապակցությամբ նա գրում է. «Բռնադատել նոր լեզուն և մինչև այն աստիճան ստրկացնել հին լեզվի ձևերին, որ աղղը դժվարությամբ հասկանա, անխորհուրդ մաքրասիրություն է և մենք մեր կողմից չենք ընդունում այդ... «Հյուսիսափայլ»-ը չափից դուրս հայկաբան էր, մանավանդ 1862-ին. այդ աստիճանը տանելի չէ ժողովրդին»²:

Այնուհետև Նալբանդյանը խստիվ դատապարտում է Նազարյանի լեզվաշինական մի այլ մեթոդը, որը հանգում էր հայերենի շարադասությունը տաճկականից հեռացնելու նկատառումով այն գրաբարի շարադասությանը մոտեցնելու ջանքերին: Զարգացող, կենդանի լեզվի նկատմամբ այդ կամայականությունը ծաղրելով, Նալբանդյանը գրում է. «Բայց ի՞նչ կանես, երբ բոլոր ազգեր այդ տրամաբանությամբ և այդ բաղդասությամբ է խոսում: Մոռցնել նորան այդ բոլորը և քաշել տանել հին լեզվի տրամաբանության տակ, համազոր

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 5, էջ 420:

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 399—400:

է հին լեզուն քարուղեւ, որ իր կարգով համազոր է մարդկային կենդանի խոսքը ուրանալու»¹:

Ելնելով լեզվի վարդապետան ներքին օրենքներից և այն ժողովրդին ծառայեցնելու նպատակից, Նալբանդյանը դրոշնում է, որ անկախ այն բանից, թե հայոց կենդանի լեզուն ինչ լեզուների ազդեցութեան տակ է գտնվում, անկարելի է պատերազմ հայտարարել փոխառությունների դեմ և լեզվի վարդապետը դնել արհեստական ճանապարհի վրա:

«Մեռած կենդանու մորթը առողջ կենդանու վրա չէ կըսել, — գրում է նա Ստ. Նալբարյանի լեզվական հայացքների կապակցութեամբ, — չորացած ծառի ճյուղը կենդանի և թարմ ծառի վրա չէ ծաղկում, կենդանի մարդը մեռելի հետ չեն պատանքում»²:

Ստ. Նալբարյանի և Մ. Նալբանդյանի գլխավորած պայքարը ղեկավարողների դեմ, իր արտահայտութեանն է գտել և «Հյուսիսափայլ»-ի աշխատակից Անանիա Սուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչը» գրամատիկական երկի մեջ:

Լեզվագիտության թեկնածու Գ. Մազամյանի կերպարի միջոցով Անանիա Սուլթանշահը ծաղրում է «Հյուսիսափայլ»-ի ուղղութեան դեմ սուր ճոճող այն խավարամոլներին, որոնք հայոց լեզուն աշխարհի առաջին լեզուն էին հռչակում: Վերհանելով «Հյուսիսափայլ»-ի հակառակորդների գաղափարական սնանկութեանը, Անանիա Սուլթանշահը նշում է. «Տարաբաղդութեանը այն է, որ մեր ազգի մեջ ձեզ նման դատավորք պիտի ունենա այն ազնիվ և առաքինի պարոնը. դուք ով, Նալբարյանց դատողը ով»³:

«Հյուսիսափայլ»-ի և հայ ղեկավարողների միջև ծայր առած գրապայքարն ավարտվում է առաջնի հաղթանակով:

Չնայած «Հյուսիսափայլ»-ի լեզուն նրա հրատարակութեան վերջին շրջանում մի փոքր վայրէջք է ապրում, այնուամենայնիվ այն հսկայական դեր է կատարում նորաստեղծ գրական լեզվին քաղաքացիական իրավունքներ տալու գործում:

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, էջ 330:

² Նույն տեղը, հ. 2, էջ 400:

³ «Հյուսիսափայլ», 1859, № 10, էջ 800:

Հանրագումարի բերելով «Հյուսիսսփայլ»-ի առաջին երեք տարվա գործունեության արդյունքները, նախանշյալնը գրում է.

«1858 թվականը արժանի է ոսկեղեն տառերով արձանագրվելու ամենայն բանասեր հայկազնի հիշատակարանի մեջ: ...Այս թվականին ծնավ «Հյուսիսսփայլ» օրագիրը: Ոչ մի օրագիր ոչ մի ազգի մեջ այնքան ազդեցություն չէ արած գրականության վերա, այնքան բարի պտուղներ չէ բերած այսպիսի կարճ միջոցում, որքան այդ բաղմարդյուն օրագիրը, որ հյուսիսից փայլելով, մի ամենեին նոր լույս թափեց մեր կենդանի բարբառի վերա, առաջին և գլխավոր պատճառ դառնալով կենդանի ազգի մեջ կենդանի լեզվով խոսելու և գրելու»¹:

«Հյուսիսսփայլ» ամսագիրը իր հրատարակության ողջ ժամանակամիջոցում և հատկապես առաջին երեք տարիներին մեծ աշխատանք է կատարել հայոց գրական լեզվի զարգացման, այն կատարելագործելու և ժողովրդականացնելու ասպարեզում: Այդ գործում իրենց մասնակցությունն են ունեցել ամսագրի աշխատակիցներ՝ Ս. Շահազիզը, Գ. Տեր-Հովհաննիսյանը, Ա. Սուլթանշահը, Մ. Սաղաթյանը, Գ. Բարխուդարյանը, Ռ. Պատկանյանը և ուրիշներ:

Հայ առաջավոր գործիչները 60-ական թվականներին հետևելով «Հյուսիսսփայլ»-ի ուղղությանը, նոր թափ են հաղորդում աշխարհարար գրական լեզվի հետագա զարգացմանը:

2. ԴՊՐՈՅ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնութագրելով 19-րդ դարի 40—60-ական թվականների ռուս լուսավորիչների գործունեությունը, Վ. Ի. Լենինը նրանց երկրորդ բնորոշ գիծն է համարում լուսավորության, ինքնավարության, ազատության, կյանքի եվրոպական ձևերի և առհասարակ Ռուսաստանի բաղմակողմանի եվրոպականացման պաշտպանությունը²:

¹ «Հյուսիսսփայլ», 1860, № 10, էջ 384:

² Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 2, էջ 314:

«Հյուսիսսփայլ» ամսագիրը հանդիսանալով նույն ժամանակաշրջանի արևելահայ իրականության արդասիրքը, իր գործունեության ծրագրի հիմքում դրել էր «Ընդհանուր ազգային լուսավորության և դաստիարակության» խնդիրները:

Ստ. Նազարյանը «մի կարող իշխանական գավազանի հովանավորությամբ», ձգտում էր հայերին կապել ռուսական կուլտուրայի և եվրոպական քաղաքակրթության հետ: Նա գրում է. «Այս մասին ինքը տերությունը յուր բոլոր հպատակների առջև բացել է մի ընդարձակ ասպարեզ. և ռուսաց զիտությունը հազարավոր փողովակներով հեղեղի պես թափում է ժողովրդի վերա լուսավորության բարությունքը»¹:

Լուսավորության տարածման խանդավառ գործիչներից մեկը լինելով, Նազարյանը, սակայն, կարծում էր, թե լուսավորության միջոցով կարելի կլինի բարձրացնել ժողովրդի ոչ միայն մտավոր, այլև նյութական մակարդակը: Մի կատարյալ դպրոց՝ ապահովված կանոնավոր դասագրքերով, քարտեզներով, դրադարանով, լաբորատորիաներով և հոգատար հոգաբարձուներով, նրա կարծիքով, ընդունակ կլինեին վերածնելու հայերին, «ոսկի ապագայք» պատրաստելու «ժողովրդի չքավոր զավակներին»:

Հայ ժողովրդի լուսավորության կարևոր նախապայմանը համարելով դպրոցական գործի լուրջ դրվածքը, Նազարյանը «Հյուսիսսփայլ»-ում բաղմամբով հոգևածներ է տալագրել դպրոցական դաստիարակության, դպրոցական ծրագրերի, դասագրքերի պատրաստման և այլ հարցերի վերաբերյալ:

Նազարյանի օրինակով, առաջնորդվելով նույն նպատակներով, «Հյուսիսսփայլ»-ի աշխատակիցներից շատերը ևս մշակում էին լուսավորության իրենց ծրագիրը: Նրանք նույնպես անտեսելով սոցիալական հարցերը, ժողովրդի երջանիկ ապագան պայմանավորում էին միայն լուսավորության գործի լավ դրվածքով: Այսպես, Մ. Միսնասարյանը ժամանակի ոգուն համապատասխան դպրոցի հիմնադրումով ենթադրում էր ստեղծել «մի նոր արևաբաց երջանիկ գալոց օրերի, հայոց ազգի համար»²: Նա երազում էր այդ «արևաբացի» օրն

¹ «Հյուսիսսփայլ», 1861, № 3, էջ 253:

² Նույն տեղը, № 9, էջ 209:

արագացնել ազգային դպրոցներում տրվելիք դաստիարակութ-
յան ճանապարհով, խորապես համոզված լինելով, որ այդ
միջոցով հայերն այլևս չէին ունենա «ոչ մի անարժան սպա-
սավոր աստուծո սեղանի, ոչ մի կաշառելի դատավոր, ոչ մի
անկիրթ քաղաքացի, ոչ մի անհմուտ արվեստավոր, ոչ մի
ծուլ երկրագործ»¹:

Չնայած հարցադրման իդեալիստական բնույթին, հիշյալ
հոգվածները մեծ հետաքրքրություն են ներկայացնում որպես
դպրոցական գործի կատարելագործման առաջին լուրջ խոս-
քը հայ իրականության մեջ:

Լեոն խոսելով «Հյուսիսսփայլ»-ի մասին, դպրոցի և լու-
սավորության հարցում արժեքավորում է սոսկ Նազարյանի
հոգվածները և կանգ է առնում միայն նրա մանկավարժական
հայացքների վրա: Անշուշտ Նազարյանը նշանակալից գործ է
կատարել ոչ միայն իր սրակտիկ մանկավարժական աշխա-
տանքով, այլև «Հյուսիսսփայլ»-ում տպագրած կրթության և
դաստիարակության հարցերին նվիրված իր հոգվածներով,
սակայն անկարելի է «Հյուսիսսփայլ»-ն արժեքավորել,
առանց հիշատակելու Մ. Նալբանդյանի և ամսագրի մնացած
աշխատակիցների ջանքերն այդ ասպարեզում:

«Հյուսիսսփայլ»-ի հրատարակության վեց տարիների ըն-
թացքում նրա էջերում հրապարակվել են ոչ միայն տեսական
ու դիդակտիկական բնույթի մանկավարժական հոգվածներ,
այլև հայ գործիչների մասնավոր նամակները, խորհրդածու-
թյունները, հայտարարությունները, որոնց մեջ արծարծվում
են մատաղ սերնդի կրթության և դպրոցական ուսուցման
հետ կապված կոնկրետ խնդիրները, նշվում են ազգային
դպրոցների հիմնադրման անհրաժեշտ պայմանները:

Քանի որ ցարական կառավարությունը չէր մտածում ազ-
գային դպրոցներ բանալ Կովկասում և հայաբնակ այլ վայ-
րերում, ապա այդ դպրոցների հիմնադրման հոգան ընկնում
էր փողովրդի ներկայացուցիչների վրա: Հայ առաջավոր գոր-
ծիչները մեծ ջանքեր են գործադրում, որպեսզի կարողանան
հնարավորության սահմաններում պատշաճ հիմքերի վրա դնել

¹ «Հյուսիսսփայլ», 1861, № 9, էջ 201:

ազգային դպրոցները և դրանցում տարվող ուսուցումը: Իր դպրոցական հայտարարության մեջ Կ. Նդյանն առաջ է քաշում հայկական միջնակարգ դպրոցներ հաստատելու անհրաժեշտության հարցը՝ հայ պատանիների համար բարձրագույն դպրոց ընդունվելու գործը հեշտացնելու նպատակով: Գոյություն ունեցող հայկական դպրոցների բարելավման ծրագիր է մշակում Ն. Քաջբերունին, որը հայ դպրոցների անմխիթար վիճակը բացատրում է ուսուցիչների անգրագիտությամբ, հոգաբարձուների կամայականությամբ և ժողովրդի ոչ գիտակից վերաբերմունքով դեպի դպրոցը:

Մանուկների ընտանեկան դաստիարակության գործի կարգավորմանն է նվիրված «Հյուսիսսփայլ»-ի թղթակից Գ. Թովմասյանի «Ընտանեկան դաստիարակության կշիռը և խնդիրը» հոդվածը: Հետևելով Նալբանդյանի և Նազարյանի այն դրույթին, թե մանուկ սերնդի կրթության գործում մեծ դեր ունի կատարելու ընտանեկան դաստիարակությունը, Թովմասյանը գրում է.

«Գերդաստանի մեջ է արմատն ու ծիլը ամենայն դաստիարակության և կրթության, ամենայն տեսակ մարդկային կեցության: Գերդաստանը է դպրոցի մայրը, հասարակության աղբյուրը և պատասպարանը. նա է կյանքի արմատը»¹:

Սակայն Գ. Թովմասյանը, ինչպես և Ս. Ավետիքյանը դաստիարակության նպատակն են համարում մարդու հաղորդակցելն աստծո հետ, որպեսզի մարդը դառնա «որդի աստուծո—պատկեր աստուծո—աստվածանման»:

«Հյուսիսսփայլ»-ում ղեկավարում են նաև դիդակտիկական բնույթի լուրջ հոդվածներ, որոնցից է Հարություն Համասիյունի «Դաստիարակություն» հոդվածը:

Դպրոցական դաստիարակության ասպարեզում Համասիյունը լուրջ նշանակություն է տալիս վարժությունների մեթոդին, որպես երեխաների ընդունակությունների զարգացմանը նպաստող միջոցի: Մանկավարժական առումով նա անհրաժեշտ է համարում նաև գովեստի, բացատրության և պատժի մեթոդների կիրառումը: Համասիյունն, այնուհետև,

¹ «Հյուսիսսփայլ», 1864, № 7, էջ 452:

կարևոր է համարում երեխաների հարցասիրութեան խրախուսման, դատողութեան և ինքնուրույնութեան ակտիւացման մեթոդները: Դպրոցական դաստիարակութեան գործում, նա ընդ սահմաններից կարևոր է համարում մանուկների կրոնասիրական գլխացումների ամրացումը: Համասփյուռը, սակայն, սահմանափակում է օրիորդաց դպրոցների դերը: Եթե տղան միշտ պետք է գիտակցի, որ ինքը լինելու է հասարակութեան անդամ, քաղաքացի, և թագավորի ու հայրենիքի պաշտպան, ապա «աղջիկը, — գրում է նա, — բավական է պատրաստել յուր անձը լինելու օգտակար անդամ գերդաստանի, բարի տանտիկին»:

Դպրոցական դաստիարակութեան գործը հանգամանորեն քննարկվում է «Հյուսիսսփայլ»-ի աշխատակից Մ. Միանսարյանի հոդվածներում: Վերջինս մի շարք հետաքրքրական միջոցներ է առաջարկում՝ աղգային դպրոցների ծրագրի մշակման համար: Նա պահանջում է դպրոցի հաստատումից առաջ հոգալ մանկավարժներ պատրաստելու մասին, որոնք ոչ միայն լավագիտակ լինեն իրենց առարկաներին, այլև կարողանան գիտությունը կապել կյանքի հարցերի հետ, նյութը հաղորդել մատչելի ձևով, և այլն: Այս նպատակով Միանսարյանն առաջարկում է շնորհալի պատանիներ ուղարկել եվրոպական մանկավարժական սեմինարիաները, այնտեղ սովորելու համար: Նա միաժամանակ առաջարկում է նյութապես ապահովել ուսուցիչներին, ուսուցումը դարձնել ձրի, դպրոցները հանել առանձին անձանց վերակացությունից և դնել հոգաբարձութեան հսկողութեան տակ, և այլն: Միանսարյանի դպրոցական ծրագրում առանձին տեղ է հատկացվում և օրիորդաց դպրոցներին, սակայն նա ևս պահանջում է աղջիկներին դաստիարակել լոկ այնքան, որ նրանք լինեն կրթված մայրեր:

Հայ իրականության համար նորություն էր դպրոցական կանոնավոր դասադրքերի պահանջը, որ առաջադրում է Միանսարյանը իր «Վասն աշխատասիրելու և ի լույս ընծայելու հայերեն լեզվով դպրոցական գրքանք» հոդվածում¹: Նա

¹ «Հյուսիսսփայլ», 1861, № 8, էջ 164:

պահանջում է դպրոցական դասագրքերը կազմել խնամքով, կանոնավոր աշխարհաբար լեզվով և գիտական որոշ սկզբունքներով: Այսպես, Միանսարյանն առաջարկում է հեղինակներին՝ դասագրքերին կցել տվյալ գիտության մասին եղած գիտական աղբյուրների ցանկը, հեղինակի օգտագործած աղբյուրները և այլն:

Ստ. Նազարյանը ելնելով 60-ական թվականների առաջագրած պահանջներից, ծրագրում էր հիմնադրել մի «գիտական ու գործնական» մասնավոր դպրոց, նոր հիմունքներով կազմակերպելու մանկավարժական աշխատանքը: Նա մշակում է դպրոցական կրթության ու դաստիարակության մի ծրագիր, որի նպատակն էր արմատապես բարեփոխել մանկավարժական աշխատանքի գրվածքը հայ իրականության մեջ: Դաստիարակության և կրթության հարցերին, նվիրված իր հոդվածներում, նամակներում և այլ գրություններում, հայ կյանքի վերանորոգությունը նա պայմանավորում է ժողովրդական դպրոցի հիմնադրությամբ: Դպրոցն, ըստ Նազարյանի, պետք է աշխատանքները կազմակերպի այն հաշվով, որպեսզի կարողանա պատասխանել ժամանակի հասունացած խնդիրներին:

Հայ ազգային դպրոցների համար Նազարյանն առաջ էր քաշում բազմակողմանի կրթության անհրաժեշտությունը, որպեսզի դպրոցը կարողանա պատասխանել «ժամանակի պիտույքին»: Նրա կարծիքով հայ ժողովրդին նախ և առաջ անհրաժեշտ էր տալ ընդհանուր, բազմակողմանի կրթություն և ապա՝ «միակողմանի՝ վաճառական, կամ արվեստագիտական կրթություն, որ նույնպես պակաս է հայերին», բայց որի համար դեռ նպաստավոր պայմաններ չկային: Առաջնորդվելով այս լայն ծրագրով, Նազարյանը հայ դպրոցների համար անհրաժեշտ է համարում մաթեմատիկական առարկաների, քերականության ու բնական գիտությունների՝ ֆիզիկայի, քիմիայի, բնագիտության, կենդանաբանության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի դասավանդումը: Հայ մանուկների համար նա պարտադիր է համարում ուսանել Ռուսաստանի պատմությունը, աշխարհագրությունը, լեզուն և գրականությունը:

Ռուսաց լեզվի ուսումնասիրությանը Նազարյանը տալիս է առանձնահատուկ նշանակություն. «Հայոց մանուկը պիտի ուսանի ռուսերեն... լցուցանելու յուր սուրբ պարտականու-
թյունքը դեպի մի հվրոպական տերություն, որ նախասահմա-
նության կամքով կարգված է հոգաբարձու և դաստիարակ
այդ ասիական ազգին, որ տվել է դորան մի նոր բարեկարգ
քաղաքական կեցություն, որ և բացել է դորա առաջև ամե-
նայն նյութական և իմացական բարությունների աղբյուրը»¹:

Ստ. Նազարյանը մեծ կարևորություն է տալիս դասագրք-
քերի, քերականական ձեռնարկների և բառարանների հրատա-
րակության գործին, որպես օժանդակ միջոցների ուսաց և
օտար լեզուների ուսումնասիրության համար: Նա կարևոր է
համարում նաև հայոց պատմության և գրականության ուսու-
ցումը ժողովրդին հասկանալի, աշխարհաբար լեզվով: Նա-
զարյանը քննադատում է իր ժամանակի դպրոցները, որոնք
հաստատված էին «մի քանի շրջմոլիկ արեղանների» կող-
մից. ազգային լուսավորությունը նա համարում է ժողովրդի
գործը:

Նա երեխաների մտավոր դաստիարակության հետ հավա-
սարաչափ անհրաժեշտ է համարում և նրանց ֆիզիկական
դաստիարակությունը, ուստի առաջարկում է դպրոցներին կից
ստեղծել մարմնամարզական հրապարակներ: «Առտնին դաս-
տիարակության մասին» հոդվածում նա իսկական մանկա-
վարժի նրբանկատությանը նշում է խստության և հրամայո-
ղական եղանակի անպտուղ լինելը: Նազարյանն առաջարկում
է ամեն կերպ խուսափել պատժի ու ծեծի մեթոդներից:

Նա պահանջում է ուսման պրոցեսում շատ չժանրաբեռնել
աշակերտին և օգտակարը նրան հաղորդել ախորժելի ձևով:
Նազարյանն աշխարհագրության դասավանդման համար կա-
րևոր է համարում քարտեզների և գլոբուսների դերը, ֆիզի-
կայի և քիմիայի դասավանդման համար՝ համապատասխան
լաբորատորիաների առկայությունը: Նազարյանն առաջար-
կում է դպրոցին կից հիմնել մի կարգին տպարան, պահանջ-
վող դասագրքերը տպագրելու համար, թարգմանություններ

¹ «Հյուսիսափայլ», 1863, № 12, էջ 15:

կատարել ռուսերենից և այլ լեզուներից, պատրաստել մանկավարժական կադրեր, կազմակերպել գրադարաններ և այլն:

Այս ամենի հետ միասին, Ստ. Նազարյանը դպրոցական դաստիարակության գործն անկարելի է համարում կազմակերպել առանց կրոնի դասավանդման: Նա առաջնորդվում էր այն սկզբունքով, թե «ոչինչ բան ճշմարիտ, ոչինչ բան գեղեցիկ, ոչինչ բան բարի չէ, որ չունի յուր ծագումը կրոնից և չէ ստանում յուր զորությունը և սրբությունը նորա մեջ»¹: Ահա թե ինչո՞ւ Նազարյանի դպրոցական ծրագրում կրոնի դասավանդումը հանդիսանում է հիմնականը:

«Նա պարտ է լինել կենտրոնը բոլոր դպրոցական կազմվածի և պարտ է այդ կազմվածի մեջ մինչև նորա վերջին ծայրերը և ամենանուրբ թելերը ներս թափանցել և շարժել նորան»²:

Ստ. Նազարյանը ավելի հեռուն գնալով, առաջ է քաշում հոգևոր ակադեմիա ունենալու հարցը, որը պետք է կրոնի արժանավոր դասատուներ պատրաստելու հայկական դպրոցների համար: Քննադատելով հայ հոգևորականության տգիտությունն ու ընչաքաղցությունը, այլև՝ անտարբերությունը կրթության գործում, նա կոչ է անում ժողովրդի լուսավորության գործն սկսել աստվածաշնչի աշխարհաբար հրատարակությամբ, մի դրքի, որ նրա կարծիքով, կրոնական դաստիարակության միակ հիմքն ու աղբյուրն է: Նազարյանի խոր համոզմունքն էր, որ աստվածաշնչի դոգմաների հիման վրա մեծապես կզարգանան հայոց լեզուն ու հայ գրականությունը:

Որքան էլ քննադատելի և անգամ մերժելի լինեն Նազարյանի մանկավարժական հայացքներից մի քանիսը, այնուամենայնիվ գնահատելին այն է, որ նա դպրոցական դաստիարակության հարցը առաջադրում էր որպես անհետաձգելի մի խնդիր, բարձրացնում էր մանկավարժական կադրերի պատրաստման, ճշգրիտ գիտությունների դասավանդման, դասադրքերի և բառարանների հրատարակության, ընտանեկան և ֆիզիկական դաստիարակության և բազմաթիվ այլ կարևորագույն հարցեր:

¹ «Հյուսիսափայլ», 1864, № 2, էջ 130:

² Նույն տեղը, էջ 131:

Լուսավորության հարցը շատ է զբաղեցրել և «Հյուսիսափայլ»-ի գլխավոր աշխատակից Մ. Նալբանդյանին, որն այդ հարցին անդրադարձել է իր գրեթե բոլոր աշխատություններում: «Հյուսիսափայլ»-ի լուսավորական ծրագիրը Մ. Նալբանդյանն ընդլայնելով հանդում է չափազանց հետաքրքրական և համարձակ եզրակացությունների:

Խոսելով հայ իրականության մեջ մոլեգնող խավարի մասին, Նալբանդյանը ժողովրդին ինքնադիտակցության բերելու և նրա դրությունը բարվոքելու ամենամեծ միջոցը համարում է լուսավորությունը:

«Լուսավորություն, — գրում է նա, — ահա մի մեծ և հոյակապ խնդիր, որ ազգի կարողքը և ուսումնականքը սլարտական են լուծանել. չկա աշխարհի երեսին մի այնպիսի բան, որ ահարկու լիներ խավարից. սա մի զարհուրելի վարագույր է, որի տակ իրավունք ունին մարդիկ և մահ ենթադրել»¹:

Սակայն, եթե Նաղարյանի լուսավորության կոչը վերաբերում էր ընդհանրապես հայ ազգին, ապա Նալբանդյանի մոտ «ազգի լուսավորություն» տերմինը կոնկրետանում է և ստանում հասարակ ժողովրդի լուսավորության իմաստ: Նալբանդյանը գրում է.

«Անմխիթար տխրություն է ձգել միշտ իմ սրտի վերա մտածությունը, թե աշխարհի երեսին գտանված ամենայն ազգի մեջ հասարակ ժողովուրդը ենթարկվում է ավելի ծանր զրկողությունների և տառապանքի, մինչ խորտակված էր նորա ազգության մեքենան, քան թե մասնավոր մարդիկ, այո, մեծատունք և մատնիչք»²:

Նալբանդյանը կրթված անձանց առաջին պարտքն է համարում «ծառայել ոչ ազգի կուռքերին, այլ, հասարակ ժողովրդի օգտին»: Նա ձգտում է գեթ լուսավորության ճանապարհով ժողովրդին հասցնել սոցիալական շարիքի ըմբռնման գիտակցությանը: Հայտնելով, որ «ազգային մեքենան ջարդված է», Նալբանդյանը գրում է. «Ազգության մեքենայի—հա-

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 5, էջ 379:

² Նույն տեղը, էջ 378:

սարակ ժողովուրդի վերանորոգությունը հնարավոր է միայն գիտակցություն տնկելով նորա մեջ: Իսկ գիտակցությունը բխում է լուսավորութենից»¹:

«Հյուսիսսահյալ»-ի հրատարակության հենց առաջին ամիսներից Նալբանդյանն իր «Հիշատակարան»-ում սկսում է արծարծել հայ ժողովրդի լուսավորության և կրթության հարցերը, այդ խնդրում շատ մեծ նշանակություն տալով մանուկների ընտանեկան և դպրոցական դաստիարակությանը: Առաջնորդվելով այն մատերիալիստական դրույթով, թե՝ «Մարդու առաքինի, կամ վատթար լինելը պատահական բան է և կախված նորա դաստիարակությունից և կրթությունից, նորա ընկերությունից և շրջապատից», Նալբանդյանը դպրոցական դաստիարակությանը հավասարազոր նշանակություն է տալիս և ընտանեկան դաստիարակության հարցերին. իր «Հիշատակարան»-ում ջերմ խոսքերով դիմելով հայ մայրերին, վերջիններիս ուշադրությունը նա հրավիրում է այդ կարևորագույն հարցի վրա:

Ընտանեկան դաստիարակությունը Նալբանդյանը համարում է լուսավորության սանդուղքի առաջին աստիճանը և սույա հանգամանորեն քննարկում է դաստիարակության խնդիրները:

Մ. Նալբանդյանը դպրոցական ամբիոնին հսկայական նշանակություն է տալիս, գտնելով, որ այնտեղից են քարոզվում ընկերասիրության, ազգասիրության, մարդասիրության, առաքինության, աշխատասիրության, և այլ բարձր գաղափարները: Մի քանի դժերով տալով հայ իրականության մեջ դոյություն ունեցող «դպրոց»-ի պատկերը, երբ «մի գյուղում, մի գոմի մեջ, երևում էր մի տիրացու ահագին դավալանը՝ ձեռքին՝ յուր աշակերտների ոսկերքը ջարդելու համար», նա առաջ է քաշում իր դպրոցական ծրագիրը²:

¹ «Հյուսիսսահյալ», 1860, № 5, էջ 379:

² Հակառակ Նազարյանի, Միանսարյանի և այլոց, Նալբանդյանը գիտակցում էր այդ ծրագրի իրականացման հետ կապված դժվարությունները. «Այնպիսի տեղում, — գրում է նա, — ուր ժողովրդի չքավորությունը արգելափ է այս գաղափարի իրագործությանը»... սակայն դրաքննական նկատառումներով նա միտքը թողնում է անալարտ:

Նալբանդյանը նույնպես երազում է եվրոպական սիստեմով հաստատված մի աշխարհական դպրոցի մասին, սակայն առանց «հոգևոր մարդերի գործակցության»: «Ազգային ուսումնարան» հասկացողությունը նա բացահայտում է որպես բազմակողմանի ու հարուստ ծրագրով և հասարակական հոգաբարձությամբ գործող մի դպրոց: Նալբանդյանի մշակած դպրոցական ծրագրի մեջ մտնում են հետևյալ առարկաները—հայերեն, հունարեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն և ռուսերեն, ընդհանուր պատմություն, ընդհանուր աշխարհագրություն, հայոց և ռուսաց պատմություն, հնախոսություն, օրենսգիտություն, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, ընդհանուր բնական պատմություն, վաճառականական ուսմունք, վաճառականության պատմություն և այլն:

Դպրոցական դաստիարակության գործը լուրջ հիմքերի վրա դնելու նպատակով, Նալբանդյանը պահանջում է պատրաստել մանկավարժական լավորակ կադրեր: Նա միաժամանակ նպատակահարմար է գտնում դպրոցները հիմնադրել հայաշատ կենտրոններում, նախապես ապահովելով նրանց գործունեության հարատևությունը: Այս առումով Նալբանդյանն անողոք էր բոլոր այն հնամուկների դեմ, ովքեր դպրոցն անտեսելով, մտածում էին վանքերի ու եկեղեցիների շինության մասին:

Քննադատելով ռեակցիոն վարդապետ Ս. Զալալյանի «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան» աշխատությունը, որտեղ հեղինակը ողբում է հայոց վանքերի կործանումը, Նալբանդյանը հայտարարում է, որ վանքերի շինությունը ներկա ժամանակներում ոչ մի նպատակ չունի մարդկային առաջադիմության գործում, այնինչ «հայերը ունին ավելի հիմնավոր և խորհրդավոր ողբալիք, թո՛ղ դպրոցների չլինելը կամ լինելության չլինելու հավասար վիճակը նյութ լինի նույնպիսի ողբերին և լացին, թո՛ղ աշխատին դպրոց շինել, աշակերտ հասուցանել, ազգը լուսավորել: Վանքերի սաղմոսերգությունքը հանդես չունին ազգային լուսավորության մեջ»¹։ Նալբանդյանը պահանջում է ժողովրդական դպրոցի ղեկավարությունը հանձնել միմիայն աշխարհականներին:

¹ «Հյուսիսափայլ», 1899, № 8, էջ 657:

Իբրև պատասխան Նազարյանի այն կարծիքին, թե դրպ-
րոցն ու եկեղեցին համերաշխորեն կարող են համագործակ-
ցել, Նալբանդյանը արտահայտում է իր վճիռը.

«Լուսավորության հանդիսում շատ նեղ է հոգևոր մարդերի
ասպարեզը. ոչինչ ազդ չէ հասել լուսավորության վերին աս-
տիճանին, հոգևոր դաստիարակների ձեռքով: Բո՛ղ հոգևորքը
պարապեն աստվածային բանի ողջամիտ վարդապետությամբ,
բայց ազգի լուսավորությունը պիտո է հառաջանա բուն ազգի
հոգաբարձությամբ: Լուսավորությունը այնքան հիմնավոր է,
որքան ազատ է և անկախ. ստրկության մեջ չէ կարող լու-
սավորության ծիրը կանաչիլ»¹:

Նալբանդյանը հայ ժողովրդի վիճակի բարվոքումը պայ-
մանավորելով ազգային կրթության բարելավմամբ, հանդում
է հասարակ ժողովրդի դաստիարակության, նրան ժամանակի
հուզող հարցերին հաղորդակից դարձնելու և սոցիալական
անարդարության դեմ պայքարի գաղափարին:

3. ԿՐԱ-ՔՆՆԱԿԱՏԱԿԱՆ ՄԻՏՔԸ «ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ»-Ի ԷՋԵՐՈՒՄ

19-րդ դարի 60-ական թվականների քաղաքական պայ-
քարում առանձնահատուկ նշանակություն են ստանում գե-
ղարվեստական դրականությունը և գրական քննադատություն-
ներ, որոնց միջոցով ուսա առաջավոր գրողները պրոպագան-
դում են գյուղացիական ուսուցչի այն հրաժեշտության
գաղափարը: Ժամանակի առաջավոր պարբերական մամուլը
ցարական գրաքննության առկայության պայմաններում հնա-
րավորություն է ընձեռում ուսուցչին դեմոկրատներին՝
իրենց գեղարվեստական գործերի, հրապարակախոսական
հոդվածների և գրաքննադատական տեսությունների միջոցով
անց կացնելու ժամանակի հուզող գաղափարները:

Դեռևս 40-ական թվականներին Բելինսկին հսկայական
նշանակություն էր տալիս գեղարվեստական գրականությա-
նը, որպես ժողովրդին ինքնաճանաչության բերելու և նրան
առաջիկա շարժումներին նախապատրաստելու կարևոր գոր-

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 10, էջ 310:

ծոնի: «Ինչ էլ որ ներկայացնելիս լինի մեր գրականությունը, — գրում է նա, — նրա նշանակությունը մեզ համար այնուամենայնիվ շատ ավելի կարևոր է, քան այդ կարող է թվալ. նրա մեջ, միայն նրա մեջ է ամփոփված մեր ամբողջ մտավոր կյանքը և մեր կյանքի ամբողջ պոեզիան»¹: Միայն գրականության մեջ, — գրում է նա Գոգոլին ուղղված հայտնի նամակում, — չնայած թաթարական գրաքննությանը, դեռևս կյանք և առաջընթաց շարժում կա: Իսկ հասարակությունը, — շարունակում է նա այնուհետև, — իրավացի կերպով, «ոռա գրողների մեջ տեսնում է իր միակ առաջնորդներին, պաշտպաններին ու փրկիչներին՝ ոռոսական ինքնակալությունից, ուղղափառությունից և ժողովրդայնությունից»²:

Բելինսկին 40-ական թվականներին մշակում է մի նոր էսթետիկական տեսություն, որն իր հիմքով տարբերվում էր հեգելյան տեսությունից և ամբողջացնում էր իր սոցիալ-քաղաքական հայացքները:

Հակադրվելով ժամանակի գրական ուղղություններին, Բելինսկին առաջ է քաշում իրականությունը ճշմարտացիորեն պատկերելու անհրաժեշտությունը, ընդ որում, նրան առանձնապես հուզում էր ճորտ գյուղացիության ծանր վիճակի պատկերումը ցարական ինքնակալության պայմաններում: Այս առումով հատկանշական է նրա մղած պայքարը «մաքուր արվեստի» տեսաբանների դեմ, որոնք ձգտում էին արվեստը հեռացնել օրվա հրատապ հարցերից: «Բնությունն արվեստի հավիտենական նմուշն է, իսկ բնության ամենապլանմ և ամենաազնիվ առարկան մարդն է, իսկ մուժիկը մի՞թե մարդ չէ»³, — բացականչում է նա և իսկույն ավելացնում, թե այդ կոպիտ և կրթություն չունեցող մարդկանց մեջ ևս մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրանց հոգին, խելքը, սիրտը, կրքերը, հակումները: Բելինսկին մեծ կրքով և հետևողականությամբ պայքարում է գրականության դադափարական բովանդակության, արվեստը ժողովրդի շահերին ծառա-

¹ В. Г. Белинский, Собрание сочинений в 3-х томах, т. 3, էջ 83:

² Նույն տեղը, էջ 712:

³ Նույն տեղը, էջ 787:

յեցնելու համար: «Եւել արվեստից հասարակական շահերին ծառայելու իրավունքը,— գրում է նա,— նշանակում է ոչ թե բարձրացնել, այլ ստորացնել նրան, որովհետեւ այդ նշանակում է նրան զրկել ամենակենդանի ուժից՝ մտքից և դարձնել ինչ-որ փափկակենցաղ մարդկանց հաճույքների առարկա, անգործ ծուլների խաղալիք»¹: Սրա հետ միասին Բելինսկին ոչ պակաս կարեւոր է համարում գեղարվեստական երկի ձևի կատարելութունը, գտնելով, որ գեղարվեստական առումով թույլ երկերը ոչ մի արժեք չեն կարող ունենալ, որքան էլ հագեցված լինեն առաջավոր գաղափարներով:

Բելինսկու մշակած էսթետիկական սկզբունքները նրա մահվանը հաջորդած «մռայլ յոթնամյակի» տարիներին գրեթե կիրառում չեն գտնում, իսկ նրա անունն արգելվում է հիշել հրապարակորեն, կամ մամուլի էջերում: Այդ ժամանակամիջոցում Նեկրասովն ստիպված էր «Սովրեմեննիկ»-ի էջերում առժամանակ տեղ տալ նույնիսկ «մաքուր արվեստի» կողմնակիցներին: Սակայն, կարճ ժամանակից հետո, 1855 թվականին տպագրած իր մագիստրական դիսերտացիայում, ինչպես և «Ռուս գրականության գոգոլյան շրջանի ուրվագծեր» հոդվածաշարում, Չերնիշևսկին կրկին վեր է հանում Բելինսկու էսթետիկական տեսությունը, որը և վարդացնելով, հասցնում մի նոր, բարձր աստիճանի:

Բարձր գնահատելով Բելինսկու պատմական դերը ռուս հասարակական մտքի պատմության մեջ ընդհանրապես և ռուս գրականության պատմության մեջ՝ մասնավորապես, Չերնիշևսկին ընթերցող լայն հասարակությանը հանգամանորեն ծանոթացնում է նրա ստեղծագործության, նրա հայացքների հետ: Իր ժամանակի լիբերալների հարձակումներին ի պատասխան, թե նա ներկա առաջընթաց շարժման համար առաջարկում է ուժեղ քաղել անցյալից, մեռածից, Չերնիշևսկին պատասխանում է. «Դեռ հարկավոր է հետաքրքրվել այն հարցով, թե այդ գաղաղներում պառկածներն իրոք մեռածնե՞ր են: Չլինի՞ թե նրանցում կենդանի մարդիկ են

¹ В. Г. Белинский, Собрание сочинений в 3-х томах, т. 3, էջ 797:

թաղված: Համենայն դեպս, այդ ննջեցյալների մոտ կյանքն արդյոք շատ ավելի ուժեղ չի՞ արտահայտվում, քան շատ մարդկանց մոտ, որոնք կոչվում են կենդանի: Չէ՞ որ եթե գրողի խոսքը ոգեշնչված է ճշմարտության գաղափարով, հասարակության մտավոր կյանքի վրա բարերար ներգործության ձգտումով, ապա այդ խոսքը պարունակում է իր մեջ կյանքի սերմեր և երբեք չի մեռնի»¹:

Չերնիշևսկու էսթետիկական սկզբունքները ևս սերտորեն կապված են նրա ռեուլյուցիոն-դեմոկրատական աշխարհայացքի հետ և ծառայում են աշխատավոր ժողովրդի շահերին: Նա մերժում է հեգելյան այն դրույթը, ըստ որի գեղեցիկը կապվելով բացարձակ իդեալի հետ, վեր է դասվում կյանքից, նյութական աշխարհից: Նա մինչև վերջ մերկացնում է մաքուր արվեստի տեսության ռեալիզմը, հակաժողովրդական էությունը, բացահայտում նրա երկակի, խաբեական բնույթը: «Արվեստը կյանքից պետք է անկախ լինի» արտահայտությունը, — գրում է նա, — միշտ էլ դիմակի դեր է կատարել այն պայքարում, որ այդ մարդիկ մղում են գրականության՝ իրենց համար անդուրալի ուղղությունների դեմ, նպատակ ունենալով գրականությունը սպասավորուհի դարձնել մի այլ ուղղության, որ այդ մարդկանց ճաշակին ավելի է համապատասխանում»²: «Արվեստն արվեստի համար» ուղղությանը նա հակադրում է իր «արվեստը կյանքի համար» թեզը, որն ուղղված էր ճորտատիրական կարգերը ռեուլյուցիոն ճանապարհով վերացնելու և ժողովրդի համար բարեկեցիկ կյանք ստեղծելու նպատակին:

Վեր հանելով գրականության ակտիվ, ներգործուն դերը հասարակական կյանքում, Չերնիշևսկին առաջ է քաշում գրականության գաղափարայնության հարցը, և ցույց տալիս, որ «գրականությունը չի կարող չլինել իդեաների այս կամ այն ուղղության սպասավորուհի»³: Կարևորն այս դեպքում այն է,

¹ Ն. Գ. Չերնիշևսկի, Ռուս գրականության գոգույան շրջանի ուրվագծեր, էջ 10:

² Նույն տեղը, էջ 517:

³ Նույն տեղը, էջ 516:

Խհարկե՛ն, թե՛ գրականութիւնը ի՞ր դարաշրջանի ո՞ր դադա-
փարներին պետք է ծառայի. այստեղ Չերնիշևսկին իսկույն
ալելելացնում է. «Պայծառ զարգացման են հասնում գրակա-
նության միայն այն ուղղութիւնները, որոնք ծագում են
ուժեղ և կենդանի դադափարի ազդեցութեան տակ, որոնք բա-
վարարում են դարաշրջանի անհետաձգելի պահանջները»¹։

Ինչպէս ի՞ր տեսական, այնպէս էլ գրաքննադատական հող-
վածներում Չերնիշևսկին զարգացնում է ի՞ր կողմից մշակված
ռուսլոյցիոն-դեմոկրատական քննադատութեան սկզբունքները։

Չերնիշևսկին արվեստագետից պահանջում է պատկերնե-
րի և գեղարվեստական կերպարների միջոցով ճշմարտացիո-
քեն արտացոլել իրականութիւնը։ Իրականութեան արտացոլ-
ման խնդրին նա տալիս է մեծ նշանակութիւն, պահանջելով
ոչ միայն վերարտադրել այն, այլև հարկ եղած դեպքում դա-
տավճիռ կարդալ այդ իրականութեան արատավոր երևույթ-
ներին։

19-րդ դարի 60-ական թվականներին ռուս իրականութեան
մեջ արվեստի տեսութեան հարցերի շուրջը ծալք առած պայ-
քարում մաքուր արվեստի տեսաբանները պարտութեան են
մատնվում Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի և նրանց բազմաթիվ
հետևորդների կողմից։ Ռուս գրականութիւնն ու քննադատու-
թիւնն ստանում են քաղաքական խոր բովանդակութիւն։

Այլ էր գրութիւնը հայ իրականութեան մեջ. այստեղ ար-
դեն գրաքննադատութիւնը մնում էր որպէս մի անծանոթ ու
անմշակ բնագավառ, որն առաջին անգամ կենդանութիւն է
ստանում «Հյուսիսափայլ»-ի գործիչների ջանքերով։ Մեծ է
«Հյուսիսափայլ»-ի դերը հայ գրականութեան մեջ լուրջ գրա-
քննադատութիւն ստեղծելու գործում։ Նախահյուսիսափայլ-
յան շրջանի հայ պարբերական մամուլը թերթելիս դժվար
կլինի հանդիպել մի այլ ամսագրի, որտեղ քննադատական
միտքը գտնվեր փոքր ի շատե տանելի աստիճանի վրա։ Այդ
ամսագրերում ամենաշատը կարելի է հանդիպել այս կամ
այն գրքի հրատարակութեան առիթով գրված փոքր հաղոր-

¹ Ն. Գ. Չերնիշևսկի, Ռուս գրականութեան գոգոլյան շրջանի
ուրվագծեր, էջ 517։

դումների, կամ հատուկենտ դրախտականների, որոնք բացառապես պարսավի, կամ ներքողի բնույթ են կրում:

Ս. Մանդինյանի «Մեղու Հայաստանի»-ն, ինչպես նաև Մսերյանների «Ճռաքաղ»-ը չեն ղետեղել գրեթե ոչ մի քննադատական հոդված, որն արժանի լիներ ուշադրության: Տպագրված առանձին փոքրիկ հոդվածները նախվ են, գրված առանց կայուն սկզբունքների, առանց տեսական հիմնավորման:

«Հյուսիսափայլ»-ի էջերում տպագրված մի շարք լուրջ գրաքննադատական հոդվածների մեջ գրսեղորվել են հայ դեմոկրատական քննադատական մտքի հիմունքները:

Այստեղ քննության առարկա են դառնում այն գրքերը, որոնք գրված լինելով աշխարհաբար լեզվով, իրենց բարձրացրած հարցերով կարող էին ծառայել հայ ժողովրդի դաստիարակության գործին:

Նաղարյանի «Հանդես նոր հայաստանի» երկհատոր ժողովածուի, էժեն Սյուի «Թափառական հրեա»-ի և Ռոբինզոն Կրուզո»-ի հայերեն թարգմանությունների, Ս. Շահադիդի «Լեռնի վիշտը» պոեմի մասին գրված հոդվածները, ինչպես և «Մեռելահարցուկ» վեպի մեջ տողատակի ծանոթության ձևով գրված լուրջ նկատողությունը Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի մասին, պերճախոս կերպով բացահայտում են «Հյուսիսափայլ»-ի քննադատների համակրանքների շրջանակները:

Հայ իրականության մեջ Նալբանդյանի ջանքերով մշակվում է դեմոկրատական էսթետիկական մի տեսություն, որն իր հիմքով առնչվելով ռուս ռեոլյուցիոն-դեմոկրատների էսթետիկական ուսմունքին, լիովին համապատասխանում էր հայ իրականությանը հուզող հարցերին:

Մ. Նալբանդյանի հյուսիսափայլյան շրջանի գրաքննադատական հոդվածներում որոշակիորեն դրսևորվել է Բեկինսկու և Չերնիշևսկու էսթետիկական հայացքների ազդեցությունը:

Հայ գրականության մեջ երևան եկած առաջին լուրջ երկերը գնահատելիս Նալբանդյանը չափանիշ էր ընդունում ազգի հոգու, ներկա վիճակի, հասկացողությունների պատ-

կերման հարազատութեան աստիճանը: Նա մերժում էր գրական այն երկերը, որոնք իրենց լեզվով և դադափարական բովանդակությամբ անկարող էին ժողովրդին ծառայել «որպես կամուրջ լուսավորության»: Այս տեսակետից, նա ոչքննադատող քննադատութեան է ենթարկում Մխիթարյանների կլասիցիստական գրականութունը, համարելով այն «դանակով կտրած, բաժանած ժողովրդից»: «Այն մատենագրութունը, — գրում է Նալբանդյանը, — որի մեջ, իբրև հայելու մեջ, չէ երևում ազգի կյանքը, նորա և ամենանուրբ գծագրութունքը, այդպիսի մի մատենագրութուն, թող ներեն մեզ այսպես ասել ճշմարտութունը, նման է ճիզվիթների կրոնավորութեանը... այդպիսի մատենագրութունը այնքան դաստիարակիչ կլինի ազգին, որքան մի խորթ մայր օտարի զավակներին»¹:

Այս կամ այն բանաստեղծի ազգային բնույթը որոշելիս, Նալբանդյանը դեկլարավում էր այն շահանիշով, թե նրա ստեղծագործութունն ի՞նչ փոխհարաբերության մեջ է գրտնըվում «ազգի հետ, ազգի իմացական և բարոյական կյանքի հետ»: Առաջնորդվելով այս սկզբունքով, նա արժեքավորում է Թադիսդյանի «Տեր, կեցո դու զհայս» բանաստեղծութունը, Գամառ-Քաթիսայի «Ազգային երգարան հայոց» ժողովածուն և այլն:

«Ճշմարիտ և ստույգ մատենագրութունը մի հայելի է, — գրում է Նալբանդյանը, — որի մեջ ցոլանում է ազգի կյանքը: Եվ որպես հարգի է այն հայելին, որ ճիշտ ցոլացնում էր յուր առաջև դրած առարկայի պատկերը, նույն շահով մի մատենագրութուն, որի մեջ ստուգապես երևում էր ազգի կյանքը և պատկերը»²: Այն գրականութունը, սակայն, որ կեղծում է իրականութունը, Նալբանդյանը համարում է «խարդախ մատենագրութուն»:

Իրականութեան ճշմարտացի արտացոլման պահանջն առաջադրելով գեղարվեստական գրականութեանը, Նալբանդյանը վերջինս համեմատում է պատմութեան հետ: Պատմու-

¹ «Հյուսիսայի», 1858, № 1, էջ 76:

² Նույն տեղը, № 9, էջ 245:

թյան և բանաստեղծության միջև եղած տարբերությունները ընդունելով հանդերձ, Նալբանդյանը ընդգծում է, որ «բանաստեղծությունը կատարելագործում է մեր հասկացողությունը ազգի հոգու կամ հոգեղեն կյանքի մասին, որ պակաս էր թողել պատմությունը»¹:

Արվեստի հիմնական խնդիրը համարելով իրականության հարազատ վերարտադրումը, Նալբանդյանը, սակայն, չի պահանջում կյանքի լուսանկարումը:

Նա գտնում է, որ գեղարվեստական գրականությունը կարող է արտացոլել նաև այն հավանականը, որ կարող էր կատարվել, հարազատ ու բնորոշ է տվյալ ժողովրդին և տրամաբանորեն բխում է կյանքից: «Այս է խնդիրը. կատարվե՞լ են այդ իրողությունքը, կամ, եթե չեն ևս կատարված, ապա կարո՞ղ էին կատարվիլ, թե ո՛չ»²:

Առաջնորդվելով գրականությունը ժողովրդի շահերին ծառայեցնելու սկզբունքներով, Մ. Նալբանդյանը վճռական նշանակություն է տալիս գրական երկի գաղափարական բովանդակությանը: Նա իր ժամանակի գրողների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ նրանք ջանան «ուղև և ծուծ» դնել հայոց ամուլ գրականության մեջ: Հետևողականորեն առաջնորդվելով այդ սկզբունքներով, Նալբանդյանը խիստ ընտրություն է կատարում «Հյուսիսսփայլ»-ում տպագրվելիք ստեղծագործությունների միջև:

«Խնդրում եմ ամեն մի մարդուց, — գրում է նա, — որ խնայեն իմ «Հիշատակարանը» և բան ուղարկելու ժամանակ, աշխատեն այնպիսի բան ուղարկել, որ և յուրյանց, և ինձ, և պատվելի ընթերցողներին ժամանակի զուր կորուստ չլինի»³:

«Հյուսիսսփայլ»-ում նրա հրատարակության առաջին տարիներին տպագրված նյութերը ցույց են տալիս, որ գրանք ընտրված են որոշակի նպատակներով և հետևողականությամբ:

¹ «Հյուսիսսփայլ», 1859, № 9, էջ 697:

² Նույն տեղը, էջ 698:

³ Նույն տեղը, № 1, էջ 79:

Նալբանդյանն առաջին պլանի վրա դնելով գրականության գաղափարական բովանդակության հարցը, միաժամանակ հեղինակների ուշադրությունը հրավիրում է գրականության ձևի խնդիրների վրա: Գեղարվեստական գրականությունը պետք է կարողանա միանգամայն համոզիչ կերպով արտացոլել իրականությունը, ստեղծել գեղարվեստական լիարժեք կերպարներ: Ահա թե ինչու, խոսելով «Արիստակես» ողբերգության բեմադրության մասին, Նալբանդյանը ընդգծում է այն հանգամանքը, որ պիեսում բացակայում է կենդանի գործողությունը, և որ հեղինակին չի հաջողվել ստեղծել լիարյուն մարդկանց կերպարներ, պիեսը լի է արհեստական ուսպաթետիկ ճառերով: Հիշյալ ողբերգությունը նա համարում է «թույլ բան» և «զուրկ ամենայն բանաստեղծական ճարտարությունից». «ասես թե դուրս հեղինակը հարկադրանքով գրել է այդ գործը», — ավելացնում է Նալբանդյանը վերջում:

Մինչդեռ նա բարձր է գնահատում հայ ուսանողների բեմադրած «Վա՛յ իմ կորած հիսուն ոսկի» կենցաղային կոմեդիան, նշելով այդտեղ ներկայացված հայկական բնավորությունների կենդանությունը:

«Հասարակ ժողովրդի» դաստիարակության գործում կարևոր դեր հատկացնելով գեղարվեստական գրականությանը, Նալբանդյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում գրական երկի լեզվի վրա:

Այս առումով արժեքավորելով հանդերձ Մ. Թադիադյանի և Դ. Ալիշանի ստեղծագործությունների ոգին և գաղափարական բովանդակությունը, Նալբանդյանը մերժում է նրանց լեզուն, որը քչերին էր մատչելի:

«Ես մինչև-այժմ չեմ հասկանում, թե Թադիադյանցը ինչ խորհրդով գործածական լեզու շինեց յուր մատենագրության հանդիսում հին և մեռած լեզուն, — գրում է նա, — ...Դժվար է հասկանալ այսպիսի անբնական գործը, մանավանդ Թադիադյանցի կողմից, որ եվրոպական կրթություն ստացած լինելով, ...չէ մտածել, թե խոսելու կամ գրելու խորհուրդը այն է, որ ժողովուրդը կարդա և բան հասկանա»¹:

¹ «Հյուսիսայիլ», 1859, № 9, էջ 691:

Առաջնորդվելով գրականությունն ու գիտությունը ժողովրդին ծառայեցնելու այդ միևնույն սկզբունքով, Մ. Նալբանդյանն առավել անզիջող է դառնում գիտական աշխատությունների և պատմական ուսումնասիրությունների նկատմամբ:

Ոչնչացնող քննադատության ենթարկելով Ա. Խուդաբաշևի «Հայոց պատմություն» աշխատությունը¹, Նալբանդյանը պահանջում է խոսել փաստերի լեզվով, առանց կամայական հայտարարությունների. երևակայությունը «ինչքան ևս հանդես թնենա բանաստեղծության մեջ, պատմական դորժերում զրկված է ամենայն արժեքից», — գրում է նա:

Խուդաբաշևը քննադատվում է նաև իր սխալ դադափարների, բնագրերի աղավաղումների, այլ հեղինակների աշխատություններից կատարած գրագողության համար:

Նալբանդյանը իր «Հիշատակարան»-ում հանդես է գալիս կովկասահայ ռեակցիոներների պարադոքս Սարգիս վարդապետ Զալալյանի «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» գրքի քննադատությամբ: Նա անողոք կերպով վեր է հանում այդ աշխատության աղաղակող սխալները, դատապարտում միատիպական ոգին, ոչնչության հավասարեցնում դրա «գիտական արժանիքները», ցույց է տալիս Զալալյան վարդապետի տգիտությունը բնական գիտությունների ասպարեզում:

Հարկավ, Նալբանդյանի հողվածը հասնում է իր նպատակին, հայ հասարակության մեջ ղինաթափ անելով Զալալյանի նման մի վտանգավոր քաղաքական հակառակորդի:

Եթե 60-ական թվականներին ուռա իրականության մեջ վաղուց արդեն դոյություն ունեւ լրջորեն ձևավորված գրաքննադատական միտք և գրական տարբեր հոսանքները պայքարի մեջ էին գտնվում գրական հարցերում, ապա հայ իրականության մեջ քչերին էր ծանոթ կրիտիկա հասկացողությունը:

Ահա թե ինչ՞ն է Մ. Նալբանդյանը, և՛ Ստ. Նազարյանը

¹ «Обозрение Армении, в географическом, историческом и литературном отношениях», СПб, 1859.

իրենց առաջին քննադատական հոդվածներում անհրաժեշտ են համարել տալ քննադատի և քննադատության բնորոշումները, բացահայտել դրանց կոշտամբ:

Նալբանդյանը քննադատությունը համարում է գրականության օրգանական մասը, նրա հոգին և նշում է, թե՛ «Մատենագրություն առանց կրիտիկայի, միևնույն է, ինչպես մարմին առանց հոգու», ուստի և «այն ազգը, որ չունի կրիտիկա, չունի և մատենագրություն»¹:

Ավելին, կրիտիկան նա համարում է յուրաքանչյուր մի ազգի լուսավորության աստիճանի չափանիշը:

Նալբանդյանն, անկասկած, նկատի ունենալով ռուսական առաջավոր գրաքննադատական միտքը, գրում է. «Այժմյան լուսավորչալ ազգերի մեջ այնքան ծաղկած է կրիտիկան, որ համարձակ կարելի է ասել, թե այդ բանը դարձած է մի մեծ ճյուղ մատենագրության և այն՝ շատ օգտակար ճյուղ»²:

Հայ իրականության մեջ ևս այդ «օգտակար ճյուղը» զարգացնելու նպատակով Նալբանդյանը հանդամանորեն պարզաբանում է կրիտիկայի խնդիրները:

Ստիպված լինելով հերքելու տարածված այն կարծիքը, թե՛ քննադատությունը պարսավանք է, կամ գովասանք, նա գրում է. «Կրիտիկան մի սուրբ և անկողմնապահ դատաստան է, մի այնպիսի դատաստան, որի առաջև միևնույնն են բարեկամ և թշնամի, որ և մի անաչառ դատավորի նման քննում է մի գործի արժանավորություն և պակասություն»³:

Կրիտիկան մեր հանելով գեղարվեստական գործի արժանիքները՝ ջերմացնում է ժողովրդի սիրտը և օգնում նրա ընդունելության գործին, միաժամանակ քաջալերում է հեղինակին և նրան մղում դեպի ստեղծագործական նորանոր հաջողություններ: Այնուհետև, բացահայտելով գործի թերությունները, կրիտիկան ժողովրդին հեռու է պահում վտանգավոր մտքերից և աղդեցություններից: Վերջապես, հեղինակին օգնում է մշակելու և անթերի դարձնելու իր գործը: Այսպիսով,

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 75:

² Նույն տեղը:

³ Նույն տեղը, էջ 73:

«կրիտիկան անտարակույս օգտակար է լինում և հասարակությանը, և հեղինակին»:

Այնուհետև, Նալբանդյանը հերքում է այն կարծիքը, թե իբր կրիտիկան ավելորդ է, որովհետև յուրաքանչյուր ոք կարող է գնահատել այս կամ այն երկը: Նա գրում է. «Ո՛չ ամենայն ընթերցող մարդ ազգի մեջ ունի այնքան գիտություն, հասկացողություն, որ կարողանա դատավոր լինել»¹:

Այնինչ, լուրջ քննադատությունը երբեմն այս կամ այն գրական երկի մեջ գտնում է արժեքներ, որոնք չեն գիտակցվում նույնիսկ իրենց՝ հեղինակների կողմից:

«Հիշատակարան»-ի էջերում Նալբանդյանը բազմիցս անդրադառնում է հայ նոր գրականության զարգացման և նրա հեռանկարների հարցերին: Նա նշում է ժողովրդի ազգային կյանքը հարադատորեն արտացոլող գրականության ստեղծման անհրաժեշտությունը:

Մ. Նալբանդյանն իր հյուսիսափայլյան շրջանի գործունեության ընթացքում լուրջ ուշադրություն է նվիրել և թարգմանության խնդիրներին:

Հայ աշխարհիկ գրականության զարգացման լուրջ խթաններից մեկը Նալբանդյանը համարում էր թարգմանությունը: Հայտնի է, որ «Հյուսիսափայլ»-ի հրատարակության առաջին տարիներին նա տպագրեց մի շարք թարգմանական ստեղծագործություններ: Ավելի ուշ, երբ «Հյուսիսափայլ»-ի հակառակորդները հայտարարում են, թե այդ ամսագրի էջերում տպագրված եվրոպական վեպերը «բնավ մեզ, մեր ազգին վերաբերություն չունին», Նալբանդյանն իր պաշտպանության տակ է առնում «Հյուսիսափայլ»-ը: «Ամեն մի ընտիր վաստակ, ինչ լեզվով ևս լինի գրված, այնուամենայնիվ միշտ օգտակար է բոլոր մարդկության»², — գրում է նա: Կարևորն այն էր, տվյալ դեպքում, որ թարգմանված երկերը իրենց բովանդակությամբ, արժարժած խնդիրներով և «ազատ հայեցվածներով» համապատասխանեին այն պահանջներին, որ

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 73:

² Մ. Նալբանդյան, ԵԺԺ, հ. 2, էջ 403:

առաջադրում էր հայ իրականությունը: Ահա թե ինչու «Հիշատակարան»-ում Նալբանդյանը խիստ քննադատության է ենթարկում Խորեն վարդապետ Գալֆայանին՝ կամարթինի «Les Harmonies» բանաստեղծությունների ժողովածուի թարգմանության համար: «Կամարթինի գործերը առաջին հարկավոր բաները չեն»,—գրում է Մ. Նալբանդյանը,—նրա «տաղերգությունների յուրաքանչյուր տողերից փչում է միստիկականություն, որ ոչ միայն օգտակար չէ, այլ շատ և շատ վնասակար է, եթե առողջ բանականությամբ աչքի տակ ձգենք մեր ազգի վիճակը: Մեզ հարկավոր է կյանք և շարժողություն...»¹: Մի այլ առիթով խոսելով Բեռնարդեն դը Սան Պիեռի «Պավլոս և Վիրգինե»-ի հայերեն թարգմանության մասին, Նալբանդյանը խոստովանում է, որ ինքը կհամաձայնվեր ներողամտորեն նայել այդ թարգմանության թերությունների և լեզվի տկարության վրա, եթե միայն այն իր գաղափարական բովանդակությամբ բավարարեր ժամանակի առաջադրած պահանջները: Սակայն «այդ գործը (բնագիրը) չունի ոչինչ մատենագրական արժանավորություն»,—հայտարարում է նա, հայ գործիչներից խնդրելով «թարգմանության ժամանակ ուշ դարձուցանել այն բանի վերա, որ բնագիրը ունենա մի հաստահիմն արժանավորություն»²:

Որ «հաստահիմն արժանավորությունը» Նալբանդյանի համար հավասարազոր է առաջադիմական, դեմոկրատական եղղության նշանակության, այդ ցայտուն կերպով երևում է Կալկաթայից 1861 թվականին Անանիա Սուլթանշահին ուղղած նրա մի նամակից: «Ամենևին ձեռնհաս չեմ «Հյուսիսփայլ»-ի համար աշխատելու. եղանակը, դատաստանական զբաղմունքը, պանդխտության դժնդակ ծանրությունը խլում են ինձանից իմ վերջին հնարները: Բայց դու աշխատիր գեթ մի հատ ազատամիտ բան թարգմանել»³:

Իր զրական-հրապարակախոսական գործունեության ընթացքում Մ. Նալբանդյանն առաջնորդվում էր այս ծրագրով,

¹ «Հյուսիսփայլ», 1859, № 9, էջ 733:

² Նույն տեղը, էջ 745:

³ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 4, էջ 109 (ընդգծումը մերն է—Մ.Մ.):

իր հետևից տանելով և Անանիա Սուլթանշահին, Գաբրիել Տեր-Հովհաննիսյանին ու այլ առաջավոր գործիչներին:

Նալբանդյանն իր «Հիշատակարան»-ում անդրադարձել է և թատրոնի զարգացման, նրա նշանակության և հեռանկարների հարցերին:

«Հյուսիսափայլ» ամսագրի հրատարակության առաջին տարում հայ իրականության մեջ կատարվում է մի խոշոր իրադարձություն. հիմնադրվում է արևելահայ թատրոնը:

1859 թվականի հունվարի 27-ին Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները Միքայել Հարությունյան-Ստեփանյան-Տի տանը բեմադրում են «Արիստակես» եղբերգությունը և «Վա՛յ իմ կորած հիսուն ոսկին» կատակերգությունը:

Ավելի քան 200 մարդ էր հավաքվել դիտելու այդ նորանշան երևույթը: Եթե հայ հետադիմական մամուլը, հանձին «Ճռաքաղ»-ի, անվերապահորեն մեծարանքի խոսքով դիմավորեց թատերասեր երիտասարդների ձեռնարկությանը, ապա «Հյուսիսափայլ» ամսագիրը ողջունելով հանդերձ, քննադատական կարևոր դիտողություններ արավ:

«Հյուսիսափայլ»-ի այդ դիրքը ժամանակին քննադատվեց հայ հետադիմական մամուլի կողմից: Բանն այն էր, որ Միքայել Նալբանդյանը ողջունելով հայ թատերասեր երիտասարդությանը, լուրջ քննադատության էր ենթարկում «Արիստակես» ողբերգությունը, որը, անշուշտ, շատ մոտ էր ճռաքաղյան լազերի գործիչների սրտին:

Մ. Նալբանդյանը Մոսկվայի հայ ուսանողության նախաձեռնությունը համարում է խրախուսելի երևույթ, որպես հայ ժողովրդի դաստիարակության կարևոր միջոցառումներից մեկը: Այս առումով էլ նա խիստ քննադատության է ենթարկում ուսանողների բեմադրած «Արիստակես» ողբերգության ղեղարվեստական անկատարությունը և գրաբար լեզուն, որը չէր կարող նպաստել ժողովրդական լեզվի զարգացման գործին:

Մ. Նալբանդյանը հանդիսանում է հիմնադիրը հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական էսթետիկայի:

Հայ մեծ քննադատի գեղագիտական հայացքների բարձ-

րակետն է հանդիսանում «Սոս և Վարդիթերի կրիտիկան»՝ գրված Պետրոսյավլովյան ամրոցում: Նրա էսթետիկան վերջին, հետհյուսիսամիսյայկյան շրջանում ուղղված էր գոյություն ունեցող անարդար կարգերի ոչնչացման և այդ իրավակարգը փոխելու նպատակին:

«Հյուսիսամիսյա» ամսագրում տպագրվել են և Ս. Նազարյանի գրաքննադատական հոդվածները: Արձագանքելով ժամանակի առաջադիմական շարժմանը և մասամբ ընդունելով՝ Նալբանդյանի էսթետիկական սկզբունքները, Ս. Նազարյանը արվեստի և գրականության խնդիրն է համարում ժողովրդի դաստիարակության գործը: Նրա քննադատական սակավաթիվ հոդվածները լի են հայ ժողովրդի մտավոր առաջընթացին նվիրված խորհրդածություններով: Այսպես, գրախոսելով «Թափառական հրեա»-ի Նալբանդյանի թարգմանությունը, Նազարյանը գրեթե բառացիորեն վերապատմում է Նալբանդյանի առաջաբանը, դրան կցելով իր սեփական ծրագիրը՝ հայերի լուսավորության, ազգային դպրոցների հիմնադրման, գրականության զարգացման և այլ հարցերի մասին: Այնուհետև, ինչպես Շիրլերի «Մեսինական հարսի» թարգմանությունը կցած իր առաջաբանում, այնպես էլ Ս. Շահազիզի «Լեոնի վշտի» մասին գրած գրախոսականում Նազարյանը շարունակում է խոսել իրեն հուզող այն հիմնական հարցի մասին, թե հայերը ո՞ր ճանապարհը պետք է ընտրեն. «շարժականություն դեպի առաջ», թե՞ «ասիական անշարժություն»:

Հավանություն տալով Շահազիզի գրքում արծարծված «գեղեցիկ ու առողջամիտ գաղափարներին», Նազարյանը գրում է. «Միակ ճանապարհը փրկության է ուսումն, դըպրոց, բանագետ վարժապետք, խելացի կրոնությունը, ոչ հնամուր ուսուցիչը հայոց ճարտասանության, այլ նոր ժամանակի հոգուն և պիտույքին քաջ ուշադիր մարդիկ»¹:

Նազարյանը տեսականորեն ընդունելով գրականությունը ժողովրդին մատեցնելու անհրաժեշտությունը և հայտարարելով, թե «բնության մեջ կարելի է գտնել ճշմարտությունը և

¹ «Հյուսիսամիսյա», 1864, № 11, էջ 779:

ամենավերին գեղեցկությունը»¹, իրականում թարգմանում է այնպիսի ստեղծագործություններ, որոնք իսպառ հեռու էին արդիականության հրատապ հարցերից («Աթալա», «Բենե», «Հաստատամիտ արքայազը», «Մեսինական հարսը» և այլն):

Իր տալազրած գրաքննադատական հոդվածներում Նազարյանը ևս փորձել է տալ քննադատի բնորոշումը, մեկնաբանել նրա գործունեության նպատակը:

Քննադատից նա պահանջում է բազմակողմանի կրթություն, ճշմարտացիություն և անաչառություն. «Այն կրիտիկոսը, — գրում է նա, — որ ստրկանում է յուր անձնական պիղծ ախտերին, որ երկյուղ ունի օտարի արժանաժողովրդները խոստովանելուց, որովհետև այդ բանը կարող էր վնասել նորան հասարակության աչքումը», և որը քննարկվելիք գործի մեջ նշմարում է միմիայն թերությունները, այդպիսի քննադատն արժանի է արհամարհանքի²: Նա գրողներից ևս պահանջում է նախապես սովորել և ապա ձեռնամուխ լինել ուսուցանելու գործին:

Ուշադրության արժանի են նաև Նազարյանի հոդվածները թատրոնի մասին:

Թատրոնը համարելով հայ ժողովրդի մտավոր վերածնության կարևոր գործոններից մեկը, Նազարյանը գրում է. «Եթե մի ազգ արժանացել էր այն պարծանքին, որ է ունենալ մի ազգային թէատրոնական բեմ, այնուհետև կարող էր նա ասվիլ ստուգապես ազդ»:

Ազգային թատրոնի զարգացումը Նազարյանը խրախուսում է նախ այն պատճառով, որ այն նպաստում է հայոց նոր գրական լեզվի պրոպագանդի գործին, և ապա հանդիսանում է ժողովրդի դաստիարակության զորավոր միջոցներից մեկը: Թատրոնի հիմնադրությունը Նազարյանը կարևոր գործ է համարում ժողովրդական դպրոցների, գրադարանների և կուլտուրական այլ միջոցառումների հետ միասին:

«Մի հայկական թէատրոնաբեմ շատ ու շատ հարկավոր է մեզ հայերիս, որպես ազգու ներգործող խրատ, որպես պատիժ և քաջալերություն, որպես հայելի պատկեր մեր հայկա-

¹ «Հյուսիսայալլ», 1861, № 1, էջ 9:

² Նույն տեղը, 1858, № 10, էջ 317:

կան կյանքին, որպես մի մեծ դաստիարակիչ գալրոց մեծ ու փոքրի, կնամարդի ու տղամարդի համար»¹։

Նաղարչյանի հայացքների պարզաբանման առումով հետաքրքրական է այն փաստը, որ միանգամայն անտեսելով ժամանակակից թեմատիկայով պիեսներ ստեղծելու անհրաժեշտությունը, նա հայկական թատրոնից պահանջում է վերհանել ազգային պատմության զանազան հիշարժան դրվագները և այդ միջոցով ժողովրդին դաստիարակել հայասիրության և ազգասիրության ոգով։ Այս կապակցությամբ նա առաջ է քաշում և դրամատուրգներ ունենալու անհրաժեշտությունը, որոնք «կարողանային օրինավոր մշակել պատմական նյութը և հարմարավոր կացուցանել նորան ժողովրդի ունեկրթությանը»։

Նաղարչյանը միաժամանակ հայ թատրոնի համար կարելի է համարում եվրոպական լավագույն դրամատիկական ստեղծագործությունների բեմադրությունը։ «Շիլլերը և Գյոթեն, — գրում է նա, — այդ և Շեքսպիրը կարող էին յուրյանց զանազան դրամատիկական գործերով արդյունաբեր լինել հայոց թեատրոնական բանաստեղծին»²։

«Հյուսիսափայլ»-ը, հատկապես Նալբանդյանը, նշանակալից դեր կատարեց հայ իրականության մեջ էսթետիկայի հարցերը արծարծելու և մշակելու ուղղությամբ։ «Հյուսիսափայլ»-ի գրական գալրոցում դաստիարակվեցին ժամանակի առաջավոր գրական գործիչներ Ա. Սուլթանշահը, Գ. Տեր-Հովհաննիսյանը, Մ. Բուդաղյանը, Մ. Սադաթյանը, Ս. Շահազիզը, Գ. Բարխուդարյանը։

4. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԸ «ՀՅՈՒՄԻՍԱՓԱՅԼ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

60-ական թվականները հայտնի են բնական գիտությունների բնագավառում կատարված խոշոր հեղաշրջումով։ 1859 թվականին տպագրվում է Դարվինի «Տեսականների ծագումը», որը լայն տարածում է գտնում ողու իրականության մեջ։

¹ «Հյուսիսափայլ», 1859, № 1, էջ 56։

² Նույն տեղը, 1858, № 1, էջ 57։

Դարվինի ուսմունքի ջերմ ընդունելությունը ուսա առաջավոր մտածողների կողմից պատահական երևույթ չէր:

18-րդ դարում և 19-րդ դարի սկզբներին ռուսական դիտական միտքը հանձինս Մ. Լոմոնոսովի, Ա. Կավերզինի, Պ. Գորյանինովի, Ա. Բեկետովի, Կ. Ռուկեի և այլոց, բավական աշխատանք էր կատարել օրգանական աշխարհի զարգացման, տեսակների փոփոխության, օրգանական և անօրգանական աշխարհների միասնության, օրգանիզմի զարգացման հարցում միջավայրի ունեցած նշանակության և այլ օրինաչափությունների բացահայտման գործում:

60-ական թվականներին ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատները, զինվելով առաջավոր բնագիտության նվաճումներով, իրենց նախորդների մատերիալիստական դրույթները տարածում են ոչ միայն բնական երևույթների, այլև հասարակական կյանքի վրա:

Նրանք ձգտում էին բնական գիտությունները ծառայեցնել ժողովրդի հասարակական գիտակցության բարձրացմանը, իրականության՝ ռևոլյուցիոն վերափոխման նպատակին:

«Հյուսիսսիբիրյ» ամսագրի հրատարակությունը համընկնում է բնական գիտությունների պրոպագանդի ժամանակաշրջանին ռուս պարբերական մամուլում և հրապարակախոսության մեջ: Ստ. Նազարյանը լրջորեն մտահոգված էր, որ ֆեոդալական փոխհարաբերությունների և միջնադարյան խավարի հետևանքով գիտությունից բոլորովին մեկուսացած հայ ժողովուրդը հաղորդակից դառնար նոր ժամանակների տեխնիկայի, գիտության, քաղաքակրթության նվաճումների հետ: «Հյուսիսսիբիրյ»-ի հրատարակության հաշտարարության մեջ արդեն Նազարյանը գրում էր. «Գյուղական տնտեսը ինչ գիտեր քիմիական գործողությունների մասին, արվեստավորը ներգործող գործությունների, շարժողության և հավասարաչափության օրենքների մասին, վաճառականը ինչ կրթություն ուներ, բացի մի փորձով ստացած հաշվատարությունից և հաշվապահությունից»:

Հայ ժողովրդին «նոր ժամանակի» ոգուն համապատասխան դաստիարակելու համար Նազարյանն իր ամսագրի հիմնադրման առաջին իսկ օրվանից լուսավորության գործն

անբաժան էր համարում գիտության նվաճումների յուրացումից:

Այսուհետև ոչինչ եգիպտոսյան խորամանկ քուրմեր, որ կամեին լինել գիտության միայնակ պահապանքը,—գրում է Նազարյանը «Հյուսիսափայլ»-ի առաջին համարի «Ճակատին» որպես գործողության նշանաբան,—այսուհետև ոչինչ Զինեական սլարիսպ, որ սլիտո է փակեր լուսավոր գաղափարների մուտքը ազգերի մեջ: Այսուհետև լույս և ճշմարտություն և աղատություն խավարի բարելոնյան գերութենից»¹:

Նազարյանը իր ընթերցողներին կոչ է անում մոտենալ գիտության աղբյուրին, ճանաչել բնությունը, մարդկային պատմությունը, կյանքի զանազան երևույթները:

Այն ժամանակ, երբ հայկական հետադիմական սլարբերականները համառորեն աչք էին փակում բնական գիտությունների աննախընթաց զարգացման փաստի առջև, Նազարյանը և Նալբանդյանը ձեռնամուխ են լինում գիտության այդ առաջավոր ճյուղի պրոպագանդին:

Նազարյանը ելնելով ժողովրդին լուսավորելու նպատակից, «Հյուսիսափայլ»-ի խնդիրն է համարում «անապաշտության և կանխակալ մոլորությունների կործանություն գիտության լուսովը, ժողովրդի կյանքը նորա շատ ցած և արհամարհ շրջաններումը ևս բարձրացնելը և ազնվացնելը»:

Այս նպատակի իրագործման համար Ստ. Նազարյանը Մ. Նալբանդյանի օգնությամբ սկսում է հանրամատչելի հոդվածներով ծանոթացնել իր ընթերցողներին բնագիտության և աշխարհագրության զանազան երևույթների հետ: Ամսագրում զետեղվում են հոդվածներ երկրի, նրա կազմության, երկնքի, մոլորակների, աստղերի մասին և այլն:

«Տարեկան շարժողությունը երկրի» վերնագրով մի հոդվածում նկարագրվում են մոլորակները, արեգակը, լուսինը և դրանց շարժումն ու շարժման արագությունը, ինչպես և հեռավորությունը երկրից: Նազարյանը միաժամանակ առաջարկում է, որ մարդիկ բանականորեն նայելով բնության հրաշքների վրա՝ դրանք քննեն և ուսանեն: «Լուսնի մակերե-

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 1:

վույթը» հոգւածում Ստ. Նազարյանը նկարագրում է լուսնի կազմութիւնը, նրա չափն ու դիրքը: «Տիեզերքի շինվածքը» հոգւածում նա պատմում է երկրի կառուցվածքի, մոլորակների մեծութեան, նրանց միմյանցից ունեցած հեռավորութեան և պտույտների մասին: Նույն հոգւածում խոսելով գիտավոր աստղերի մասին, Նազարյանը գիտականորեն հերքում է այն նախապաշարմունքը, թե դրանց երևալը համաժողովրդական աղետ է գուժում:

Ամսագրի խմբագիրն ու նրա աշխատակիցները անպայմանորեն զգում էին գիտա-մասսայական հոգւածների հրատարակման անհրաժեշտութիւնը, և այդ պակասը լրացնելու նպատակով, հասկանալի լեզվով իրենց ընթերցողներին պատմում էին աշխարհի կառուցվածքի, բնութեան օրենքների և կամ գիտական հայտնագործութիւնների մասին:

Հիշատակութեան արժանի է «Հյուսիսսփայլ»-ի թղթակից Ս. Ավետիքյանի «Բնախոսականք» հոգւածը, որտեղ մանրամասնորեն նկարագրված են մարդու կազմութիւնը, մարմնի ներքին օրգանների գործողութիւնները, զգայարանների գործունեութիւնը, սննդի և մարսողութեան, հիվանդութիւնների և մահվան հետ կապված խնդիրները, և այլն:

Գիտութեան արոպագանդին նվիրված «Հյուսիսսփայլ»-ի հոգւածների մեծ մասը զերծ չէ և որոշակի հետադիմական կրոնական հայացքներից: Նազարյանը բնագիտական գիտութիւններին տալիս է երկու նշանակութիւն, որոնցից առաջինը հանգում է այն բանին, թե «քննելով և ճանաչելով արարածքը, կարող է մարդս ճանաչել յուր աստվածեղեն արարելը»: Այնուհետև, նա բնագիտութեանը տալիս է միջնորդի դեր աստծու և աշխարհի միջև, ինչպես և փորձում է բնագիտութեան միջոցով հաշտեցնել կրոնն ու գիտութիւնը:

Ահա թե ինչո՞ւ Մ. Նալբանդյանի մատերիալիստական բնագիտական հոգւածների կողքին, Նազարյանն իր ամսագրում տեղ է տալիս և բազմաթիվ կրոնա-բարոյագիտական հոգւածների:

Այսպես, 1860 թ. տպագրվում է Մ. Լաջվարդյանի «Գործական փիլիսոփայութիւն» հոգւածը, որը կառուցված է այն իդեալիստական մտայնութեան վրա, թե աշխարհն իբր ասեղ-

ծել է աստված, ուստի այն անթերի է և կատարյալ: Հողվածն սկսվում է «Աստուծո գոյությունը» նախաբանով, որտեղ մեկ առ մեկ հիշատակելով բնության հրաշալիքները, հեղինակը ոգևորված բացականչում է.

«Ո՞ր մշուար, քան թե գերագույն ստեղծողը տիեզերքի կարող էր գոյացրած լինել դորանց: Կլինեին դոքա դիպվածի և ոչեղության միջից գոյացած: Եվ որ ամբարիշտը կարող էր այնքան խելագարվիլ, որ ոչէին ընծայեր մի ամենակարողություն, որ համարձակվեր ուրանալ այդ ամենակարողությունը նորա մեջ, որ է՝ իսկապես և որով ամենայն ինչ եղած է»¹:

Մարկոս Բաղդասարյանն իր «Թե ի՞նչ բան ընդդեմ է մարդու արժանավորությանը» հողվածում անհավասարության պատճառը համարում է մարդկային արժանավորության ճանապարհից շեղվելը:

Իսկ Ս. Ավետիքյանը «Թե ինչպե՞ս և որո՞վ քրիստոնեությունը վերականգնել է մարդու արժանավորությունը» հողվածում այն միտքն է հայտնում, թե մարդիկ հասարակ մահկանացուներ չեն, և աստծո զավակները լինելով, գտնվում են նրա անմիջական հսկողության տակ: Ըստ Ավետիքյանի, մարդիկ ոչ մի հասարակօգուտ գործ չէին կատարի, ոչ մի նախաձեռնություն չէին ցուցաբերի և ոչ մի բանով չէին ոգևորվի, եթե վստահ չլինեին, թե կա հանդերձյալ կյանքը, ուր միայն մարդիկ կատարելագործվում են, բարձրանում, և դժբախտությունը, որն ապրել են այս կյանքում՝ նրանց համար դառնում է ուրախության աղբյուր...

Գրեթե նույն ոգով է գրված և Լաշվարդյանի երկրորդ հողվածը՝ «Մարդկային կյանքի արժանավորությունը»:

Ստ. Նազարյանն իր «Կրոնը և եկեղեցին» հողվածում ըստ էության վերաշարադրում է գերմանացի Շեոնբոռնի մտքերը («Վախճանական նպատակը բնաղննության և նորա նյութապաշտական մոլորությունը»): Շեոնբոռնը մարդկային առողջ բանականության հետ անհամատեղելի է համարում այն ճշմարտությունը, թե աստված սկզբնապատճառը չէ աշխարհի, այլ աշխարհն ի սկզբանե եղել է, կա ու կլինի որպես ան-

¹ «Հյուսիսփայլ», 1860, № 6, էջ 431:

սկիզբը և անվախճան, մշտնջենավորապես շարժվող մի մարմին: Նա վկայակոչելով բոլոր հավատացյալ գիտնականներին, նշում է, թե իսկական գիտնականներն իրենց գործունեությամբ «փոխանակ մարմնավոր աշխարհի գիտությամբ առաջնորդվելու դեպի հոգեւորացություն և աստվածուհություն, օրե օր ավելի խորին սրտով վկայել են հոգին և աստվածը, որչափ ավելի խորամուխ էին եղած բնության զաղտնիքի մեջ»¹:

Նազարյանի կարծիքով, մահը ճանապարհն է դեպի ավելի վերին մի կյանք, դեպի կատարելություն: Մարդկային կյանքում եղած թշվառությունները, սոցիալական անհավասարությունները, աղբերի ճնշումը, և այլն, Նազարյանը համարում է ժամանակավոր բաներ: «Դոքա ամենքը ղետեղած են յուրյանց գոյության առաջին աստիճանի վերա, և հավիտենականությունը հնարներով ձուխ ու անսպառելի է, լցուցանելու անհավասարությունը», — գրում է նա:

Այս հոգվածը մի անգամ ևս ապացուցում է Նազարյանի հայացքների սահմանափակությունը, նրա անհետեղականությունն ու վճռական հարցերում գրեհորվող պահպանողականությունը:

«Հյուսիսափայլ»-ում տպագրած բնագիտական իր հոգվածներով Մ. Նալբանդյանն ըստ էության հակադրվում էր գիտությունը կրոնի հետ հաշտեցնող Նազարյանի և մյուսների հայացքներին:

Միքայել Նալբանդյանը Մոսկվայի համալսարանում ուսումնասիրելով առաջավոր գիտության նվաճումները, ձրգտում էր դրանց հաղորդակից դարձնել ժողովրդին «Հյուսիսափայլ»-ի միջոցով: Նա համոզված էր, որ անհաշտ պայքարը սնահավատության ու նախապաշարոմների դեմ պետք է առաջացնեն ռեակցիոներների կատաղի դիմադրությունը: Սակայն, առանց մաղաչափ անդամ տեղի տալու այդ հարձակումներին, Նալբանդյանը վստահորեն իրագործում է իր ծրագիրը: «Իջանելով հայ դպրության ասպարեզը, — գրում է նա, — մեք գիտեինք, որ դարավոր տգիտությունը պատե-

¹ «Հյուսիսափայլ», 1864, № 7, էջ 509:

քաղմ պիտի հայտնե գիտությանը, որին լինելով մի լոկ սպա-
սավոր, օրհնեցինք և ընդունեցինք այդ պատերազմը»¹։

Իր բնագիտական հողվածներում արտահայտած հիմնա-
կան հայացքները Մ. Նալբանդյանը զարգացնում է նաև
հրապարակախոսական և ղեղարվեստական գործերում։ Նա
հերքում է ժողովրդի մեջ տարածված սնահավատությունները՝
և՛ հրաշքների գոյությունը, և՛ կայծակի ու հեղեղի հետ
կապված հավատալիքները, և՛ «էֆիմերդէի» կարծեցյալ
իմաստությունը, և՛ վարսավիրների ու գյուղական պառաւ-
նների «բժշկական» միջոցները, և այլն։ Նալբանդյանը երա-
զում է այն օրը, երբ իր «սիրական աղբը» կտեսնի «նախա-
հավատության, սնապաշտության և անկրթության բարբարո-
սական լծի տակից կատարելապես ազատված»։

Նալբանդյանի երազանքը վերացական ցանկություն չէր,
այլ գործողության ծրագիր։

Ժողովրդին «անկրթության բարբարոսական լծի տակից»
ազատելու համար Նալբանդյանը հայ մտավորականներին
կոչ է անում զբաղվել «բնական գիտությամբ», «որովհետև
ժողովրդի կյանքը միշտ գործ ունի նյութի հետ»։ Նա առա-
ջարկում է ուսանել բնությունը, «որով պիտի մեկնվե՞ր նոցա
մի ամբողջ կարգ հրաշքների և պիտի փարատվին այնուհետև
այսպիսի մոլորության ամուլերը պղտորված հայկական հո-
քիզոնից»²։

Նալբանդյանն առանձնապես անողոք է խավարամոլ
«գիտնականների» նկատմամբ։

Սարգիս վարդապետ Զալալյանի «Ճանապարհորդություն
ի մեծն Հայաստան» գրքի ազադակող թերությունները Նալ-
բանդյանը բացատրում է հեղինակի տգիտությամբ՝ հանքա-
բանության, քիմիայի, ֆիզիոլոգիայի և այլ գիտությունների
ասպարեզում։ Իսկական գիտնական պատմաբանից նա պա-
հանջում է զինված լինել ոչ միայն ընդհանուր պատմության,
ընդհանուր օրենսգիտության, հին և նոր քաղաքական աշ-
խարհագրության գիտելիքներով, այլև քաջ կերպով ուսած
լինել «բոլոր բնական գիտությունը, բնական և մաթեմատի-

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 6, էջ 466։

² Նույն տեղը, 1859, № 9, էջ 702—703։

կական աշխարհագրություն»: Նալբանդյանը այդպիսի դիտ-
նականից պահանջում է իր դիտողություններն արձանագրել
«ծանրաշափը, ջերմաշափը և էլեկտրաշափը ձեռքին, ամե-
նայն բոլոր փորձելով և ղննելով»:

Ժողովրդի սնահավատության դեմ Նալբանդյանը պայքա-
րում է բնության երևույթների գիտական մեկնարանության
միջոցով:

Ժողովրդին բնության երևույթների և տիեզերքի կառույց-
վածքի հետ ծանոթացնելու համար Մ. Նալբանդյանը «Հյուս-
սիսափայլ»-ի էջերում ղետելում է հողվածներ երկրագնդի
կազմության, մոլորակների, նախնական աշխարհի և դրա
փոխակերպման, հին աշխարհի կենդանիների և նրանց փո-
փոխության մասին: Մ. Նալբանդյանը ղինված առաջավոր
բնագիտության տվյալներով, հայացնում է ռուս էվոլյուցիո-
նիստների դրույթները աշխարհի զարգացման մասին. նա
գրում է.

«Առավել հին ժամանակներից մինչև առավել նոր ժամա-
նակները երկրի կերպարանագործությունը հետզհետե առաջ
է ղնացել, օրըստօրե անընդհատ գոյանալով նորանոր առա-
վել կատարյալ բուսական և կենդանական մարմիններ, թե-
պետ առաջինքը չեն անհետացած իսկույն»¹:

Այնուհետև, կենդանական աշխարհի զարգացման պատ-
մության համար նա մեծ տեղ է տալիս պալեոնտոլոգիային,
որի օղնությամբ հանգում է կարևոր հետեությունների՝ նախ-
նական աշխարհի կենդանիների և նրանց առաջնական փո-
խակերպման մասին:

Մ. Նալբանդյանը ուսումնասիրելով ռուս առաջավոր
մտածողներ Մենդելեևի, Ռուլյեի և այլ էվոլյուցիոնիստ
գիտնականների աշխատությունները, հայ իրականությունը
հարստացրել է առաջավոր գիտության տվյալներով. Պետրո-
պովլովյան ամրոցում էլ նա շարունակում է հետաքրքրվել
բնական գիտություններով: Իր նամակներով վկայակոչելով
Ռուլյեին, նա արժարժում է բուլյեի ալլիմատիզացիայի
գաղափարը:

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 3, էջ 204:

Միքայել Նալբանդյանը խորապես հավատում էր գիտությանը, նրա մեծ ապագային. խոսելով դեռևս գիտական հիմնավորում չգտած բնության բաղմամբիվ երևույթների մասին, նա այն հաստատ համոզմունքն էր հայտնում, որ դրանք նույնպես բացատրություն կատանան:

«Մենք ապրում ենք հրաշքների դարում,— գրում է նա.— ով կարող էր հավատալ, ներկա 19-րդ դարու սկզբումը, որ մարդիկ մի տեղից դեպի մյուս տեղ պիտի տարվեին զարմանալի արագությամբ կամ պիտի խոսեին միմյանց հետ հազարավոր մղոն միմյանցից հեռի լինելով, փայլակի շուտափութությունը: Այս հրաշագործությունքը կատարեցին շոգին և էլեկտրականությունը:

Դեռ ևս որքան նոր հրաշքներ կտեսանեն մեր զավակները մինչև 20-րդ դարու սկիզբը»¹:

Այս առումով էլ Մ. Նալբանդյանն իր բնագիտական հոգվածներով ոչ միայն ժողովրդին սովորեցնում էր ճանաչել բնությունը և ուսանել այն, այլև իր ժամանակի գործիչներից պահանջում էր պրոպագանդել բնական գիտությունները: Վերջին հաշիվով նա պահանջում էր գիտության տվյալներն օրըստօրե հարստացնելով, դրանք կիրառել կյանքում և «շարժողություն պատճառել» այնտեղ: Նալբանդյանը գիտության նվաճումների և փաստերի պասսիվ ընկալմանը հակադրում է ակտիվ գործունեություն, պահանջում է ոչ միայն ընդունել և դնահատել գիտական հայտնագործությունները, այլև դրանք անցկացնել ստեղծագործ մտքի քուրայով: Հատկանշական է այն հանգամանքը, որ նա դեռևս 1858 թվականին իր «Նկատողությունք» հոդվածում գրում է. «Փոքր է լոկ և միայն ստանալը և սեփականելը զանազան գիտությունք և տեղեկությունք, որ հայտնագործել էին ուրիշները: Հարկավոր է, որ այդ ստանալուց և սեփականելուց նույն իսկ մարդու մեջ կատարվի մի հեղափոխություն—վերածնելություն. նորան անհրաժեշտ հարկավոր է սեփական գործունեություն, ընդունող, զնահատող և իշխող այդ գիտությունների վերա. հարկավոր է մտքի արարչական, ստեղծագործական զորություն:

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 9, էջ 241:

հարկավոր է, որ այդ տեղեկությունը դրվեին ոչ որպես սերմեր ավաղի վերա, այլ շարժողություն պատճառեին հողի մեջ և պտուղ տալին»¹:

Այսպիսով, «Հյուսիսամիայլ»-ի էջերում տպագրված իր հոդվածներով Նալբանդյանը ոչ միայն Նաղարյանի հետ միասին պրոպագանդում էր բնական գիտությունների բնագավառում եղած նորությունները, այլև արժարժում բնության վերափոխման, բնությունը մարդուն ծառայեցնելու դադարի փարը:

«Հյուսիսամիայլ»-ի հրատարակության առաջին տարիներին նրա էջերում տպագրված բնագիտական հոդվածները էական դեր են կատարել սնահավատության և նախապաշարումների դեմ պայքարելու գործում: Հայ ընթերցողները հաղորդակից դարձան ռուսական և եվրոպական առաջավոր գիտության նվաճումներին: Հիշատակության արժանի է և այն փաստը, որ Մ. Նալբանդյանը ժողովրդին լիովին հասկանալի լինելու և հայկական գիտական տերմինոլոգիա ստեղծելու նպատակով բաղմամբով ռուսական և եվրոպական տերմիններ թարգմանելով, ստեղծել է դրանց համարժեք բառերը հայերենում: Այսպես օրինակ, անչափելի (անվերջություն), աշխարհային մարմին (երկնային մարմին), աստեղաբաշխական դիտանոց (աստղագիտարան), հողագործող (երկրագործող), հեղանյութ (լավա), շինովի երկրագունդ (գլոբուս), Կաթնեղեն ճանապարհ (Միլ Կաթին), հեռացույց փողովակ (հեռագիտակ) և այլն, և այլն²:

5. ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ •

19-րդ դարի 60-ական թվականների հրապարակախոսություն հանդուցային հարցերից մեկն էր հանդիսանում կանանց հարցը: Այդ պայմանավորված էր ռուս իրականության մեջ սկզբնավորված կանանց շարժումով, որը առաջադրում

¹ «Հյուսիսամիայլ», 1858, № 10, էջ 510:

² Բ. Թումանյան, Միքայել Նալբանդյանի աստղագիտական հոդվածների մասին (տե՛ս Երևանի Պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր XXXV):

էր կանանց իրավահավասարութեան, նրանց տնտեսական անկախութեան, բարձրագույն կրթութեան և այլ հարցեր:

Ռեւոլյուցիոն-դեմոկրատներ Ն. Չերնիշևսկին, Վ. Կուրոշկինը, Մ. Միխայլովը և ուրիշներ մեծ ուշադրություն են նվիրում այդ հարցին:

Կանանց աշխատանքի, նրանց անկախութեան և ազատութեան հարցերն աշխույժ բանավեճ են առաջացնում ռուս գրականութեան մեջ և պարբերական մամուլում: Թերթերում տպագրվող բազմաթիվ հոդվածներում միջոցներ են առաջարկվում բարելավելու կանանց աննախանձելի վիճակը: Այդ միջոցները հիմնականում հանգում են այն բանին, որ կանայք ներգրավվեն աշխատանքի մեջ՝ առանց մասնագիտությունների սահմանափակման և սեփական աշխատանքով հոգան իրենց կարիքները: Ծայր առած բանավեճին մասնակցում են գրեթե բոլոր պարբերականները: Պահպանողական և լիբերալ օրգանները փորձում են սահմանափակել կանանց իրավունքները և դեմ են արտահայտվում նրանց հասարակական աշխատանքների և արտադրության մեջ ներգրավելու առաջարկներին: Նրանք կանանց կոչումն են համարում լինել միայն մայր և ամուսին:

Կանանց ազատութեան և նրանց իրավունքների պաշտպանության հարցին լուրջ ուշադրություն են նվիրում նաև ռեւոլյուցիոն-դեմոկրատական օրգանները, որոնցից առանձնապես հիշատակության արժանի է «Սովրեմեննիկ» ամսագիրը: Այդ ամսագրի էջերում կանանց հարցի մասին ծանրակշիռ հոդվածներ է գետնադրում նշանավոր բանաստեղծ և հրապարակախոս, ռեւոլյուցիոններ-դեմոկրատ Մ. Միխայլովը:

Պահանջելով պաշտպանել կանանց իրավունքները, Միխայլովը գրում է. «Միայն կնոջ մարդկային և քաղաքացիական իրավունքների ճանաչումը կպաշտպանի նրան այն սարսափելի անբարոյականացումից, որը մաշում է ժամանակակից հասարակությունն իր ամբողջ հիմքերով»¹: Նա պահանջում է կանանց կրթությունը դնել նույն հիմքերի վրա, ինչ տղամարդուն է: Եթե կանայք չեն ունեցել իրենց գալիլեյ-

¹ «Современник», 1859, № 1—2, էջ 164—165:

ներն ու համբողջները, այդ պետք է բացատրել միայն նրանով, որ կանանց համար փակ են եղել ուսման և կրթության դռները: «Ձկա մի այնպիսի մարդկային էակ, — գրում է նա, — որի համար վտանգավոր լինեին մարդկային կյանքի որևէ կողմերը և որի համար օգտակար լիներ որոշ հարցերի նկատմամբ մնալ սիրելի, բարեհոգի անգիտության մեջ»: Կանանց անբարոյականացման պատճառների վերլուծության հարցում հակադրվելով Պրուդոնին, Միխայլովը նշում է, թե կնոջը փչացնում են տնտեսական և քաղաքական պատճառները, ուստի և նա պահանջում է կանանց կրթել և նրանց հնարավորություն տալ ապրելու տղամարդկանց «հովանավորությունից» անկախ:

Կանանց հարցի կապակցությամբ «Սովրեմեննիկ»-ում արժեքավոր հոդվածներ է տպագրում նաև ամսագրի աշխատակից, հրապարակախոս և տնտեսագետ Յուլ. Ժուկովսկին: Վերջինս անդրադառնալով արտադրության մեջ ներգրավված կանանց աշխատանքի և նրանց վարձատրման հարցերին, հենց միայն կանանց և տղամարդկանց աշխատավարձի տարբերության փաստով բացահայտում է կանանց ազատագրման լողունգի սնանկությունը բուրժուական իրավակարգում: Նկատի ունենալով կանանց անխուսափելի պրոլետարականացումը, Ժուկովսկին ողջ ուշադրությունը կենտրոնացնում է գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական պայմանների փոփոխության հարցի վրա: «Հարկավոր է փոխել այդ հիմքի տարրական պայմանները, — գրում է նա, ակնարկելով տնտեսական հիմքը, — կնոջը նյութապես ապահովել, և միայն այդ կերպ նրան կարելի է բարձրացնել մինչև ազատ մարդու աստիճանը այն ընկած վիճակից, որին նրան մինչ այժմ գամել է ճակատագրական տնտեսական հիզդրան»²:

Այսպիսով, «Սովրեմեննիկ»-ը հանգեցրել այն ճշմարիտ հետևությունը, թե բուրժուական կարգերի առկայության պայմաններում անկարելի է հասնել կանանց լիիրավ ազատագրության, պահանջում է փոփոխության ենթարկել ժամանա-

¹ «Современник», 1860, № 4, էջ 495:

² Նույն տեղը, 1863, № 12, էջ 288:

կի ողջ տնտեսական հիմքը և, ռեուլյուցիոն ճանապարհով՝ այլ հարցերի հետ միասին, լուծել նաև կանանց հարցը:

60-ական թվականների հայ պարբերական մամուլն ընդհանրապես քիչ է զբաղվում կանանց հարցի քննությամբ:

Արևելահայ պարբերականներից կարելի է ասել միայն «Հյուսիսափայլ»-ն է, որ իր գոյության 6 տարիների ընթացքում զգալի տեղ է հատկացրել կանանց կրթության, դաստիարակության և իրավահավասարության հարցերին:

«Հյուսիսափայլ»-ը բողոքում է հայ կանանց իրավագուրկ վիճակի դեմ: Նա ցույց է տալիս, որ հայ կանայք «չունին ոչինչ ընկերական խորհուրդ, այլ մի անկյունում որպես մի իր ձգած ու փախած են, առանց պատտության, առանց իրավունքի: ...Կանայք հնազանդ աղախինք են յուրյանց տղամարդերի և ոչ թե խորհրդակից բարեկամք»¹: Ստ. Նաղարյանն իր ամսագրում ջատագոյնում է անկաշառ սիրո վրա հաստատված ամուսնութունը: Նա «խելագար գործ», «անսուրբ և ամբարիշտ բան» է համարում այն ամուսնությունը, որ տեղի է ունենում ամոթալի հաշիվների հիման վրա: Կանանց լուրջ և հիմնավոր կրթություն տալու պահանջը կրկին բարձրացվում է «Հյուսիսափայլ»-ի էջերում:

Այդ ամենի հետ միասին «Հյուսիսափայլ»-ը չափազանց հետ է մնում ժամանակի առաջավոր ուսական մամուլից: Բացի Միքայել Նալբանդյանի հոդվածներից, որոնք առնչվում են ուսական հրապարակախոսական մտքի հետ, ամսագրում տպագրված ինքնուրույն և թարգմանական հոդվածները իրենց սահմանափակ պահանջներով հեռու էին հայ կնոջը հանելու այն ստրկական վիճակից, որին Յուլ. Ժուկովսկու արտահայտությամբ, նրան գամել էր «ճակատագրական տնտեսական հիդրան»:

Ամսագրում զետեղված գրեթե բոլոր հոդվածների հեղինակները կնոջ կոչումն են համարում լինել միայն սիրող մայր և հավատարիմ ամուսին: Այս թեզը խորացնում է «Հյուսիսափայլ»-ի թղթակից Հարություն Համասփյուռը իր «Կին մարդու բարոյական կողմը» հոդվածում:

¹ «Հյուսիսափայլ», 1861, № 7, էջ 73:

Կինն ըստ Համասփյուռի, պետք է օգնի ամուսնուն, ոգե-
վորի նրան: Կնոջ գերագույն երջանկությունը այն պետք է
լինի, որ նա ամուսնանալով սիրած տղամարդու հետ, դառնա
նրա զավակների մայրը. այնուհետև՝ «նորա բոլոր կյանքը
գոհվում է այլ մարդու զբոսանքի, ուրախության և կյանքի
համար. նա սպառվում է սիրու մեջ»¹:

Իր «Դաստիարակություն» հոդվածում Համասփյուռը նպա-
տակահարմար է գտնում կանանց տալ այնպիսի կրթություն,
որ նրանք դառնային «բարի տանտիկիներ»: Այս դաստիա-
րակությունն, իհարկե, համընկնում է նրա այն պահանջին,
թե կինը պիտի սպառվի սիրո մեջ:

Գրեթե նույն գաղափարներն են արտահայտված Թ. Լալա-
զարյանի «Աղջիկը և երիտասարդը» հոդվածում:

Ռուսերենից թարգմանված «Թե ով է ճշմարտապես բարի
և երջանիկ մարդը»² հոդվածում անց է կացված այն միտքը,
թե «Երջանիկ լինելը՝ է քաղցրություն գտանել ինքը յուր մեջ»:
Ըստ հոդվածագրի, մարդը բախտավորվում է ո՛չ թե հասա-
րակության մեջ, ոչ թե իր հանրօգուտ աշխատանքով, այլ իր
ընտանիքում:

Մի այլ թարգմանության մեջ հայտնվում է այն միտքը,
թե կինն անտրտունջ պետք է տանի ի վերուստ իրեն տրված
ցավերը, քանի որ դրանք տրվում են մարդկանց դաստիարա-
կելու համար: Քրիստոնեական այս մորալը, որ ստեղծված
էր սոցիալական չարիքներից առաջացած խոցերը կոծկելու
նպատակով, զարգացվում է Հուլիանե Բուրովի «Կին մարդու
բախտավորությունը» հոդվածում, որը տպագրված է «Հյուսի-
սասիայլ»-ի 1862 թվականի երկրորդ համարում:

Հանդես գալով կանանց հավասարության քարոզով, շու-
տով Բուրովը մատնում է իր իսկական հայացքները: Ըստ
նրա, տղամարդկանց ճարտարապետական ձիրքերն ավելի
«վսեմական են», քան կանանցը: Ինչ վերաբերում է ընտանի-
քում ունեցած կանանց դերին, ապա նա այստեղ կնոջը տա-
լիս է ձախ ձեռքի պարտականություն, իսկ տղամարդուն՝

¹ «Հյուսիսասիայլ», 1858, № 6, էջ 496:

² Նույն տեղը, № 9, էջ 216—225:

աջ, և հանդում է այն ռեակցիոն հետևության, թե՛ «Մե-
ամուսնություն, որի մեջ կինը աջ ձեռն է, դույն ամուսնու-
թյունը է և ձախլիկ»¹։ Կնոջ պաշտպանության գործը մեծահո-
ղաբար վստահելով ամուսիններին, Հ. Բուրովն առաջարկում
է կանանց տալ «կանանցապատշաճ» դաստիարակություն,
քանի որ «սովորությունից դուրս բան է» նրանց մտավոր աշ-
խատանքով զբաղվելը։ Կնոջ արժանիքները չափվում են
նրանց սիրելու ունակությամբ։ Նա գրում է. «Կանացի արժա-
նավորության չափը չէ կնոջ զորությունը, չէ նորա իմացա-
կանությունը, և ոչ նորա գիտության քանակությունը, այլ կա-
րողությունը սիրելու»²։

Կնոջ այս կրավորական դերին ավելանում է և այն, որ
նա իր ցավերի արմատները որոնե ոչ թե դրսի աշխարհում,
այլ իր սրտում, իր սխալանքների մեջ։ Հ. Բուրովի հոգվածն,
այսպիսով, ամբողջացնում է «Հյուսիսամիայլ»-ի հոգվածա-
շարը կանանց հարցի մասին, որոնց հեղինակները միաբերան
բուրժուական ընտանիքի բոլոր ձախողումները պայմանավոր-
ում էին կանանց «սխալանքներով», առանց հաշվի առնելու
գոյություն ունեցող սոցիալական հակասությունները։ Առան-
ձին նորություն չի բերում և «Հյուսիսամիայլ»-ում 1864 թ.
տպագրված Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսոր Պավլոս-
ժանեի «Ընտանեկան կյանք» դասախոսությունների շարքը,
որը 1859 թվականին տպագրվել էր «Ռուսակոյե սլովո» ամ-
սագրում։

Ստ. Նազարյանը «Մեր և ամուսնություն» ծավալուն հոգվա-
ծում, ելնելով զարգացող բուրժուազիայի շահերից, առաջ է
քաշում կանանց ազատության հարցը. նա ընտանիքի եր-
ջանկությունը պայմանավորում է ամուսինների փոխադարձ
սիրով. «Առանց սիրո չկա ոչինչ ճշմարիտ, ոչինչ բախտավոր
ամուսնություն,— գրում է Ստ. Նազարյանը,— գարշելի են ինձ
այն ամուսնությունքը, որ լինում են հարմարության պայ-
մաններով, երկրորդական դիտավորությամբ և ոչ սիրո պատ-

¹ «Հյուսիսամիայլ», 1862, № 2, էջ 84։

² Նույն տեղը, էջ 87։

ճառով: Այսպիսի ամուսնությունքը են արդարև մի անսուրբ, մի ամբարիշտ բան»¹:

Թվում է, թե Նաղարյանը անկեղծ սիրո վրա հիմնված ամուսնության հետ միասին կապահանջի նաև կնոջ և տղամարդու իրավահավասարությունը: Այս հարցում, սակայն, դրսևորվում է նրա հայացքների սահմանափակությունը: Նաղարյանի կարծիքով կանանց ստացած կրթությունը պետք է լինի այնպիսին, որ նրանք, Միխայլովի արտահայտությամբ, որոշ հարցերում մնան «սիրելի, բարեսիրտ անգիտության մեջ»: «Մեք ունենալով մի խելացի, բարի, հեզ և տնարարության տեղյակ ամուսին, ավելի երջանիկ կլինեինք, քան մի խորագետ, ուսումնական, բարձր կրթած կնոջ հետ»², — գրում է Նաղարյանը:

Նաղարյանի հայացքներում վճռական դեր է կատարում կրոնը: Առանց կրոնական հիմնավոր դաստիարակության նուրբնատենական երջանկություն չի պատկերացնում:

Կանանց հարցում Ստ. Նաղարյանի հայացքների մեջ լիբերալ պահանջներն ու պահպանողական մտածողությունը երևան են գալիս գիրկընդխառն: Մի կողմից կանանց ազատության և կրթության պահանջ, իսկ մյուս կողմից՝ խոհանոց, եկեղեցի և սահմանափակ տնտեսական գործունեության մի շրջանակ: Նաղարյանը հանգում է գերմանական ռեակցիոն այն մտայնությանը, թե կնոջ տեղը մանկանոցն է, խոհանոցը և եկեղեցին:

Չնայած դրան, Միքայել Նալբանդյանի հոգվածներում զգացվում է «Սովրեմեննիկ» ամսագրի առաջավոր գաղափարների թարմ շունչը: Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ի էջերում առանձին հոդված չի հրապարակել՝ նվիրված կանանց հարցին. այդ խնդրին նա անդրադարձել է միայն իր «Հիշատակարան»-ում և գեղարվեստական գործերում:

«Հայ կանայք, — գրում է նա իր «Հիշատակարան»-ում, — անցան այն ժամանակները, երբ մարդիկ նայում էին կանանց վերա, որպես ստրուկների վերա: Անցան այն ժամա-

¹ «Հյուսիսափայլ», 1861, № 7, էջ 74:

² Նույն տեղը, № 8, էջ 142:

նակները, երբ կանայք համարվում էին որպես մի ապրանք, ինչ, կահ, կարասիք, գնելու կամ վաճառելու բան. անցան և հետ գալու չեն մյուս անգամ այն ժամանակները... երբ կանայք համարվում էին երբեմն սատանա և երբեմն հրեշտակ. այժմ, այս մարդասեր դարում, լուսավորյալ աշխարհը նախում է կանանց վերա, որպես մարդու վերա»¹:

Մ. Նալբանդյանը կանանց շատ մեծ դեր է տալիս մանուկ սերնդի կրթության գործում և առաջ է քաշում կանանց դաստիարակության հարցը: «Ազգի վերանորոգությունը և փրկությունը լոկ երազ է, եթե փոած էր այդ ազգի ընտանեկան կյանքը», — գրում է նա: Սակայն, հայ կանայք միանգամայն հեռու էին ոչ միայն կրթությունից, այլև մարդկային տարրական իրավունքներից:

«Յավելի է մեր ազգի դրությունը ընդհանրապես, — շարունակում է Նալբանդյանը, — բայց մասնավոր արտասուքի արժանի են հայ կանայքը: Խեղճերը բոլորովին անկիրթ և անդաստիարակ, համարյա թե ապրում են միմիայն բուսական և շնչական կյանքով, իմացականի մասին գաղափար ևս չունեն: Կարգալ, գրել, ընդհանրապես չգիտեն, շատ չնչին բացառությամբ»²:

Նալբանդյանն այդ երևույթը չի բացատրում կանացի սեռի բնածին հատկություններով: Ընդհակառակն. «Նոքա ինչո՞վ մեղավոր են, — գրում է նա, — ո՞վ կրթեց ու դաստիարակեց նորանց, և նոքա յուրյանց անընդունակությամբ չլուսավորվեցան, կամ մնացին վայրենի հասկացողության վիճակի մեջ»³:

Մ. Նալբանդյանի սակավաթիվ ասույթները ցույց են տալիս, որ նա կանանց իրավահավասարության և կրթության հարցերին մոտենում էր առանց վերապահումների, բնավ չնսեմացնելով նրանց ընդունակությունները:

Հետամնաց հայ իրականության պայմաններում «Հյուսիսափայլ»-ը, հատկապես Նալբանդյանի շնորհիվ, վճռական բեկում է մտցնում կանանց հարցի նկատմամբ իշխող մտայնության մեջ:

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 5, էջ 383:

² Նույն տեղը, 1859, № 9, էջ 691:

³ Նույն տեղը:

«Հյուսիսափայլ»-ի միջոցով հայ ընթերցողներն արդեն սկսում են այլ հայացքով նայել կանանց կրթության, ընտանիքի, սիրո և ամուսնության, ամուսինների փոխհարաբերության, կանանց մարդկային իրավունքներ տալու հարցերին:

6. «ՀՅՈՒՍԻՍՍՓԱՅԼ»-Ի ՊՈՆՁԻԱՆ

Ստեփանոս Նազարյանը և Միքայել Նալբանդյանը հայ ժողովրդի լուսավորության և դաստիարակության գործում հսկայական նշանակություն տալով գեղարվեստական գրականությանը, մերջինիս ղգալի տեղ են տալիս «Հյուսիսափայլ»-ի էջերում: Ամսագրում տպագրվում են ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններ և արձակ գործեր:

«Հյուսիսափայլ»-ը թարմություն է մտցնում հայ պոեզիայի մեջ: Այնտեղ տպագրված բանաստեղծությունները նախ և առաջ աչքի են ընկնում իրենց գաղափարական հագեցվածությամբ: Դրանց մի ղգալի մասը քաղաքացիական պոեզիայի լավագույն նմուշներից են, որոնք մեծապես նպաստում են հայ ժողովրդին ազատասիրության, հայրենասիրության և լուսավորության գաղափարներով դաստիարակելու գործին: «Հյուսիսափայլ»-ի բանաստեղծների շարքում ակնառու տեղ է գրավում Միքայել Նալբանդյանը: Հայ առաջավոր ամսագրի էջերում աճում է երիտասարդ բանաստեղծների մի ամբողջ սերունդ՝ Սմբատ Շահաղիզը, Գևորգ Բարխուդարյանը, Հովհաննես Քուչուբեկյանը, Մովսես Բուդաղյանը, Ստեփանոս Տեր-Հովհաննիսյանը, Մանուկ Սաղաթյանը և ուրիշներ, որոնց վրա ղգալի է Նալբանդյանի բարերար ազդեցությունը:

«Հյուսիսափայլ»-ի բանաստեղծությունը գերազանցապես արտացոլում է 60-ական թվականների հայ իրականությունը, կապված է այդ կյանքի հետ, ծառայում է ժողովրդի դաստիարակության և նրա հասարակական գիտակցության բարձրացման, նրա մերածնության, նրան ազատասիրության ոգով դաստիարակելու գործին:

«Հյուսիսափայլ»-ի 1858 թվականի համարներում տպագրվում են Մ. Նալբանդյանի մի քանի թարգմանությունները

Բերանժեից և Հայնեից, որոնք 60-ական թվականներին ուսա
իրականության մեջ մեծ ժողովրդականություն էին վայելում:
Հայանի է, որ «Սովրեմեննիկ» ամսագիրը մեծ տեղ էր հատ-
կացնում այդ բանաստեղծներին և Վ. Կուրոշկինի ու Մ. Մի-
խայլովի թարգմանություններով ժողովրդականացնում էր
նրանց ազատասիրական երգերը:

Առաջնորդվելով հայ իրականության առաջադրած կոնկ-
րետ խնդիրներով, նա իր կատարած փոխադրությունները
մեջ երբեմն շեղվում է բնագրից: Այսպես, Հայնեի «Երազ»
բանաստեղծությանը նա կցում է ինքնուրույն 5 քառատող,
որով հայացնում է այդ գործը և նոր ոգի ու ուղղություն հա-
ղորդում դրան: Հայնեի բանաստեղծությունը Մ. Նալբանդ-
յանը դարձնում է հայերին ուղղված միաբանության կոչ:

Բերանժեից փոխադրած «Մեծ մայր» բանաստեղծությունը
հետապնդում է դաստիարակչական նպատակներ: Իր այդ
փոխադրությամբ Նալբանդյանն առաջ է քաշում ընտանեկան
դաստիարակության կարևորությունը, առանց որի դպրոցա-
կան դաստիարակությունն ու համալսարանական կրթությունը
թերի է համարում:

Մ. Նալբանդյանը մատաղ սերնդի ասպագա առաքինության
կամ դժբախտության արմատները նույնպես պայմանավորե-
լով նրանց ստացած ընտանեկան դաստիարակությամբ, կոչ
է անում նախ պատրաստել լավ մայրեր: Սակայն Նալբան-
դյանը կանանց կոչումը միայն մայր լինելու մեջ չէր տես-
նում. այդ բանի ամենամիայլուն ասպացույցն այն է, որ նա
մի երկրի բախտավորությունը պայմանավորում է կանանց
բարոյական կրթության առաջանում:

«Հյուսիսամիայլ»-ում տպագրվել են նաև Նալբանդյանի
ինքնուրույն բանաստեղծությունները: 1858 թվականին տպա-
գրված «Հայ մարդու հայրենիքը» և «Առօրյա աշխարհ» բա-
նաստեղծություններն անմիջականորեն կապվում էին օրվա
առաջադրած հարցերի հետ: Այդ բանաստեղծությունների մեջ
Նալբանդյանը ոչնչացնող քննադատության է ենթարկում ժա-
մանակի հայ առևտրա-վաճառական բուրժուազիայի ներ-
կայացուցիչների և պահպանողական մտավորականության
հայացքները կյանքի, հայրենիքի, հայրենասիրության և գրա-

կանության մասին: Հայ հարուստի կյանքի նպատակն է հարստություն կուտակել և կյանքը վայելել, փույթ չէ, թե այդ բանի համար անհրաժեշտ է լինում «երբեմն մի փոքր զրկել... երբեմն մի փոքր գողանալ...»

Հայրենիք հասկացողությունը խորթ է նրանց, իսկ հայրենասիրություն ասելով հասկանում են ծածկել ազգի արատները: Նրանք ցանկանում են լսել այնպիսի երգեր, որոնք ցավ չեն պատճառում իրենց, չեն վրդովում իրենց հանգիստը, այլ զվարճացնում են:

Դժվար չէ նկատել, որ այս բանաստեղծությունները իրենց արծարծած հարցերով կապվում են Նալբանդյանի հրապարակախոսության հետ: Ավելի որոշակի՝ վերոհիշյալ բանաստեղծություններն ուղղակիորեն առնչվում են «Մեռելահարցուկ» վեպի հետ: «Հայ մարդու հայրենիքը» ուղղված է Հովնաթանյանցի նախատիպը հանդիսացող մոսկվաբնակ վաճառական Հովնանյանի դեմ:

...Այստեղ եկած եմ Թիֆլիսից.
ես տուն ունիմ և այն քարյա
երկու հարկով շենք փառավոր¹:

Հայտնի է, որ Հովնանյանը Նախիջևանից էր փոխադրվել Մոսկվա. «Մեռելահարցուկ» վեպում Հովնաթանյանցի մասին ասվում է, թե «Նա ստացել էր քարյա, երկու հարկով բավական ընդարձակ տուն»:

«Մեռելահարցուկ» վեպի հերոսներից Շաքարյանը հայտնում է այն միտքը, թե դպրոցները չեն օգնում մարդկանց հոգիների փրկության գործին, ուստի հարկավոր չէ դպրոցներ կառուցել, այլ պետք է մտածել հոգու փրկության մասին. «Ի՞նչ գործնական օգուտ ունի հոգին ուսումից. ո՞ր սուրբերը ուսյալ էին», — ասում է նա: «Հայ մարդու հայրենիքը» բանաստեղծության մեջ գրված է.

Հոգու համար ուսում պետք չէ,
Ո՞ր սուրբերը ուսյալ էին.
Կրոնի ծեսերը պահելով,
Անշուշտ կերթամ արքայություն:

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 3, էջ 189:

«Մեռելահարցուն» վեպում Կոմս Էմմանուելին իր հակառակորդներն անվանում են «հասարակաց խաղաղության վերդովիչ»։ հետաքրքրական է, որ «Առօրյա աշխարհ» բանաստեղծության լիրիկական հերոսը ստանում է «անհանգիստ հեղինակ» անունը, որը ձգտում է

խաղաղություն վերդվել,
եղև մեր հանգիստ քունը,
Սրտերիս մեջ դող ձգել¹։

Ի վերջո, որ Հովնաթանյանցի կերպարն է արտացոլված «Հայ մարդու հայրենիքը» բանաստեղծության մեջ, մի թափանցիկ ակնարկով հաստատում է և ինքը՝ Նալբանդյանը։ Հովնաթանյանցին ուղղված նամակում Կոմս Էմմանուելը գրում է. «Մի անգամ ձեր անզգուշության և դատարկաբանության փոխարեն ընթերցաք «Հայի հայրենիքը»։ Բայց երևում է, որ փոքր էր ձեզ այդքանը»²։

Այսպիսով, Նալբանդյանը մեծ հմտությամբ կարողացել է և՛ հրապարակաստությունը, և՛ բանաստեղծությունը, և՛ գեղարվեստական արձակը ծառայեցնել մի հիմնական նպատակի՝ հայ իրականության մեջ ռեակցիոն տարրերի դեմ պայքարելու գործին։ Ընդ որում, եթե բանաստեղծության միջոցով նա հնարավորություն չի ունեցել մինչև վերջ ոչնչացնելու իր գաղափարական հակառակորդներին, ապա հետևողականությամբ այդ նպատակի համար ընտրել է առավել հարմար գրական ժանր՝ գեղարվեստական արձակը։

«Մանկության օրեր» բանաստեղծության մեջ արտահայտված գաղափարները միանգամայն նորություն էին հայ իրականության համար։

Զեռնոց նետելով «մաքուր արվեստի» ջատագովներին, Նալբանդյանը բանաստեղծի կոչումն է համարում նետվել հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզը և պայքարել ժողովրդի դրության բարվոքման, նրա ազատագրության մեծ գաղափարի համար։ Այս բանաստեղծության մեջ միաժամանակ Նալբանդյանը շարունակում է պայքարը հայ հե-

¹ «Հյուսիսփայլ», 1858, № 5, էջ 374։

² Նույն տեղը, 1859, № 10, էջ 768։

տադրմականների ներկայացուցիչ և ցարական կառավարութ-
յան հավատարիմ լրտես Գ. Ալվազովսկու դեմ:

1861 թվականին «Հյուսիսսիբիրյան»-ում տպագրվում է Նալ-
բանդյանի «Խտալացի աղջկա հրգը» բանաստեղծությունը, որը
նրա ազատասիրական պոեզիայի լավագույն նմուշներից
մեկն է հանդիսանում:

Իր արտասահմանյան երրորդ ճանապարհորդության ժա-
մանակ, 1861 թվականի սկզբին, Նալբանդյանը ոտք է դնում
Իտալիա և ականատես լինում Գարիբալդու ազատագրական
շարժումների շրջանում իտալական ժողովրդին համակած
բուռն ոգևորությանը:

Նեապոլից Հ. Սվաճյանին գրած նամակում նկարագրելով
Իտալիայում տեղի ունեցող իրադարձությունները, նա իր դի-
նակցի ուշադրություն է հրավիրում եվրոպական այլ ժողո-
վուրդների ազատագրական շարժումների փաստի վրա (Լի-
հաստան, Հունգարիա): Այդ կապակցությամբ նա գրում է.

«Այստեղ կան շատ լեհացիք և դեռ ևս օրե-օր հավելանում
են՝ լավում է մի խուլ ձայն, որպես թե նոքա կամին կաղմել
այստեղ մի զինվորյալ լեհական լեգեոն և պատրաստ և կաղմ
սպասել մի կրակոտ նշանի...»¹:

Ջերմությամբ և խոր հավատով տոգորված այս տողերը
գրելիս Նալբանդյանին մտահոգում էր իր հայրենիքի վիճակը,
Արևմտահայաստանի ազատագրության հարցը թուրքական
բռնապետության լծից. «էտնան և Վեզովին ծխվում են,—
գրում է նա Սվաճյանին ուղղած վերոհիշյալ նամակում,—
Արարատի հին վուլկանի մեջ մի՞թե կրակ կմնա իսպառ...
մահարեք մտածություն»²:

Նալբանդյանն այդ ժամանակ արդեն մշակում էր հայ ժո-
ղովրդի ազգային-ազատագրական պայքարի իր ծրագիրը,
այն կապելով ոտա ռեոլյուցիոն-դեմոկրատների կողմից նա-
խապատրաստվող համառուսական ժողովրդական ռեոլյու-
ցիայի հետ:

«Խտալացի աղջկա հրգը» բանաստեղծությունը գրված է

¹ Մ. Նալբանդյան, ՆԼԺ, հ. 4, էջ 86:

² Նույն տեղը:

խառնական ազդեցին-ազատագրական շարժման ներշնչմամբ: Այստեղ ևս հայ բանաստեղծին զբաղեցնում է այն հարցը, թե երբ են հայերն էլ հետևելու իտալացիների օրինակին: Բուռն ոգևորությամբ երդնելով իտալական ժողովրդի ազատագրական պայքարը, Նալբանդյանը հայ ժողովրդին կոչ է անում թոթափել բռնության լուծը:

Միքայել Նալբանդյանի ազատասիրական ոգին իր փաշտուն արտահայտությունն է գտել նրա «Ազատութիւն» բանաստեղծության մեջ:

Ազատության այս խանդավառ ներբողը, որ եղել է անցյալ դարի հայ առաջավոր մտավորականության ամենասիրելի երգերից մեկը, ժամանակի սոցիալ-քաղաքական պայմանների արգասիքն է: Մենք արդեն ասացինք, որ Մ. Նալբանդյանը սերտորեն կապված էր ռուսական առաջավոր մտքի և ռուս ռեոլյուցիոն-դեմոկրատական հրապարակախոսության հետ: Այս բանաստեղծության ուսումնասիրությունը ևս այդ է ապացուցում:

1860-ական թվականների ազատագրական գաղափարներով տոգորված երիտասարդներից եղբայրներ Ս. և Պ. Կրոպոտկինների նամակագրությունը բացում է այդ ժամանակաշրջանի երիտասարդության ռեոլյուցիոն դործունեության մի հետաքրքիր էջը: Ռեոլյուցիոն իրադրության շրջանում նրանք արտակարգ հետաքրքրությամբ էին հետևում Գերցենի «Կոլոկոլի» հերթական համարներին: Պ. Կրոպոտկինը գրում էր, թե «Կոլոկոլի» միջոցով կարելի է ստանալ ամենաճշգրիտ տեղեկություններ այն ամենի մասին, ինչ կատարվում է Ռուսիայում:

Եղբայրների ուղադրությունից չի վրիպում ռուս ռեոլյուցիոն-դեմոկրատ Օգարեի «Свобода» բանաստեղծությունը՝ նվիրված Իսկյանդեր—Գերցենին: «Полярная Звезда»-ում տպագրված այս բանաստեղծությունը Ս. Կրոպոտկինն արտագրելով ուղարկում է իր եղբորը:

Օգարեի բանաստեղծությունը, որ գրվել է մոտավորապես 1857—58-ական թթ., արգելված էր ցարական կառավարության կողմից. այն դարձել էր ռուս ռեոլյուցիոն երիտա-

սարգության սիրելի երգերից մեկը և լայն տարածում գտել դադարների կերպով, ձեռագիր օրինակներով:

Մ. Նալբանդյանի «Ազատության» գրության ժամանակը համընկնում է Օգարեի բանաստեղծության մասսայականացման օրերին: Հավանորեն Նալբանդյանը ծանոթ էր այդ բանաստեղծությանը. կարելի է ենթադրել, որ նա դադարների ճանապարհով ձեռք էր բերել Օգարեի «СВОБОДА»-ն և վերջինիցս դրդում ստանալով, հորինել իր հուշակալոր բանաստեղծությունը: Զի կարելի, սակայն, ասել, թե «Ազատությունը» փոխառություն է ուս նշանավոր բանաստեղծի ստեղծագործությունից, բայց նրա մտահղացումն անկասկած կապվում է Օգարեի բանաստեղծության հետ: Որպես օրինակ բերում ենք այդ բանաստեղծության առաջին և վեցերորդ տները, որոնք ավելի շատ են առնչվում Նալբանդյանի «Ազատության» հետ:

Когда я был отроком тихим и нежным,
Когда я был юношей страстно мятежным,
И в возрасте зрелом со страстью смежном,
Всю жизнь мне все снова, и снова, и снова
Звучало одно неизменное слово:
Свобода! Свобода!

Но если б грозили беда и невзгоды
И рук для борьбы захотела свободы,
Сейчас полечу на защиту народа,
И, если паду я средь битвы суровой,
Скажу умирая, могучее слово:
Свобода! Свобода!¹

Միքայել Նալբանդյանը ներշնչվելով ուս ռևոլյուցիոն-դեմոկրատական մտքից և պոեզիայից, իր բանաստեղծությունը տողորում է հայկական միջավայրին հարազատ շընչով և երանդով:

Մ. Նալբանդյանի ազատասիրական բանաստեղծությունները մեծ ազդեցություն են գործել «Հյուսիսափայլ»-ի մյուս

¹ Н. П. Огарев, Стихотворения и поэмы, 1937, т. 1, էջ 206—207:

պոետներն Վրա, որոնց երգերում այս կամ այն չափով արտահայտություն են դառնում հայրենիքին օգնելու, ժողովուրդը լուսավորելու, ազգի խավարը փարատելու, ազատության համար մարտնչելու դադափարները:

Նալբանդյանի պոեզիայի ազդեցությունը մեծ չափով արտահայտվել է Սմբատ Շահազիզի քտեղծագործությունների մեջ: Սմբատ Շահազիզն իր բանաստեղծությունները սկսում է տպագրել նախ «Ճռաքաղ»-ի էջերում, բայց շատ շուտով համոզվելով, որ այդ պարբերականի ուղղությունն անհարիր է իր ստեղծագործությանն ոգուն և իր հայացքներին, երես է դարձնում նրանից և սկսում է աշխատակցել «Հյուսիսափայլ»-ին:

Այստեղ Մ. Նալբանդյանի հայացքների անմիջական ազդեցության տակ ձևավորվում է բանաստեղծ Շահազիզի աշխարհայացքը: Նրա բանաստեղծություններն իրենց թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ թարմություն են մտցնում հայ բանաստեղծական աշխարհը: «Հյուսիսափայլ»-ում տպագրած իր առաջին բանաստեղծություններում Շահազիզն արտահայտել է սիրո խոր և անկեղծ ապրումներն ու տվյալանքը («Առաջին սեր», «Առաջին տեսակցություն», «Սևորակ աչեր»): Հետագայում, սակայն, նրա պոեզիան առնականանում է, և սիրո զգացման հետ միասին նա սկսում է երգել հայրենիքի սերը: Հայրենիքի ազատության և ժողովրդի լուսավորության դադափարները, գրականության առաջատար գերի բարձրացումը դառնում են Շահազիզի պոեզիայի սիրված մոտիվները: Նրա «Ազգային վիճակ» բանաստեղծությունն ազատության շնչով տոգորված քաղաքացիական պոեզիայի լավագույն արտահայտություններից է հանդիսանում: Շահազիզը մի հայացք է նետում իր ազգի ներկա վիճակի վրա, որն առավել ևս ծանրացնում են շահամոլ և նյութալուշտ խավարասերներն իրենց հակաժողովրդական գործունեությամբ: Նրանք ծծում են ազգի արյունը և ամբացնում նրա շղթաները: Բանաստեղծը կոչ է անում դեսլի ինքնաճանաչություն, տոգորվել լուսավոր դարի առաջավոր դադափարներով: Նա ջատագովում է գիտության սերը, կամքը, աշխատությունը, ամենազոր բանականությունը և հրավեր է կարդում զինվո-



Սմբատ Շահազիզ



դադրվել ազատութեան մեծ գաղափարին: Ուշագրավ է, որ Շահազիզի այդ բանաստեղծութիւնը կրում է Նալբանդյանի «Ազատութեան» ակնհայտ ազդեցութիւնը.

Ո՛վ ազատութիւն, սուրբ արտօրական,
Զոհելու եմ քեզ իմ անձս հավիտեան.
Թող ստրկացած դարերով մարդիկ
Գնեն իմ վերս նզովքի կնիք:
Թող սրե շար լեզուն անդոր թշնամին,
Թափելով վերաս թունավոր սլաքներ.
Ես պիտի խնդրեմ, ա՛ղբ իմ, լալագին,
Ոտնակոխ եղած քո իրավունքներ¹:

Ազատութիւնը Շահազիզը ներբողել է և մի այլ՝ «Ազատ մարդ» բանաստեղծութեան մէջ: Բանաստեղծը ազատ չի համարում այն անձանց, որոնք անձնական շահի հետեւից ընկած դավաճանում են իրենց ազգի շահերին: Գյոթեի ազատութեան ներբողի նմանութեամբ Շահազիզը գրում է.

Այն մարդն է ազատ, որ անձնանվեր
Զոհել է յուր կյանքն ազգին, անխռով,
Որ հարուստներին չէ ծխել խռնկեր,
Մարդահաճութեան տաղեր երգելով²:

Տաղաչափութեան բոլորոսնած բանտում մեկուսացած «մաքուր արվեստի» ջատագովներին ծաղրելով, Շահազիզը պարզաբանում է իսկական բանաստեղծի կոչումը: Պոետը, — գրում է նա, — պետք է լինի իր դարի «մեծակշիռ գաղափարներին» թարգմանը³:

Շահազիզը մտահոգված է իր ազգի գերութեան կապանքները փշրելու հարցերով: Բայց հետաքրքրականն այն է, որ

¹ «Հյուսիսայայ», 1862, № 3, էջ 141:

² Նույն տեղը, № 4, էջ 192:

³ Շահազիզի 60-ական թվականների պոեզիայի մեջ արտահայտվել է ևս ուսս սեռչուցիտն-դեմոկրատական աշխարհայայտքի ազդեցութիւնը: Այդ կապակցութեամբ նա խոստովանում է, որ ժամանակին եռանդուն կերպով հետևել է «Սովրեմեննիկ»-ին, կրել այդ ամսագրի և Գորբոլյուբովի ազդեցութիւնը (սե՛ս Ю. Веселовский, Русское влияние в современной армянской литературе, էջ 14—15):

եթե մի կողմից նա դիմում է հայ կղերին, որ վերջինս արիության գործեր տա և ուշագիտ լինի ժողովրդի նկատմամբ, մյուս կողմից ստիպված է խոստովանել, որ

Ձայն չկա, ավաղ, եղբարք, ի՞նչ անենք,
Ինչպես դարմանենք այս մեր վտանգիս,
Եվ հոգևորի սիրտը գլղղենք,
Եվ հասարակին կարգանք ավետիս¹:

Իր արտահայտած առաջադիմական գաղափարներից բացի, Շահադիզը մի շարք բանաստեղծություններում շնչավորել, կենդանի գույներով պատկերել է բնությունը: Նրա լիրիկական երգերը նուրբ են, երաժշտական, գրված բանաստեղծական ջերմ շնչով ու զգացմունքով: Դրանք իրենց անմիջականությունով և անկեղծությամբ վարակում են ընթերցողին:

Անշուշտ, Մ. Բուդաղյանի կողմից առանձնահատուկ ուշադրությամբ էին ընտրված և թարգմանված 60-ական թվականների ժամանակաշրջանին հնչակից՝ հունգարական բանաստեղծ Ծանդոր Պետեֆիի երկու բանաստեղծությունները².

Խելքես ու միտքես արյունաշագախ
Օրեր կը սպասեն, որ գան անհասպաղ.
Այս օրերն են, որ աշխարհ կը բանդեն,
Այս օրերն են, որ աշխարհ կը փրկեն³:

Պետեֆիից թարգմանված երկրորդ բանաստեղծությունը կրում է «Դեպի դարունը» վերնագիրը: Ալեգորիկ այս բանաստեղծության լիրիկական հերոսը տենչում է զարնան դալուստը և մեծ ջերմությամբ նրան հրավիրում բազմելու յուր գահին, մերկացած բնությունը զոգեցնելու համար:

Չմեղը որպես բռնության և ստրկության սիմվոլ արդեն օգտագործել էր Մ. Նալբանդյանը: 1859 թ. նա իր «Հիշատակարան»-ում միանգամայն թափանցիկ ակնարկներով խոսելով ազատության շունչը խեղդող ցարական ռեժիմի մասին, այդ «ողբալի աշխարհի» վիճակը չի համարում հավերժական:

¹ «Հյուսիսափայլ», 1864, № 7, էջ 495:

² Տե՛ս «Գրական թերթ», 1954, № 14, Ս. Սարինյանի հոդվածը:

³ «Երգ մի զորականի», տե՛ս «Հյուսիսափայլ», 1861, № 11, էջ 403:

Հավատացած լինելով, որ ազատությունը կհաղթանակի, Նալբանդյանը հայտարարում է, թե երկիրը ենթակա է փոփոխությունների.

«Ասես թե այս փոփոխությունքը սկսված են արդեն,— գրում է նա այնուհետև,— ասես թե մեզ էր պահված վկայությանիլ դորա սկզբին, ասես թե արևը մի փոքր փոքրացել է այս աշխարհի վերա, մի փոքր մեղմացած են երևում չորժանական փոթորիկների գնացքը և հարձակմունքը»¹:

Միանգամայն պարզ է, որ Նալբանդյանին և նրա համախոհներին խորապես հետաքրքրում էին ժամանակի քաղաքական անցքերը, որոնց և նրանք ըստ հնարավորին արձագանքում էին:

Մովսես Բուդաղյանը բաժանում էր Մ. Նալբանդյանի քաղաքական հայացքները և թերևս նրա խորհրդով էլ պատրաստվում էր հայերեն լեզվով մի պարբերական հրատարակել: Հավանաբար Նալբանդյանի հետ ունեցած մտերմությունըն է պատճառը, որ կառավարությունը նրան մերժում է հիշյալ պարբերականի հրատարակության իրավունքը: Մ. Բուդաղյանը 1860 թվականի մարտին մի հայտարարությամբ դիմելով իր բաժանորդներին, հայտնում է, որ գրաքննությունը փետրվարի 11-ին «թղթով հայտնեց ինձ, թե առանձին պատճառներե հորդորված լինելով, չկարե բավականություն տալ իմ խնդրույս»²:

«Հյուսիսասիայլ»-ում տպագրված մի շարք բանաստեղծություններ գրված էին ամսագրի լուսավորական-դաստիարակչական գաղափարների ազդեցությամբ: Այսպես, հաշտությանցի երիտասարդ Աբրահամ Գալուստյան-Նազարյանցը Ստեփանոս Նազարյանին նվիրված իր «Արշալույս Հայոց» բանաստեղծության մեջ ողջունում է հայոց մտավոր կյանքի արշալույսը, քաջալերելով այդ բնագավառում աշխատող մտավորականներին: Նա հայրենիքին կոչ է անում նորոգվել «ներկա օրերի պահանջման հարմար» և «գլխով փրկավետ լուսով հասնել եվրոպական լուսավորության»:

¹ «Հյուսիսասիայլ», 1859, № 2, էջ 149:

² Նույն տեղը, 1860, № 3, էջ 244:

Այդ նույն միտքն է արտահայտւած Վ. Մահաթեայանցի «Քաջալերություն և ղգաստություն» բանաստեղծության մեջ: Ազգասիրության և հանրօգուտ աշխատանքի ներքողը կադմում է Նրեմիա Սահակյանի «Արձագանք Մասիսու» բանաստեղծության բովանդակությունը:

Հ. Քուլուբեկյանն իր «Հանգուցյալ տղան» երգիծական բանաստեղծության մեջ անարգանքի սյունին է դամում ազգի լուսավորության և կրթության գործերից խուսափող անձնապաշտ հարուստներին, որոնք մտահոգւած էին միայն ոսկիներ դիզելու գործով: Բանաստեղծը մերկացնում է այն կեդտոտ ճանապարհները, որոնց միջոցով հայ առևտրական քուրժուազիայի ներկայացուցիչները փող էին կուտակում:

...Անօրեն գործքով դարշելի
Խարում էր մարդիկ վասն յուր օգտի.
Նա մշակների վարձը կըսարում էր,
Չբավորների ցավին անփութ էր.
Նա խարդախությամբ հաշիվների մեջ,
Ծածկում էր արծաթ, բանալով սուտ վեճ.
Կամ հողաբարձու անտեր որբերի
Յուցանում էր նա քառորդ գույքերի,
Կամ բռնութենով, արծաթի ուժով
Խլում էր կալվածք խեղճ այրիների¹:

Դժվար չէ տեսնել քննադատական ունալիզմի ոգով զերւած այս բանաստեղծության և Մ. Նալբանդյանի ստեղծագործության միջև եղած ընդհանուր դժերը:

1859 թվականից սկսած «Հյուսիսափայլ»-ում տպագրւել են բանաստեղծ և թարգմանիչ Գևորգ Բարխուդարյանի ստեղծագործությունները («Պատանին աղբյուրի մոտ», «Հովհաննայի հրաժարիլը», «Կոբաժ սերը» և այլն): Նա իր առաջին բանաստեղծություններն սկսել էր տպագրել «Մեղու Հայաստանի» թերթում, բայց կարճ ժամանակից ղիտակցելով այդ «թշվառ» թերթի «ոչնչությունը», անցել էր «Հյուսիսափայլ»-ի կողմը:

Գ. Բարխուդարյանն իր հաջող թարգմանություններով հայ

¹ «Հյուսիսափայլ», 1864, № 8, էջ 556:

ընթերցող հասարակութեանը ծանոթացրել է Շիլլերի և Հայ-
նեի լիրիկական երգերի հետ: Թարգմանություններից բացի,
նա «Հյուսիսափայլ»-ում հրատարակել է և մի շարք ինքնու-
րույն բանաստեղծություններ՝ «Խոսակցությունը լուսնակի-
հետ», «Առ իմ սիրելին», «Խոսք դեպի մի սիրուն» և լիրիկա-
կան շնչով գրված այլ երգեր:

Բարխուդարյանին նույնպես հուզել է իր ժողովրդի դառն
վիճակը և փորձել է ուղիներ նշել հայ ժողովրդի կյանքի վե-
րածնության համար:

1861 թվականին տպագրված «Չորս հսկա» բանաստեղծու-
թյան մեջ խոսելով հայ ազգի թշվառ դրության և նրա կորսը-
ված թաղավորության ու փառքի մասին, Բարխուդարյանը
գրում է.

Ով դուք, որդիք իմ սիրելիք,
Այդ ի՞նչ վիճակում եք դուք,
Կավ էր ազատ մեռանեիք,
Քան ասրեիք այդպես ստրուկ¹:

Միանգամայն սլարդ է, որ ռեֆորմին հաջորդած ժամա-
նակաշրջանը չէր կարող մխիթարական լինել ո՛չ ուսու, և ո՛չ
էլ հայ ժողովուրդների համար: Բարխուդարյանը, սակայն,
չկարողանալով այդ վիճակից դուրս գալու ուղիներ նշել՝
հայերին միաբանության կոչ է անում:

Ժանրային տեսակետից հաճելի նորություն էր Բարխու-
դարյանի «Առակ»-ը, տպագրված 1861 թվականին, որը ժո-
ղովրդական հեքիաթի գրական մշակման մի փորձ է:

Երեմիա Սահակյանը իր մի բանաստեղծության մեջ նույն-
պես Հայաստանի վաղեմի փառքը և ներկա անմխիթար վի-
ճակը հակադրելով, կոչ է անում ազգասիրական գործու-
նեություն:

Կովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամության
դադափարն է արտահայտված Ռուբեն Հասան Զալալյանի
«Արաքս և Կուր գետերի գանգատը» բանաստեղծության մեջ:
Արաքսը և Կուրը արտասուքներն իրար խառնելով, դիմում են

¹ «Հյուսիսափայլ», 1861, № 9, էջ 227:

դեպի Կասպից ծովը, իրենց անօգնական վիճակի համար օգնություն խնդրելու նրանից: Վերջինս հյուրընկալում է նրանց, հորդորում հաշտ լինել, քանի որ ծնվել են մի արգանդից և նրանց է հաղորդում Վուլգայի ողջույնը:

«Հյուսիսսփայլ»-ի բանաստեղծներն արձագանքում էին նաև հայ իրականության մեջ գոյություն ունեցող տարբեր հասարակական հոսանքների պայքարի հարցերին: Այսպես, միանալով հայ հետադիմական հոսանքի դեմ ծավալած «Հյուսիսսփայլ»-ի բանավեճին, Վահունին իր «Տեսիլ» այլաբանական բանաստեղծության մեջ մերկացնում է ռեակցիոներ Ս. Զալալյանին, նրան մեղադրելով Ներսես Աշտարակեցուն թունավորելու մեջ: Կամ թե, նույն հեղինակը «Աղդ» բանաստեղծությամբ, Նալբանդյանի «Հիշատակարան»-ի ոգով, բանավեճի մեջ է մտնում «Մեղու Հայաստանի» թերթի աշխատակից Սեյադի դեմ:

Այս նպատակասլաց, գաղափարապես հագեցված և ժամանակի հրատապ հարցերին պատասխանող բանաստեղծությունների հետ միասին «Հյուսիսսփայլ»-ում ղեկավարած են և մի շարք թույլ բանաստեղծություններ, որոնք, սակայն, որակ չեն կազմել: Որքան էլ արվեստով թույլ լինեն այդ բանաստեղծությունները, այնուամենայնիվ, կապված են կյանքի հետ և հետապնդում են հասարակական կյանքի արատավոր երևույթները վերացնելու նպատակ:

Իր գոյության կարճ ժամանակամիջոցում «Հյուսիսսփայլ»-ը մեծապես նպաստեց հայ պոեզիայի զարգացմանը: Նալբանդյանն ու Շահազիզը հայ բանաստեղծական խոսքը հասցրին պատշաճ բարձրության, կրթեցին ընթերցողների բանաստեղծական ճաշակը և, Ռ. Պատկանյանի հետ միասին, նախապատրաստեցին հայ պոեզիայի զարգացման հետագա էտապը:

1864 թվականին «Հյուսիսսփայլ»-ում տպագրվում է իերմոնտովի «Դեղ» պոեմը Մ. Սադաթյանի տաղանդավոր թարգմանությամբ: Բանաստեղծական ազնիվ ներշնչանքով կատարված մի գործ է դա, ուր թարգմանիչը ի հայտ է բերել հայոց լեզվի սքանչելի իմացություն, հմտությամբ օգտագործել է մանուկ գրական աշխարհաբարի բոլոր հնարավորու-

թյունները, արտահայտելու Լեւոնտովի հանճարեղ գործի հմայքն ու գեղեցիկությունը:

Մ. Սաղաթյանի թարգմանությունը հայ նորաստեղծ գրական լեզվի փայլուն քննությունն էր հանդիսանում, դա միաժամանակ 60-ական թվականների հայ առաջավոր մտածողների սիրո և ակնածանքի արտահայտությունն էր մեծատաղանդ ուսու ժողովրդի հոգևոր կուլտուրայի հանդեպ:

7. «ՀՅՈՒՍԻՍԱՓՈՅԼ»-Ի ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

19-րդ դարի 50-ական թվականների վերջին, խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի հրատարակությամբ սկզբիւ էր դրվում հայ աշխարհիկ գրականությանը:

Հայ գեղարվեստական արձակն իր հետագա զարգացումն է ստանում «Հյուսիսափայլ»-ի էջերում: Այդ ամսագրի 1858—60 թվականների համարներում տպագրվում են Մ. Նալբանդյանի «Հիշատակարան»-ը և «Մեռելահարցով» վեպը, իսկ 1861 թվականին՝ Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիսը»:

Ժամանակի և հետագա շրջանի գրեթե բոլոր հայ առաջավոր գործիչները և հեղինակները բարձր են գնահատել Նալբանդյանի «Հիշատակարան»-ը: Հովհ. Թումանյանը խոսելով «Հյուսիսափայլ»-ի՝ իր վրա թողած ազդեցության մասին, դրոմ է, թե իրեն առանձնապես դուր էր գալիս Կոմս Էմմանուելի «Հիշատակարան»-ը: Պ. Պոռյանն իր «Հուրեր»-ում վկայում է, որ ընթերցողները «Հյուսիսափայլ»-ի նյութերից միայն «Հիշատակարան»-ն էին միմյանցից խլելով կարդում:

Նալբանդյանի առաջին կենսագիր Մ. Տեր-Գրիգորյանը գրում է, թե «Ամսի սկզբին ամեն բաժանորդ անհամբերությամբ սպասում էր «Հյուսիսափայլ»-ի նոր համարը դուրս գալուն, որ կարդա Կոմս Էմմանուելի (Նալբ.) «Հիշատակարան»-ը կամ մյուս հոդվածները»¹:

Ինչո՞վ ուետք է բացատրել այն հետաքրքրությունն ու սերը, որ ընթերցող հասարակությունը ցուցաբերել է այդ գործի նկատմամբ, «Հիշատակարան»-ն ինչո՞վ էր հմայում ընթերցողին: Ողջ գաղտնիքն այն բանում էր, որ Մ. Նալ-

¹ «Ղազար Փարպեցու գրած թուղթը», էջ XII:

բանդանը գեղարվեստական խոսքի ամենակարող ղեկերի միջոցով բարձրացնում էր հայ իրականության առաջադրած հրատապ հարցերը: Ժամանակի հայ հասարակական կյանքի և հոսանքների պայքարի գեղարվեստական արտացոլումն էր «Հիշատակարան»-ը: Վերջինիս էջերից Նալբանդյանը պայքար էր մղում կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչների դեմ:

Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ի ընձեռած հնազալութուններն օգտագործելով, գեղարվեստական խոսքի միջոցով արժարժում էր ժողովրդի իրավունքների պաշտպանության, նրա լուսավորության և կրթության, հայ թատրոնի զարգացման, կանանց դաստիարակության և նրանց իրավունքների պաշտպանության, և բազմաթիվ այլ կարևոր հարցեր:

Նա ներբուրում է ազատության վսեմությունը և այն անձնավիրաբար նվաճելու դադափարը:

Նալբանդյանը «Հյուսիսափայլ» ամսագիրը ղինում է կենդանի հրապարակախոսություն, ձգտելով ժողովրդին բարձրացնել դեպի հասարակական հարցերի գիտակցման մակարդակը: Այս իմաստով մեծ է «Հիշատակարան»-ի կատարած դերը: Իր հրապարակախոսական հոդվածներով նա ժողովրդին օգնում էր ճիշտ կողմնորոշվելու դեպի առաջավոր միաբեր, ճանաչելու իր թշնամիներին, երիտասարդությանը ղինում էր իր դարն ապրած հին հարաբերությունների ու հասկացողությունների դեմ պայքարելու ոգով:

«Հիշատակարան»-ում մենք հանդիպում ենք զրական տարբեր ժանրերի՝ պատմվածք, բանաստեղծություն, հրապարակախոսություն, զրախոսություն, պամֆլետ, քննադատություն, ակնարկ, ֆելիետոն, և այլն:

Իր այդ երկում Նալբանդյանը հաճախ է դիմել եղոսոսյան լիզվին, որին այնքան մեծ արվեստով տիրապետում էին ուսուսուցիչները-դեմոկրատները: Նկատի ունենալով ազատ մտքի համար ստեղծված արգելակները և հավատացած լինելով բոնության կործանման անխուսափելիության մեջ, նա գրում է.

«Դու առաջ գնա: Կգա օր, կծագե և քո համար այն ար-

շալույսը, երբ քո ընթերցողքը կարող կլինին նայել եզիպտական աստվածուհու երեսը, առանց քողով ծածկելու նորան»¹։

Սակայն մինչ այդ արշալույսի ծագումը, անհրաժեշտ էր ընթերցողների հետ խոսել ժամանակի կարևոր սոցիալական հարցերի մասին։ Տիրապետելով ալեգորիկ խոսքի արվեստին, Նալբանդյանը «Հիշատակարան»-ում թափանցիկ ակնարկներ էր անում Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունների մասին.

«Հյուսիս... մի ցուրտ և անհամբույր աշխարհ... Հյուսիսում, դաշտերը ծածկված են հավիտենական ձյուններով, ծովերը գտանվում են սառցապատ բանտերի մեջ։ Հյուսիսում, արջային շրջանակի տակ, բնակվում է ցրտաշունչ և դաժան Բորեսաը, որ խլում է աղքատ շինականների տան ծածկը, որի զորությանը չեն կարող դիմանալ շատ անգամ հարյուրամյա կաղնիքը։

Հյուսիսում, եթե հունիսի և հուլիսի մեջ, երկրի մակերեւծությամբ թեթևանալով յուր սառն ծանրութենից, բուսուցանում է մի պարզ ծաղիկ, մյուս օր ահա Բորեսաը յուր մահաշունչ բեկեռային սառնությամբ կփրում է այդ ողորմելի բուսականի կյանքը»²։

Նկատի առնելով 50-ական թվականների վերջին ստեղծված ռևոլյուցիոն իրադրությունը Ռուսաստանում, Նալբանդյանը հաստատորեն նշում է, որ ամեն ինչ ենթակա է փոփոխության, և հանդիսավորապես ազդարարում է այդ փոփոխության սկիզբը։

Արտասահմանյան ճանապարհորդության ընթացքում էլ, Նալբանդյանը, թեև ընդհատումներով, շարունակում էր տպագրել «Հիշատակարան»-ը։ Հետագայում անդրադառնալով Զ. Մսերյանի տարածած այն լուրերին, թե իբր Կոմս էմմանուելը խզել է հարաբերությունները «Հյուսիսափայլ»-ից, նա գրում է, որ եթե որոշ պատճառներից ստիպված երբեմն ինքը լուռ մնա, այնուամենայնիվ կապված կլինի այդ ամսագրի հետ և «Հիշատակարան»-ը կերևա նրա էջերում։

¹ «Հյուսիսափայլ», 1859, № 8, էջ 648։

² Նույն տեղը, № 2, էջ 149։

Զնայած դրաքննության արդեւքների պատճառով Նալբանդյանն իր փսի խոստովանությամբ հնարավորութիւն չունէր ամբողջ խորութեամբ վեր հանելու «Հասարակ ժողովրդի» իրավունքների պաշտպանութեան հարցերը, սակայն «Հիշատակարան»-ի արդեն հրապարակված համարներում ըստ հնարավորին, նա այդ հարցերն արծարծել է:

Նալբանդյանի «Հիշատակարան»-ի բազմաթիւ էջեր իրենց ներկայացնում են հայ դեմոկրատական հրապարակախոսութեան սքանչելի օրինակները:

«Հիշատակարան»-ի հմադրը նաև նրա անմիջականութեան մեջ է. Նալբանդյանի խոսքն անկեղծ է, տողովւած լիրիկական շնչով, պատկերավոր և հարուստ՝ արտահայտչական միջոցներով: Սակայն, եթե ժողովրդին նվիրւած տողերը հաղեցված են սիրով ու գորովով, ապա դադափարական հակառակորդներին ուղղված խոսքն անխնա է, երգիծանք՝ սուր և ոչնչացնող:

Առանձնապես «Հիշատակարան»-ում է, որ դրսևորվել է Միքայել Նալբանդյանի պոլեմիկական փայլուն տաղանդը:

«Մեռելահարցով» վեպում Նալբանդյանը շարունակում է այն պայքարը, որ սկսել էր դեռևս Նախիջևանում, հայ ժողովրդի զարգացումն արգելակող կղերա-ֆեոդալական հոսանքի ներկայացուցիչների, առևտրա-վաշխառուական բուրժուազիայի դեմ:

Իր այդ երկում նա մեկ անգամ դիմակադերձ է անում ռեակցիոն հոսանքի ներկայացուցիչներին, ցույց տալիս նրանց գործունեության հակաժողովրդական էությունը: Ի՞նչ դադափարներով էին անում ժամանակի ազգային այդ «հերոսները», որոնք հավանություն ունեին իրենց ազգասեր անվանելու: Ահա դրանցից մեկը, սրբուն Մարկոսը. նա գրասեր է, իրեն համարում է ազգասեր, սակայն երկու կողմիով պատրաստ է վաճառելու ոչ միայն ազգասեր պատվանունը, այլև ամեն մի սրբութիւն կյանքում: Շաքարյանցն դրադվում է դուլթական գրքերով և կախարդանքով, լսել անգամ չի ցանկանում ազգի լուսավորութեան և ուսման մասին և առանձին զանազանութիւն չի տեսնում մարդկանց և անասունների միջև: Նրա փիլիսոփայութիւնը հանգում է այն բանին, որ

«մարդու փորը կուշտ լինի, ըմպելիքը առատ, օրը ուրախ, սիրական կինը կողքումը»: Այդ «հերոս»-ներից է նաև ակֆիմիայով դբադլիոդ Մանթովայանցը, որը փորձում է վանազան քիմիական միջոցներով մետաղներից ոսկի ստանալ: Նա այն «տեսակետին» է, թե դպրոցները ազգը կործանության կհասցնեն:

Քննադատական ռեալիզմի մեթոդով Նալբանդյանը պատկերում է և առևտրա-վաշխառուական բուրժուազիայի ներկայացուցիչ Հովնաթանյանցի. կերպարը, որը «քնած ժամանակ ևս մտածում էր շահաստացության վերա»: Անթիվ, անհամար խարդախությունների միջոցով և խարեության մեջ Հովնաթանյանցը հսկայական կապիտալ է կուտակել՝ ստանալով ազգասերի համբավ: Իր ծառայողներին աշխատավարձից զրկող, պետական գործարքներում խարդախող, հանուն շահի հարազատ դատերը դժբախտացնող այդ գիշատիչ անձնավորությունն առաջնորդվում էր լուկ հարստանալու մոլուցքով: Շնաչնայիսի մարդերից էր, որոնք դեռևս զարմանում են, թե ինչպես աստված ստեղծել է աշխարհը առանց մի օգտի ակնկալության, և թե ինչպես ամենայն օր երկնքի լուսավորքը լուսավորում են երկիրը առանց մի բան ստանալու: Նալբանդյանը միաժամանակ պատկերում է առևտրա-վաշխառուական բուրժուազիայի այլասերումն ու բարոյական անկումը:

Միջնադարյան խավարի և ռեակցիայի դադափարախոսների դեմ հանդես է գալիս Կոմս Էմմանուելը, որին նրա հակառակորդները համարում էին «հասարակաց խաղաղության վրդովիչ»:

Կոմս Էմմանուելն իր ողջ կենսափորձն ու գիտելիքներն ի սպաս է դնում իր ժողովրդի կրթության ու լուսավորության գործին: Նա դատապարտում է «գնայուն մեռյալների» թաղավորությունը: Նա ցավով է տեսնում, որ հասարակ ժողովուրդը մեկուսացված է հասարակական գործերից, և անմոռնչ կերպով համակերպվում է իր վիճակին:

Գիտակցելով իր գործի արդարացիությունը, Կոմս Էմմանուելը նետվում է անողոք պայքարի ասպարեզը, հակառակորդներին զգուշացնելով հեռու մնալ իրենից, այլապես

սպառնում է փշրել նրանց ժանգոտ ատամները: Հովնաթան-
յանցին ուղղված Կոմսի նամակից երևում է, որ ռեակցիայի
ներկայացուցիչներն ստիպված էին հաշվի նստել նրա հեղի-
նակության հետ:

Որպես վիսպական ժանրի ստեղծագործություն, «Մեռելա-
հարցում»-ը որոշ թերություններ ունի, որոնք արտահայտվում
են բաղմամբիվ լիրիկական զեղումների, հրապարակախոսա-
կան շեղումների մեջ և այլն: Այդ շեղումները, սակայն,
միանգամայն հասկանալի կդառնան, եթե նկատի ունենանք
այն ժամանակաշրջանը, երբ ստեղծագործել է Նալբանդյա-
նը: Իր երկը նա գրել է պայքարի թեժ մթնոլորտում. իր
զաղափարական հակառակորդների դեմ մղած բանակռույթում,
բնականաբար, նա պիտի օգտագործեր և օգտագործել է
գրական բոլոր ժանրերը:

Հաշվի չառնելով այս հանգամանքը, կեոն Նալբանդյանին
հանդիմանում է «յուրաքանչյուր քայլափոխում ազգային
պակասությունների վրա երկար ու բարակ ճառեր» կարդալու
համար: Ըստ կեոյի Նալբանդյանը «վեպի մասին ունի վերին
աստիճանի միամիտ-երեխայական հասկացողություն: Նա
կարծում է թե այդպեղ կարելի է խոսել և երգի մասին և
Աբովյանի ու նրա վեպի մասին, ինչպես նաև դնել Մեսրոպ
Թադիսդյանի կենսագրությունը, չնայելով որ ոչինչ կապ չկար
այդ առարկաների և վեպի մեջ»¹:

Կեոն, այնուհետև, «Մեռելահարցում»-ը պատկվիլ է հա-
մարում, դտնելով, թե «Նալբանդյանը չէ կարողացել զսպել իր
կրքերը և նկարել է իր վեպի մեջ կենդանի գեմքեր»: Նալ-
բանդյանի դեմ հարուցած այս մեղադրանքը ևս անհիմն է:
Մեծ հրապարակախոսն իր գեղարվեստական արձակը ևս
ծառայեցնում էր պայքարի նպատակներին. նա ձգտում էր,
որ իր հարվածները լինեն դիպուկ և խոցող, ուստի և նա
չէր խուսափում թափանցիկ ակնարկներից. առևտրա-վաշ-
խառուական բուրժուազիայի ընդհանուր, տիպական գծերը,
կոնկրետացնելով Հովնաթանյանցի կերպարի մեջ, նա նկատի
է ունեցել ռեալ անձնավորություն՝ մոսկվաբնակ վաճառական
Հովնանյանին:

¹ Կեո, Ստեփանոս Նազարյանց, հ. 2, էջ 259:

«Մեռելահարցուկ»-ի տպագրության առթիվ «Մեղու Հայաստանի» լրագիրը մեղադրում է Նաղարյանին, թե իբր նա իր նախկին բաժանորդ Հովնանյանից վրեժ լուծելու նպատակով «սկսել է խորհուրդ անել յուր շարաքարո օգնականի հետ, և վերջինս, թեպետ աննշան, բայց ինքնահավան ոմն լինելով, առել է զրիշը և սկսել է լիրբ ու հանդուգն բառերով վաճառականին՝ ոչ միայն յուրյան, այլև բոլոր ընտանյացը դեմ գրգռել և չարախոսել ի տարապարտուց»¹:

«Մեռելահարցուկ»-ից հետո «Հյուսիսափայլ»-ում տպագրվում է Միքայել Նալբանդյանի մոտ բարեկամ և ընկեր, բժիշկ Անանիա Սուլթանշահի «Հայոց ազգի լուսավորիչը» գրամատիկական երկը, որը հեղինակի «սիրող և մեծարող սրտի կողմից» նվիրված է «նորա պատվելի եղբոր Միքայել Ղազարյան Նալբանդյանցին»:

Անանիա Սուլթանշահի գործը մի հաջող փոխադրություն է «Սովրեմեննիկ»-ում լույս տեսած Ֆեոդորովի «Воспитатель» ստեղծագործությունից²:

Սուլթանշահը Նաղարյանին ուղղված նամակում բացատրում է իր այդ նախաձեռնության շարժառիթները.

«Վաղուց արդեն ձեր միտք բացող գաղափարքը ազգի լուսավորության և դաստիարակության մասին զարթեցրել էին իմ մեջ մի ձգտողություն ձեռքիցս եկածի չափ օգտակար լինել այն շինվածքին, որի հիմքը գրվեցավ ձեր ձեռքով»³:

«Հյուսիսափայլ»-ի ուղղությունը, այդ ամսագրի ծավալած առաջադիմական գործունեությունը և, հատկապես, Մ. Նալբանդյանի գրվածքների խիզախ ու մտրակող ոգին ոգեփորում են Անանիա Սուլթանշահին:

Հարազատ մնալով Նալբանդյանի քննադատական ռեալիզմի ուղղությանը, Սուլթանշահը «մաքուր խղճմտանքով», ինչպես մի հայելու մեջ, ցուցադրում է այն անձանց, որոնց ձեռքին էր հայ մանուկների դաստիարակության գործը: Հետադիմական մամուլը նկատելով այդ գործի և Ֆեոդորովի

¹ «Մեղու Հայաստանի», 1860, № 19:

² «Современник», 1858, № 5:

³ «Հյուսիսափայլ», 1859, № 10, էջ 772:


ստեղծագործութեան միջև եղած կապը, փորձեց արժեքա-
դրկել առաջինը:

Ֆեոդորովի «Воспитатели»-ի մեջ ամենասուր կերպով
քննադատված են ոռոս պարբերական մամուլի ռեակցիոն թևի
պարագլուխներ և ցարական լրտեսներ Բուլգարինն ու Գրեչը,
«Սեմերնայա պչելա»-ն, նրանց դաստիարակութեան հետադի-
մական բնույթը, նրանց զպրոցներում դաստիարակված սե-
րնդի տգիտությունը:

Փոխադրելով Ֆեոդորովի երկը, Անանիա Սուլթանշահը
երգիծանքի զենքն ուղղում է հայ իրականության բուլգարին-
ների՝ Հարություն աղա խալիբյանի և Այվազովսկու դեմ.
ծաղրվում է առաջինի կեղծ բարերարությունը և երկրորդի
դաստիարակութեան կործանարար բնույթը: Եթե Ֆեոդորովի
երկում զպրոցի դիրեկտորի առանձնասենյակի պատերին
փակցված են Բուլգարինի և Գրեչի նկարները, ապա խալիբ-
յան զպրոցի տնօրեն Այվազովսկու առանձնասենյակի պա-
տերը զարդարում են Լոյոլայի և Քուշար Մագիստրոսի, Բե-
նեդիկտոսի և Տեր-Մանտալի պատկերները: Դժվար չէ ալդ-
նկարների տակ հանաչել ժամանակի հայ հետադիմական
պարբերականների խմբագիրներ Մսեր Մագիստրոսին և Ման-
դինյան քահանային¹:

«Հայոց ազգի լուսավորիչը»-ը դրամատիկական գործի հե-
ղինակը միանգամայն իրավացի կերպով «Ճոռքաղ»-ն ու
«Մեղու»-ն համադրում է Բուլգարինի «Սեմերնայա պչելա»
թերթի հետ: Այնուհետև Ա. Սուլթանշահը Միքայել Նալբանդ-
յանին համեմատում է Ն. Վ. Գոգոլի հետ, նրան համարելով
ոռոս մեծ ռեալիստի զուգահեռ: Հայ գրականության մեջ:
Ինչպես Գոգոլի «Մեռած հոգիներ»-ի ընթերցանությունն էր
արգելված ոռոս պահպանողականների զպրոցում, այնպես էլ
Մ. Նալբանդյանի ստեղծագործությունը հալածվում է խա-
լիբյան ուսումնարանում: Մ. Նալբանդյանի թարգմանած
«Թափառական հրեա»-ի անունը միայն մոլուցքի մեջ է գցում

¹ Հետաքրքրական է, որ «Մեռելահարյուկ» վեպում ևս Մ. Նալբանդ-
յանը Մսեր Մագիստրոսին կոչում էր Մահտեսի Քուշար («Հյուսիսափայլ»,
1859, № 10, էջ 770):



Անանիա Սուրանշան



դպրոցի տնօրեն Դիմաշլահյանց-Այվազովսկուն. «Եթե ուրիշ անգամ թե դպրոցին մեջ, և թե ձեր ձեռքը տեսնալու ըլլամ սա փոփոխութան թուլութիւն քարոզող հերձիւածող և ապստամբ մարդոց գրվածքը, որպէս են «Հյուսիսափայլ» օրագիրը, «Հանդես նոր հայախոսութեանը», «Վարդապետարան կրօնին», «Թափառական հրեան» և այլն, անմիջապէս կզրկեմ զձեզ ձեր պաշտօնէն»¹:

Հետաքրքրական է հատկապէս գրվածքի ախարտը, որն ամբողջովին ինքնուրույն է: Ֆետիորովի գրվածքի վերջում քննադատվում են ռեակցիոն դպրոցի սաները, որոնք արդեն կշանք են մտել, դպրոցից իրենց հետ տանելով միմիայն ստորաբարշտութեան և հիվանդոտ կարիւրերի զմի հակումներ:

Պաշտոնի և աստիճանի հասնելու տենդը հայ իրականութեան մեջ չէր կարող այնքան բնորոշ լինել, որքան ուրա իրականութեան մեջ էր, ուստի Ա. Սուլթանշահը դրա փոխարեն ընտրում է հայ բարբերին հարազատ մի պատկեր: Այստեղ նկարագրվում է Թեոդոսիայի խալիբջան ուսումնարանի բարերար Հարութիւն Պապականի այցն իր ուսումնարանը: Պապական աղայի անվան տակ հեղինակը նկատի է ունեցել «ազգային բարերար» Հարութիւն աղա խալիբջանին, նրա հայացքները կրթութեան և լուսավորութեան մասին, նրա անսահման ատելութիւնը «Հյուսիսափայլ»-ի աշխատակիցներին կատմամբ: Պատկերված է նաև խալիբջանի համերաշխ գործակցութիւնը Այվազովսկու հետ՝ Նալբանդյանի օրագիրը խափանել տալու գործում: Սուլթանշահը վարպետորեն մերկացրել է խալիբջան ուսումնարանի դառախարակութեան հոռի կողմերը, ուսուցիչների տգիտութիւնը և Այվազովսկու ռեակցիոն գործունեութիւնը:

Այսպիսով, Ա. Սուլթանշահը «Հայոց ազգի լուսավորիչը» դրամատիկական երկով իր մասնակցութիւնն է ունենում «Հյուսիսափայլ»-ի մղած պայքարում՝ հայ ռեակցիոներներին դեմ:

«Հյուսիսափայլ»-ի 1861 թվականի համարներում տպագրվում է Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» վե-

¹ «Հյուսիսափայլ», 1859, № 10, էջ 792:

պը: Հետագայում արժեքավորելով այդ երկի ռեալիստական մերկացնող ուղղությունը, Նալբանդյանը «Տեր Սարգիսը» համեմատում է «Մեռած հոգիներ»-ի հետ, իսկ հեղինակին անվանում «Հայ Գոգոլ»: Այն հանգամանքը, որ Նալբանդյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Տեր-Հովհաննիսյանի վեպի վրա, ինքնին խոսում է այդ գործի կարևորության մասին հայ նոր գրականության զարգացման սկզբնական այս էտապում:

«Տեր Սարգիս» վեպում հեղինակը գեղարվեստորեն արտացոլել է 60-ական թվականների հայ գյուղի ռեալիստական պատկերը:


Տասնյակ տարիներ հետո անդրադառնալով իր վեպի եռպագրության պատմությանը, Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը նշում է, որ ինքը ծրագրել էր գրքի երկրորդ մասում մերկացնել կրոնական-սխոլաստիկ կրթությունը Ներսիսյան դպրոցում: Սակայն այդ դպրոցի կրոնի դատառու, ավագ քահանա Սահակ Սահառունու միջամտությամբ վեպի շարունակության հրատարակումն արգելվում է: Հեղինակը դիմում է Կ. Նոյանի միջնորդությանը, բայց վերջինս գրում է, թե «Բերոսին հրամայված է ցնեզուրական կոմիտեի կողմից, որ հայոց հոգևորականության մասին ոչ մի հոգված թույլ չտա տպագրության»¹:

Գ. Տեր-Հովհաննիսյանը ստիպված էր հրաժարվել իր վեպի ամբողջական հրատարակության մտքից:

Պետք է ենթադրել, որ «Տեր Սարգիս» վեպի մտահղացումը կապված է եղել «Հյուսիսսփայլ»-ի ուղղության և Ստեփանոս Նաղարյանի հետ:

1858 թվականին ավարտելով Ներսիսյան դպրոցը, Գ. Տեր-Հովհաննիսյանը մեկնում է Մոսկվա և ընդունվում Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Այդ ժամանակ Մոսկվայում կաղմակերպված ուսանողական ժողովներում հայ երիտասարդները կարգում էին իրենց գրական գործերը և միաժամանակ ուսումնասիրում հայ գրականությունը: Այս վերջինի մասին 1860 թ. Ստ. Նաղարյանն էր դասախոսու-

¹ Ք ա ջ ր ե ու ն ի, Ստեփանոս Նաղարյանցի շուրջը, էջ 14:



Գաբրիել Տեր-Հովհաննիսյան



Յյուռներ կարգում: Ժողովներին հաճախում էր նաև Գ. Տեր-
Հովհաննիսյանը: Հավանորեն այդ ժամանակ էլ նա ծանոթա-
նում է Ստ. Նազարյանի հետ:

«Տեր Սարգիս» վեպը կուռ սյուժե չունի և գործողություն-
ները զարգանում են լոկ Տեր Սարգսի անձնավորության շուր-
ջը: Ծիշտ է, գյուղական կյանքի մնացած բնագավառներն
ստվերի մեջ են մնում, սակայն տրվում է գյուղական քահա-
նայի և ողջ հոգևորական դասի հիերարխիայի նկարագիրը:

Հեղինակը ցույց է տալիս, որ անգրագետ յուրաքանչյուր
որ, եթե կարողացել է մի փոքր գումար ձեռք բերել կաշա-
ռելու համապատասխան հոգևոր պաշտոնյաներին, իրեն հա-
մար ապահովում է քահանայի պաշտոնը: Տեր Սարգիսը կի-
սադրագետ մի անձնավորություն է, որ նույնիսկ մի այլ քա-
հանայի օգնությամբ չի կարողանում «վերծանել» գործակա-
լից ստացված հայերեն նամակը: Մովսես Խորենացին նրա
մոտ դառնում է Աստվածաշնչի հեղինակ և Ներսես Խորենա-
ցի: Սակայն այդ չի խանգարում, որ նրան վստահվի նաև
գյուղական «գայրոցը»: Տեր Սարգսի մտահոգության միակ
սուարկան իր շահն է. օրեր անընդհատ նա մտածում է այն
մասին, թե ե՞րբ պետք է նոր ծնունդ լինի, ո՞վ պետք է
սլսակվի, դառնությամբ խորհրդածում է այն մասին, որ
մարդկանց ձևկատը պինդ է և մահը չի մոտենում նրանց, և
այլն: Կյանքի գերագույն խորհուրդը նա գտնում է ուտելու
մեջ: Հեղինակը ծաղրում է նրա աղաղակող տգիտությունը:
Տեր Սարգիսն ահա կանգնած է գործակալի առջև և պատաս-
խանում է վերջինիս հարցերին:

«Քանի՞ տարի է, որ ձեռնադրվել ես,— շարունակեց Տեր
Առաքել գործակալը:

— Երբ որ հայրս մեռավ, այն ժամանակ և ես ձեռնա-
դրվեցա:

«Ուրեմն Քրիստոսի ո՞ր թվականին»:

— Քրիստոսի զատիկի օրից երկու շաբաթ առաջ:

«Ուրեմն մարտ ամսումը ձեռնադրվեցար»:

— Այո, երբ որ իմ միջնակ որդիս ծնել էր:

«Օրհնյալ քահանա, ուրեմն պարզացրու, տեսանեմ, որ
թվին ձեռնադրվեցար, երևի մոռացել ես»:

— Այո, ծառայդ եմ, մոռացել եմ, բայց մաշտոցիս մի կողքումը դրած է թիվը»¹:

Իրենց կամայականություններով ու դաժանությամբ աչքի են ընկնում գործակալները, որոնց զալստյան լուրը ահաբեկում է մարդկանց: Տեր Սարգսին հայտնելով գործակալի ժամանակը, Տեր Գրիգորն ասում է. «Զիրուսդ ուշադր ունի՞ս, թե չէ, նոր գործակալ Տեր Առաքելը գալիս է, ղգուշ կացիր, կաշիդ քերթելու է»: Որ Տեր Առաքելը եղակի չէր և նրա վարքագիծը բնորոշ է և մնացած գործակալների համար, ընթերցողը համոզվում է դրանում. նրա նախորդի մասին ասվում է, թե «մի թոկից փախած մարդ էր», որին բավական է կաշառք տալիս, լուռությամբ կրնգուններ, եթե նույնիսկ վանքական ողջ ցորենը կերած լինեիր: Գործակալների կաշառակերության և անբարոյականության պատկերը հասնում է ահավոր չափերի: Դրությունը ոչնչով լավ չէ քաղաքում. կամ նույնիսկ էջմիածնում: Քաղաքի քահանաների արժանիքները չափվում են նրանց բարձր հասակով, փառահեղ մորուքով և հաստ փորով: Գնալով աճում է էջմիածնի միաբանների քանակը. «Ո՞վ չէ կամենալու ձրի հանդերձ հագնել, ամեն օր պատրաստի հաց ուտել, առանձին օթևանում բնակել, ոչինչ բանի վերա չմտածել և ոչինչ բանով չպարսպել»²: Նրանք ոչ միայն գիտությամբ չեն ղբաղվում, այլև չեն կարգում հին մատենագիրների աշխատությունները:

Այս ամենից հետո պատահական չէ, որ Միքայել Նալբանդյանը «Տեր Սարգիս» վեպն անվանում է «Քաղցկեղ Հայաստանի»: Մահացու այս քաղցկեղը մաշում էր ժողովրդի կյանքը: Հետաքրքրական է, որ ժողովուրդը, եթե սկզբում հալած յուրի տեղ էր ընդունում Տեր Սարգսի յուրաքանչյուր խոսքը, ապա հետագայում արդեն հանգում է վճռական եղբակացությունների: «Աստված ազատե աշխարհ քահանաների ձեռքից,—ասում է Ծնորենց Պետրոսի հյուրերից մեկը,— թե չէ, գալիլի պես հում-հում կուտեն: Ասես մի խղճմտանքի նշույլ լինի դոցա մեջ, քավ լիցի: Ես կարծում էի, թե աշխար-

¹ «Հյուսիսափայլ», 1861, № 8, էջ 86:

² Նույն տեղը, № 9, էջ 181:

հիւս վերա վատ քահանա միայն տեր Բարսեղն է, բայց նորանից վատթարն ևս եղել է: Թե դոցա դատաստանը ինձ տալին, բոլորին միմյանցից կկապելի և ծովի տակ կխեղդելի»¹:

Չնայած հեղինակի ոչադրությունը կենտրոնացած է Տեր Սարգսի կերպարի վրա, գյուղացիության վիճակը ևս որոշ չափով լուսարանվել է վեպում: Պերճախոս է այն փաստը, որ հենց առաջին իսկ պատարագին, եկեղեցում հավաքված գյուղացիները խոստում են հարկահանության մասին: Իսկապես, կարճ ժամանակից հետո լուր է տարածվում, թե հարկահանը եկել է, ծեծում է գլիր Վանեսին և տանուտերին պահանջում: Մի այլ տեղ, քահանայի և գործակալի դրուցից պարզվում է, որ գյուղացիները ծանր վիճակի մեջ են, կարկուտը վնասել է ցորենը, մեծ սով է և գյուղացիները շեն կարող վանքի հարկը տալ. «Նոքա ինքյանք կամենում էին դալ, ընկնել ձեր ոտերը, աղաչել, որ մինչև կալերի կասելը ապասեր»²:

Տիրացու Ծիտուկի կերպարը բավական է գաղափար կազմելու համար այն միջավայրի և ժողովրդի մասին, որի ծնունդն էր նա: Ծիտուկն ընդունակություն չունի մտածելու. նա միայն ժամերը հաշվում է, թե ե՞րբ պետք է ցերեկը մթնի, կամ մուկը լուսանա, որ ժողովրդին եկեղեցի հրավիրի: Նա ոչ մի գաղափար չունի դրսի աշխարհի, հեռու հորիզոնների, մարդկանց լավ կյանքի, կամ կյանքի նպատակի մասին: Նա կարծում էր, թե աշխարհս բազկանում է միայն այն երկրներից, որ միայն տեսել է նա: Ասում էր՝ «Աստված այն խորհրդով է միայն ստեղծել մարդիկը, որ ուտեն, խմեն, քնեն, եկեղեցի գնան և վերջապես մեռանին»³:

Ստրկության և խավարի մեջ հեծող հայ գյուղացիների այս նկարագրությունն ակամայից հիշեցնում է Ռուսաստանի հյուսիսային գյուղերի ժողովրդի կյանքի ցնցող նկարագրությունը Ռեշտնիկովի «Подлиповцы» վեպում: «Սովրեմենիիկ»-ի էջերում 1864 թվականին տպագրված այս վեպում նկարագրված է քահանաների ու շինովնիկների կողմից թա-

¹ «Հյուսիսափայլ», 1861, № 12, էջ 430:

² Նույն տեղը, № 8, էջ 87:

³ Նույն տեղը, № 5, էջ 354—355:

վանված գյուղացիութիւնը, որը տառապում է քաղցի ու տգիտութեան ճիրաններում: Մարդիկ Պողկիպնայա գյուղում երբեք կուշտ փորով հաց չեն ուտում, նույնիսկ իրենց անունները չգիտեն և միմյանց կոչում են՝ մականուններով, 5-ից ավելի հաշվել չգիտեն և ընդհանրապես ոչ մի գաղափար չունեն այն մասին, թե ինչ հորիզոններ են բացվում իրենց գլուղից անդին:

Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» վեպի հրատարակութիւնը աչքի ընկնող երևույթ էր 60-ական թվականների հայ գրականութեան համար: Այդ վեպն անմիջականորեն տրձագանքում էր ժամանակի հասարակական կյանքի իրադարձութիւններին: Հենց միայն այն փաստը, որ հեղինակը հանդգնում էր քննադատական հայացքով մերձենալ ժամանակի կղերա-ֆեոդալական հոսանքին, մերկացնել հոգեւորականութեան դասը, խոստում է նրա գաղափարական ուղղութեան մասին: Շատ բնորոշ է հետևյալ փաստը.

Նախընթաց գլխում ասացինք, որ Նալբանդյան-Վարշամյանի հոգևածը «Ճռաքաղ»-ի դեմ առաջացնում է Մսերյանների զայրույթը, որոնք իրենց ամսագրի էջերում տպագրում են մի քառատող պարսաւադիր՝ ուղղված Նաղարշյանի և Նալբանդյանի դեմ: Թվում էր, թե հյուսիսափայլականներն արհամարհելով «Ճռաքաղ»-ի ելույթը, նրան չեն պատասխանել: Սակայն «Տեր Սարգիս» վեպի հրատարակութեան առիթն օգտագործելով՝ Գ. Տեր-Հովհաննիսյանն անուղղակիորեն պատասխանում է Մսերյաններին, կաշառակեր գործակալի բեքանում դնելով Մսերյանների վերոհիշյալ քառատողը: «Այսպէս մի ոտանավոր էս ասաց վարդապետը, — գրում է նա.

Տիրացուի շիւա-փլավ,
Վարդապետի քալա-փաշե,
Այս երկուսից թե որն է լավ,
Ճաշակաւուն քաջ ճանաչէ¹:

Այս պրիմը հիշեցնում է ռուս ուղղութիւն-դեմոկրատ Ա. Ի. Գերցենի հրապարակախոսական գործունեութեան մի

¹ «Հյուսիսափայլ», 1861, № 3, էջ 93:

զրվագր: 19-րդ դարի 50-ական թվականների վերջին Ռուսաստանում տարածում գտած փողոցային թերթիկներից մեկում տպագրվում է մի ակրոստիքոս՝ ուղղված Գերցենի դեմ: Վերջինս իր հակառակորդներին ծաղրելու համար այդ ակրոստիքոսը տպագրում է «Կոլոկոլ»-ում:

Գարրիել Տեր-Հովհաննիսյանի վեպի լեզուն կենդանի է, հյուսիսեղ և պատկերավոր: Հեղինակին հաջողվել է առանձին կերպարների համար ստեղծել ուրույն ոճ, որը նպաստում է նրանց տիպականացմանը: Այդ խմաստով ուշագրավ է Տեր Սարգսի լեզուն, որը համեմված է գրաբարյան աղճատ բառերով և արտահայտություններով: Վեպին առանձին հմայք է տալիս երգիծանքը: Հեղինակը հոգևոր դասի տգիտությունն ու պարագիտային էությունը մերկացնում է երգիծանքի միջոցով: «Տեր Սարգիս»-ը հագեցված է հասարակական բովանդակությամբ, իրականության այլանդակ երևույթների բացասման պաթոսով, ուստի պատահական չէ, որ վեպի շարունակության տպագրությունն արգելվեց գրաքննության կողմից:

«Տեր Սարգիս» վեպը «Հայոց ազգի լուսավորիչը» դրամատիկական երկի հետ միասին օգնել է «Հյուսիսսփայլ»-ի վաղած գաղափարական պայքարին: Ահա թե ինչու, և եոն «Տեր Սարգիս» վեպը համարում է «Հյուսիսսփայլ»-ի ողով տոգորված մի գործ, որտեղ «խիստ աչք ծակող, խիստ խայտառակ գույներով են մերկացված հոգևորականության պակասությունները»¹:

«Հյուսիսսփայլ»-ի էջերում, նրա հրատարակության առաջին տարիներին, Նաղարյանն ղգալի տեղ է հատկացնում ժողովրդական զրույցներին, առասպելներին և առակներին: Բարձր գնահատելով ժողովրդական ստեղծագործությունը, նատպագրում է ասիական առասպելների մի շարք՝ շինական մի զրույց հյուրասիրության մասին, հին հնդկական լեգվից փոխադրված մի ավանդություն՝ խայտառակված քուրմի մասին, և այլն: Այդ զրույցների մեջ արտահայտված է ժողովրդական իմաստությունը, զրվատվում են երախտագիտությունը, մար-

¹ Լեո, Ստեփանոս Նաղարյանց, հ. 2, էջ 263,

դասիրությունը, անշահախնդրությունն ու առաքինությունը, ծաղրված է ազահությունը, անբարոյականությունը, ապերաստությունը:

Նազարյանը մշակում և տպագրում է անկաշառ սիրող գացմունքը ջատագովող ժողովրդական զրույցը՝ Ասլիի և Քյարամի մասին: Սակայն, ձեռքի տակ չունենալով այդ զրույցի օրգանական մասը կաղմող երգերը, Նազարյանը «Հյուսիսափայլ»-ի միջոցով դրամական վարձատրություն է սահմանում «Ասլի և Քյարամ»-ի լրիվ վարիանտի համար:

1859 թվականի առաջին համարում տպագրվում է Գ. Պախալյանի «Անթար» զրույցը, որը նվիրված է սիրո հավերժության թեմային: Արևելյան զրույցներին հատուկ գունագեղությունը հարազատորեն է տրված հիշյալ զրույցի հայերեն փոխադրության մեջ¹:

Ամսագրում զետեղված այս զրույցներն, անշուշտ, թարմություն էին մտցնում հայ գեղարվեստական արձակի/բնագավառում, որի աղքատությունը սաստիկ մտահոգում էր և՛ Նազարյանին, և՛ Նալբանդյանին: Սակայն 1862—64 թվականներին Մ. Նալբանդյանի ձերբակալության և գրական աշխատակիցների պակասի հետևանքով այդ կարգի գործերն ավելի սակավ են երևում ամսագրի էջերում: Ինքնուրույն գեղարվեստական արձակի թերին խմբագիրը գերադանցապես լրացնում էր թարգմանություններով:

8. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆԸ

«Հյուսիսափայլ»-ի հրատարակության վեց տարիների ընթացքում ամսագրում զետեղվել են քառասունից ավելի թարգմանական գեղարվեստական գործեր՝ վեպ, պատմվածք, ող-

¹ Հայ մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանի «Հավերժական սերը» լեգենդը շատ է հիշեցնում վերոհիշյալ ստեղծագործությունը: Չհաշված սյուժետային փոքրիկ տարբերությունները, այդ երկու գործերի ոգին գրեթե նույնն է: Վարպետի հետ ունեցած մեր զրույցից պարզվեց, որ նա այդ լեգենդի գրության համար իբրև հիմք ընդունել է «Անթարի երգեր» վերնագրով տարածված հնդկական զրույցը և ժամանակին ծանոթ չի եղել Պախալյանի փոխադրությանը:

քերգություն, հեքիաթ և բաղմաթիւ գիտական, բանասիրական, պատմական և այլ բնույթի հոգւածներ ու ճառեր:

Թարգմանությունների միջոցով «Հյուսիսափայլ»-ը հետապնդելով լուսավորական նպատակներ, միաժամանակ պայքարել է իր գաղափարական հակառակորդների դեմ:

Միքայել Նալբանդյանը դեռևս «Հյուսիսափայլ»-ի հրատարակութունից առաջ թարգմանելով էփեն Սյուրի «Թափառական հրեան», նպատակ է ունեցել նախ մերկացնել կաթոլիկ հոգևորականության, մասնավորապես միխիթարյանների գործունեության ռեակցիոն կողմերը և ապա ժողովրդին ընթերցանության նյութ տալ նրան հասկանալի լեզվով: Իր հետագա գործունեության ընթացքում նա միշտ առաջնորդվել է այս սկզբունքով: Թարգմանվելիք երկն ընտրելիս նա կարեւոր նշանակություն է տվել գործի գաղափարական բովանդակությանը: Նալբանդյանը գտնում էր, որ թարգմանվելիք գործն իր «ազատ հայեցվածքներով», ընտիր ճաշակով, գեղեցիկ բարոյականությամբ պետք է «կարողանա սնունդ մատուցել միջնադարյան մշուշով պատած» հայ ազգին, որը կամ ոչինչ չի կարգում, և կամ էլ կարգում է միայն «Պղնձե քաղաքի պատմությունը»:

«Ամեն մի բնաիր վաստակ,— գրում է Նալբանդյանը իր «Երկու խոսք»-ում,—ինչ լեզվով ևս լինի գրված, այնուամենայնիվ միշտ օգտակար է բոլոր մարդկության, մանավանդ եթե նեղսիրտ ազգական հասկացողությունքը հանդես չունենան այդպիսիների մեջ, մանավանդ եթե աշխատության խորհուրդը է գեղեցիկ մի պատմություն կարդացողների ճաշակը և հասկացողությունքը ազնվացնել»¹:

Այս սկզբունքով է նա առաջնորդվում, երբ քննադատում է Խորեն Գալթայանին, Լամարթինի գրքի թարգմանության համար:

Ստ. Նազարյանը ևս իր կատարած թարգմանություններով սրտշակիորեն հետապնդում էր ժողովրդի լուսավորության գործին օգնելու նպատակը:

Նազարյանը նշում է, թե «մի ժողովրդի սիրտը և հոգին,

¹ Մ. Նալբանդյան, ԵԺ, հ. 2, էջ 403:

նորա բարքը և վարքը և հաշակը» դաստիարակելու և կրթելու համար անհրաժեշտ է դիմել արվեստի և գրականության դո-րաժոր միջոցին:

Ելնելով այս գրույթից, Ստեփանոս Նազարյանը նույնպե-նախ զնահատում էր թարգմանվելիք գործի զաղափարական բովանդակությունը: Սակայն «Հյուսիսսփայլ»-ի էջերում զե-տեղված թարգմանությունների քննությունը ցույց է տալիս ամսագրի խմբագրի և նրա գլխավոր աշխատակցի միջև եղած տարբերությունը թարգմանական գրականության հարցում:

Միքայել Նալբանդյանի թարգմանությամբ՝ «Հյուսիսս-փայլ»-ում տպագրվել են Կլեմանս Ռոբերտի «Դքսուհի դը Շելբրեոզ», Ֆաբր դ'Օլիվիեի «Թալիսմաններ» վեպերը և Լյուդովիկոս Դեկատրի «Պրոպերցիա Ռոսսի» պատմվածքը:

«Դքսուհի դը Շելբրեոզ» վեպն ուշագրավ է իր արծարծած հարցերի կարևորությամբ: Այստեղ պատկերված են Լյուդո-վիկոս 13-ի ժամանակաշրջանի պալատական անցուղարձե-ռ ինտրիգները, Ռիշելիո կարգինալի անսահմանափակ իշ-խանությունը, նրա դեմ մղվող սուր պայքարը և ի վերջո՝ նրա հաղթանակը զավադիրների նկատմամբ: Կարգինալի, ժողովրդին ատելի այդ կերպարի, միջոցով Նալբանդյանը մի նոր ուժով մերկացրել է հոգևորականությանը: «Թալիսմաններ» վեպում նկարագրված են ազնվականության հոռի բարքերն ու անդրկուլիսյան կյանքի ալյանդակ կողմերը, պալատական զավադրությունները:

«Պրոպերցիա Ռոսսի»՝ սիրո, զեղեցկության, տաղանդի մի ջերմ ներբող է, որն ամբողջ խորությամբ ցույց է տալիս մարդու հոգու ազնվացումը՝ սիրո ներգործությամբ: Այսպի-սով, Նալբանդյանն իր կատարած թարգմանություններով ըն-թերցողներին դաստիարակում է հայրենասիրության, ընկե-րասիրության, արդարամտության ու անձնազոհության զա-ղափարներով:

«Հյուսիսսփայլ»-ի թարգմանությունների բաժնում հատ-կապես մեծ վաստակ ունի Ստ. Նազարյանը, որի գրչին են պատկանում ամսագրում տպագրված թարգմանությունների երեք քառորդից ավելին՝ «Շելյար և նորա դուստրը», «Օտարո-տի հարսնախոսություն», «Թուրանդոթ», «Փիլիպպոս 2-րդ»:

«Ռենե», «Աթալա», «Անկարծելի պատահմունք վերջին Իրն Սերրաջի» և այլն:

Նրա կատարած թարգմանություններից ուշադրության արժանի է իտալացի բանաստեղծ Փաստրի «Անասունները թագավոր են ընտրում յուրյանց վերա» դրամատիկական երկը, որի մեջ հեղինակն անխնայորեն քննադատում է միապետական կարգերը, միապետների վարքն ու բարքը, նրանց և ստորադրյալների փոխհարաբերությունները, վերջիններիս ստորաքարշությունը, և այլն:

Յրանսուա Պոնսարի «Լուկրեցիա» դրամատիկական ստեղծագործության մեջ պատկերվում են միապետական կարգերի և ժողովրդի միջև մղվող պայքարի դրվագները՝ հանուն ռեսպուբլիկական կարգերի հաստատման: Ուշադրով են նաև գերմանացի գրող Յրանց Հոֆմանի «Երկու եղբայր», «Ժամանակը արծաթ է», «Դաստիարակություն ձախորդությանը» և «Ինչ որ կսերմանես, այն ևս կհնձես» վեպերի թարգմանությունները՝ կատարված դարձյալ Նազարյանի կողմից: Այս վեպերի մեջ ջատագովվում է ազնիվ աշխատանքը, աշխատասիրությունը, ուսման սերը, անշահախնդրությունը և ընդհակառակը՝ նշավակվում է շահամոլությունը, ազահությունը, անազնվությունն ու խարդախությունը: Պետք է նշել նաև, որ ժամանակի ռեակցիոներների դեմ «Հյուսիսափայլ»-ի վարած պայքարին նպաստում էր Հոֆմանի «Երկու եղբայր» վեպը, որի մեջ ամենամռայլ դույններով է պատկերված իսպանական ինկվիզիցիայի ահավոր գործունեությունը:

Ստ. Նազարյանը միաժամանակ մեծ նշանակություն վերագրելով կրոնին, թարգմանում էր կրոնական ոգով ներթափանցված այնպիսի ստեղծագործություններ, ինչպիսիք էին Շատոբրիանի «Ռենե» և «Աթալա» վեպերը և նմանները:

Նազարյանի գրչին է պատկանում նաև Շիլլերի «Մեսինական հարսը» դրամատիկական երկի թարգմանությունը, մի երկ, որի հանդուցալուծումը կայանում է ճակատագրի հաղթանակի մեջ:

Խոսելով «Մեսինական հարսի» գաղափարական բովանդակության խոցելի կողմերի մասին, նա հետևյալ կերպ է հիմնավորում այդ գործը թարգմանելու շարժառիթները.

«Գործի ներքին նյութը լինելով գատարկ, Շիլլերի բոլոր կերպաձևական և կրակոտ զորությունը թափվել է մանրամասնութենների ճարտարապետարար մշակության վերա, և նորան, եթե անտես առնենք մյուս խնդիրը, որ, իսկական բովանդակությունը լինելով աննյութ և երկպառակ, բոլոր լրացուցիչ մասները ևս զորանով ստացել են մի երկդիմի զորություն, հաջողվել է զարգարել սորանց մի այնպիսի ճոխություն, որ խոսքի հանդիսավորության և փառահեղության, հյութալից երանգների, գեղեցիկ և ներդաշնակ տաղաչափության, թեատրոնական զգեստի և երևակայական պերճություն, ալլե մյուս բաների մասին, որ պատկանում են այն սարսափելի հարսանիքի արքայական տոնախմբությանը, ոչ մի գործը Շիլլերի կարող չէ համեմատվիլ սորա հետ»¹:

Այդ նույն սկզբունքով էր առաջնորդվում Նաղարյանը, Կալդերոնի «Հաստատամիտ արքայազն»-ի թարգմանությամբ, որը ևս արժեքավորվում է «բանաստեղծական ճարտարություն» համար:

Թարգմանությունների մեջ Նաղարյանն իրեն չի կաշկանդել, ստիկորեն չի հետևել բնագրին: Թարգմանելով Շիլլերի «Մեսինական հարսը», նա ասում է, թե ինքը ձգտել է «կենդանություն տալ լեզվին, ազատ դարձվածներով և վերաթռիչ ոճով, առանց կաշկանդելու խոսակցությունը չափի ու կշռի սահմանի մեջ»:

Ստ. Նաղարյանն իր բաղմաթիվ թարգմանություններով օգնել է հայ գրականության զարգացման և ժողովրդի լուսավորության գործին: Հայ ընթերցողներին նա ծանոթացրել է Շիլլերի, Կալդերոնի, Ալֆիերիի, Ֆրանց Հոֆմանի և ալլ հեղինակների ստեղծագործությունների հետ:

Վերջապես, թարգմանությունների միջոցով Ստեփանոս Նաղարյանն օգնել է աշխարհարար գրական հայերենի զարգացման գործին:

«Հյուսիսափայլ»-ում տպագրվել են Ռ. Պատկանյանի կատարած թարգմանությունները «Մ. Վալեիլյան» ստորագրությամբ, ինչպիսիք են «Նապոլեոն մեծի պատմությունը» և,

¹ «Հյուսիսափայլ», 1861, № 1, էջ 14—15:



Մանուկ Սադարյան



հատկապես, գերմանական դրող Հաուֆի ժամանակին մեծ ժողովրդականություն ձեռք բերած «Ուխտավորը» պատմվածաշարը: Վերջինս մեծ հետաքրքրություն է ներկայացնում որպես արկածախնդրական ժանրի առաջին արտահայտություններից մեկը հայ գրականության մեջ:

Ուստի գրականությունից «Հյուսիսստիպալ»-ում տպագրվել են բանաստեղծ Կարամզինի «Բշվառ Նդիսաբեթը», Հ. Բերբերյանի թարգմանությամբ, ինչպես և «Նոր Անտիգոնա» և «Պատահումն հանքային ջրերի եղերքում» վեպերը (առաջինը Հար. Համասփյուռի և երկրորդը՝ Հ. Մաղումյանի թարգմանությամբ):

«Սովրեմեննիկ»-ից թարգմանվել են Հայնեի և Բերանտեի բանաստեղծությունները, Նապոլեոն Բոնապարտի կենսագրությունը, Գարիբալդու կյանքին և գործունեությանը նվիրված մի հոդված, փոխադրվել է Ֆեոդորովի «Դաստիարակները» դրամատիկական ստեղծագործությունը:

«Հյուսիսստիպալ»-ի էջերում իրենց կատարած թարգմանություններով հանդես են եկել նաև Գ. Բարխուդարյանը («Կախարդած աղջիկը և գանձը»), Ստ. Ստեփանյանը («Հալ Մեհի Կանտիմիր»), Գ. Պախալյանը («Անթար», «Մունեջիմ բաշի», «Կարոլոս 11-րդի երազը») և ուրիշներ:

1864 թվականը «Հյուսիսստիպալ»-ի համար նշանավորվում է Լերմոնտովի «Դեր» պոեմի թարգմանության տպագրությամբ, որին խմբագիրը կցում է մի առաջաբան: «Շատ ուշատ ցավում ենք, — գրում է Նազարյանը, — որ մինչև այժմ «Հյուսիսստիպալ»-ի թերթերի մեջ ոչինչ ճառախոսությունք եղած չլինելով ուսաց թե բանաստեղծական և թե ուսումնական մատենադրության լերա, մեր ծանոթությունը Լերմոնտով բանաստեղծի մասին լինելու էր փոքր ինչ կցկտուր, որովհետև շուներ ներքին կապակցություն ուսաց լիտերատուրայի բովանդակ ընթացքի հետ: Այս և սորա նման պակասորդը հուսով ենք լցուցանել ժամանակով, որքան հնարավոր էր «Հյուսիսստիպալ»-ի կարողությանը»¹: Այնուհետև, ընթերցողներին ծանոթացնում է Մ. Լերմոնտովի կյանքի և գործունեու-

¹ «Հյուսիսստիպալ», 1863, № 12, էջ 51:

Թյան հետ՝ նրան անվանելով «Պուշկինի հավասարակշիռ հա-
ջորդ», կամ թե «մանավանդ իբրև նորա վաստակակից»։ Նա-
ղարչյանը Լերմոնտովին համեմատելով Բայրոնի հետ, առա-
ջինի «ազատազգաց» ոգին դերագասում է երկրորդի հուսա-
հատությունից։

«Լերմոնտովի բանաստեղծական պաշտոնը էր մի ազատ,
առանձնավոր, բարձրագույն հոգու պատերազմ ընդդեմ մի
անողորմելի ինքնակալության, որ կամեր մեծ ու փոքր հավա-
ւարել միմյանց, և անտարակույս, որ ազատազգաց Ռուսի
հուսահատությունը դեմ հանդիման ցարի բռնակալությանը,
էր ավելի արդարացի և հիմնավոր, քան թե անդլիական լորդի
հուսահատությունը դեմ հանդիման իր աշխարհի որսխու-
թյանը»¹։

Նաղարչյանն իր ծանոթագրությունը պսակում է Լերմոն-
տովի «Մարգարե» բանաստեղծության թարգմանությամբ։

Այն շերտությունը, որով տողորված է Լերմոնտովի կյան-
քին ու գործունեությանը նվիրված՝ Նաղարչյանի հոդվածը,
ինքնին խոսում է հայ նշանավոր հրատարակախոսի հայացք-
ների և գրական նախասիրությունների մեջ կատարված բեկ-
ման մասին։ Նաղարչյանն արդեն, հավանաբար, լրջորեն հե-
տևում էր ուսս գրականությանը և մտածում էր փոխել ամ-
սագրի թարգմանությունների բնույթը։ «Հյուսիսափայլ»-ին,
սակայն, վիճակված չէր ավելի երկար կյանք և այդ գեղեցիկ
սկիզբն իր զարգացումը չապրեց։

Բայց ինչ էլ որ լինի, «Հյուսիսափայլ»-ում ղեկեղված
բազմաթիվ թարգմանական գործերն այս կամ այն չափով
ծառայել են հայ ժողովրդի լուսավորության գործին, նրան
ծանոթացնելով ժամանակի եվրոպական և ուսս գրականու-
թյան աչքի ընկնող նմուշների հետ։



Իր հրատարակության վեց տարիների ընթացքում միշտ
չէ, որ «Հյուսիսափայլ»-ը դառնվել է միևնույն մակարդակի
վրա։ Ամսագրի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տա-

¹ «Հյուսիսափայլ», 1863, № 12, էջ 53։

լիս, որ այն ունեցել է և իր վայրէջքի ժամանակաշրջանը՝ հատկապես վերջին տարիներին: Եթե 1858—1860 թվականներին ամսագիրն աչքի էր ընկնում Նալբանդյանի մարտական հրապարակախոսությունը, համարձակ մերկացումներով, ապա 1861—1864 թվականներին ամսագիրը կորցնում է իր նախկին հմայքը, հրապարակախոսական կիրքն ու նպատակաւացությունը: Եւ այդ հասկանալի է: Այն բանից հետո, երբ Նաղարչանը ղրկւում է Նալբանդյանի աշխատակցությունից, ամսագիրը որոշակի նահանջ է ապրում դեպի բուրժուական լիբերալիզմը:

Դեռևս 1860 թվականի վերջին, երբ Մ. Նալբանդյանը գտնվում էր արտասահմանում և հնարավորություն չուներ հետեւելու ամսագրի ուղղությանն ու ոգուն, Նաղարչանը դրսևւորում է իր լիբերալ հայացքները: Այդ թվականին տպագրւած Կաջվարդյանի «Գործական փիլիսոփայություն» և անգլերենից թարգմանւած «Ամենապատվականը օրերի մեջ» հոգւածները խոսում են ամսագրի բացահայտ զաղափարական նահանջի մասին: Այդ շրջադարձն առանձնապես ցայտուն կերպով է դրսևորւում 1861 թվականից հետո:

Երկրորդ շրջանի «Հյուսիսափայլ»-ի զաղափարախոսական ուղղությունը բնութագրւում է Միք. Միանսարյանի «Մտածությունք հրապարակախոսության վերա» հոգւածով, ուր զարգացւում էր այն միտքը, թե ազատ հրապարակախոսության միջոցով կարելի կլինէր պայքարել հասարակաց խոցերի դեմ և ժողովրդի համար ստեղծել բարեկեցիկ վիճակ:

Ստ. Նաղարչանն այս շրջանում արտահայտում է ցարական կառավարության նկատմամբ ունեցած իր համակրանքը, և քննադատում է բոլոր նրանց, ովքեր դժգոհ էին «ազատախորհուրդ» և «բարեմիտ» թագավորից: Ցարական ռեֆորմի գաղափարով ոգևորւած, Նաղարչանը մերժում է ազգային-ազատագրական շարժման մասին եղած ամեն մի միտք: Ե. Մահալյանի «Մի քանի խոսք» հոգւածում հեղինակն այն միտքն է արծարծում, թե ոուսաց տիրապետության շնորհիւ բարոր կյանքի հնարավորություն ստացած հայերը ոչ մի կերպ չէին կարող այդ թագավորության մեջ ռևոլյուցիա կատարել և ռեսպուբլիկական կարգեր հաստատել:

«Երեկեան ասիացի ստրուկըր,— գրում է նա,— ասանց կրթության, առանց լուսավորության, առանց ինդուստրիայի, առանց գիտության և ճարտարության, մարդիկ, որ յուրյանց ստվերից վախենում էին, մարդիկ որ մտքով ըմբռնել անգամ կարող չեն մարդկային իրավունք ասած բանը և ամենայն բոլոր մի փոքր նյութական օգտի համար պատրաստ էին տասն անգամ ուրանալ յուրյանց մարդկային պատիվը,— դոքա՞ են կամենում ռեոլյուցիա առնել Ռուսաստանի մեջ և ազգության դրոշ բարձրացնել: Խելագարություն, խելագարություն, դարձյալ խելագարություն»¹:

Հետագայում, Նալբանդյանին գրած մի նամակում, Նազարյանը ևս որոշակիորեն իր բացասական վերաբերմունքն է հայտնում կողակացյան ժողովուրդների ազատագրական ձգտումների նկատմամբ:

«Եթե այդ տգետ և թույլ ազգերին թագավորություն ևս բաշխեիր,— գրում է Նազարյանը,— ինքյանք պիտի իսկույն հրաժարվեն դոցանից, կամ, եթե հիմարությամբ հանձն առնուին, ինքյանք պիտի միմյանց միս ուտեն, ինքյանք յուրյանց դազանական զենքով և անմիաբանությամբ կործանեին յուրյանց անձը»²:

Այն ժամանակ, երբ Մ. Նալբանդյանը Չերնիշևսկու և Դորրոլյուբովի հետ միասին հրձվում էր Գարիբալդու հաղթանակներով, գծում հայ ժողովրդի ազատագրության ուղիները, Նազարյանը մնում էր այն համոզմունքին, թե «ճանապարհից դուրս եկած» ամեն մի ժողովուրդ «կարոտ է մի տիրոջ սանձի ու սատի»: Նա ողջունում էր Վիկտոր Էմմանուելի հաղթանակը, և դրվատում էր ռուս ռեոլյուցիոն-դեմոկրատների կողմից բազմիցս անարգանքի սյունին դամած Պյեմոնտի միլիտար Կամիլլո Բենզո Կալուրի հակաժողովրդական դրածունեությունը»³:

1861 թվականից հետո «Հյուսիսսփայլ»-ի էջերից դուրս են մղվում օրվա հրատապ հարցերի հետ կապված հրապա-

¹ «Հյուսիսսփայլ», 1861, № 12, էջ 488:

² «Լուսմա», 1904, № 6, էջ 168—169:

³ «Կոմս Կամիլլոս Կալուր», «Հյուսիսսփայլ», 1861, № 6, էջ 503:

բակախոսական և պոլեմիկական հոգվածները և Նաղարչանը, ասեք, հոգնած հասարակական հարցերից ու պայքարից, նվիրվում է միայն հայ ազգի կրթության և դատարակության հարցերի փնտրվմանը:

Իր գործունեության այս երկրորդ էտապում ավելի զարգացնելով իր հայացքները հայ ժողովրդի միատարրության մասին, Նաղարչանը երազում է բոլոր խավերի համերաշխ գործունեությունը, «իբրև մի երկնավոր հոր որդիներին»:

1861 թվականից հետո հրաժարվելով իր ամսագրի մարտական ուղղությունից, Նաղարչանը նույնիսկ վարանում է իր նախկին հակառակորդներին կոչելու նրանց իսկական անուններով:

Ծանուցանելով «Հյուսիսափայլ»-ի դադարեցման լուրը, նա քրիստոնեական բարեպաշտությամբ խաղաղություն է մաղթում «յուր թշնամիներին, ոհ, յուր մոլորված սիրելիներին», որովհետև, ինչպես ինքն է հայտարարում, «թշնամիք չունի «Հյուսիսափայլ»-ի հրատարակողը»¹:

1864 թվականին կրկին իջնելով հրապարակախոսության ասպարեզը, Նաղարչանը հավասարապես ողջունում է բոլոր հայատառ հրատարակությունները, դրանց հետ համագործակցելու հաստատ դիտավորությամբ: «Հյուսիսափայլ»-ը, — գրում է նա, — խաղաղության շյուղը ձեռքին կամեր մոռենալ նոցա և համբուրել նորանց»: Այնուհետև, նույնացնելով բոլոր հայատառ պարբերականների նպատակը, որը հանգում էր միևնույն «հայկական սուրբ դրոշի տակ նիզակակից» լինելուն, Նաղարչանը բարեմաղթում է.

«Թող մեզանից հեռի մնա ամենայն անաղնիվ կիրք, ամենայն հակառակություն, նպատակը մի է, հայրենիքը մի. ով ինչ շափով և ինչ ճանապարհով կարող է, թող ծառայե նորան»²:

Այսպիսով, եթե «Հյուսիսափայլ»-ի հրատարակության առաջին տարիներին Նալբանդյանի հետ միասին Նաղարչանը պայքարում էր հայ կղերա-ֆեոդալական մամուլի դեմ, հա-

¹ «Ծանուցումն», «Հյուսիսափայլ», 1862, № 10, էջ 199:

² «Հյուսիսափայլ», 1863, № 12, էջ 6:

նուն հայ ժողովրդի վերածնություն, ապա այժմ, Նալբանդ-
յանի ձերբակալությունից հետո, նա հեշտությամբ ձեռք է
մեկնում պահպանողական մամուլին, զրսևորելով բուրժուա-
կան լիբերալիզմի անհետևողականությունն ու հաշտվողական
էությունը:

Եթե 1861 թվականին Նալբանդյանն իր «Երկու տող»-ում
գրում էր, թե պատրաստ է իր անձը զոհաբերել հասարակ
ժողովրդի իրավունքների պաշտպանության համար, ապա
Նաղարյանը նույն թվականին դիմելով հայերին, հայտարա-
րում է, թե պատրաստ է իր մահով սրբազործելու այն նվի-
թական գաղափարները, որոնց համար պայքարել է նա եր-
կար տաճիկներ (նվիրական գաղափարներ ասելով նա նկատի
առնել ժողովրդի լուսավորությունը, նրա վերանորոգությունը
ապետարանի ոգով):

1861—64 թվականներին հայ իրականության մեջ գործող
հետադիմական հոսանքի ներկայացուցիչների հետ հաշտ-
ված՝ Նաղարյանն արդեն իր ամսագրի էջերը տրամադրում է
մեծ մասամբ թարգմանական գրականությանը: Քննադատա-
կան հոդվածներ այլևս չեն տպագրվում. Նաղարյանի իսկ
խոստովանությամբ, այդ բաժնի սնանկացումը պայմանա-
վորված էր աշխատակիցների անձեռնհասությամբ:

Աղքատանում է և ամսագրի բնական գիտությունների բա-
ժինը: Բավական է հիշել, որ «Հյուսիսափայլ»-ում հրապա-
րակված բնագիտական հոդվածների երեք քառորդից ավելին
տպագրվել են միայն 1858—60 թվականներին: 1861 թվակա-
նին տպագրված Նաղարյանի «Տիեզերքի շինվածքը» դիպակ-
տիկական բնույթի հոդվածն ամբողջությամբ շղարշված է
կրոնական մտայնությամբ: Նախաջնելով մարդկանց դերը
բնության ճանաչման հարցում, Նաղարյանը գրում է. «Տկար
մահկանացուն երբեք կարող չէ աստուծո ամենակարողույթյան
ծայրին հասանել»:

Նա այս շրջանում ևս մեծ տեղ է հատկացնում նշանավոր
անձանց կենսագրություններին: Սակայն բնորոշ է այդ կեն-
սագրությունների («վարքագրություն») ընտրության սկզբ-
բունքը:

Եթե ամսագրի հրատարակության առաջին շրջանում նա

հրապարակում է գերազանցապես նշանավոր գիտնականների
կյանքն ու գործը (Գալիլեյ, Ջեմս Ուատ, Ջեմս Կուկ և ուրիշ-
ներ), ապա երկրորդ շրջանում նրա հետաքրքրության առար-
կան են դառնում հոգևոր և պետական գործիչները (Հովհան-
նես Հուա, Անդրեա Դոուլա Գենուացի, Վիկտորիա Թագուհու
ամուսին իշխան Ալբերտոսը և ուրիշներ)։ Այս բնագավառում
ևս Նազարյանի համակրանքները միանգամայն ներդաշնա-
կում են նրա քաղաքական համոզմունքներին։

Այս շրջանում տպագրված գեղարվեստական գործերը մեծ
մասամբ թարգմանություններ են, կատարված Շատոբրիանի
ռոմանտիկական գործերից («Ռենե», «Աթալա», «Անկարծելի
պատահմունք վերջին Իրն Սերրաջի»), Շիլլերի և այլ հեղի-
նակների միստիկական ստեղծագործություններից («Մեսի-
նական հարսը», «Զարմանալի մարգարեություն», «Մարգարե
կնոջ անեծքը» և այլն)։

Սակայն, որքան էլ «Հյուսիսափայլ»-ի հրատարակության
երկրորդ շրջանի նահանջն ակնառու լինի նրա առաջին շրջ-
անի համեմատությամբ, այնուամենայնիվ այն, ամբողջու-
թյամբ վերցրած, մնաց որպես 60-ական թվականների հայ
իրականության ամենաառաջադիմական օրգանը, որի էջերում
հիմնականում արծարծվել են ժամանակի հայ իրականու-
թյանը հուզող հարցերն ու խնդիրները։

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՆԱԼԻՔԱՆԻՅԱՆԸ ԵՎ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ»-Ը

Նախընթաց գլուխներում արդեն տեսանք, որ Նազարյանի հետ մեկտեղ Նալբանդյանը ոչ մի ջանք չի խնայել իրականացնելու հայ ժողովրդի համար խիստ անհրաժեշտ մի առաջավոր պարբերական հիմնադրելու ծրագիրը: Որ Նալբանդյանը գործուն մասնակցություն է ունեցել «Հյուսիսափայլ»-ի կազմակերպչական աշխատանքներին, այդ է հաստատում և այն փաստը, որ «Հյուսիսափայլ»-ի հրատարակության համար անհրաժեշտ տառեր ձեռք բերելու նպատակով Նալբանդյանը դեռևս 1857 թվականի ամռանը կատարել է իր առաջին արտասահմանյան ճանապարհորդությունը¹:

Ամսագրի հիմնադրությունից հետո նա գլխավին նվիրվում է «Հյուսիսափայլ»-ի հրատարակության գործին, իր ողջ ժամանակը տրամադրելով խմբագրական աշխատանքներին:

Այնուհետև «Հյուսիսափայլ»-ի էջերում մեկը մյուսի հետևից տպագրվում են նրա բանաստեղծությունները, արձակ էջերը, բազմաթիվ նամակներ, հոդվածներ ու թարգմանություններ, որոնք իրենց վրա են կենտրոնացնում ժամանակի ընթերցող հասարակության ուշադրությունը:

Մեծ էր Նալբանդյան-հրապարակախոսի հմայքը: Նա մեկն էր այն հազվագյուտ գործիչներից, որոնց գրավոր խոսքի մեջ

¹ Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք առաջին, էջ 149—153:

մի գեղեցիկ ներդաշնակութուն էին կազմում առաջավոր-
միտքն ու հրապարակախոսական խոսքի վարպետութունը:
Ահա թե ինչու նրա հոգվածները վարակում էին ընթերցողին
և նրան բարձրացնում մինչև ժամանակի ամենահրատապ
հարցերն ընկալելու և դրանք վերլուծելու մակարդակը:

Հանգես գալով որպես աշխատավոր ժողովրդի շահերի-
ջերմ պաշտպան, Նալբանդյանը հայտարարում է. «Մեք այս-
տեղ չենք ծառայում մեր ախտերին, ինչպես մի քանի գիշե-
րադեմ մարդիկ հայհոյեցին մեզ, այլ սպասավորում ենք ազ-
գի օգտին. գուցե մեղավոր ենք նորանով, որ մեր աչքի առաջե-
կն հայոց ազգի համար, սորանից հարյուր տարի հետո գա-
լոց օրերը»¹:

Իր ուրախութունն ու տխրութունը պայմանավորելով
միայն «հասարակ» ժողովրդի վիճակով, Նալբանդյանը ձեռ-
նոց է նետում «հարստահարող բռնակալներին»: Ամենամեծ
դժբախտութունն աշխարհում համարելով ստրկութունն ու
անազատութունը, նա «Հյուսիսամիայլ»-ի էջերում հայտարա-
րում է, թե «լավ է ազատության մեջ մեռնել, քան թե բան-
տում ապրել»:

Նալբանդյանն իր հիմնական խնդիրն է համարում ժողո-
վրդական լայն մասսաներին արթնացնել նրանց պաշարած
թմրութունից և կոչել դեպի կյանք ու գործունեություն, ծա-
ռայել ճշմարտության ու ազատության հաղթանակի գործին:
Նա կորած է համարում այն բոլորները, որոնք չեն ծառայել
ազգին և ճշմարտության իրավունքները պաշտպանելու
նպատակին:

Այսպիսով, Նալբանդյանը «Հյուսիսամիայլ»-ի ամբիոնն
օգտագործում է ծառայելու համար հայ ժողովրդի «ներկայի-
բարվոքման և ապագայի լավության» գործին, և այս տե-
սանկյունից էլ անհաշտ պայքար է ծավալում բոլոր նրանց
դեմ, ովքեր խանգարում են այդ ծրագրի իրականացմանը:

Նալբանդյանի պոլեմիկական ելույթները մեծ մասամբ
հրատարակվել են նրա «Հիշատակարան»-ում:

Գիտակցելով իր «Հիշատակարան»-ի դերն այս պայքա-

¹ «Հյուսիսամիայլ», 1859, № 11, էջ 909:

որում, Նալբանդյանն ըստ արժանվույն է ղնահատում այն.
«Այլ հիշատակարան,— գրում է նա,— դու, իմ առաջին և վեր-
ջին մխիթարություն, արդարամիտ և բարեգործ մարդերի սի-
րելի, իսկ հիվանդամիտների և շարագործների մահու շափ
ատելի... դու բովանդակում ես քո մեջ, ամեն մի հայ մար-
դու սրտի և հոգու մոտ բաներ, խնդիրներ, որ հարակցություն
և ազդեցություն ունենին մեր ազգի կյանքի վերա»¹:

Ժամանակին գործող դրաքննական խառնությունների պատ-
ճառով հնարավորություն չունենալով իրերն ու մարդկանց
կոչելու իրենց անուններով, Նալբանդյանն իր «Հիշատակա-
րան»-ում հաճախ ստիպված է եղել դիմելու այլաբանության
օգնությանը, մտադածին անուններ ընտրելու իր և իր հերոս-
ների համար, կամ օգտագործելու անոգրամների միջոցը: Այս
ամենը նկատի ունի նա, երբ մեջ է բերում ոմանց տասններն
իր մասին, «Սե շատ բաներ ունիմ առակի ձևերով, և թե իմ
բովանդակած բաների մասին նախընթաց տեղեկություն չու-
նեցողը, կը դժվարանա շատ անգամ հասկանալ բանի զո-
րությունը»: Եվ կամ, գրում է իր ներկարարի կարասի մասին,
որի մեջ ընկնող կենդանիները հասարակությանը երևում են
ներկված և դժվար ճանաչելի բրդով:

Հակադրվելով ժամանակի հետադիմական գործիչների
կեղծ հայրենասիրական քարոզներին, Նալբանդյանը շատ մեծ
նշանակություն է տալիս իրականության ճշմարտացի արտա-
ցումանը:

«Հայերի միջից շատ մարդիկ անպատճառ կամենում են,
որ թագավորն սուտը և թաքնությունը,— գրում է Մ. Նալ-
բանդյանը,— բայց ամենայն բանիմաց և ճշմարտասեր հայի
վերա պարտականություն կա պատժել և պատուհասել բերա-
նով և գրչով ազգի պակասությունքը, հրապարակել նորանց
այնքան, մինչև որ ազգը տեսանելով յուր վերայի կեղտը,
զգլի, գարշի և խնամ տանե լվանալու և մաքրելու յուր անձը,
որպեսզի արժանի լինի լուսափայլ դեմքով մասնակից լինել
եվրոպական մարդկության բարիքին»²:

¹ «Հյուսիսափայլ», 1859, № 8, էջ 647—648:

² Նույն տեղը, 1858, № 5, էջ 381:

Հետաքրքրական է նշել, որ դեռևս «Հյուսիսստիայլ»-ի հրատարակության առաջին տարիներին Մ. Նալբանդյանը հրապարակախոսությունն առջև դնում էր նույն խնդիրները, ինչ որևէ ուսումնական-գեմոկրատները:

Ալափուտինսկուն դրած իր հռչակավոր նամակում Գորբուլովը պահանջում էր «Սովրեմեննիկ»-ի համար գրելիք հոգվածներում իրականությունը պատկերել առանց գունազարդելու, այնպես, որ ուսումնականները հոգվածը կարդալուց հետո որոշակիորեն տեսնեն այն իրականությունը, որտեղ նրանք ապրում են, զղվեն նրանից և դարձանքով երեսները շրջելով միապետական կարգերից, բացականչեն՝ էհ, ավելի լավ է, թող կորչի իմ հողին, բայց ապրել ալս փոստում՝ չեմ ցանկանում ալլես¹:

Նալբանդյան-հրապարակախոսի համար հատկանշական է այն, որ նա հանձնիս ուսակցիոն գործիչների չէր տեսնում իր, կամ Նալբանդյանի անձնական թշնամիներին: «Մեղու Հայաստանի»-ն նա համարում էր Կովկասում կազմված ուսակցիոն գործիչների «ճախնային ու խավարասեր ընկերության» բերանն ու գործիքը, որը զուրկ էր կայուն սկզբունքից, «ուխտյալ» խորհրդից և նախապաշարից: Այնուհետև միայն, երբ թերթը բնութագրված է, Նալբանդյանը չի վարանում տալ և խրմբադրի բնորոշումը: Պոլեմիկայում չխնայելով հակառակորդի անունը, պաշտոնն ու տիպոսը, նա Մանդինյանին անվանում է «անկիրթ և բոլոր տեսակ նախապաշարմունքով լցված մարդ», որն ազգային դիմակի տակ տարածում է իր «անճոռնի լրագրի» համարները՝ առաջնորդվելով լոկ նյութական շարժառիթներով: Մանդինյանին ոչնչի հավասարեցնելով որպես լրագրողի, Նալբանդյանը ցույց է տալիս, որ այդ ասպարեզում նրան չի փրկի քահանայի կոչումը: «Աշխարհական լրագիր հրատարակելը քահանայագործություն չէ»,— հայտարարում է Նալբանդյանը, նշելով, թե որքան է հեռու Մանդինյանի թերթը ժողովրդի լուսավորությանը ծառայելուց:

Մ. Նալբանդյանը նույնպիսի անողորմությամբ քննադա-

¹ «Сборник материалов к изучению истории русской журналистики», выпуск 2, Москва, 1952, էջ 80—81:

առաջին է ենթարկում Մանդինյանի համախոհներին, և, առաջին հերթին, նրա աշխատակիցներ Մովսես Իսահակյանին և Հովսեփ Չերքեզյանին:

Մ. Նալբանդյանն իր գործունեության հյուսիսասիայական տարիներին քանիցս անդրադառնում է «Մասյաց աղափնու» խմբագիր և Բեսարաբիայի ու Նախիջևանի թեմի առաջնորդ Գարրիել Այվազովսկու հակաօղորդրական գործունեությանը:

Այվազովսկու՝ ազգի միասնության կոչին ի պատասխան, Նալբանդյանը բացականչում է. «Լույսը չէ կարող հաշտվիլ խավարի հետ, ճշմարտությունը ստույգան հետ. այդ վեճը և պատերազմը հարկավոր էր որ մի օր հառաջանային մեր ազգի մեջ, հարկավոր էր, որ լույսը և ճշմարտությունը ոտաբութիկ քշեին Հայաստանի ծխյալ ավերակներից խավարի և ստույգան շար դեք: Մեք բուն այդ վեճի մեջ տեսանում ենք լուսավորության և խիստ բարոյականության պիկդքը»¹:

Իր «Հիշատակարան»-ում նա կերտում է Այվազովսկի—Շամիլ գեղարվեստական կերպարը և ապա այդ կերպարն ամբողջացնում է «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» քաղաքական պամֆլետում: Այվազովսկին այստեղ պատկերված է որպես օրագրության ուստիկան և «Ստախոսից ստախոս» թերթի խմբագիր, ըստ որում, նրա սխոլաստիկական գրվածքները տպագրվում են «կամ հեղինակի անուն ժառանգելու, կամ մարդ էշացնելու և կամ արժաթ հավաքելու խորհրդով»²:

Մանդինյան քահանային շանջատելով նրա գրական ընկերակից Այվազովսկուց, Նալբանդյանն իր պոլեմիկական հոդվածներում հաճախ կենտրոնացնում է հարվածը՝ միաժամանակ ոչնչացնելով և՛ մեկին, և՛ մյուսին: Այս տեսակետից հիշատակության արժանի են նրա «Հիշատակարան»-ի է գլխի երկու ֆելիետոնները, որոնք, մեր կարծիքով, միմյանց շարունակություն են կազմում:

Առաջին ֆելիետոնի մասին, որի մեջ նա ծաղրում է Լինդման-Մանդինյանի և Այվազովսկու բարեկամությունը, մենք

¹ «Հյուսիսասիա», 1859, № 2, էջ 165:

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 1, էջ 199:

առիթ ունեցանք խոսեալու: Երկրորդ ֆելիետոնը, մեր կարծիքով, վերաբերում է Այվազովսկի—հրապարակաստին: Ահա այն.

«Այս երկու ամսումը պատահելով մի քանի վաճառահան-դեսներին մեջ, տեսա մի թափառական գաղանանոց, որի մուտքը արժեր կես մանեթ: Շուտով հատուցի և մտա, բայց ի՛նչպես դարմացա վերահասու լինելով նորա տիրոջ խաբեբայությանը, դորա գաղանանոցի կենդանիքը շինովի էին, որ շատ թե փոքր հայտնի երեւում են առաջին անգամ աչք ձգելու ժամանակ:

Սաստիկ խայտառակութեններից մինը այն էր, որ ցույց տվեց մի թռչուն Կազվարի անունով, բայց ի՛նչ կազվար, մի մեծ թռչունի վերա, որ ես որոշ չնկատեցի, որի մասին ոմանք արագիլ և ոմանք մսրահավ ասացին, դրել է թաղիքից (քեշալից) շինած վահանի նման բան, այլև շրջապատելով փետուրներով և ներկելով ոտքերը, հավատացնում է, թե մանուկ կազվար է: Ինչպես կարելի է, որ արագիլը կամ մսրահավը թեև ծածկված էին վահանի տակ, չհայտնեին յուրյանց ինչ լինելը: Կառավարությունը իմանալով այս խարդախությունը, դուրս վանեց վաճառահանդեսից: Լսած էի, թե Կեսարիայում էշ ներկում են, բայց արագիլից և մսրահավից կազվար շինել, ծածկելով մի կոպիտ վահանի տակ, ճշմարիտ լսած չէի»¹:

Նալբանդյանն այս ֆելիետոնի միջոցով ծաղրում է Գ. Այվազովսկու «Մասյաց աղալնի» ամսագիրը: Թափառական գաղանանոց անվանելով այն, Նալբանդյանը, հավանաբար, նկատի ուներ Այվազովսկու ստացած թուլտվությունը՝ հաջորդ տարվանից «Մասյաց աղալնի»-ն Փարիզից Թեոդոսիա փոխադրելու և այնտեղ հրատարակելու համար: Գաղանանոցի (մուտքի վճարը (կես մանեթ) հավասար է «Մասյաց աղալնու» բաժանորդագինին, որը Ռուսաստանում կազմում էր 24 ֆրանկ, կամ 6 ռուբլի: Շեշտելով այն հանգամանքը, թե գաղանանոցի կենդանիներն արհեստական էին, Նալբանդյանը ծաղրում է ամսագրի անունը: Այդ միտքը նա ավելի է ընդ-

¹ «Հյուսիսփայլ», 1858, № 10, էջ 351—352:

գծում, խոսելով հասարակ արագիլի, կամ մարահավի մասին, որը դադանանոցում շարվելով, ներկայացված էր իբրև մանուկ կազմար: Նկատի ունենալով Այվազովսկու նենգությունն ու նրա ամսագրի աղավնի անունը, Նալբանդյանը բացականչում է. «Ինչպես կարելի է, որ արագիլը, կամ մարահավը թեև ծածկված էին վահանի տակ, չհայտնեին յուրյանց ինչ լինելը»: Ի վերջո, մեզ թվում է անմիջական կապ պետք է տեսնել հիշյալ ֆելիետոնի և Կ. Նվյանի այն հոդվածների միջև, որոնք հրապարակվելով ուսական պարբերական մամուլի էջերում՝ գունազարդում էին Այվազովսկու գիտական և հրապարակախոսական գործունեությունը¹:

Մ. Նալբանդյանն այդ շրջանում անուշադրություն չի մատնում և հայր ու որդի Մսերյանների ռեակցիոն գործունեությունը: «Սատանայի պաշտոնական մեծ հանդես»-ում հակայական տիղ է նվիրված դրականության դիվանիտի գործունեության պատկերմանը, հանձին որի ներկայացված էր «վերին աստիճանի» պատմաբան Մսեր Մսերյանը. «Հասակի բարձրությունը հինգ ոտնաչափ, բավականին հաստ, երկայն ճանկերով, սև երեսով և ճաղատ ճակատով» այդ թիրթիված և ուսումնական դեր» մի անգամ ևս քննադատվում է այն բանի համար, որ «անխորհուրդ կամակորությունը» շարունակում է խոսել արդեն մեռած դրարար լեզվով:

Նալբանդյանը մերկացնում է այս հակառակորդի խավաբամոլությունը, նրա գործունեության բուն նպատակը, որ «ոչ ոք չհամարձակվի տպել մի խելացի, հասկանալի և իմաստուն գործ» և որ գրքերը և գիտությունը մնան որպես մի քանի ընտրյալների մենաշնորհը:

Նալբանդյանը մեծ տաղանդով պատկերել է Ներսես Աշտարակեցու (հնդկական ծայրագույն—բրամին), Հարություն Խալիբյանի (Խալիլ Նալիր), Սարգիս Զալալյանի (Գիրտան)

¹ Թվում է, չի կարելի պատահականություն համարել և այն դուգադիությունը, որ նկատվում է տվյալ ֆելիետոնի վերջին տողերի և «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» ստեղծագործության այն հատվածի միջև, որտեղ նշված է, թե Այվազովսկու գործերը տպվում են «կամ հեղինակի անուն ժառանգելու, կամ մարդ էջացնելու և կամ արժաթ հավաքելու խորհրդով (տե՛ս Մ. Նալբանդյան, Եժ, հ. 1, էջ 199):

երգիծական կերպարները, խարանել է Հովսեփ Զերքեղյանին,՝
ռեակցիոն պատմաբան խուղաբաշյանին և այլն: Դեռևս 1859
թվականի սկզբին հսկայական նշանակություն տալով ռեակ-
ցիոններին դեմ սկսած իր այդ պայքարին, Նալբանդյանը
Գր. Սալթիկյանին ուղղված նամակում գրում է. «Համար 2
Հիշատակարանն իհարկե կարդացիր, թող պ. Շամիրը յուր
խալիլ Նալբին մին հոգոց ասե»¹:

Մ. Նալբանդյանը «Հյուսիսամիայլ»-ում հայկական ռեակ-
ցիայի դեմ ունեցած իր ելույթներն ամբողջացնում է «Մխի-
թար Սերաստացի և Մխիթարյանք» ծավալուն հոդվածով, որը
նրա մարտական ելույթներից մեկն է:

Յուրաքանչյուր երևույթ դնահատելով միայն նրա քաղա-
քական բովանդակությամբ, Մխիթարյանների գործունեությու-
նը նա հիմնականում համարում է ռեակցիոն: Չէ՞ որ «պա-
պականությունը երբևք չէ եղել ազատության պաշտպան»,—
գրում է Նալբանդյանը: Գնահատելով Մխիթարյանների վաս-
տակը գրաբար լեզվի մշակման, հին գրավոր հիշատակարան-
ների, քերականությունների և բառարանների հրատարակու-
թյան բնագավառում, Նալբանդյանը ցույց է տալիս նրանց
լուսավորության սխոլաստիկ էությունը: Նա հատկապես
խիստ քննադատության է ենթարկում Մխիթարյանների հրա-
տարակած պատմությունները, որոնք գրված էին առանց
քննական մոտեցման և գիտական սկզբունքների:

Նալբանդյանի պոլեմիկական հոդվածները գաղափարա-
կան հագեցվածության հետ մեկտեղ աչքի են ընկնում անմի-
ջականությամբ, կուռ տրամաբանությամբ և սուր երգիծան-
քով: Ցանկանալով ցույց տալ «Մեղու Հայաստանի» թերթի և
մեղվականների անկարողությունը՝ որևէ առաջադիմական
գործ կատարելու, Նալբանդյանը գրում է, թե ազգն անար-
գողները նրանք չեն, որոնք հրապարակում են ազգի ցավերը,
այլ «այն սուռ ազգասերքը, որ խեղճ ողորմելի մեղվին չծել
են մի սալլի և ինքյանք լցվելով մեջը, հարկադրում են նորան
ավելի մեծ ասպարեղ կատարել աշխարհի երեսին, հայկական

¹ Մ. Նալբանդյան, նվժ, հ. 4, էջ 61:

լուսավորության մեջ, քան թե բնությունը կարողություն էր տվել «Մեղվին»¹:

Իր պոլեմիկական հոգվածներում Նալբանդյանը հաճախ է դիմում պատկերավոր խոսքի օգնությանը, որի միջոցով նրա մտքերն առավել նպատակասլաց էին դառնում: Այսպես, քրն-նադատելով «Մեղու Հայաստանի»-ի թղթակից Իսահակյանի մանկավարժական հայացքները, Նալբանդյանը գրում է. «Պեզապոզիան շատ կարծր բան է նորա գյուրափխրելի աստամների համար»²:

Խողաբաշյանի «Հայոց պատմության» թողած ողբալի տպավորությունը Նալբանդյանը հետևյալ կերպ է հաղորդում իր ընթերցողներին.

«Երբ սկսեցի կարդալ, արդեն հառաջարանը, ասես թե ապտակ իջեցուց երեսիս. հարկ չկա ասել, որ բոլոր գիրքը կարդալը հավասար էր կից ընդունելու»³:

Մի այլ տեղ խոսելով «Մեղու Հայաստանի» թերթում տպագրված անվայել հոգվածների մասին, նշում է, թե Գուտտենբերգի գյուտը պղծվում է:

Երբեմն Նալբանդյանի խոսքն իր դիպուկությամբ ստանում է լայն ընդհանրացման նշանակություն և մի դարձվածքով հնարավորություն է տալիս հայտնելու մի շատ ընդարձակ միտք: Այսպես, նա գրում է. «Մեղուն» ցած է ամենայն կրի-տիկայից». կամ՝ «մեր մեծատունների տտիպ համը առել են մեր ատամները». Խողաբաշյանի «Հայոց պատմության» մասին գրում է. «Նա այս օրից մոռանում եմ հավիտյան որպես գիրքը, նույնպես և նորա հեղինակը»: «Մեղու Հայաստանի»-ի թղթակից Իսահակյանի հոգվածների առթիվ գրում է. «Մի մարդ ձեր կերպով դաստիարակություն ստանալով կդառ-նա շատ անբարոյական մարդ»:

Նալբանդյանը չի վարանում հարկ եղած դեպքում անխնայորեն ծաղրելու իր հակառակորդներին. Մսերյան-քննադատին ծաղրելով այն բանի համար, որ ստեղծագործության

¹ «Հյուսիսայիայ», 1858, № 5, էջ 408:

² Նույն տեղը, № 10, էջ 345:

³ Նույն տեղը, 1860, № 6, էջ 470:

արժանիքների մասին խոսելու փոխարեն խոսում է լոկ գրքի տառասխալների մասին, գրում է. «Հավատում ենք, որ նորա ջանքը կը պսակվի, կատարելագործելով, եթե ոչ հայ հեղինակների աշխատությունքը, գոնե հայատիպ մամուլների գրաշարությունը»¹: Հայ ռեակցիոն մամուլի անանկությունը նախանդյանը ծաղրում է մի արտահայտություն: Շահբեգը որոշում է գնալ Կովկասյան լեռները՝ իր պարտապանից մի անհույս պարտք ստանալու մտադրությամբ. «Ճշմարիտն ասեմ,— խորհրդածում է նա, կշռադատելով վիճակը,— եթե հասնեի նպատակիս, так и быть, была ни была, ինչպես ասում է ռուսը, այդ կորած ու գոռանված արծաթի հաշվից պիտի բաժանորդ գրվեի «Մասյաց աղավնուն», «Մեղվին» և «Ճռաքաղին»²:

Այնուհետև, նախանդյանը մեծ հաջողությամբ օգտագործում է կրկնությունները, մի բան, որ հաղորդելիք միտքը ճշմարտապատում է դարձնում, ուժեղացնելով ձևական լրջության տակ աճող հեգնանքն ու զավեշտը: Այդ տեսակետից իր ծաղրի ուժով անկրկնելի է Իսահակյանին Շահբեգի որդու կնքահայրը դարձնելու շուրջը ծավալվող զրույցը:

Նախանդյանն իր պոլեմիկական հոգվածներում գործածում է հետաքրքրական համեմատություններ, դիպուկ կերպով հարվածելով հակառակորդին: Այսպես, Խուդաբաշյանի՝ գիրքն անվանում է «սլակաս և անկազմ ծնունդ», հեղինակի տարիքը՝ «երեկոյացյալ հասակ» և այլն:

Երբեմն Նախանդյանն ստեղծում է և սրամիտ բառախաղ. այսպես, քննադատելով Գրիգոր վարդապետ Կապարճի Կարապետյանի «Ընծա» գիրքը, նա գրում է. «Շնորհակալ ենք պատվելի ծերունուց, որ պատվասիրեց մեզ ընծաներով, բայց ճշմարտության հարգը չենք կարող ուրանալ, մեզ ոչինչ ընծաներով չէ կարելի կաշառել»³:

Մի այլ տեղ քննադատելով մոսկովաբնակ վաճառական խալաթյանին, Նախանդյանը գրում է. «Այսօրյան օրագրու-

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 6, էջ 484:

² Նույն տեղը, 1859, № 2, էջ 151:

³ Նույն տեղը, № 9, էջ 736:

թյունս հարուստ է այն խոսակցությունները, որ պատահեցավ իմ
և պ. Խ... մեջ, որ ընդդեմ ամենայն քաղաքավարության,
եկեղ էր իմ մոտ գիշերադղեստով (խալաթով) ¹:

Նալբանդյանը պոլեմիկայում հակառակորդին հաղթում էր
և նրա իսկ ղենքով: Այսպես, հետաքրքրական է հետևյալ
փաստը: 1860 թվականին «Մեղու Հայաստանի» թերթի սեպ-
տեմբերի 3-ի 36-րդ համարում տպագրվում է Կոխլովի «Ազ-
նավ և աղվես» առակը՝ ոմն Սարգիս Տեր Միքայելյան Վար-
շապյանցի թարգմանությամբ (ի Բզովնա) ²: Այդ նույն թվա-
կանին «Հյուսիսափայլ»-ի 11-րդ համարում տպագրվում է
Նալբանդյանի նամակը խմբագրին՝ դարձյալ Սարգիս Տեր
Միքայելյան Վարշապյանց ստորագրությամբ (նամակ Բաք-
վից): Նամակը, որ ուղղված էր «Ճռաքաղի» դեմ և տեղիք է
տալիս լուրջ հարձակումների, անկասկած իր ստորագրու-
թյամբ մոլորության մեջ էր գցում հետադիմական օրգան-
ների պարագլուխներին:

Նալբանդյանի հեղվածների մեջ շատ հարգի է և անո-
գրամների օգտագործումը (Սարգիս—Գիրսաս, Լինդման—
Մանդինյան), Խալիբյան—Խալիլ Նայիր և այլն):

Նալբանդյանն իբրև պոլեմիկական ղենք օգտվել է ուս
ռևոլյուցիոն-դեմոկրատների պայքարի միջոցներից: Հայտնի
է, որ անցյալ դարի 40—50-ական թվականներին ուս իրա-
կանության մեջ «Չինաստան» տերմինը՝ չինական մեծ պատի
կապակցությամբ հավասարազոր էր գիտական մտքից ան-
ջրպետվելու գաղափարին: Ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատները
և պրոգրեսիվ հրապարակախոսները բաղմիցս դիմում են այդ

¹ Մ. Մսերյանը կաթողիկոսին ուղղած իր նամակներից մեկում (տե՛ս
հավելված № 2) բողոքելով Նաղարյանի և Նալբանդյանի գործողու-
թյուններից, զայրույթով ընդգծում է, որ Նալբանդյանը պարսավում է հա-
երեկի անձանց: Ի թիվս հանրածանոթ անձանց, նա հիշում է և Խալաթյան
ազգանունը: Նալբանդյանի կողմից խալաթ բառի հիշատակությունը, այլև
պարոն Խ.-ի հետ ունեցած զրույցի բովանդակությունը ոչ մի կասկած չեն
թողնում, որ «Հիշատակարանի» առաջին գլուխն ուղղված է եղել մինչ
ալժմ ստվերի մեջ մնացած վաճառական Խալաթյանի դեմ:

² Բզզովնա կոչվում է Բաքվից 37 կիլոմետր տարածության վրա
գտնվող քաղաքատիպ ավաններից մեկը:

տերմինի օգնությանը, քննադատելու համար ցարական բռնապետական կարգերը և ռեակցիոն հրապարակախոսներին: Մ. Նալբանդյանը Մխիթարյանների գործունեությանն անվանում է մի «հոգեւոր Չինաստան, ուր ոչ ոք և ոչինչ օտարական չէր կարող ներս մտնել»: Այնուհետև, Նալբանդյանը հաճախ է օգտագործում դորրոյությունյան «խավարի թագավորություն» և մի-երկու այլ տերմիններ:

Որ Մ. Նալբանդյանը լրջորեն հետևում էր ռուս ռեուլյուցիոն-դեմոկրատների գործունեությանը և Գերցենի ու Օգարյովի ազատ տալարանի հրատարակություններին, այդ ցույց է տալիս նաև հետևյալ փոքրիկ, բայց ըստ էության ուշագրավ փաստը: 1861 թվականին գրած իր «Երկու տող» պամֆլետում սպանիչ ծաղրով պատասխանելով արևմտահայ ռեակցիոններ Չամուռճյանի հայհոյանքներին, Նալբանդյանը գրում է. «Ինչ որ մեզ է վերաբերվում, այդ հայհոյությունների ընդդեմ ուրիշ բան չունինք ասելու, բացի այն խոսքերից, որ հռչակավոր Ֆոքսը գրեց մի անգլիական լորդի, որ գրել էր նորան հայհոյությամբ լցված մի նամակ. «Sir, ձեր նամակը, այսինչ թվականից, ստացա: Այդ նամակը առաջևս է այժմ, բառորդ ժամից հետո կլինի քամակումս, որի մասին շնորհունիմ տեղեկություն տալ Ձեզ. անձնանվեր Չ. Ֆոքս»:

Պոլեմիկական այս սուր պրիոմը Նալբանդյանի կողմից բառացիորեն վերցված է Գերցենի «Կոլոկոլ»-ից: Ա. Ի. Գերցենն իր դեմ լույս տեսած ոմն գրչակ Ելագինի հայհոյանքներով լցված «Իսկանդեր-Գերցեն» գրքին ի պատասխան, «Կոլոկոլ»-ի 1859 թվականի № 57—58-ում գրում է.

„Что, в самом деле, сказать на сквернословие каких-нибудь синодальных писарей и семинарских ритор старого порядка, кроме того что отвечал знаменитый Фокс одному лорду, написавшему к нему письмо, исполненное брани и дерзости: “Sir, письмо Ваше от такого-то числа я получил. Оно теперь *передо мной*, через четверть часа оно будет *за мной*, о чем честь имею Вас уведомить. Преданный Вам Ч. Фокс“¹.

¹ «Колокол», 1859, № 57—58, էջ 482:

Նալբանդյանի պոլեմիկական հոգվածների ուսումնասիրությունը ակնառու է դարձնում այն կապը, որ առկա է նաև նրա և Չերնիշևսկու պոլեմիկական հոգվածների միջև:

Մտքի պարզությունը, սկզբունքների հստակությունն ու շիտակությունը, անողորմությունը՝ ռեակցիոն մտքի արտահայտության դեմ, միացնում են Չերնիշևսկուն և Նալբանդյանին: Գիտակցելով իրենց մտավոր գերազանցությունը, նրանք անխնայորեն ծաղրում են սնապարծ ու ժամանակավրեպ գիտնականներին և նրանց մոծած կեղծիքը գիտության մեջ:

Նալբանդյանի համախոհները օգտվելով նրա հրապարակախոսական փորձից ընդօրինակում էին պոլեմիկայի միջոցները և ուժեղացնում «Հյուսիսսփայլ»-ի թևը: Հետաքրքրական է, սակայն, որ նրա հակառակորդները ևս դիմել են պայքարի այդ նույն մեթոդներին: Այսպես, Մսերյանները սկսած 1859 թվականից «Ճռաքաղ»-ում բացում են «Հայկազնյան տարեգիր» նոր բաժինը, որտեղ տպագրվում են կուլտուրական կյանքի նորությունները: Այդ բաժնի 6-րդ համարում Զ. Մսերյանը Նալբանդյանի ոճով խոսելով «Հյուսիսսփայլ»-ի ուղղության դեմ, մեջ է բերում Սուխոմ-Գալեում բնակվող իր բարեկամ Քերովբե Աստվածատրյան Ասլանբեգի նամակը, ուղղակի ակնարկով հիշեցնելով Նալբանդյան—Սերովբե եռյակի ճանապարհորդության Շահբեգին, որը բնակվում էր Րեդուտ-Կալեում: Այս երևույթն, ինքնին խոսում է այն հսկայական ազդեցության մասին, որ ժամանակին ունեւր Մ. Նալբանդյանի հրապարակախոսական գործունեությունը հայ իրականության մեջ:

60-ական թվականներին հայ հետադիմական մաճուլի դեմ վարած իր սկզբունքային պայքարում Մ. Նալբանդյանը կոփվում է, առավել հասունանում: Դեպի արտասահման կատարած իր վերջին ճանապարհորդության ժամանակ բախվելով և արևմտահայ ռեակցիոններներին, նա Փարիզում հրապարակում է հայ իրականության մեջ ազատ տպագրական խոսքի լավագույն արտահայտությունը հանդիսացող «Երկու տող» պամֆլետը, որտեղ արդեն Նալբանդյանի հյուսիսսփայլյան շրջանի լուսավորական-դեմոկրատական աշխարհայացքը վերաճել էր և հասել ռևոլյուցիոն-դեմոկրատականի: Մ. Նալբանդյանի գաղափարական այդ էվոլյուցիայի գործում

ռուս ուսուցիչին-դեմոկրատական աշխարհայացքի հետ միասին քիչ դեր է կատարել և նրա հրապարակախոսական գործունեությունը «Հյուսիսսփայլ» և «Մեղու» ամսագրերի էջերում:

Նալբանդյանի և Նաղարյանի փոխհարաբերությունների հարցը շատ է զբաղեցրել մեր գրականագետներին, որոնք սովորաբար Նալբանդյանին անվերապահորեն հակադրել են Նաղարյանին՝ 1860 թվականը համարելով նրանց վերջնական խզման տարի: Այսպես, այդ կապակցությամբ քնկ. Ն. Մուրադյանը գրում է.

«Այստեղ էլ կատարվում էր նույնը, ինչ նույն տարիներում կատարվեց «Սովրեմեննիկ»-ի հետ: Նաղարյանը «Հյուսիսսփայլ»-ի Տուրգենևն էր, Նալբանդյանը՝ Չերնիշևսկին: Հայտնի է, որ լիբերալների և դեմոկրատների տարածացնությունները ռուսական ժողովրդում վերջացան դեմոկրատների փայլուն հաղթանակով: Տուրգենևը հեռացավ «Սովրեմեննիկ»-ից և ամսագիրը մնաց Նեկրասովին, Չերնիշևսկուն և Դոբրոլյուբովին: Դեմոկրատ Նալբանդյանի և լիբերալ Նաղարյանի պայքարը խմբագրության ներսում վերջացավ նրանով, որ հեռացավ Նալբանդյանը, բայց հենց դրանից հետո էլ, քստ էության դադարեց «Հյուսիսսփայլ»-ը¹:

Մեր կարծիքով ճշմարտությունից հեռու է նման համեմատությունը:

Ռուսական ուսուցիչին-դեմոկրատական օրգան «Սովրեմեննիկ»-ի խմբագրության կազմում տեղի ունեցած խոր հակասություններն իսկապես հանգեցրին լիակատար խզման՝ ամսագրի ուսուցիչին-դեմոկրատական և լիբերալ թևերի միջև: Նեկրասովը, գիտակցելով Չերնիշևսկու ուղղության խոչընդոտումը, պատմական նշանակությունը, հնարավոր գտավ, առանց փոփոխանքի, հարաբերությունները խզել ո՛չ միայն Դոբրոլյուբինից, Գրիգորովից, այլև իր վաղեմի բարեկամ լիբերալ Տուրգենևից և «Սովրեմեննիկ»-ն ամբողջովին տրամադրեց Չերնիշևսկուն և Դոբրոլյուբովին: Տուրգենևն այդ խզումից հետո սկսեց աշխատակցել «Սովրեմեննիկ»-ին խորթ ուղղու-

¹ «Գրական թերթ», 1938, № 35:

թյան պատկանող լիբերալ և պահպանողական ամսագրերին: Այդ նույնը, սակայն, տեղի չի ունենում «Հյուսիսափայլ»-ի խմբագրական կազմում:

Նալբանդյանը բախվում է Ստ. Նազարյանի հետ, հեռանում խմբագրական աշխատանքներից, սակայն երբեք նա իր կապերը չի խզում «Հյուսիսափայլ»-ից: Եթե Նալբանդյանն ունենար իր սեփական օրգանը, որի միջոցով իր մտքերն առանց արտաքին և «ներքին» գրաքննություն աղճատման հասնեին ժողովրդին, ապա անվարան կերպով այդպիսի օրգանը կդնարդասեր «Հյուսիսափայլ»-ից: Սակայն հայ իրականության մեջ դոյուքյուն ունեցող հրատարակչություններից «Հյուսիսափայլ»-ը միակ առաջադիմական ամսագիրն էր, որի էջերում նա կարող էր տպագրել իր հոդվածները:

Հասկանալի է, որ Նալբանդյանը չէր ցանկանա զրկվել այդ եզակի ամբիոնից, որը նա համարում էր «մեր թախմի օրգանը», ընդհուպ մինչև «Հյուսիսափայլ»-ի դադարելը:

Այդ է ապացուցում Միքայել Նալբանդյանի հրապարակախոսական գործունեության պատմությունը «Հյուսիսափայլ»-ում և հետագա տարիներին:

1858 թվականի մարտին Նալբանդյանի գրած մի նամակից երևում է, որ Նազարյանի հետ միասին նրանք վաղուց մտադրված են եղել հիմնել մի «հայկական օրագիր, աշխարհաբար լեզվով հասարակին հասկանալի»¹: Եթե ուշադրություն դարձնելու լինենք այն արտահայտությունը վրա, թե «երկար ժամանակ այս խորհուրդը մնացել էր մեր սրտումը բոլորովին անգործ», որովհետև «ղանաղան հանգամանք տրգելք էին լինում այս անգամիրական գործին», ապա պարզ կդառնա, որ Նալբանդյանը ևս անմիջական մասնակցություն է ունեցել 1854 թվականին Նազարյանի կողմից մտադրված «Ռուսիա» ամսագրի հրատարակչության նախապատրաստման աշխատանքներին: Հավանաբար Նիկողայ առաջինի մահը ակնարկելով, նա գրում է, որ «արդեւադիթ հանգամանքները» փոխվել են և հետևապես իրենք հույս ունեն իրագործելու այդ ծրագիրը:

¹ Մ. Նալբանդյան, ԵԺԺ, հ. 4, էջ 38:

Մ. Նալբանդյանը «Հյուսիսափայլ»-ի հրատարակության գաղափարն անբաժանելի համարելով հայ ռեակցիոներների դեմ մղվելիք պայքարի գաղափարից, իր անձնական նամակներով բարեկամներին՝ հորդորում էր տարածել «Հյուսիսափայլ»-ը, որպեսզի «այդ գործը գլուխ գալով, վենետիկացի աղբաթը խառնվի»¹:

Թե ինչպիսի եռանդով ու ոգևորությամբ էր Նալբանդյանն աշխատում «Հյուսիսափայլ»-ի համար, վկայում են նրա հետեյալ տողերը. «Ձեզ հայտնի կլինի, թե ինչ անձնագոհությամբ գիշեր ցերեկ կուրծք կոտրելով և աչք խավարեցնելով աշխատում ենք գրելով ու սրբագրելով, տպելով ու շարչարվելով»²:

Խմբագրական և հրատարակատեսական աշխատանքներին զուգընթաց Մ. Նալբանդյանը ձգտում էր ամսագրում արժարժված հասարակական նշանակություն ունեցող խնդիրներին վրա հրավիրել ընթերցողների ուշադրությունը: Բարեկամներին ուղղած նամակներում նա բացատրում էր ամսագրում տպագրված աշխարհական հոդվածների և «Հիշատակարան»-ի նյութերի իմաստը և խնդրում էր, որ նրանք էլ, իրենց հերթին բացատրեն «չհասկացողներին»:

«Հյուսիսափայլ»-ը դառնում է Նալբանդյանի մտահոգության առարկան: Նրբ. Գ. Ալվազովսկին իր դանոսների միջոցով կառավարության ուշադրությունը հրավիրում է Նաղարյանի ամսագրի վրա և խորհուրդ տալիս այն փակել, Նալբանդյանը հավանաբար Նաղարյանի համաձայնությամբ, ծրագրում է «Հյուսիսափայլ»-ը արտասահման փոխադրել:

Ոգևորված Գեոգենի «Կոլոկոլ»-ի հաջողությունից և ռուս հասարակության վրա նրա ունեցած մեծ ազդեցությունից, Նալբանդյանը երազում էր արտասահմանում հայերեն ազատ մամուլ ստեղծելու մասին: 1859 թվականի ապրիլին նա փառիզից գրում է.

«Ես հույս ունիմ, որ դուք բոլոր մեր ճշմարտասեր և ազնվամիտ հայրենակիցք և բարեկամք ինձ օգնական և ձեռն-

¹ Մ. Նալբանդյան, ՆԺՓ, հ. 4, էջ 45:

² Նույն տեղը, էջ 49:

տու կլինեք, եթե Մոսկվա փակվի «Հյուսիսսփայլ»-ը, նորից ուրիշ տեղ... վերանորոգելու և բոլոր մեր գլխից և ձեր գլխից, այլև ազգի և եկեղեցու գլխից անցածները ճշմարտությամբ հրատարակելու համար»¹:

Հայտնի է, որ այդ նպատակով նա Փարիզում բանակցություններ է վարում Ճանիկ Արամյանի հետ, որի տպարանում էր տպագրվում և Ստ. Ոսկանի «Արևմուտք»-ը:

1859 թվականին Մ. Նալբանդյանը գծավում է Նազարյանի հետ և վճռում թողնել «Հյուսիսսփայլ»-ը: Սալթիկյանին ուղղած իր նամակում նա գրում է.

«Հյուսիսսփայլ»-ից ձեռք վեր առի, ըստ որում մի ժանգոտ կոպեկ չեմ ստանում: Ի՞նչ հարկավորություն ունիմ էշխ նահատակ լինելու: Այդ ի՞նչ խելագարություն է, որ ես ուրիշից պարտք առնեմ ասլրեմ, «Հյուսիսսփայլ»-ի վերա տիվ և գիշեր աշխատեմ, բայց «Հյուսիսսփայլ»-ից մի կոպեկ չըստանամ, այդ ո՞ր գրքի մեջ գրված է: Եվ ո՞ր մարդը, որ շուներ բնակություն, կերակուր և զգեստ, կարող է գործ կատարել և այն ձրի: Մինչև այժմ ես զոհ եղա, թող աստված ընդունե այդ զոհը, բայց տեսանում եմ, որ այսուհետև անկարելի է: Քեզ քաջ հայտնի է, որ ես բարոյապես թուլացած չեմ, կարող եմ շատ աշխատել, բայց աշխատելու համար հարկավոր են պայմանք, որ ես չունիմ և որի մասին չկամիմ ոչ ոքի բերան բանալ և բան խնդրել»²:

Այս գծտություն հիմքում միայն նյութական հարցերը չէին, այլև կային զաղափարական տարածանություններ, որոնց մասին Նալբանդյանը որոշ նկատառումներով լռում է:

Բանն այն էր, որ Նազարյանը գործադրելով խմբագրի իրավունքը, հաճախ «խմբագրում էր» Նալբանդյանի հոդվածները, առաջացնելով նրա անբավականությունը: Այսպես, Ե. Շահազիզը գրում է, թե ժամանակակիցների վկայությամբ նրանց վեճերը մեծ մասամբ տեղի էին ունենում տպագրվելիք հոդվածների նյութի և լեզվի կապակցությամբ: Նազարյանը «փոխանակ քերականական ձևերի և ոճերի, շատ անգամ

¹ Մ. Նալբանդյան, ԵժԺ, հ. 4, էջ 62:

² Նույն տեղը, էջ 64:

ձեռնամուխ էր լինում և ամբողջ պարբերություններին, որով հաճախ հոգւածագրները էական միտքն ու իմաստն էր փոխվում, խանգարվում: Նալբանդյանը, գոնե, յուր հոգւածները վերաբերությամբ միշտ ընդդիմանում էր, ասելով՝ «Ստեփան Իսայիչ, թույլ տվեք, խնդրեմ, որ իմ մտքերը տպագրվեն այնպես, ինչպես որ նոքա ինքնաբերաբար բխում են»¹: Չնայած Շահազիզը շեշտը դնում է գլխավորապես լեզվական խմբագրումների վրա, բայց, հավանաբար, Նազարյանը դրանով չի բավականացել:

Նալբանդյանի հոգւածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք հաճախ «խմբագրվել են» երկրորդ ձեռքի կողմից:

Այսպես, մեր կարծիքով, Նազարյանի գրչին է պատկանում Նալբանդյանի «Հիշատակարանների» «Ե» գլխի հետևյալ հատվածը.

«Զկա մարդկության պատմության մեջ ժամանակ, որ ճշմարտության պաշտոնյայքը հանդիպած չլինեին բազմադիմի տհաճութենների և անախորժութենների. այս հիման վերա, չէ պիտո ամենեին զարմանալ, որ միևնույն բանը կրկնվում է և այսօր, բայց այն մարդը, որ անվանում էր յուրյան քրիստոնյա, պարտական է հետևել Քրիստոսի ճշմարտությանը, և նա է մարդը, որ արհամարհելով ամենայն ունայնություն, կտրիճի պես կանցանե այն նեղ և փշոտ ճանապարհից, դիմելու համար դեպի ճշմարտության կենդանաբար աղբյուրը—Հիսուսի Քրիստոսի գոգը»²:

Վերը բերված հատվածի ուշադիր քննությունը բացահայտում է և ոճական զգալի տարբերություններ. Նազարյանի տարտամ, կրոնա-բարոյագիտական խրատին նախորդում, և ապա հաջորդում են Նալբանդյանի պատկերավոր, կենդանի և, ասեք, մարտակոչի հրավիրող տողերը:

Ամենայն հավանականությամբ, վախենալով Նալբանդյանի կողմից ճշմարտության գաղափարին տված լուրջ նշանակությունից, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր Նա-

¹ Ե. Շահազիզ, Միքայիլ Ղազարյան Նալբանդյանց, էջ 88:

² «Հյուսիսփայլ», 1858, № 8, էջ 160—161:

խիշկանի անցուդարձին, Նաղարչանը ցանկացել է մեղմել Նալբանդյանի հոգվածի հարցադրման սրությունը: Այդ բանի հետևանքով էլ գործողության ծրագիր հանդիսացող Նալբանդյանի ճշմարտության գաղափարը, որն ընթերցողներին կոչ էր անում հակադրվել իշխող շարիքի դեմ, Նաղարչանի խմբագրությամբ դարձել է հալեցական և կյանքից կտրված մի գաղափար:

Սակայն, եթե հնարավորություն կա պարզելու Ձ-րդ ձևերի առկայությունը Նալբանդյանի հոգվածներում, ապա արխիվի բացակայությունն անկարելի է դարձնում պարզելու Նալբանդյանի հոգվածների այն հատվածների վիճակը, որոնք դեռևս ընթերցողին չհասած հավանաբար ընկել են խմբագրի մկրատի տակ և ընդմիշտ անհետացել: Նաղարչանը դրսևորելով իր լիբերալ սահմանափակությունները, անկասկած, փորձել է Նալբանդյանին հեռացնել այն «լատանգավոր» ուղղությունից, որը «ոչ մի վերաբերություն» չուներ դեպի հայոց ազգը:

Այս կարգի «խմբագրությունները» նկատի ուներ Նալբանդյանը, երբ «Հիշատակարանում» հաճախ գրում էր, թե իր հորեղբայրն իր գլխին «ցենզորի նման մի բան է»:

Չնայած Նաղարչանի հետ ունեցած գաղափարական տարաձայնություններին, Նալբանդյանը 1860 թվականից հետո էլ շարունակում է աշխատակցել «Հյուսիսսփայլ»-ին:

1860 թվականի աշնանը Նալբանդյանն ուղևորվում է արտասահման: 1861 թ. «Հյուսիսսփայլ»-ում տղադրվում են նրա՝ «Հռոմեական նամակ» հոգվածը և «Բառալացի աղջկա երգ» բանաստեղծությունը:

Նույն թվականին Անանիա Սուլթանշահին գրած իր նամակում Նալբանդյանը խնդրում է թարգմանություններ կատարել «Հյուսիսսփայլ»-ի համար: «Նաղարչանցը կարբագրի այն չնչին թերությունքը, որ պիտի լինին քո գրվածքում», — գրում է Նալբանդյանը, մի անգամ ևս հաստատելով այն փաստը, որ հաշվի էր նստում Նաղարչան-խմբագրի հեղինակության հետ:

Ինչպես վերը նշվեց, հենց այս նամակում է նա «Հյուսիսսփայլ»-ը հայտարարում «մեր թախրմի օրգանը»:

Ահա թե ինչո՞ւ, Նալբանդյանը խոր վշտով է ընդունում «Հյուսիսափայլ»-ի դադարեցման լուրը. «Շատ ցավում եմ, որ մեր «Հյուսիսափայլ»-ը արդեն գոյություն չունի և ասպարեզը մնացել է գրական գաճաճներին», — գրում է նա բանտից եղբորը¹:

Երբ 1864 թվականին «Հյուսիսափայլ»-ն սկսում է նորից հրատարակվել, Նալբանդյանը բերդի պարետին ուղղված մի դիմումով թույլտվություն է խնդրում նրան աշխատակցելու թարգմանություններով և գրական-գիտական հոդվածներով²։ Չնայած ստացված ձեական թույլտվության, Նալբանդյանի հոդվածներից ոչ մեկը հետագայում չի հասնում «Հյուսիսափայլ»-ի խմբագրություն։ Հայտնի է, որ այդ ամսագրի համար գրված «Սոս և Վարդիթերի կրիտիկան» երկար տառնամյակներ մնում է 3-րդ բաժանմունքի արխիվում³։

Հայտնի չէ ինչ ճանապարհով Ստ. Նալբանդյանը այդ ժամանակ բանտից ստանում է Նալբանդյանի «Աղգային թշվառություն» հոդվածը, որը և իր ստորագրությամբ տպագրում է «Հյուսիսափայլ»-ի 1864 թվականի երկրորդ համարում։ Նույն թվականի մարտի համարում տպագրվում է Նալբանդյանի «Ուղերձ առ Մեղուխեչյան ի Կոստանդնուպոլիս»⁴ բանաստեղծությունը՝ «Փառախոտ Յուլիկյանց» ստորագրությամբ։ Ի՞նչ հոդվածում, և՛ բանաստեղծության մեջ Նալբանդյանը արձագանքում է արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցող

¹ Մ. Նալբանդյան, ԵԺԺ, հ. 4, էջ 151։

² Նալբանդյանի դիմումի կապակցությամբ Պետրոպոլիսյան բերդի պարետ Սորոկինը ռապորտ է ներկայացնում 3-րդ բաժանմունքի գլխավոր պետ Դոլգորուկովին, նրանից կարգադրություն խնդրելով՝ Վերջինիս ձեռքով ռապորտի վրա մակագրված է. «Թույլտվություն ստանալու համար՝ ներկայացնել սույն գրությունը բարձրագույնս հաստատված գլխավոր քննիչ հանձնաժողովին»։ ապա ավելացված է. «Ինպե՞ս են վարվում Չերնիշևսկու գրվածքների հետ»։ Այնուհետև արձանագրված է. «Հանձնաժողովն ավարտել է նրա գործը. հանձնված է Սենատի գատաստանին» (տե՛ս Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, էջ 636)։

³ Այդ աշխատության վերաբերյալ 3-րդ բաժանմունքը կարգադրել է. «Պետք է թողնել այս հոդվածը 3-րդ բաժանմունքի գործերի մեջ, մինչև Նալբանդյանի դատական գործի ավարտը» (նույն տեղը, էջ 638)։

⁴ Հարություն Սվաճյանի կեղծանունը։

իրադարձություններին, վեր հանում գալառի աշխատավոր ժողովրդի իսկական վիճակը, նրա տառապանքները և բողոքը «նեքքին հալածողների և հարստահարողների ընդդեմ»: Սվաճյանին Նալբանդյանը մեծարում է հայ ժողովրդի թշվառությունները ճշմարտացիորեն պատկերելու, որբերի հացը խլողների դեմ բողոքելու, «նեղվածի աչքերից» արտասուքը սրբելու համար¹:

Դժբախտաբար, Նալբանդյանի հողվածներն այլևս չեն երևում «Հյուսիսափայլ»-ում, սակայն Պետրոսավլովյան ամբողջում գրած իր նամակներում և հողվածներում, յուրաքանչյուր պատեհ առիթով, նա իր համակրանքի խոսքն է ասում և՛ «Հյուսիսափայլ»-ի, և՛ Նաղարչյանի մասին: «Երկու խոսք» հողվածում² Նալբանդյանն իր պաշտպանության տակ առնելով «Հյուսիսափայլ»-ը, հերքում է այդ ամսագրի լեզվի, ոճի, նյութերի ընտրության մասին տարածված թշնամական կարծիքները:

«Ասվում է լսվելու համար» հողվածում Նալբանդյանը խոսելով աշխարհաբար լեզվի զարգացման ուղիների մասին և գիտականորեն ապացուցելով իր դրույթները, իր պաշտպանության տակ է առնում Ստ. Նաղարչյանին մի շարք հարձակումներից: Հայոց նոր լեզվի զարգացման ասպարեզում նա բարձր գնահատելով Նաղարչյանի վաստակը, եզրափակում է.

«Աղբը երբեք չի կարող ուրանա գերապատիվ Նաղարչյանցի աշխատությունը և անխարդախ դեպի ինքը սերը. նա

¹ «Ազգային թշվառություն» հողվածի տպագրությունը «Հյուսիսափայլ»-ի էջերում լուրջ անհանգստություն է առաջացնում արևմտահայ ռեակցիոն մամուլում: «Արշալույս Արարատյան» թերթում տպագրվում է մի հողված՝ ուղղված «Հյուսիսափայլ»-ի դեմ: «Ազգային թշվառության» «Տեղիմակ» Ստ. Նաղարչյանի դատողությունները Պալազարչյանի կողմից ստանում են «սխալ և ազգավնաս» որակումը, «վասնզի Թուրքաստանի ազգային գործոցը վրայը փորձառություն և ճիշտ տեղեկություններ չունենալով, սեղձ հրմակ, լույսը՝ խավար, իրավը՝ սուտ և բարին՝ չար նկարագրած է... կերևի թե դադարյալ «Մեղու» լրագրին ներշնչությամբ գրված է»: Պալազարչյանն «Ազգային թշվառություն» հողվածը տպագրում է իր թերթում՝ ընթերցողների ուշադրությունը հրավիրելով դրա վրա (տե՛ս «Արշալույս Արարատյան», 1865, №№ 767—769):

² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 395—403:

աւելիլ և պարզ մտքով կտեսնեն այս շնաշխարհիկ և իմաստուն հեղինակի քնքուշ սիրտը»¹։

Ինչ վերաբերում է «Մեղու Հայաստանի»-ում Զ. Մսերյանի տպագրած այն թղթակցությանը, թե Կոմս էմմանուելն ալլես չի աշխատակցելու «Հյուսիսափայլ»-ին², ապա Նալբանդյանը, արդեն 1860 թվականին, հայտարարում է. «Մենք միշտ «Հյուսիսափայլ»-ի հետ ենք եղել և կըմնանք. «Հյուսիսափայլ»-ի դավանությունը է՝ և մեր սրտի խոստովանությունը։ Եվ եթե պատահի մեզ, ով գիտե, ճանապարհորդությանը, կամ ալլ զանազան մեղանից չկախված պատճառներով ավելի երկար լուռ մնալ, այնուամենայնիվ անբաժան ենք «Հյուսիսափայլ»-ից, և «Հիշատակարանը» պիտի երևի նորա մեջ»³։

Ստեփանոս Նազարյանն իր հերթին միշտ բարձր է գնահատել Նալբանդյանին և հաշվի նստել նրա հետ։ Նալբանդյանին դատապարտելով ռեպուցիոն գործունեությանը դբազվելու համար, չի խղել իր հարաբերությունները, նույնիսկ այցելել է նրան Պետրոպոլիսյան ամրոցում։ Նազարյանի նամակը, որտեղ նա պատմում է Նալբանդյանի հանդիպումից աստացած իր տպավորությունները, ուշագրավ է երկու առումով։ Այդ նամակից նախ երևում է, որ Նազարյանը ժամանակին զգալով Նալբանդյանի ռեպուցիոն շրջանների հետ կապված լինելու հանգամանքը՝ նախատեսել էր նրան սպառնացող վտանգը. և ապա այն, որ նույնիսկ այդ պայմաններում, երբ Նալբանդյանը Պետրոպոլիսյան ամրոցում պահվում էր որպես քաղաքական հանցավոր, Նազարյանը շարունակում է նրան համարել իր բարեկամը⁴։ Մենք ավելորդ չենք համարում այդ նամակից մեջ բերել մեկ հատված. «Միքայելի ճակատագիրը, որ ողորմելին ինքն յուր համար պատրաստեց յուր

¹ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 2, էջ 411։

² «Մեղու Հայաստանի», 1860, № 12, էջ 93։

³ «Հյուսիսափայլ», 1860, № 6, էջ 484։

⁴ Նազարյանի հետ ունեցած տեսակցությունը մեծ ուրախություն է պատճառում և Նալբանդյանին. «Ասացեք Անանիային, որ ես մեծ բավականությամբ տեսնվեցի մեր հարգելի «հավետ ազնիվ» բարեկամ պարոն Նազարյանցի հետ,— գրում է նա իր եղբորը (տե՛ս Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 4, էջ 209)։

երիտասարդական չափից դուրս համարձակությամբ, ցամաքացրել է արդեն ցավով ու վշտով իմ սիրտը:

...Ինչ ասեմ, սրբազան հայր, դուք և ես մարդարեանում էինք նորա վտանգավոր և տարապայման բնավորությունը, և այդ իսկ տվեց նորան դերի և որս յուր թշնամիների և վերջապես օրենքի ձեռք, ուստի ազատվիլ այնքան հեշտ չէ:

...Անցյալ տարին ես Պետերբուրգում լինելով, երես առ երես հանդիպեցանք միմյանց. քաղցր տեսություն արդարև. բայց ի՛նչ օգուտ նորան, և ի՛նչ մխիթարություն ինձ: Նա չկարողացա տալ նորան բաժին իմ ազատությունից, բացի մի քանի չոր ու ցամաք բարեկամական և ցավակցական խոսքից. հարյուրալինյա պահապանը ներկա էր, խոսվածքն ես ուռեերեն: Ո՛հ, անտանելի ցավ, անբժշկելի վերք, մեր հայկական ցավերը մեզ բավական չէին, և այսպիսի ցավեր ավելացրեց մեր վրա մեր անխոհեմ սիրելին, դեռ ինչ զարկելով յուր անձը և մեզ խոնարհեցնելով մեր թշնամիների առջև»¹:

Այսպես ուրեմն, Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանը «Հյուսիսափայլ»-ի հրատարակության գործն սկսելով համատեղ ջանքերով, գործունեության ընթացքում ունենում են գաղափարական բախումներ: Նրանց միմյանց հետ կապում էր հայ ժողովրդի առաջընթացին ծառայելու և հայ իրականության մեջ գոյություն ունեցող ուսակցիոն գաղափարախոսությունը ջախջախելու խնդիրը:

Չնայած գաղափարական տարակարծություններին, նրանք գնահատել են միմյանց, և հաշվի առնելով հայ ժողովրդի մտավոր վերածնության շահը, «Հյուսիսափայլ»-ի էջերից պայքարել են ընդհանուր հակառակորդների դեմ:

¹ «Հորիզոն», 1916, № 72:

ԳԼՈՒԽ ՇԻՆԳԵՐՈՐԴ

ՆԱԶԱՐՅԱՆԸ ԽՄԲԱԳԻՐ

Ստեփանոս Նազարյանի հրապարակախոսական գործունեությունը մեր գրականության պատմության մեջ չի ստացել իր արժանի գնահատականը: Այս կամ այն առիթով խոսելով նրա խմբագրական գործունեության մասին, մեր բանասերները անդրադարձել են նրա հայացքներին, կամ նրա ամսագրում արժարժված հարցերին, մոռացության տալով այնպիսի մի կարևորագույն գործ, ինչպիսին է խմբագրի ծանր ու դժվարին աշխատանքը: Այնինչ, հայտնի է, որ հասարակական մտքի պատմության տարբեր էտապներում իսկական խմբագիրները հոսանքներ են ղեկավարել, գլխավորել են ժողովրդի առաջընթացը և հետևողականորեն մաքառել հետադիմական մտքի ամեն մի արտահայտության դեմ:

Իբրև այդպիսի մի խմբագիր, Ստ. Նազարյանն իր վաստակով ուրույն և պատվավոր տեղ է գրավում մեր հրապարակախոսության պատմության մեջ:

Նրա նվիրվածությունը, հաստատակամությունն ու աշխատասիրությունը, անաչառությունը՝ պատիվ կարող էին բերել ամեն մի խմբագրի:

Իրեն նպատակ գնելով ծառայել ժողովրդի լուսավորության և դաստիարակության գործին, Նազարյանը օգտագործում է դաստիարակին հարմար ուսուցողական ոճ, որը մատչելի է դարձնում նրա հաղորդած նյութը: Նա կարողանում է լեզու գտնել հասարակ ժողովրդի համար, «սրտից ղեպի սիրտ»: Ստ. Նազարյանն իր հրապարակախոսական գործունեության ընթացքում առաջնորդվել է ազգի լուսավորության

գործին ծառայելու նպատակով, իր հայրենակիցների ուշադրութլունն ևս ուղղելով այդ նպատակին: Ամեն մի նոր տարու նախօրյակին նա հաշվի է նստում իր ընթերցողների հետ, իմանալու, թե որքանով է արդյունավետ եղել անցած տարվա գործունեութլունը, ի՞նչ ազդասիրական գործ է կատարվել, ո՞ր մոլորութլունն է վերացվել և ի վերջո ազգի բարոյական և մտավոր դրութլունը որքանով է բարվոքվել:

Նաղարչանի ամսագիրը ծառայում էր այդ նպատակներին: Նրա և Նալբանդյանի ջանքերի շնորհիւ ամսագիրն իր հրատարակութլան տարիներին զգալի չափով կապվում է ժողովրդի հետ և արձագանքում նրա պահանջներին: Իր ամսագրում տալագրվող նյութերի նկատմամբ նա պասսիվ վերաբերմունք չունեւր, և թեկուզ տողատակի ծանոթութլան կարգով անպայմանորեն իր վերաբերմունքն է ցուցաբերում դրանց նկատմամբ:

Նաղարչան-խմբագիրը ձգտում էր հասնել այն բանին, որ հայերը ծանոթանան ոչ միայն իրենց անցյալի հետ, «այլև ներկայի մեծ խորհուրդներին» և իբրեւ քաղաքացի հասկանան ժամանակի պահանջները և ճանաչեն «այն մարդկութլունը և ժամանակը, որին անգամ ու կցորդ» են իրենք: Նաղարչանն առաջնորդվում էր այն գիտակցութլամբ, թե իր ամսագիրը ճշանդես է դալիս իբրեւ բերան ազգային հասարակութլան Ռուսաստանի մեջ»:

«Հյուսիսատիայլ»-ի նպատակը նա համարում էր աշխարհաշինութլան և առաջադեմ ժամանակների ոգով հայկական կյանքի բարենորոգութլունը:

Ահա թե ինչու, նա լուրջ ընտրութլուն էր կատարում ամսագրում տալագրվելիք նյութերի միջև: Անգամ այնպիսի մի գրական տեսակ, ինչպիսին էին մահագրերը, նա ծառայցնում էր դաստիարակչական նպատակների: Պատմելով այս կամ այն նշանավոր անհատի գործունեութլունը, խմբագիրն իր ընթերցողներին կոչ էր անում հետեւել նրա օրինակին: Երիտամարդ բժիշկ Գեորգ Գեղամյանի շիրիմի առաջ նրա արտասանած դամբանական ճառը հայ երիտասարդութլանն ուղղված մի կրակոտ կոչ է:

«Ձեր հետ է իմ խոսքը, հայազնյա պատանիք,— ասում է



Մտեփանոս Նազարյանի գերեզմանը Մոսկվայում

նա, — ոչինչ բանով կարող չեք դուք ավելի արժանապես մեծարել ձեր եղբոր հիշատակը, եթե ոչ աշխատելով ամեն մի՛նը ձեզանից ձեր ուսումնական ստպարեղի մեջ խմսատությամբ գործ դնել ձեր կյանքի պատվական օրերը, և պատաստել ձեր անձը, պիտանի մարդիկ լինելու ձեր ազգի մեջ, որ մեծ ակնկալությունք ունի ձեզանից. որ ամենայն օր աղոթում է ձեր վերա, որ դուք աճելով ու զորանալով մտավորապես և բարոյապես, պարծանք լինեիք հայկական անվանը Ռուսաստանի մեջ: Դուք սարտական եք մի օր լինել ձեր ազգի շինողքը և բարձրացնողքը — ձեր վերա է ազգի հույսը: ...Գրեցե՛ք այդ բառերը հրեղեն տառերով ձեր սրտի մեջ»¹:

Ստեփանոս Նազարյանն աչքի է ընկնում անաշուությամբ և անկողմնակալությամբ: Իր հրապարակախոսական գործունեության ընթացքում նա առաջնորդվում է գիտության խոսքով և այդ գիրքերից էլ հերքում հակառակորդների դրույթները: Սուր բանավեճի ժամանակ էլ նա պահպանելով չափի զգացումը, երբեք չէր հեռանում սկզբունքային գիրքերից, հանդես էր բերում առողջ արամարանություն, կտրուկ և հատու ոճ, որը երբեմն զուգակցվում է երգիծանքի երանգով:

Ստեփանոս Նազարյանը սրպես խմբագիր մեծ նշանակություն էր տալիս տպագրվելիք նյութերի ճշմարտացիությանը: Յուրաքանչյուր նոր լուր նախ ստուգում էր անձնապես և ապա միայն հրապարակում: Այսպես, լսելով Ներսիսյան զուրոյցի հոգաբարձության կողմից ավագ դասարանի աշակերտներին ծեծելու լուրը, Ստ. Նազարյանն այդ փաստը ճշտելու նպատակով դիմում է իր Թիֆլիսի բարեկամներին, խնդրելով, սուույգ և ճշմարիտ տեղեկություններ ուղարկել ղեկքի մասին: Նրա հարցմանը մի նամակով պատասխանում է Գարեգին Մուրադյանը՝ Գարեգին Ստեփաննոսյան Փարսազանյանց ստորագրությամբ:

«Հյուսիսափայլ»-ի խմբագրի՝ գավառների հետ ունեցած կապի մասին է վկայում այն փաստը, որ գրաքննության կողմից արգելված վերոհիշյալ նամակը Նազարյանը իր հոգվածի հետ միասին վերադարձնում է իր Թիֆլիսի բարեկամներին:

¹ «Հյուսիսափայլ», 1858, № 2, էջ 155:

որպեսզի գոնե ձեռագիր վիճակում նրանք այդ նյութերը «բարոյապես գործ դնեն»՝ «Կարդալով բարեմիտ բարեկամների հասարակության մեջ, և խմանալով իմ կարծիքը ևս այն անցքի մասին»¹։ Այսպիսով, Նազարյանն իր անձնական նամակներով ևս փորձում էր ուղղություն տալ հասարակական կյանքի կարևոր երևույթներին։ Ուշագրավ են նրա թղթակցի նամակի հետևյալ տողերը. «Ստիպված եմ, — գրում է Փարսադանյանը, — «Հյուսիսափայլ»-ի լույսի տակ մերկացնել խավարապաշտների խարդախությունը. բացի ձեզանից չունինք մենք հասարակաց բերան և մասնավորներին ցավակից»²։

Որպես խմբագիր՝ Նազարյանն աչքի է ընկել և մի շարք այլ առանձնահատկություններով, որոնցից է և խմբագրական էտիկայի պահպանումը։ Խոսելով նրա այդ հատկության մասին, Մսեր Մսերյանն իր նամակներից մեկում գրում է. «Այն այն այնչափ զգույշ է ի պահել զիւր գաղտնիս, զի զտպելի թերթսն անգամ զձեռագրին շտայ ի ձեռս հայ գրաշարի, զի մի ընթերցցի և պատմեսցե այլոց»³։

Ստ. Նազարյանի խմբագրական գործունեության բնորոշ կողմերից մեկը նրա կապն է ընթերցող հասարակության հետ։ 1860 թվականի խմբագրական ծանուցման մեջ Նազարյանը նախորդ տարիների օրինակով, հայ երիտասարդությանը կոչ է անում մոտ կանգնել իր ամսագրին և գործակցել նրան։ Նազարյանն իր ամսագրի հետ կապելով ծայրամասերի թղթակիցներին, նրանց հետ քննարկում էր ազգային լուսավորության հարցերը։ Այս տեսակետից կարևորություն է ներկայացնում «Հայ ոմն» ստորագրությունը կրող մի նամակը.

«Արի տես մեծ ուսուցիչ, — գրում է նամակագիրը, — քանի սիրով կարդում են քաղաքիս երիտասարդները ձեր «Հյուսիսափայլ»-ը. որքան սիրեցին, պատվեցին դորան, զարմացան և վառվեցան ի սեր հայրենյաց, մինչև քահանայք անգամ սկսեցին այստեղ ու այնտեղ հետաքրքրությամբ կարդալ և

¹ Տե՛ս Հավելված № 3։

² Նույն տեղը։

³ ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Պատկանյանների արխիվ, Բղթ. 141,

դատել: Քարոզի՛ր դու մեզ: Ճշմարտությունդ մեզ վախեցնում է, բայց կամաց-կամաց սովորում ենք դորան, զմայլվում ենք և աստուծուն փառք ենք տալիս, որ այսպիսի դասատու ուղարկեց մեզ. 18 տետրակ ամսագիրդ քանի՛ քանի՛ նոր մտքեր բերեց հանձնեց մեզ և սրտերումս թաղեց ...ո՛վ կարող է ասել»¹:

Մեր գրականության մեջ վաղուց ի վեր իշխել է այն կարծիքը, թե «Հյուսիսսփայլ» ամսագիրը հեռու է եղել ժողովրդի կյանքը պատկերելուց, չի ճանաչել այն, իսկ Նազարյանը եղել է սոսկ կարփնետային գործիչ:

Ամսագրի նամակների բաժինը գալիս է մասամբ հերքելու այդ կարծիքը, որը դժբախտաբար հարատևել է մինչև մեր օրերը:

«Հյուսիսսփայլ»-ը իր էջերում լայն տեղ է հատկացնում նամակներին: Իրենք, Նազարյանն ու Նալբանդյանն էլ իրենց ստեղծագործության մի զգալի մասը գրում էին նամակների ժանրով, կամ մտացածին անուններով նամակներ զետեղում ամսագրում: Դրանով նրանք քաջալերում և ուսուցանում էին թղթակիցներին՝ հետևելու իրենց օրինակին:

Նամակներում քննարկվում և պարզաբանվում էին ժամանակին կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցեր: Այդ բաժինը հնարավորություն էր տալիս «Հյուսիսսփայլ»-ի թղթակիցներին ազատ կերպով բանակոծիլ վարելու հետադիմական թերթերի դեմ:

Հոգևորականությունն առանձնապես քննադատվում է «Հյուսիսսփայլ»-ի նամակների բաժնում: Չնայած Նազարյանը հեռու էր եկեղեցու և հոգևորականության դերի ժխտման մտքից, այնուամենայնիվ «Հյուսիսսփայլ»-ի էջերում նա լուրջ պայքար է ծավալում հայ հոգևորականության նյութապաշտության, անգրագիտության և հակաժողովրդական էության դեմ: Այդ բանում նրան օգնում էին թղթակիցները, զանազան դավառներից արձագանքելով «Հյուսիսսփայլ»-ին: Ուշագրավ է ոմն Կամսար Խաչատրյանի նամակը, որի հեղինակը սուր քննադատության է ենթարկում հոգևորականու-

¹ «Հյուսիսսփայլ», 1859, № 7, էջ 578:

Յայն հոռի բարքերը: Հոգևորականությունը, ինչպես վկայում է խաչատրյանը, ժողովրդին նորանոր աղետներ է պատճառում իր «անխոհեմությունը, տմարդությունը, անհոգությունը և մանավանդ յուր վատաբարոյությունը»: Նամակագիրը հոգևորականությանն է վերագրում հայերի անմիաբանությունը, հայ երիտասարդների մայրենի խոսքին և կուլտուրային օտարանալը, հայ օրիորդների ստացած օտար դաստիարակությունը, եկեղեցու հարդից ընկնելը և այլն: Ի վերջո, հոգվածագիրը համարձակորեն հանգում է հոգևոր դասի ժխտմանը, նշելով, որ եթե կարողանար, ապա իսկույն, առանց մի րոպե հապաղելու, կշորացներ, որպես անապատի խոտ, այդ անբնական, եղբայրատյաց դավալը՝ Եվհոգակորան¹: (Հավանաբար գրաքննական արգելակները հաշվի առնելով, նամակի հեղինակը դիմում է «Հյուսիսսփայլ»-ի աշխատակիցների կողմից կիրառվող անոգրամների օգնությանը, հոգևորականներին կոչելով «եվհոգակորան», իսկ աշխարհականներին՝ «կարախանշահ»):

Այս բողոքն արձագանք է գտնում «Հյուսիսսփայլ»-ի աշխատակիցներ Սմբատ Շահազիզի և Բաֆֆու ստեղծագործության մեջ, ընդ որում՝ Բաֆֆու «Աղթամարա վանքը» հոգվածը զետեղվում է ամսագրի նամակների բաժնում²: Բաֆֆին համարձակորեն քննադատում է հայ ազգի այդ դարավոր խոցը և նազարյանն ամենայն պատրաստակամությամբ հրապարակ է տալիս երիտասարդ Բաֆֆու մտրակող հոգվածին:

Բաֆֆու հոգվածում ամենախիստ կերպով քննադատված են վանքն ու վանականները, որոնք ոչ մի օգուտ չեն տալիս ժողովրդի լուսավորության գործին. «Վանքը և վանականքը և բոլոր կրոնական կարգերը սահմանված են մարդուս համար և պիտո է ծառայեն մարդկության օգտին: Իսկ երբ որ նոքա անպիտանացան և համեմատ չեն ազգի և ժամանակի պիտույքին, ապա պետք է ի բաց մերժվին»³:

Ստ. Նազարյանը իր թղթակիցների հետ համերաշխելով,

¹ «Հյուսիսսփայլ», 1860, № 1, էջ 77:

² Նույն տեղը, № 11, էջ 398—424:

³ Նույն տեղը, էջ 402:

նշում է, որ իսկապես «հայոց վանքերը դարձել են միայն խավարի օթևանք, և վանականքը որբացել են ամենայն ուսումնասիրությունից»:

Գ. Ստեփաննոսյան Փարսաղանյանցի (Գ. Մուրադյան) նամակից երևում է, որ նա պատրաստվում էր «Հյուսիսափայլ»-ն մի հոգված ուղարկել, նվիրված Թիֆլիսի հոգևորականության բարձրի նկարագրությանը: Նամակագիրը խոսելով Վրաստանի առաջնորդի կաշառակերության մասին, գրում է.

«Այս հոգևորների ուտել-խմելը այգիների մեջ կոծանիս, Թելեթ, Ծիրանավոր, Շահնարաթ և Խաչի վանքումը, շուտով կգրեմ ձեզ լիովին, որ պետք է Թիֆլիսի պարծանքի համար»:

Այս հոգվածը, սակայն, չի տպագրվում «Հյուսիսափայլ»-ում: Ավելին, ինչպես արդեն ասացինք, Փարսաղանյանի առաջին նամակը ևս հետ է ուղարկվում ձեռագիր վիճակում:

1860 թ. էջմիածնի Սինոդի միջամտության հետևանքով զրաքննական կոմիտեն «Հյուսիսափայլ»-ին գրկում է հոգևորականության մասին քննադատական հոգված տպագրելու հնարավորությունից, ուստի այդ կարգի հոգվածներն սկսում են սակավ երևալ ամսագրում:

Հայ հոգևորականության տղիտության և ընչաքաղցության ամենասուր քննադատությունը «Հյուսիսափայլ»-ի էջերում արված է Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» վեպում, որի տպագրությունը նույնպես կիսատ է մնում «հեղինակից անկախ պատճառներով»: Ստ. Նազարյանն անձամբ հոգևորականության մասին ունեցած իր բացասական կարծիքները բազմիցս հայտնել էր «Տեր Սարգիս» վեպի հեղինակին, ինչպես պատմում է վերջինս իր հիշողություններում:

«Հյուսիսափայլ»-ի թղթակիցներից մեկը խմբագրի ուշադրությունը հրավիրում է հատկապես «ամենայն հեռավոր տեղերի» ժողովրդական մասսաների դրության վրա, քանզի «անդ չկա նշույլ լուսավորության. ամենուրեք դանդաղ ի վերա պաշտոնից եկեղեցվո և նոցա չարագործության»¹:

¹ «Հյուսիսափայլ», 1859, № 8, էջ 579:

Նամակագիրը խմբագրին խորհուրդ է տալիս առավել արուժխամբ քննադատել հոգևորականների այլանդակ բարքերը: Նա գրում է. «Քահանայք անբարոյական լինելով, չեն գնում, չեն լսում աղքատների ձայնը և չկա հրամայող, չկա և չէ հասանում նորանց աղաղակի ձայնը, և եթե հասանում է, բրամիրնապետը փող է պահանջում»¹:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ «Հյուսիսսփայլ»-ի աշխատակիցներից ոմանք ծանոթ էին Նալբանդյանի «Սատանայի պաշտոնական մեծ հանդեսը» պամֆլետին:

Ստեփանոս Նաղարչյանը վկայում է, որ «Հյուսիսսփայլ»-ն այսօրինակ թղթակցություններ շատ էր ստանում: Սակայն, նա այդ նամակները միշտ չէր կարող հրապարակել՝ հասկանալի պատճառներով: Խոսելով իր ստացած նամակների մասին, նա գրում է.

«Առհասարակ ոչ միևնր դոցանից չկարողացանք տպել «Հյուսիսսփայլ» մեջ ոչ թե անհավան գտանվելով նոցա, այլ որովհետև շատերի մեջ բանախոսությունը ցուցանում էր ամենևին մերկանդամ ճշմարտություն, այլև վերաբերվում էր այնպիսի բարոյական ցավերի և ամոթալից հանգամանքների ազդի մեջ, որ անպատշաճ էր դորանց հրատարակել գրով, մանավանդ որ դոքա մի բարեկարգ տերության ցենզուրայի մեջ քննության անկ ընկնիլ ևս կարող չէին»²:

Չնայած Նաղարչյանի «Հյուսիսսփայլ»-ը բազմակողմանիորեն չի լուսաբանել հայ իրականության հուզող բոլոր հարցերը, բայց խմբագրի այս խոստովանությունը գալիս է մեկ անգամ ևս հաստատելու այն ճշմարտությունը, որ նա բնավ էլ կտրված չէր հայկական կենտրոններից և քաջածանոթ էր հայ իրականությանն ու ժողովրդի վիճակին. նրա առջև, սակայն, բարձրանում էր գրաքննությունը որպես մի լուրջ խոչընդոտ ազատ խոսքի համար:

Ընդգծելով Նաղարչյանի խոստովանության այն մասը, որ միանգամայն բնորոշ է նրա լիբերալիզմի համար, հայ բանասերները շարունակ մոռացության են տվել նրա խոստո-

¹ «Հյուսիսսփայլ», 1859, № 7, էջ 579:

² Նույն տեղը, № 7, էջ 568:

վանության երկրորդ և ծանրակշիռ մասը, հայտարարելով, թե Նազարյանը օրվա հարցերի արծարծումից խուսափել է՝ հայ իրականության ճշմարտացի պատկերը, ազդի բարոյական խոցերը չհրապարակելու նկատառումով միայն:

Ինչպես արդեն ասացինք, այս հարցերի մասին խոսելիս չի կարելի մոռացության տալ այնպիսի մի կարևոր գործոն, ինչպիսին էր ցարական դրաքննությունը 60-ական թվականներին: Այդ ժամանակաշրջանի առաջավոր մամուլի պատմությունը միաժամանակ դրաքննության դեմ մղվող ամենօրյա մաքառումների պատմություն է:

Պահպանված փաստաթղթերը մեզ հնարավորություն են տալիս պարզելու «Հյուսիսափայլ»-ի հրատարակության հետ կապված դժվարությունները:

Այսպես, դեռևս 1857 թվականին իր բարեկամներից մեկին հայտնելով, որ «Հյուսիսափայլ»-ի հայտարարության թույլտվությունն ունեցվում է գրաքննական կոմիտեում, Նազարյանը նշում է. «Հայք կամին, որ ես գործը շուտացնեմ, բայց և իմ թևերը կտրում է ցենզուրան»¹:

Նազարյանն իր նամակներում հաճախ է բողոքում, որ «Հյուսիսափայլ»-ի հերթական համարների թույլտվությունն ունեցվում է գրաքննության կողմից: Այս կապակցությամբ նա 1859 թվականին լուսավորության մինիստրին մի դիմում է ուղարկում, որով խնդրում է թույլատրել, իր պատասխանատվությամբ, ամսագրի համարները նախ տպագրել, ապա միայն դրանց ձեռագրերն ուղարկել գրաքննչին՝ համապատասխան ձևակերպումների համար: Այս առաջարկը, սակայն, մերժվում է:

Արխիվային փաստաթղթերից և Նազարյանի նամակներից երևում է նաև, որ Նազարյանը բազմիցս դիմել է գրաքննական կոմիտե՝ տպագրելու համար իր և իր աշխատակիցների պատասխան նամակները «Մեղու Հայաստանի» թերթին, որն անպատշաճ հոգևածներ էր ղեկեղում «Հյուսիսափայլ»-ի և

¹ ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 147, վավ.

Նալբանդյանի դեմ: Սակայն նրան ոչ միայն չի թուլատրվում այդ անել, այլև նորանոր խստություններ են կիրառվում «Հյուսիսսփայլ»-ի նկատմամբ: Այսպես, լուսավորության մինիստրությունից դրում են Ս. Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձությանը, թե Բերոյանը պահանջվող խստությամբ չի քննում ամսագրում հրատարակվելիք հոդվածները: Որպես օրինակ հիշվում է Նալբանդյանի նամակը խմբագրին, որի մեջ շոշափված էին Նախիջևանի եկեղեցական գումարների հետ կապված խնդիրները¹: Միաժամանակ խնդրում են զգուշացնել Բերոյանին, որպեսզի վերջինս «Հյուսիսսփայլ»-ի նյութերը քննի առանձնահատուկ ուշադրությամբ: Այս գրությունից հետո գրաքննական կոմիտեն Բերոյանից պահանջում է խստորեն քննության ենթարկել «Հյուսիսսփայլ»-ում գետեղվելիք բոլոր նյութերը:

«Հյուսիսսփայլ» ամսագրի պատմության մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում այդ ամսագրի 1860 թ. 10-րդ համարի շուրջը ծավալված պայքարը:

Ինչպես տեսանք, կղերա-ֆեոդալական լազերի ներկայացուցիչները սրբերով են դիմավորում Նաղարյանի «Մենդեսոն, Լեսսինգ և Լավտեր» հոդվածը: Նաղարյանի երգվյալ հակա-ուսկորդ ուսուցիչներ Չերքեզյանը մի դիմում է ուղարկում կաթողիկոսին, որով ոչ միայն մեղադրում է Նաղարյանին լյութերականություն քարոզելու մեջ, այլև առաջարկում է «Հյուսիսսփայլ»-ի 10-րդ համարը Նաղարյանի «Վարդապետարան կրոնի» գրքի հետ միասին հավաքել տալ և այրել: Այս առիթով կաթողիկոսը մի կոնդակով հանդիմանում է Նաղարյանին: Վերջինս իր հերթին շտապում է բացատրություն տալ կաթողիկոսին և նրան է ուղարկում իր դիմումը: Նա խոսում է այն մասին, որ միայն առանձին անհատներ են թշնամաբար տրամադրված «Հյուսիսսփայլ»-ի նկատմամբ, այնինչ ողջ ազգը «հաճ և հաւան է ընդ գնացս «Հիւսիսսփայլ»-ի և, ազգի գրագետները «աղաչեն զմեզ յառաջ տանել զայն և այսուհետև»²: Եթե, իհարկե, իր օրերի լուսավորու-

¹ ЦИАЛ, фонд 777, опись 2, ед. хр. 34, стр. 8.

² «Կումա», 1896, գիրք Ա, էջ 329:

Յյան և ազգի օգտի դեմ վնաս նկատված լինել, այդպիսի բարյաջակամություն չէր լինի իր ամսագրի նկատմամբ։ Այնուհետև նա զարգացնում է այն միտքը, թե գիտությունն առաջնորդվում է միմիայն ճշմարտասիրությամբ և մարդասիրությամբ։ Նա քննում և բացահայտում է մարդկային կյանքի թերությունները, դրանք բուժելու նպատակով. «Թաքցնել այդ վերքերը», նշանակում է օգնել օրգանիզմի խորտակմանը։ Այս կապակցությամբ նա ուշադրավ մտքեր է հայտնում իր ժամանակի ռուսական առաջավոր մամուլի և «Հյուսիսփայլ»-ի մասին։

«Եթե կամիք փոքր 'ի շատե՛ յառաջ խաղացուցանել զհայս (և ամենայն ոք որ շիցէ թշնամի ազգի, պարտական և կամել և ցանկանալ այդմ) կարելոր է յոյժ մատենագրական հրապարակախօսութեամբ 'ի լոյս և 'ի յայտնութիւն ածել զամենայն խոյլս և կեղս ազգային մարմնոյ, զամենայն բարոյական ցաւ և զվիշտս նորա, զի ազգ մեր նախ և յառաջ ծանիցէ՞ զանձն իւր, ինքն վկայեսցէ իւրոցն պակասաւորութեանց և ապա միաբան զօրութեամբ ձեռն 'ի դործ արկեալ խնդրեսցէ զհնարս բարեկարգելոյ զգրութիւն իւր։ Զայս ճանապարհ, վեհափա՛ռ Տէր, զնացեալ է և համօրէն երևելի լուսաւոր ազգաց երոպիոյ, զայս ճանապարհ ընթանայ այժմոյս Ռուսաստան մեր՝ հարկւրաւոր տեսակ տեսակ օրագիրք ամենայն համարձակախօսութեամբ քննելով և 'ի լուր ժողովրդեան քարոզելով ոչ թէ միայն զազգային պակասաւորութիւնս, այլ և զթերութիւնս նոյն իսկ քաղաքական կարգաց և օրինաց, զայս ճանապարհ պարտ է գնալ և սիրելի հայրենակցաց մերոց, եթէ չկամիմք դատապարտել զնոսա 'ի մշտնջենաւորն յետնութիւն 'ի միջի ազգաց։ Վեհափա՛ռ Տէր, իմ չի՛ք ոչ մի պատճառ թշնամանելոյ զազգ իմ, այլ իբրև հայ գիտնականի են ամենայն պատճառք սիրելոյ զնոսա և ամենայն ուխտիւք սրտի ցանկանալոյ տեսանել զնա օր մի յառաջ բախտաւորեալ ամենայն բարեմասնութեամբք։ Եթէ չսիրէի զազգն իմ, Վեհափառ Տէր, առ ի՞նչ այսքանեաց ամաց ո՛չ տալով քուն աչաց և նինջ արտեանաց, ջանք և վաստակք յօգուտ ազգին, 'ի դատախարակութիւն և 'ի կրթութիւն նորուն զաւակաց։ Թշնամի և ատեցող ազգի են նոքա, որ ոչ գան առ լոյսն, զի մի՛ խայ-

տառակեսցին, դոքա և ամբաստանեն զինէն և զիմոյս «Հիւսիսափայլ»-է, վասն զի երկնչին 'ի լուսոյն հրապարակէ»¹:

Էջմիածնի Սինոդը քննելով Չերքեզյանի և Նազարյանի՝ զիմումները, վճռում է.

1. Խնդրել Կովկասի փոխարքային՝ ներքին գործոց մինիստրի միջոցով արգելել տալ «Հյուսիսափայլ»-ի հրատարակությունը և առանց կաթողիկոսի գիտության տպագրության չթույլատրել որեւէ զիրք, որն առնչություն ունենա կրօնի և եկեղեցու հետ:

2. Պատվիրել հայ վիճակավորներին՝ տեղական քաղաքական իշխանությունների ձեռքով ժողովել «Հյուսիսափայլ»-ի 1860 թվականի 10-րդ համարի բոլոր տետրակները և Նազարյանի «Վարդապետարան կրօնի» գրքի օրինակները և դրանք ուղարկել Սինոդի տնօրինությանը:

3. Խիստ նկատողություն անել Նախիջևանի և Բեսարաբիայի նախկին առաջնորդ Մատթեոս արքեպիսկոպոսին՝ «Վարդապետարան կրօնի» գրքի տպագրության թույլտվության համար²:

Սակայն, երբ տեղական իշխանությունները Նազարյանից պահանջում են «Հյուսիսափայլ»-ի բաժանորդների ցուցակները, նա մերժում է դրանք ներկայացնել, պատճառաբանելով, թե իր ամսագիրը ենթարկվում է միայն Պետերբուրգի գրաքննական կոմիտեին:

1861 թվականի օգոստոսի 18-ի թվակիր իր զիմումի մեջ Նազարյանն այս ամենը պատմում է գրաքննական կոմիտեին: Նա միաժամանակ նշում է, որ ասիական լճացման համախոհների այսօրինակ ռեակցիան բացատրվում է առավելապես նրանով, որ «Հյուսիսափայլ»-ը, որպես նոր օրերի բարեկամ, բազմիցս ստիպված էր շոշափել հասարակական հնացած խոցերը, հակադրվել ժողովրդի նախապաշարումներին և պատժիչ մտրակով խարազանել ու ակամայից վիրավորել հայերից ոմանց և հատկապես հոգևորականության ինքնասիրությունը: Որքան էլ բնական է լույսի ու խավարի պայքար-

¹ «Լուսմ», 1896, գիրք Ա, էջ 331:

² Լ և ո, Ստեփանոս Նազարյանց, հ. 2, էջ 131—134:

ըր, — շարունակում է Նազարյանը, — այդուհանդերձ ցավալի է նշել, որ բարձր հոգևորականությունը, որին «Հյուսիսափայլ»-ը բազմիցս կոչ է արել միանալ իր հետ և ծառայել նոր լուսավորության գործին, մնում է խուլ և համբ և ընդհակառակն՝ ղենք է ծառայում առանձին անհատների, տվյալ գեպքում իր անձնական թշնամի Զերբեղյանի ձեռքին, որ գաղտնի ու բացահայտ հալածում էր «Հյուսիսափայլ»-ը: Նազարյանը հույս է հայտնում, որ գրաքննական կոմիտեն կաշառապանի «Հյուսիսափայլ»-ի և նրա խմբագրի իրավունքները: Դիմումը նա ավարտում է «Կեցցե ճշմարտությունը, կորչի կեղծիքը» խոսքերով:

Գրաքննական կոմիտեն 1861 թվականի օգոստոսի 28-ին Նազարյանից պահանջում է թարգմանել և կոմիտեին ներկայացնել վեճի և քննության առիթ դարձած հոդվածը: Նազարյանն շտապում է կատարել պահանջվող թարգմանությունը, որի մասին Բերոյանը գրական կարծիք է հայտնում, Հեռաքրքրական է նշել նաև, որ Նազարյանի դիմումի կապակցությամբ Բերոյանը ևս անհրաժեշտ է համարում իր բացատրությունը տալ գրաքննական կոմիտեին: Նա գրում է. «Ես զարմանում եմ, թե էջմիածնի Սինոդն ինչպես կարող էր [ցենզուրային] գլխավոր վարչության առկայության պայմաններում ինքնիշխան կերպով գործել, և որ մի այնպիսի աննշան, մասնավոր մարդ, ինչպիսին է Զերբեղյանը, կարող էր հարկադրել սույն այս սինոդին՝ դուրս գալու հայ ժողովրդի մեջ ներկայումս գործող այս տաղանդավոր դիտնականի դեմ: Շատ ափսոս, եթե փակվի նրա գերազանց ժուռնալը և առավել ցավալի կլինի, եթե անմեղությունը ճնշվի՝ առանց բարձր իշխանության պաշտպանության»¹:

Այս գրադրություններից հետո գրաքննության գլխավոր վարչությունը կարգադրում է Պետերբուրգի գրաքննական կոմիտեին՝ ղգուշացնել Բերոյանին, որպեսզի հետագայում «Հյուսիսափայլ»-ի հոդվածների քննության ժամանակ այլևս նման շեղումներ չթույլատրվեն: Միաժամանակ պահանջվում է հիշեցում անել և Ստ. Նազարյանին:

¹ ЦГИАЛ, фонд № 777, опись 2, ед. хр. № 71.

Ուշագրության արժանի է այն փաստը, որ Սինոդի վճռի վրասկսութեամբ Պետերբուրգի մի խումբ հայ գործիչներ բողոքի նամակ են ուղարկում կաթողիկոսին: Նրանք իրենց զարմանքն են հայտնում եկեղեցական գործիչների կողմից «Հյուսիսսփայլ»-ն արգելել տալու վճռի համար, քանի որ, նրանց համոզմունքով, հայ եկեղեցին պետք է ընթանա լուսավորութեան և գիտութեան հետ: «Հայր սուրբ,— շարունակում են նամակագիրները,— այդ ուղին ահաւոր և վտանգավոր է, նա տանում է դեպի կորուստ, որպէս աղքատ, նույնպէս եկեղեցին, նա տանում է դեպի գծաւթնութեան ազգի և հոգեւորականութեան մեջ: Այսու աղագավ մենք աղաչում ենք ձեզ, հանուն եկեղեցւոյն, որ կամիք պաշտպանել, դարձ առնել այդ առաջին քայլին, որ գործել եք»¹:

Դիմումի տակ ստորագրել էին Ն. Շանշյանը, Պ. Շանշյանը, Մ. Բուրաղյանը, Մ. Սանասարյանը, Ռ. Պատկանյանը, Ղ. Խաֆաֆյանը, Հ. Պատկանյանը և ուրիշներ, թվով 17 հոգի: Նամակին որեւէ ընթացք չտալով, կաթողիկոսը 1861 թվականի հոկտեմբերի 21-ին Այվազովսկուն ուղղված մի գրութեամբ պահանջում է տեղեկացնել, թե ստորագրողները «ո՞րպիսի բնավորութեանց տեր են և ո՞րպիսի համարումն ունին ի ժողովրդականս», այլև հանձնարարում է հայտնել խնդրատուններին, թե քանի որ սինոդը արդեն վճիռ է տվել արգելել Նազարյանի հիշյալ հրատարակութիւնները, թող նրանք այլևս վեհին չձանձրացնեն նման խնդիրներով: Կաթողիկոսը միաժամանակ Այվազովսկուց պահանջում է ուշ դարձնել, որ նրա թեմում արմատախիլ արվի այդ մոլար աղանդավորութիւնը²: Գրաքննութեան և հայ ռեակցիոներների հարուցած այս արգելքներն էին պատճառը, որ Նազարյանն իր ամսագրում տպագրվելու ներկայացվող նյութերը քննում էր մեծ զգուշութեամբ, երբեմն փոփոխութիւններ մտցնելով դրանց մեջ: Հիշատակութեան արժանի է, որ ժամանակին Մ. Նալբանդյանը պատասխանելով այն գործիչներին, որոնք դատապարտում

¹ ՀՈՍԻ Պետ. Մատենագարան, Դյուտ եպիսկոպոսի արխիվ, թղթ. 3, վավ 1, էջ 88:

² Նույն տեղը, էջ 94:

էին «Հյուսիսափայլ»-ի խմբագրին «բուն ազգային խնդիրները» անուշադրութեան մատենելու համար, գրում է. «Հյուսիսափայլ»-ը, կամ «Հիշատակարանս», կարելի եղածի շափ պարպում են ազգային բաներով և միշտ պիտի պարապեն»: Ինչ վերաբերում է խմբագրութեան կարծեցյալ թերութիւններին, որ նշում են գործին «թեթև աչքով» նայող անձինք, ապա նախնադասը նկատում է՝ «Պահանջել շատ հեշտ է. բայց ամենայն պահանջողութեան պիտի լինի բանական դատողութեամբ»¹: Ի վերջո ակնարկելով գրաքննութեան հետ կապված դժվարութիւնները, նա գրում է.

«Ճշմարիտ է և այն, որ շատ բան ևս չէ կախվում օրագրի հրատարակողից կամ նորա գործակիցներից. երկիրը շատ անգամ բուսուցանում է դալար ծիւեր, բայց և շատ անգամ հյուսիսի ցուրտը պաղեցնում է նորանց արևադարից առաջ»²:

Ստեփանոս Նազարյանի մի շարք նամակները վկայում են այն ծանր պայմանների մասին, որոնց մեջ գործում էր նա, աշխատելով երբեմն շրջանցել գրաքննական օրենքները: Ստ. Նազարյանը ձգտում էր, որ ժամանակի կենսական պահանջներն արտացոլող հոգւածները հրապարակվէին առանց գրաքննական ազաւաղումների, և կամ էլ՝ մերժվելու դեպքում՝ հրապարակվէին գոնե արևմտահայ մամուլում: Այսպես, երբ գրաքննութեանը արգելում է իր բարեկամ Սայաթնովյանցի «Խորհրդածութեանք ազգի ճշմարիտ ազգասերների առջև» հոգւածի տպագրութեանը, Նազարյանը հեղինակին խորհուրդ է տալիս այդ հոգւածն անհապաղ ուղարկել Հ. Սվաճյանի «Մեղվին»: Կարևոր է և այն, որ Նազարյանն այդ հոգւածին կցում է իր ծանոթութեանները:

1862 թ. դեկտեմբերի 20-ին Սայաթնովյանցին ուղղած նամակում նա գրում է. «Չէ, իմ կարծիքն այն է, որ ձեր գրածը անպատճառ տպվի «Մեղվի» մեջ Կ. Պոլսում, իմ ծանոթութեամբ հանդերձ, եթե հաճո էր հրատարակողին սեփականել նորանց և քերել իմ անունը, ինչպես պիտո էր խնդրել նորանից: Հայաստանի «Կռունկը» (տխմար Աղաբեկյանի) և «Մե-

¹ «Հյուսիսափայլ», 1860, № 6, էջ 484:

² Նույն տեղը, էջ 485:

դուն» (թույլ Սիմոնյանի հոգատարութեան տակ գրած) երբեք համարձակութիւն չեն ունենալու այդպիսի բան տպել»¹:

Հետագայում համոզվելով, որ Սվաճյանի «Մեղուն» մեծ դժվարութեամբ է հասնում Թիֆլիս, նա իր բարեկամին խորհուրդ է տալիս հիշյալ հոգվածն այնուամենայնիվ տպագրել տալ Սիմոնյանցի «Մեղվում»:

Կաթողիկոսի գործ գրած ջանքերի շնորհիվ «Հյուսիսափայլ»-ը զրկված էր իր հակառակորդներին պատասխանելու հնարավորութիւնից: Պալասանյանի դեմ գրած Աբել Մխիթարյանի հոգվածը գրաքննիչը մերժում է: Նազարյանի նամակից տեղեկանում ենք, որ Միքայել Նալբանդյանը նույնպէս մեծ հոգված է գրած եղել Պալասանյանի դեմ, սակայն երբ գրաքննիչը պահանջում է ուսերեն թարգմանել այդ հոգվածը, Նազարյանը շտապում է այն ուղարկել հեղինակին՝ արտասահման (որտեղ գտնվում էր վերջինս), որպեսզի նա տպագրել տա «Արևմուտք»-ում:

«Տեսանենք ինչով կվերջանա գործը,— գրում է Նազարյանը Աբել Մխիթարյանին,— արդյոք դուք ավելի բախտավոր կլինիք, թե մեր Մ. Նալբանդյանցը: Սրա ուր լինելը գրած եմ Ձեզ արդեն, այսինքն Անգլիայում: Հույս ունեմ, որ նա իր գեղեցիկ և զորավոր ճառը շուտով կտպե մի այլ տեղ և մենք կկարդանք դորան ուրեիցե տպագրած: Այս բանը դրեցի Միքայելի հոգու վերա»²:

Այդ արգելքներն էին պատճառը, որ Ստեփանոս Նազարյանը և Միքայել Նալբանդյանը հաճախ ստիպված էին դիմելու եզոպոսյան լեզվի օգնութեանը, կամ մտադածին անուններ էին հորինում իրենց հոգվածների տակ ստորագրելու համար:

Այսպես, հանդես գալով Ծառուր Զելեպի անվան տակ Ստ. Նազարյանը 1862 թ. մեկ անգամ ևս հրապարակում է իր մտքերը հայ ժողովրդի լուսավորութեան, դաստիարակութեան և առաջընթացի կապակցութեամբ: Ստ. Նազարյանի հայացքները, լեզուն, ոճն այնքան ակնառու են, որ կասկած չի մնում նրան համարելու այդ հոգվածի հեղինակը:

¹ «Հանդես գրականական և պատմական», 1895, գիրք 6, էջ 142:

² «Մուրճ», 1902, № 5, էջ 135:

Նաղարչան-խմբագրի համար բնորոշ է և այն, որ նա խմբագրում էր ամսագրին ուղարկված համարյա բոլոր հոդվածներն ու նամակները:

Հետ ուղարկելով իր թղթակիցներից մեկի հոդվածը, նա գրում է.

«Դուք այժմ հետ եք ստանում ձեր հոդվածը ավելի կատարյալ կերպարանքով և բովանդակությամբ՝ քստ էության և ոչ քստ ձևով: Դուք համեմատելով իմ ձևադիրը ձերի հետ կգտնեք մի քանի բան դուրս ձգած, այլ բաներ այլապես կարգած և բոլորը ձեր հոդվածի կատարելության դիտարկողությամբ: (Այսինքն ձեր կողքերը պնդելու համար, որ թշնամին բաց տեղ չգտնե զարկելու համար), որովհետև ես իմ «Հյուսիսափայլ»-ի մեջ միշտ պաշտպանել եմ մի այդպիսի կանոն դեպի իմ բարեկամքը»¹:

Անշուշտ խմբագրական այդ աշխատանքները երկու նպատակ էին հետապնդում: Որպես հմուտ խմբագիր՝ Ստեփանոս Նաղարչանը ժամանակի ակտուալ հարցերն արծարծող թույլ հոդվածները վերափոխում էր՝ ձգտելով դարձնել ավելի «կատարյալ» գրական իմաստով, իսկ զաղափարական բովանդակությամբ՝ «Հյուսիսափայլ»-ի ոգուն համապատասխան: մյուս կողմից առավել սուր բնույթ կրող հոդվածները նա խմբագրում էր՝ աշխատելով դրանք ընդունելի դարձնել գրաքննության համար:

Ստ. Նաղարչանը երազում էր իր ամսագրի հիմքերն ամրացնել բոլոր կողմերով: «Հյուսիսափայլ»-ի հիմնադրման օրից նա ձգտում էր ունենալ սեփական թղթակիցներ և դրական աշխատակիցներ, որոնց կարողանար վարձատրել: Նրա այդ ցանկությունը, սակայն, անկատար մնաց:

Հայտնի է, որ Նաղարչանը նյութական ահագին զրկանքների դնով էր ապահովում ամսագրի հրատարակության նորմալ ընթացքը: Չունենալով խմբագրական աշխատակիցների անհրաժեշտ կազմ, նա ստիպված էր փոխարինել նրանց, կատարելով և՛ խմբագրի, և՛ սրբագրիչի, և՛ թարգմանչի աշխատանքները: «Իր ժամանակի հայերիս մեջ չկար նրա չափ

¹ «Հանդես գրականական և պատմական», 6-րդ գիրք, էջ 146—147:

«նրա նման աշխատասեր մի մատենագիր», — գրում է Ղաղարոս Աղայանը ¹։ — «Աշխատակից շուներ, — շարունակում է նա, — ամեն ինչ ինքն էր գրում, ինքն էր թարգմանում, շատ անգամ ոչինչ բաներ և զանազան կեղծ անուններով» ²։ Ամսագրի հրատարակության գործը կապված էր նյութական և քարոյական հսկայական զոհաբերությունների հետ, որոնց առջև կանգ էր առնում Ստ. Նազարյանը։ Իր բարեկամներից մեկին գրած նամակում հայտնում է, որ տպագրական ծախքերի և աշխատակիցներին վարձատրելու համար իրեն անհրաժեշտ է 4000 ռուբլի, այնինչ ինքը բաժանորդագրությունից և նվերներից ստացել է միմիայն 1411 ռուբլի։

«Եվ այդպես, — շարունակում է նա, — այս չորս տարին իմ կյանքս եղավ մի կատարյալ նահատակություն, անհնարավորը հնարավոր կացուցանելով, ինչ որ հինգ մարդու գործ էր, գրեթե միայն լցուցանելով, թող տպագրության, և սրբագրության և այլ մյուս տեսակ տառապանք և խաչեր շատ» ³։

Նույն թվականին հաղորդելով «Հյուսիսափայլ»-ի դադարեցման լուրը, Նազարյանը կրկին նշում է տարիներ անընդհատ խմբագրական աշխատանքի ծանրությունը միայնակ կրելու, հրատարակության հետ կապված դժվարությունների, գրաքննական արգելքների մասին։

«Զուր և անօգուտ եղան մեր բոլոր բանական խոսք ու գրույցը հայերի հետ, — դառնորեն հայտարարում է նա, — մեր բարեմիտ հայրենասիրական աշխատավորությունը շինեցին մեզ համար մի հանցանք և ձգեցին մեզ մի կատարյալ տանջարանի մեջ. փոխանակ թեև տալու մեզ, օրե օր ավելի տղատություն դեպի վեր թռչելու, ամենայն կերպով կտրատեցին մեր թեքը, ջարդեցին մեր զորությունը, անոտք և անձեռք անդամալույծ շինեցին մեզ, սողալով դետնի վերա» ⁴։

Խմբագիրը ստիպված էր ճակատամարտ տալ նաև կղերաֆեոդալական ռեակցիայի և նրա ամենախոշոր ներկայացուցիչ՝ կաթողիկոսի դեմ։ Իր նամակներից մեկում Ստ. Նազար-

¹ Ղ. Աղայան, Երկեր, հ. 3, էջ 61։

² Նույն տեղը, էջ 66։

³ «Հանդես գրականական և պատմական», 6-րդ գիրք, էջ 131։

⁴ «Հյուսիսափայլ», 1862, № 11, էջ 198։

ների վերա՝ ահա մեր դրոշակը, որի հովանավորութեան ներքո պարտական ենք մեք ամենեքայն պատերազմել և հաղթել, կամ եթե անկարելի է հաղթութիւնը, քաջութեամբ, սուրը ձեռքին, արժանապէս դուրս փչել մեր հոգին»¹:

Ստ. Նազարեանը վայելում էր հասարակացութեան առաջավոր մասի, երիտասարդութեան սերն ու համակրանքը: Նա բազմաթիւ նամակներ էր ստանում գաւառներից, որոնցում արտահայտված էին ընթերցողների ջերմ վերաբերմունքը «Հյուսիսսփայլ» ամսագրի և նրա խմբագրի նկատմամբ: Այդ վերաբերմունքի ցայտուն արտահայտութիւնը կարելի է համարել հետեւյալ բնորոշ փաստը: «Հյուսիսսփայլ»-ի դադարեցումից տարիներ հետո, 70-ական թվականներին, Նազարեանը նամակ է ստանում «Հյուսիսսփայլ»-ի նախկին բաժանորդ, Եվպատորիայի բնակիչ Հովսեփեանից, որը խնդրում էր «Հյուսիսսփայլ»-ի խմբագրի լուսանկարը:

Շրջապատված լինելով հակառակորդների հոծ բազմութեամբ, նա հնարավորութիւն չունէր իր ընթերցողների մտերիմ սիրտ մասին վկայող նամակները հրապարակելու, որովհետեւ առանց այդ էլ թշնամիները նրան հայհոյում էին նրա կարծեցյալ մեծամտութեան և փառասիրութեան համար: Նազարեանը նամակներից մեկում խոստովանում է, որ իր թղթակցի նամակը «Հյուսիսսփայլ»-ում չէր կարող տպագրել ամսագրի մասին եղած գովեստների պատճառով:

Նազարեանի թղթակիցները գնահատելով «Հյուսիսսփայլ»-ի դերը, մեծ նշանակութիւն էին տալիս խմբագրի հրապարակախոսութեանը այդ ամսագրի էջերում: «Հյուսիսսփայլ»-ի Թիֆլիսի թղթակից Գ. Փարսադանյանը գրում է. «Միթե ձեր գրիչը չէ բերելու ձեզ այն պարծանքը, որով պետք է խորտակվի մեր արեղանների բռնակալութիւնը և դավաճանութիւնը»: «Հյուսիսսփայլ»-ի թղթակիցները համոզված էին, որ «եթե ոչ այժմ, գոնե գալոց օրերում կղարթնի հայը յուր մահաքուն թմրութիւնից և նոցա նանիկները մի կողմ ձգելով, կաղաղակե. «Նազաղութիւն քո հողացած ոսկորներին օ,

¹ ՀՍՍԻ Պետ. Մատենադարան, Պատկանյանների արխիւ, թղթ. 144, Վավ. 299:

«Հյուսիսափայլ»։ Փարսադանյանը իր նամակը վերջացնում է հետևյալ բառերով. «Մնացե՛ք բարով, ազգաշեն մարդ, մնացե՛ք բարով Հ... Հ...»։ Ստեփանոս Նազարյանն այս առիթով գրում է. «Այստեղ երկու բառ է դրել մեր նամակագիրը, որ շատ շատ կարող էր լինել մեր գերեզմանի վերա տապանաճիր, բայց մեր կենդանության մեջ այդպիսի բառեր հանձն առնող կարող չենք, ուր մնաց թույլ տալ տպել մեր օրագրի մեջ»¹։

Այս առումով հետաքրքրական է հայ նշանավոր ֆուլկուրիստ Տիգրան Նավասարդյանի հետ կատարված հետևյալ դեպքը։ Երբ Միքայել Նալբանդյանի լուսանկարը բազմացնելու համար Նավասարդյանը ձերբակալվում է Թիֆլիսի ժամդարմերիայի կողմից, խուզարկության ժամանակ նրա և նրա ընկերների գրքերի մեջ Նալբանդյանի «Երկրագործության» ձեռագիր օրինակի հետ միասին գտնվում է և մի տետր՝ «Ստեփանոս Նազարյանց — անձնագրո՞հ հայոց ազգի» մականգրությամբ։

Ուշագրավ է և այն փաստը, որ այդ ժամանակ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի առաջագեմ աշակերտները ծեծի և նույնիսկ դպրոցից հեռացվելու վտանգին ենթարկվելով, մեծ ուշադրությամբ հետևում էին «Հյուսիսափայլ»-ի հերթական համարներին։ Հետադաշում նրանք իրենց ազատամտության համար ենթարկվելով դպրոցի ղեակցիոն հոգաբարձության հալածանքներին, ստանում են «Նազարյանք» անունը։

1868 թվականին Նազարյանը ծրագրում է հրատարակել «Լապտեր Հայաստանի» անունով ամսագիրը։ Այդ պարբերականի հրատարակված հայտարարության մեջ նա իր խընդիրն է համարում կրկին անգամ արթնացնել հայերին նրանց պաշարած քնից և մշակել հայոց լեզվի ու գրականության սնդաստանը, որը հայազգի վանդալների կողմից կատարյալ ավերածության է մատնվել։

Իր ամսագրի համար որպես աշխատակիցներ նա մտադիր էր հրավիրել Կ. Եղյանին, Գ. Քանանյանին, Մ. Մսերյանին և Ս. Շահազիզին։ Թող մի անգամ ևս փորձենք բախտը, — գրում է նա, — թող հուսանք, որ մեր սիրելի ազգը ժամանա-

¹ ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Երեցյանի արխիվ, թղթ. 150, վավ. 49։

կի հետ մի փոքր հառաջագիմած է, և այսուհետև մի արժանավոր հայկազյան օրագիր գտանելու էր մեր ժողովրդի մեջ ավելի պատրաստական ընդունելություն և մասնակցություն, քան թե անցած գնացած օրերում»։ Սակայն «Հապտեր Հայաստանի»-ի հրատարակությունն արգելվում է գրաքննության կողմից, մեծ վիշտ պատճառելով Նազարյանին. «Թե ինչ պատճառներ կային ցենզուրական իշխանության կողմից արգելելու դրա, որ անձինք չարյացակամությամբ և որ բարեկամք աններելի անհոգությամբ և անտեսությամբ վնասեցին ինձ և մեր հասարակաց գործին մանավանդ, ես այս բուպեիս ոչինչ որոշել կարող չեմ։ Թող այդպես լինի. դորա վերա ես խոսք չունիմ. ահավոր իրողությունը բարբառում է ինքը և բողոքում է դեպի երկինք — իհարկե մտածող հայերի համար»¹։

Իր հրապարակախոսական գործունեության ընթացքում Ստ. Նազարյանը հետևելով 19-րդ դարի 40—60-ական թվականների ռուս լուսավորիչների օրինակին, առաջ է քաշել եվրոպական կուլտուրային հաղորդակցվելու պահանջը։

Վ. Ի. Լենինը խոսելով 40—60-ական թվականների ռուս լուսավորիչների մասին, նրանց բնորոշ գծերից մեկն է համարում կյանքի եվրոպական ձևերի և առհասարակ Ռուսաստանի բազմակողմանի եվրոպականացման եռանդագին պաշտպանությունը։

Բնականաբար, որպես զարգացող բուրժուազիայի գաղափարախոս, Ստ. Նազարյանը յուրացնում է իր ժամանակի առաջավոր ռուս մտածողների այդ ձգտումը։ Բայց, եթե ռուս մտավորականների համար եվրոպական կուլտուրային հաղորդակցվելն ու այդ կուլտուրայի հաստատությունները ռուսական հոգի վրա փոխադրելը կատարվում էր ուղղակի ձևով, ապա հայ դործիչների մոտ այդ պահանջն ստանում է մի փոքր այլ բովանդակություն։

Եվրոպական լուսավորություն տեղիինը Միքայել Նալբանդյանի և Ստեփանոս Նազարյանի մոտ հնչում է որպես ժամանակի առաջավոր գիտության ու գրականության յուրաց-

¹ «Բանբեր գրականության և արվեստի», 1903, գիրք Ա, էջ 235։

ման պահանջ: Նաղարչանն այդ տերմինի տակ միաժամանակ հասկանում է ժամանակի ուսական կուլտուրան, դրականությունն ու գիտությունը: 1856 թվականին լուսավորության մինիստրին գրած նամակում Նաղարչանն իր ամսագրի նպատակն է համարում հայերին հաղորդակից դարձնելը ժամանակակից ուսական մտքի, քաղաքականության և կրթության հետ: Հայտնելով այն միտքը, թե տնտեսական և կուլտուրական զարգացման հնարավորությունն ստացած հայերը Ռուսաստանին երախտահատույց լինելու նպատակով պետք է ռուսական առաջավոր մտքի և լուսավորության պոուզները տարածեն հայ ժողովրդի մեջ, Ստ. Նաղարչանն իր ամսագրի հրատարակությունն անհրաժեշտ էր համարում որպես հոգեպես և բարոյապես միացնող միջնորդ Ռուսաստանի և նրան հպատակ հայերի միջև:

Հետագայում աշխատելով Ներսիսյան դպրոցում, Նաղարչանն այն միտքն է հայտնում, թե հայ մանուկներին հարկավոր է մատուցել «նույն եվրոպական լուսավորությունը, որ շատ թե քիչ մեր անբույսերը տալիս է յուր բնիկ ցեղերին»:

Եվրոպական քաղաքակրթությանը հաղորդակից լինելու Նաղարչանի պահանջը համապատասխանում էր ժամանակի ոգուն ¹:

Ստեփանոս Նաղարչանի հրապարակախոսական գործունեությունը պատմականորեն ունեցել է առաջադիմական նշանակություն: Նրա խմբագրած «Հյուսիսափայլ»-ը նոր երևույթ էր իր ժամանակի հայ իրականության մեջ և կատարել է առաջադիմական դեր:

«Հյուսիսափայլ»-ը, մանավանդ իր հրատարակության առաջին տարիներին, աչքի է ընկնում թեմատիկ հարստու-

¹ Ժամանակի ուսական ամենաառաջավոր օրգան «Սովրեմեննիկ»-ը 1857 թվականին խմբագրական հայտարարության մեջ խոսելով ամսագրի ծրագրի մասին՝ ուսական կյանքի ուսումնասիրությանը զուգընթաց կարևոր է համարում «ամենամոտ ծանոթությունը եվրոպական կյանքի արդյունքներին, որն արտահայտվում է հասարակական գիտությունների և արևմտյան եվրոպայի գլխավոր ժողովուրդների ժամանակակից վիճակի մեջ (տե՛ս «Современник», 1857, № 11, էջ 3):

թշամբ, տպագրւած նյութերի թարմությամբ և հարուստ բա-
ժիններով:

Զբաժանելով Նալբանդյանի արմատական հայացքները, սակայն բարձր գնահատելով նրա հրապարակախոսական ազդանդն ու խոսքի հմայքը, Նաղարյանը լայն հնարավորու-
թյուններ է ընձեռում Նալբանդյանին՝ «Հյուսիսափայլ»-ում տպագրելով նրա բանաստեղծությունները, արձակ երկերն ու հրապարակախոսական հոդվածները: Նաղարյանն, իհարկե խնամքով «խմբադրում էր» Նալբանդյանի հոդվածները՝ մեղ-
մացնելով դրանց մարտական կիրքը: Նա անկեղծորեն ցան-
կանում էր Նալբանդյանին կապել միմիայն հայ ազգի ներքին խնդիրների հետ: Հայտնի է, սակայն, որ նա չհասավ իր նպատակին:

«Հյուսիսափայլ»-ի միջոցով Ստ. Նաղարյանը հսկայական գործ է կատարել ոչ միայն գիտության նվաճումները մասնա-
յւելանացնելու, լուսավորություն տարածելու, այլև ժողովրդի հասարակական գիտակցությունը բարձրացնելու ուղղությամբ:

«Հյուսիսափայլ»-ի միջոցով նա ժողովրդի մեջ գեղարվես-
տական գրականության ճաշակ էր պատվաստում, գիրքը մո-
ռեցնում էր ժողովրդին, դարձնում նրա առօրյա պահանջնե-
րից մեկը:

Իր ամսագրի էջերում Նաղարյանը հանդես էր գալիս որ-
պես հրապարակախոս, քննադատ, պատմաբան, բնագիտա-
կան և տնտեսագիտական հոդվածների հեղինակ, և այլն: Մանկավարժական և հրապարակախոսական աշխատանքնե-
րին զուգընթաց նա կատարել է նաև մեծ թվով թարգմանու-
թյուններ:

Կոչումով լինելով իսկական հրապարակախոս, նա սիրում
էր իր գործը, ապրում նրանով և այդ սիրով ու նվիրվածու-
թյամբ վարակում իր աշխատակիցներին:

«Հյուսիսափայլ»-ի միջոցով Նաղարյանը համարձակ բարձ-
րացրեց պայքարի դրոշը միջնադարյան խավարի և անշարժու-
թյան դեմ, հանուն ժողովրդի լուսավորության, նրա ազատա-
գրման՝ «խավարի բարեկոնյան գերությունից»:

Ստ. Նաղարյանի ամսագրի լավագույն տրադիցիաները հե-
տագայում յուրացրին հայ առաջավոր գործիչները:

Գիտակցելով իր լուսավորական գործունեության մեծ նպատակը, Նազարյանն իր ամբողջ կյանքում հավատարիմ մնաց այդ նպատակին:

Դեռևս 1836 թվականին քաջալերելով Աբովյանին, նա վկայակոչում է անցյալի առաջավոր այն գործիչներին, որոնք ասիական ծեսն եղել կոմիտեի շատ դժվարությունների դեմ:

Իր հետագա գործունեության ընթացքում Ստ. Նազարյանին հաջողվում է, համառորեն դիմադրելով հայ ուսակցիոն «կարճատեսների կատաղությանը», ժողովրդի առաջընթացի իր պահանջները դարձնել բոլորին ընդունելի ճշմարտություն: Նա ինքի էր խոր հավատով, և համոզված էր, որ կգան ավելի լավ ժամանակներ, երբ «աչքն ավելի լավ կտեսնե ճշմարտությունը, և սիրտն ավելի ուժգին կզգա բարին և գեղեցիկը»:

«Ես կարծում եմ, — գրում է Նազարյանը Աբովյանին, — որ երախտագետ հետնորդները մեզ կգնահատեն և մեզ վրա կնայեն զարմացած հայացքով, որպես հայրենյաց մաքուր և իրոք գովելի օրինակների վրա»¹:

Սովետական ժողովուրդը ըստ արժանիության գնահատելով անցյալի կուլտուրական ժառանգությունը, բարձր է գնահատում Ստ. Նազարյանի լուսավորական գործունեությունը, որ նա ծավալել է անցյալ դարի 60-ական թվականներին հայ իրականության մեջ՝ իր «Հյուսիսավայլ» ամսագրով:

¹ «Դիվան Խ. Աբովյանի», էջ 255:

ՀԱՎԵԼՎԱԾ



Մ. ՄՍԵՐՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԻ ՍՆՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մասնավոր դիտողությունք
ի վերա ընթացից և նպատակի «Հյուսիսափայլ»
օրագրի¹

Հոգևած Ա.

Անցյալ տարի՝ հունվար ամսին սկսյալ՝ Ռուսաստանի մեջ (ինչպես հայտնի է ամենեցուն) հրատարակվում է մի օրագիր «Հյուսիսափայլ» անվամբ Մոսկվայում, և մի լրագիր «Մեղու Հայաստանի» անվամբ Տփլիսումը։ Այս երկու գրվածոց հրատարակությունքն պատճառ եղած են (որպես երևում է հայտնապես) մեր ռուսիաբանակ ժողովրդյան նորօրինակ քննասիրության, ևս և ա՛յն մեծ և խորին ուշադրության՝ որով նորա նայում էին այս երկու գրական աշխատությանց վերա։

Առաջինն ՚ի սոցանէ, այն է՝ Հյուսիսափայլն, յուր առաջին երևմամբն ո՛չ փոքր տարածայնությանց առիթ տվալ թե՛ հոգեորականաց թե՛ աշխարհականաց թե՛ ռուսմականաց և թե՛ աշխարհական մարդոց մեջ։ Այս օրագիրս առաջին ամսաաւետարակեն սկսյալ՝ յուր ընթացքի հանգամանքը և նպատակը հայտնապես ցույց տվալ, որ ըստ կարծյաց հրատարակողին՝ այս է. Ազգի պակասությունքը և անկրթությունը, և սորա

¹ ՀՍՍՌ Պետ. Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 192, վավ. 123.

Կամ նորա տգետ և հիմար՝ կամ մոլի և ամբարիշտ լինելը հրապարակելով, լուսավորության դուռն բանալ: Թեպետև այս դիտումն այսպիսի ընթացքով (որ հայտնի նշմարվում է մինչ ցարդ տպված 12 ամսատետրակների մեջ) անհաճո և միանգամայն անարդար և արտաքո խոհականության թուեցավ քաղմաց՝ և կարելի է ասել՝ բոլոր ազգայնոց ('ի հարկե բաց ոմանց), բայց առ ժամանակ մի լռեցին ամենեքյան, և ո՛չ մի հակառակ բան չտպվեցավ, որովհետև հիշյալ օրագրի հրատարակիչն (պ. Ստեփան Նազարյանց) համբավյալ ոմն գոլով իբրև լուսավորյալ եվրոպեակիր ժարդ՝ շատ լեզուների տեղյակ, հույս կար փոքր 'ի շատն՝ թե կփոխե նա որպես յուր կարծիքը նույնպես և օրագրի ընթացքը դո՛ւն հետ փոքր ժամանակի: Կա՛յր արդարև այս հույսս, բայց չարդիանացավ: Պ. Նազարյանցն ո՛չ միայն չփոխեց յուր օրագրի այնօրինակ ընթացքը, այլև ավելի ևս խթան տալով հնուա՛ջ վարեց. ժողովրդականաց շատերն (մանավանդ պարզասիրտքն, այնպիսիքն ասեմ՝ որոնց ծանր էր լսել կամ տեսանել որպիսի և իցե ազգային անպատվություն կամ նախատինք) սկսան դայ-թակդիլ և տրտնջալ: Այս իսկ էր պատճառն, որ աստվածասեր և ազգասեր տ. Ստեփանոս քահանայն Մանդինյանց հանձնառու եղև առաջին անգամ՝ յուր «Մեղու Հայաստանի» անվանյալ լրագրի 16-երորդ համարումը քանի մի համառոտ խոսքեր տպել պ. Նազարյանցի գրվածոց վերա՝ այսպիսի վերնագրով. «Մի քանի խոսք գերապատվելի Ստեփանոս Տեր Եւսայան Նազարյանցի գրված մատչանների վերա»: Գրեց նա և տպեց այն խոսքերը՝ ոչ թե ոգվով թշնամության կամ առատելության՝ այլ միայն 'ի սիրո ազգին շարժյալ՝ և գայթակղելոց միտքը բժշկելու համար ըստ պահանջելոյ յուր սրբազան պարտավորության, ինչպես ինքն ևս ծանուցած է հիշատակյալ հոգվածին մեջ:

Սակայն այնուհետև ևս չգաղարեց Հյուսիսսփայլն յուր կիզիչ քան թե լուսավորիչ ճառագայթները սփռել յուրաքանչյուր ամսատետրակների էջերումը. բաց հայսմանն՝ սկսավ նաև զազգային պատմության հիմունքը խախտել, այսինքն սուտ և առասպելական ցուցանել, որով և արժանահավատ ճանաչված և հարգված մեծանուն պատմագիրները (որոնց

դիւատնաւորացունն է երանելի բազմահմուտ ծերունին՝ Մովսէս
Լուսինացին) ստախոս և առասպելապատում համարել, հիմն
վնեւով միայն ոմանց օտարազգի մատենագրաց մասնավոր
և ՚ի վաղուց հերքյալ կարծյաց վերա, և մերժելով բոլորովին
ազգային ամենահին և հասարակյալ ավանդությունքը և ա՛յն
ամենայն գրվածքը մեր նախնի հեղինակաց, որոնց ճշմար-
տախոսությունն աներկբայելի ճանաչված է բոլոր ազգեն,
չսահմ և օտարներից: Այսօրինակ օտարոտի կարծյաց հրա-
տարակությունքն, որք շատ և շատ ցավեցուցիչ էին ամենայն
ազգայնոց սրտերին, այլոց ևս առիթ տվին զանազան ընդդի-
մաբնություններ գրելու հետզհետե: Ահա՛ Մեղուի Հայաս-
տանի 24 և 25 համարներումը տեսանում ենք երկու նամակք
Վահանա Արամյան, որ արդարեւ իբրեւ վահան լինելով՝ սկսած
է պաշտպանել ո՛չ յուր անձը, այլ յուր ազգի փառքը, պատի-
վը՝ պարծանքը, նորա նվիրական պատմությունը և սուրբ
եկեղեցին, և կարծես թե՛ ամենայն ջանյութ աշխատում է յուր
դատափետ ծնողը թափել հայրատանջ զավակների ձեռքից:
(Անհամբերությամբ սպասում էին ամենեքայն տաված տե-
ւանել նորա մյուս նամակները ևս, բայց մինչև ցայսօր չերե-
վեցան):

Վահան Արամյանի երեք նամակներից հետո տավեցավ
Նախահիշյալ լրագրի 29 և 30-րդ համարներումը և մի ա՛յլ
քննություն՝ այսպիսի վերնագրով. «Պարոն Ստեփանոս Նա-
գարյանցը և նորա գրավոր վաստակք»: Այս հոդվածույս հե-
ղինակն է պարոն Մ. Վ.: Նորա նպատակն (ինչպէս երևում է
յուր խոսքերից) է քննել պ. Նաղարյանցի ՚ի լույս ընծայեալ
գրվածքը, որոց մինչև ցայժմ քննած է նա միայն հոգեբանու-
թյան հառաջաբանությունը և հոգեղեն կերակուրը մասնավո-
րապես:

Այս վերջին գրվածքս մինչև ցայժմ պատասխան չեն ստա-
ցած Հյուսիսափայլեն կարելի է թե ստանան (թեպետ ար-
դեն ուշ է). բայց աստված չտա ա՛յնպիսի պատասխան
ստանալ, որպիսի ստացան հ. Մանդինյանցն և պ. Իսահակ-
յանցն, որոց միջում բաց յանվայելուչ խոսքերից և ՚ի տգեղ
բառերից (որք ավելի խոսողին անպատմություն կրերեն քան
թե այն անձանց որոց վերա է խոսքն), ուրիշ բան չկա: Պիտո՛

է ճշմարիտը ասել. ո՛չ ոք չէ՛ր կարծում, թե պ. Նազարյանցն հոժարի այնպիսի հոգւածներ խռկել յուր օրագրի թերթերումը, վասնզի ամենքն լսած լինելով շատերից, թե եվրոպական ուսմամբք վարժված մարդ է Նազարյանցն, ինքնին մականբերում էին, թե ուրեմն և եվրոպական քննաբանության (կրիտիկայի) ծանոթ է նա. դիտե ուրեմն (ասում էին) թե քննությունն՝ գրված բաների վերա պիտո է լինի, և ո՛չ թե գրող անձին վերա. դիտե, թե պիտո՛յ է քննել ո՛րպիսի բան է գրվածն, և ո՛չ թե ո՛րպիսի մարդ է գրողն, ուսումնակա՞ն թե անուսումն. Համալսարանո՞ւմը վարժված, թե Ներսիսյան զպրոցումը կամ թե ուրիշ տեղ, և այլն *:

Բայց հետո սուքա տեսանելով պ. Նազարյանցի ընթացքը՝ յուրյանց հուսո և կարծյացը հակառակ, ոմանք զարմացան, կեսք հուսահատեցան, այլք զայրացան, շատերն՝ տրտունջ բարձրացուցին յուրյանց մեջ, ոմանք ևս հարկ համարեցան (ինչպես պատմեցի առաջ) գրչի դեմ գրիչ շարժել: Սակայն՝ ի վերա այսր ամենայնի կարելի է դարձյալ գոնե ըստ ոմանց կարծյաց հուսալ, թե պ. Նազարյանցն հօգուտ յուր և հօգուտ ազգին խոհեմաբար փոխե այսուհետև յուր Հյուսիսամիայլի ախօրինակ խրտուցիչ և բազմաց գայթակղեցուցիչ և վշտացուցիչ ընթացքը, որ (ճշմարիտը ասեմ) գովության արժանի բան չէ՛:

Դարձուցանենք այժմ մեր հայեցողությունը Հյուսիսամիայլի մյուս հոգւածոց վերա: Հյուսիսամիայլն՝ բաց ՚ի վերո ասածներիցս՝ սիրում է ևս յուրաքանչյուր ամսատետրակի էջերումը հաղորդել յուր ընթերցողաց զանազան թարգմանված օտար-օտար վիպասանություններ (ուոմաններ), որպիսի են՝ Շէյխի աղջիկը, Դքսուհին դե Շելլեոզ, և այլն: Հայսմ մա-

* Յայս բանիցս երևում է՝ թե Հյուսիսամիայլն օրինավոր շարադրված համարում է զա՛յն, զոր գրած է համալսարանից մեջ ուսումը ավարտած մարդն: Այս հիման վերա, իմ բարեկամաց մինն խոստանում է ա՛յն համալսարանումը ուսումը ավարտած մարդույն տալ վարձ քանի հազար մանկս կամենա, եթե միայն կարողանա ուսեբեն թարգմանել զնարեկան վանկալ հրաշալի աղոթագիրքը՝ երանելույն Գրիգորի Նարեկացվո, որ բաց ՚ի յուր արեղայական փոքրիկ և անշուք խցեն, այլ ուսումնարան չէր տեսած, ո՛չ Համալսարան և ո՛չ Ակադեմիա:

սին իմ կարծիքս ա՛յս է, թե այսպիսի բաներ տպելո ժամանակն ուստիարձակ հայերի համար՝ դեռ հասած չէ՛, վասն զի շատերի մոտ, Հյուսիսամիայի այն թերթերն՝ յորս պարունակում են այնպիսի վիպասանությունքն մնում են ամբողջ չըկտրված. ուստի կարելի է հավաստյալ հետևեցուցանել, թե ստացողքն կարգացած չեն զանոնք և կարգալու ևս կամք չունի՛ն ամենևին: Եթե այսպես, ի՞նչ օգուտ ուրեմն կարեն տալ այնպիսի գրվածքն՝ ՚ի զուր տպվելով, ի զո՛ւր թերթերի էջերը լցնելով, երբ՝ որ ոչ մի մարդ կարգալու չէ զանոնք, և եթե կարդա ևս համ չպիտի առնու, բաց ՚ի քանի մի երիտասարդներից (ճահիլ ու ճիհուլներից): Դարձյալ փորձն գուշակել է ապիս արդեն, թե աստղաբաշխական՝ բնագիտական. կամ բնախոսական կոչված ճառերն՝ որ տպվում են Հյուսիսամիայի թերթերումը, կարողանալու չեն՝ մեծ օգուտ տալ ազգին, որովհետև ընթերցողաց շատերին (չեմ ասում ուսումնականներին)՝ բաց ՚ի լեզուի այլատարազությունեն՝ նյութքն ևս անհասկանալի են զլխովին: Նախ և առաջ հա՛րկ է պատրաստել ընթերցողներ, հասուցանել զնոսա ա՛յն աստիճանին, որ կարողանան հասկանալ, և ապա գրել, տպել և հրատարակել: Պ. Նազարյանցն այս կանոնը, որ ամենահայտնի և բնական բան է, չէ՛ պահում, այլ ուղղակի՝ մտրակը (խամչին) ձեռին բռնած՝ յուր ձին է քշում, այսինքն՝ յուր միանգամ բացած ճանապարհովն է գնում, չմտածելով, թե ո՛ւմ հետ է խոսում կամ որո՞ համար է գրում: Բայց այսպիսի նկատողությունք շա՛տ հարկավոր են նմա: Եթե պ. Նազարյանցն չկամենա իսկույն այո՞ ասել այս իմ ասածիս, թո՛ղ ակնարկե գոնե մի անգամ վենետիկյան Բազմավեպին, Վիեննայի Եվրոպային (որ այս տարի իբրև օրագիր է հրատարակվում և շատ ընտիր բան է) և Փարիզի Մասյաց ազավնալույն վերա, թո՛ղ ակնարկե, ասում եմ, այդ պատվական օրագրաց վերա. և կարե տեսանել այն ժամանակ, թե ինչպես անոնց խմբագրիչքն զվարճալի՝ և ազգի օգտակար՝ նյութեր են ընտրում միշտ՝ ընթերցողաց հաղորդելու համար: Այս ևս անհայտ բան չէ՛, որ նոքա եթե մի ուսումնական առարկայի վերա կամենում են խոսել, խոսում են այնպիսի եղանակով և այնպիսի գաղափարներով՝ որք ամեն ընթերցողների մտաց դյուրընկալ են, նոքա գրում

են անպիսի բաները ժողովրդի մտաց հասկացողության չափով՝ առանց խորախոր քննությանց անդունդների մեջ իջանելու և իջուցանելու. իսկ պ. Նազարյանցն խոսում է և գրում է որպես թե միայն ուսումնականաց համար: Եվ մի՞թե ավելորդ չէ՞ այդ՝ երբ որ ըստ յուր ասածին կա՞մ ո՛չ մի ուսումնական անձն չկա մեր ազգումը, կամ եթե Վայ՝ կիսատ, թերատ, վայր ՚ի վերո է: Նա կամենում է յուր օրագիրը ուսումնական օրագիր շինել. բայց ՚ի միտ չէ բերում թե խոստացած է ազգը լուսավորել: Ուսումնական օրագիրը պիտո՞ է ուսելոց համար հրատարակել, և ո՛չ թե անպիսյաց համար՝ որք հազիվ թե կարող են կարգալ, և որք կարոտ են դեռ ուսանելու:

Հյուսիսամիայլի յուրաքանչյուր ամսատետրակի վերջերումը տեղ են բռնում մի կոմսի (չգիտեմ՝ ո՞ր տերության կոմսի) օրագրությունը: Այս օրագրություններից ի՞նչ նյութ, ի՞նչ իմաստություն կամ ի՞նչ լուսավորություն պիտի ստանան ընթերցողը: Այս հարցվածույս պատասխանը ցանկալի է ինձ լսել, թեև գիտեմ արդեն՝ ի՞նչ պիտի լսեմ:

Այս օրագրությանց մեջ բաց ՚ի դիմակավոր կամ ՚ի քուլարկյալ երգիծաբանություններից՝ որք ակնարկում են առայս և առ այն ոք, բաց ՚ի շեշտ ու մեշտ խոսքերից, և բաց ՚ի մտացածին մանրալուրերից, այլ ինչ չէ՞ գտանվում: Այս ամենայն գրվածքն՝ բոլորն ՚ի միասին առյալ՝ կարծեմ թե մի դանդի ևս արժեք չեն ունենալ բանազետ անձանց առաջ: Նկարագրում է կոմսն յուր օրագրություններումը, թե ի՞նչպես մի կին յուր ամուսնո գլուխը լուացեր է. թե ի՞նչպես մի այլ կին եկեղեցումը մոմ է վառեր. թե ի՞նչպես մի պարոն խալաթով նստել է յուր մոտ, թե ինչպես մի այլ պարոն՝ գործովքն գող և ավազակ պարտական գողով չգիտեմ ո՞ր կառավարության, մի արծաթի մեծ գումար, հնա՛ր է գործ՝ դրած՝ պարտավճար լինելու՝ ծոցեն կամ քսակեն արծաթ գուրս չտալով. և այլ սուլնպիսի հատուկոտոր առանցիկ պատմություններ, որք լիակատար իրավունք են տալիս ընթերցողաց՝ մեղադիր լինելու ո՛չ այնքան գրողին՝ որքան հրատարակողին. վասն զի սա եվրոպեալույս կատարյալ գիտնականներից մինն գողով՝ սա եվրոպեալույս կատարյալ գիտնականներից մինն գողով՝ հոժարում է տեղ տալ յուր օրագրի էջերումը այսպիսի խամ ու տտիպ գրվածներին: Զգիտեմ, մի հատուկ նպատակով է

Ի՞նչ է դարձյալ պատճառն (կրկնում եմ և ես) որ այդ հոգ-
վածների շարադրողն, Մադիստրոս՝ Մագիստրոսություն՝ Մա-
գիստրոսանալ բառերը ՚ի բերան անյալ ծամում է ծամծամում
է՝ և չէ՛ կարողանում կուլ տալ. և կարծես թե՛ եթե կուլ տա՝
պիտի խեղդվի: Եթե մասնաճյուղ և ատելություն պտուղ չէ այդ,
ի՞նչ է ուրեմն: Ճշմարտախոսություն. բարվո՞ք է. բայց միթե
մեծ ես է անհակառակելի ճշմարտախոսություն չպիտի՞ հա-
մարվի ասել՝ թե մի քաջ հայկաբան մատենագրի և աստվա-
ծաբանական գիտության հմուտ անձնի այնքան հեռի չէ՞ Մա-
գիստրոսական արժանավորությունն, որքան մի սոսկ դարը-
նական անձնի հեռի է Կոմսականն:

Զոհրապ Մ ա ր ու գ յ ա ն ց:
այսինքն՝ Զ ա ր մ ա յ ր Մ ս ե ր յ ա ն ց:

Այնուհետև տեքստին հաջորդում է Զարմայր Մսերյանի՝
անվերնագիր և անստորագիր վերջաբանը:

«Ուրեմն այս ամենայն ասացելոյս ի՞նչ պիտի դուշակել,
ի՞նչ արգասիք պիտի սպասել մեր ազգի համար, բաց ՚ի տա-
բաձայնությունց և խռովությանց, որք ծագած են ՚ի զանազան
տեղիս ՚ի պատճառս այսպիսի սուտոմուտ հոգուածոց: Եվ
եթե ճշմարիտն պիտո է ասել, հիշված հոգվածոց մեջ սուտն
խառնած չլիներ, գոնե մի արժանավորություն պիտի ունենա-
լին, իսկ այժմ այս և կորուցին: Մանր խնդրոց մեջ մտած
սուտն ամենայն մարդ կարող է տեսանել եթե կարդա «Մեղու
Հայաստանի» լրագրի մեջ տպված պ. Ս. Պալասանյանցի հոգ-
վածն, իսկ մյուս մանր մուր հոգվածոց մեջ մտցուցած սուտն
ես՝ այստեղ բացահայտեմ ձեզ, պատմելով վերևում հիշված
կնոջ եկեղեցումը մոմ դնելն՝ թե ինչպե՞ս եղեր է և ինչպե՞ս
Հյուսիսամիայլի մեջ տպած է, և ի՞նչ նպատակով»:

Թերցողաց կարծել՝ թե նույն պատմանունը բոտացողն անարժան ոմն է և
տվողն թեև բարձրաստիճան անձն, բայց անիրավ, փոքրամիտ տգետ
քանդի ասում է և հիմար և չունող կարողության ճանաչել՝ ո՞վ է զար-
ժանավորը և զանարժանը ով անարժան այնպիսի պատվո: Թեև բարձրա-
ստիճան անձն մեղանշած է կա՛մ գիտությամբ՝ ընդգնմ արդարության
անիրավելով և կա՛մ անգիտությամբ՝ զանարժանը արժանավոր համա-
բելով:

Մ. ՄՍԵՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԻ ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ:

«1. Ո՛չ միայն բանիւ բերանոյ հրատարակին ամենայն ուրեք ի քաղաքիս, այլև անհամեստաբար և տարապայման հանդգնությամբ համարձակին (այլանդակամիտք ոմանք) ՚ի թերթս «Հիւսիսափայլ» օրագորին ևս մոռանելով՝ ընդ ամենայն տեղիս տարածել ՚ի գայթակղութիւն պարզամիտ անձանց: Զճշմարտութիւն ասացելոցս Դուք ինքնին կարեք իմանալ յընթեռնույն Ձեր դռնէ զիններորդ ամսատետրակն յիշեալ օրագորին, ուր (յէջ 242—247) սատանան Կոմսն էմմանուէլ տողէ գհետեալ բանսդ...

2. Բաց յայսմանէ՝ և զԱռաջնորդս ազգիս կծանել կամեցով՝ ասէ...

3. Եւ ապա յաւելլու կոչել զնոսա «Սուտ ազգասերներ, օրակուրանտներ, եզուիտներ, և այլն տե՛ս

4. Թողում յիշել և զգրեալսն ի չորրորդ ամսատետրակի (յէջ 341) և ի վեցերորդ ամսատետրակի (յէջ 465-466) ընդդէմ պատուոյ Մսերայ Մագիստրոսի:

5. Նաղարեանցի անհամութիւնքն այնչափ առաւելուն և անցին ըստ չափ. մինչ զի հարկաւորեցաւ Գաբրիէլ վարդապետն Այվազեան առաջնորդն մեր բողոքել գրով առ Հոգաբարձուն ճեմարանի ևս. Հ. կաղարեանց և թեպէտ նորին գերազանցութիւնն գրեաց քանիցս անգամ առ յիշեալ մոլորամիտ ազգատեացն բանս զգուշացուցիչս, բայց զի՞նչ օգուտ. անըզգամն այն առաւել ևս կատաղեալ չկամի ամենեկին ոռնկնդիր լինել և անսալ այնպիսի բարեյորդոր բանից և խրատուց, և օր ընդ օրէ յաւելլու զլրբութիւն և զհանդգնութիւն իւր ՚ի մեծագոյն և յանբուժելի գայթակղութիւն ժողովրդոց: Զայս տեսանելով և լսելով օտարազգիքն նոքա ևս զարմանան և ասեն. «Դ՛րպիսի մարդիկ են Հայք՝ զի զազգ իւրեանց և զկրօն և զեկեղեցի և զլեզու իւրեանց ինքեանք նախատեն յօրագիրս իւրեանց և այլն:

1 ՀՍՍԻ Պետ. Մատենադարան, Մսերյանների արխիվ, թղթ. 207, վազ. 2129:

6. Յամենայն դարս երևեցոյց աշխարհս զնմանողսն այնոցիկ՝ որք խորհէին յանձինս իւրեանց անուղղայս, և ասէին՝ «Մի խորշեացուք՝ ի բազմաժամանակեա ալեաց ծերոյն, դարանակալ լիցուք արդարոյն, զի դժպէի եղև մեզ և հակառակ կայ դործոց մերոց, և նախատինս զնէ մեզ զյանցանս օրինացն»:

7. Մեզ իսկ ՚ի դէ՛պ է աշխարհ զՊապական ասել համարձակ-
«Առակ նշաւակի եղեաք ամենայն աշխարհի»:

8. Այլ առաւել քան զսոյն ցաւ մեծ ա՛յն է, զի օրէ յօր և ժամէ ՚ի ժամ առաւելուն և զայրանան վէրք սրբոյ եկեղեցւոյս մերոց անզգամութեան օտարախորթ դաւակաց նորին, յորոց միջի (այս ինչ ոք) սարսափելի իմն ապերախտութեամբ և դժոխային ատելությամբ ընդդէմ զինեալ օծելոյն տեառն (Ներւիսի) չգողարին զտիւ և զգիշեր յորսալոյ յուռկան իւրեանց զպարզամիտս ՚ի ժողովրդականաց մերոց, և յամենայնի գործակից անհելով զնալբանդեանցն և զնազարեանցն և զայս ՚ի շարին արբանեկաց՝ ակն ունին յաղթանակ մեծ կանգնել և փառաւորել զանձինս իւրեանց՝ ազգին մերոյ կործանմամբ:

Սոքա են արդարև փտեալ և նեխեալ անդամք եկեղեցւոյն մերոյ, զորս պարտ է՝ որչափ հնար իցէ՝ փութով ՚ի բաց հասանել, զի մի՛ զայրացումն ախտին ընդ բովանդակ մարմինն սարածանիցի:

9. Եթե չաշտողիցի վերհափառ Տեառնդ... այնուհետև (ցաւելով ասեմ) մարթ է համարել՝ թէ եկեղեցի մեր ՚ի վերջնումն կայ ՚ի վտանգի գլորման: Աստուած ինքն այց արասցէ բախիսօսութեամբ սրբոյ լուսաւորիչին:

10. Ի վարդապետարանի ունիք տեսանել ո՛չ միայն զազգի ազգի սխալանս, այլ և զանհարազատութիւն նորա ի դաւանութեան ս. եկեղեցւոյ Հայաստանեայց:

11. Խորթացեալն այն ստահակ զաւակ Հայաստանի ո՛չ միայն զազգ և զեկեղեցի մեր նախատէ ընդհանրապէս ի գրորուածս իւր, այլ և թափէ անխնայ զմաղձ դառնութեան սրտի իւրոյ ՚ի վերայ այնց անձանց՝ զորս համարի իւր հակառակորդս: Եվ այսպէս համարձակեցաւ նա պէս պէս այլաբանական գրուածովք յէջս Հիւսիսափայլին իւրոյ երգիծանել զարժամեծար անձինս եկեղեցականաց մերոց և յաշխարհականաց, որ է զՅ. Ս. Հոնանեանց, զՅ. Պ. Խալիպեանց, զՊ. Կ. Խալա-

բեանց, զԱ. Արարատեանց, զՍարգիս եպիսկոպոս Զաւա-
լեանց, զորոյ և զանունն կամեւով յայտնել (ի վեցերորդ
տետր, էջ 84) անդրադարձութեամբ տառից 'ի մէջ բերէ, փո-
խանակ անունս Սարգիս՝ գրելով Գիրսաս և այլն:

12. Զայս ամենայն յայտնելով տեառնդ, աղաչեմ զի գրես-
ջիք առ և... զի սատեցէ վայրախօսին այնմիկ... զի օր ըստ
օրէ յավելանայ զլրբութիւնն իւր և ո՛չ դադարի ի հրատարակե-
լոյ 'ի մէջ ազգիս զայնպիսի նախատալից յօդուածս ընդդէմ
անձանց արժանաւորաց...

13. Գրեսջիք և խորհուրդ տաջիք նմա՝ որո՛վ և իցէ հը-
նարիւք կարճել զգազանական կատաղութիւնն խեղացնոր փի-
լիսոփոսին: Եվ առ 'ի զայս առնել՝ հարկաւոր է անպատճառ
հեռացուցանել 'ի քաղաքէ աստի (զայս ոք և զայն)»:

Հ Ս Վ Ե Լ Վ Ա Մ № 3

ՍՏ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ¹

Նոյեմբերի 30 ր. 1859 Մոսկվա

Ազգասեր խոհական եղբարք

Բժշկապետ պարոն Հովհաննիսյանց և Նադիրյանց²

Ձեր շատ հարգելի նամակը ամսուա 9-ին արձակած,
ստացա անկորուստ և շտապում եմ հատուցանել Ձեզ իմ ան-
կեղծ շնորհակալությունը այն հոգաբարձութեան մասին, որ
կամեցած եք դուք հանձն առնուլ ընդհանուր ազգային օգտի
համար. և իմ օգուտը, եթե պիտո է լինի որով և իցե չափով,
դորա մեջ է, դորանից անբաժան և անմեկնելի: Ամենեին
հավան եմ ձեր տնօրինութեանը և բոլոր հոգալիքը թողում եմ
ձեր խոհականութեան կամքին, որովհետեւ դուք ձեր դրու-
թեամբ ավելի լավ ծանոթ եք տեղական հանգամանքին և քաջ

¹ Այս նամակի մի մասը առաջին անգամ հրապարակել է Ա. Երից-
յանը «Արձագանք»-ում, 1896, № 135:

² ՀՄՍԻ Պետ. Մատենադարան, Երիցյանի արխիվ, թղթ. 150, վավ. 49:

դիտեք թե ինչպէս ավելի հարմար կլինի գործ կատարել: Բժիշկ մարդիկը ունենով առավել ազդողութիւն ժողովրդի վերա, որ անդադար կարոտ էր նոցա օգնականութեանը, իհարկէ պիտո է լինին և հաջող գործակատարքը այդպիսի դիպվածներում: Այդ միշտ այդպէս է երևել ինձ. ժողովուրդը ավելի կարոտ լինելով առողջատու բժշկին, պիտո է և ավելի համատ ընծայե նորա խոսքին, շատ անգամ կամա և ակամա հնազանդի նորա խրատին: Վնաս չունի, թող բժիշկները բանան յուրյանց բերանը և քարոզեն ազդին լուսավորութեան հարկավորութիւնը և առաջնորդեն նորան դեպի Աթենասի տաճարը: Դորան կարող եմ ես միայն հավան գտանվիլ: Եվ անցյալ տարի Կ. բժշկապետ Ռոստոմյանցը համարյա թե պատերազմելով Շամախու մէջ մեծ գործ կատարեց, ինչպէս ասած կա Հյուսիսափայլի 8 հ. մէջ: Հյուսիսափայլի 10, 11 և 12 ամսատետրակքը միմյանց քամակից շուտով ճանապարհ կձգվին, որովհետև 10-երորդը պատրաստ է արդեն, և 11 և 12 միասին տպվում են և դալոց ամսու 10-ին պատրաստ կը լինին: Շատ դժվարութենի հետ պիտո է պատերազմե բեղակցիան, ամիսը մի հինգ թերթ օրինավոր տպելու համար, և գործ ունի սովորաբար անկիրթ ուսմ մարդերի հետ տպարանի մէջ: Գուցե դալոց տարումը բեղակցիան գործ ունենա կազարյանց վերանորոգած տպարանի հետ, ուր պատրաստվում են բավական շատ և գեղեցիկ տառեր հայկական տպգրութեան համար: Թեպետ այստեղ լինելու է տպագրութիւնը մի փոքր թանկ, քան թե Գրաշուի տպարանումը:

Ես կամեի հաղորդ կացուցանել ձեզ մի գրվածի, որ Ս. Պետերբուրգյան ցենզուրան թույլ չէ տվել ինձ տպելու. այդ գրվածի առիթը եղավ մի նամակ Թիֆլիզից, որ ուղարկել էր ինձ Գարեգին Ստեփանոսյան Փարսաղանյանց: Գուցե կարելի էր ձեզ բարոյապէս գործ դնել այդ նամակը Թիֆլիզի մէջ, կարդալով բարեմիտ բարեկամների հասարակութեան մէջ, և իմանալով իմ կարծիքը ևս այն անցքի մասին, որ պատահել է մեր Թիֆլիզում անցյալ տարու նոյեմբերի 2-ին:

Այսպիսի ձևով կամեի հանդես տալ Փարսաղանյանցի նամակին, բայց չեղավ.

Վաղուց արդեն հասած է մեզ թե բերանացի և թե գրավոր չոր այն անարժան և խռովեցուցիչ անցքի մասին, որ անցյալ 1858 թվակ. նոյեմբերի 2-ին պատահեց Թիֆլիզի հոգևոր ուսումնարանի մեջ, ապականելով միանգամայն ազգի պատիվը Ռուսաստանի մեջ, և մասնավորապես մեր երկրացիների պատիվը Թիֆլիզում: Հրատարակողը Հյուսիսսովետական խոսույն կամեցած է այդ անկարգությունը և դորա հետևանքը հրապարակական դատողության տակ ձգել յուր թերթերի մեջ և այս պատճառով շատ անգամ խնդրել է յուր թիֆլիզեցի բարեկամներից ստույգ և հիմնավոր ծանոթություն հասուցանել նորան այդ անցքի մասին և նամակագրի երաշխավորող ստորագրությամբ. բայց հրատարակողի խնդիրը և աղաչանքը մինչև այժմ անպտուղ մնացին: Վերջապես, ներկա տարուս նոյեմբերի 6-ից հասանում է մեզ Թիֆլիզից մի նամակ այսպիսի ստորագրությամբ. Գարեգին Ստեփաննոսյան Փարսադանյանց: Մի գրավոր ծանոթություն առանց ստորագրության, որ ստացել էինք այս տարու սկզբումը Պետերբուրգից, տալիս էր մեզ ամենևին նույն տեղեկությունքը ավելի մանրամասնաբար և մի քանի այլ իրողությունք, որ չկան ներկա նամակիս մեջ: Ես Մոսկվայումը հարց ու խնդիր առնելով այնպիսի եկավոր թիֆլիզեցիներից, որ ականատես էին եղած նույն անցքին, նույն ուսումնարանի մեջ, ուր պատահել է անցքը, պաշտոնակատար լինելով, ստուգեցի, որ վերջին նամակը պ. Գարեգին Փարսադանյանցի ստորագրությամբ ավելի համեմատ է անցքի ստուգությանը և այսպես այժմ արժան եմ համարում հրատարակել դորան ազգի ընդհանուր գիտության, և որպես հիշատակարան զալոց օրերի համար: Թո՛ղ ինչ անցքի մեր օրերումը ականատես է եղել հայը, նույն անցքը իբրև փրկավետ զգուշացուցիչ խրատ և ուսումն անկորուստ մնա ապագա սերունդի աչքի առաջև. թո՛ղ մեր ցավերը բժշման համար հնար դառնան մեր զավակների համար: Այո, մի փոքր հետացել է այս հրատարակությունը, բայց ինչ պիտո է առնել: Հրատարակողը չկարողացավ խախտել յուր մի անգամ դրած կանոնը — այսինքն արդարակշիռ լինել դեպի յուր

թշնամիքը և շարժացակամքը ևս, լուռ մնալ քան թի խոսել և դատել մի գործ, որի մասին շուներ ինքը մի ստույգ և աներկմիտ տեղեկություն: Գիտեմ, որ մի այսպիսի շրջանկատ հայացք, մի այսպիսի խղճմտություն անսովոր բան է մեր ստիացի մարդուն. դոցա անամոթ և լիրբ ստախոսությանը չափ ու սահման չկա, մանավանդ եթե անձնական աստեղծութիւն վառված կամեր մինը վնասել մշուսին հասարակության աչքումը. բայց մեզ աններելի կլինէր մեր ընթացքի մեջ օրինակ առնուլ այն անբարոյական մարդիկը, որոնց համար ոչինչ սուրբ բան չկա աշխարհիս վերա, որ և անխտիր սովոր են գործ դնել ամենայն հնար, յուրյանց գաղանակն սրտիցանկությունքը լցուցանելու:

Թող այժմ ավանդենք ազգին մեր նամակագրի խոսքերը, և հետո, երբ որ դրած էին ազգի առաջ և նորա կյանքի իրողությունքը, դոցա հիման վերա իմաստաւիրություն և եզրակացություն գործենք, մերկացնելով ամենայն մտածողի համար այդ իրողությունների խորհուրդը:

1859-ին նոյեմբերի 6-ին, Յիֆլիզումը.

Ճշմարտասեր Հրատարակիչ

Հյուսիսափայլ օրագրի.

Նազովրեցին Հիսուս յուր անձը ճշմարտություն անվանեց և հալածվեցավ. յուր հետեւողներին ևս ցույց տվեց տանել այն կապանքներին, որ հասանում են ճշմարտությանը: Այս բանի ստուգությունը ապացուցանվում է ամենօրյա փորձով: Ճշմարտասիրության պատճառով հալածանքի ասպարեզի մեջ ներկայումս, միայն Հյուսիսափայլը արժանի է դափնյա պսակի, ասում եմ անկեղծ. միայն նա կարող է յուր օրինակով խրախուսել հալածվածքը և սուրբ Իգնատիոսի պէս պետք է ասե յուր ընկերներին. «Հալածանք, հալածանք» այս ևս հավելացնելով: «Հալածողներին և օբսկուրանտներին վերջ»: Ես ևս, ով պայծառ փայլ Հյուսիսի, վստահանում եմ այս բոպէիս մի ցավալի ճշմարտությամբ ճոխացնել քո թերթերը, պատկերացնելով նոցա մեջ մի ազգային անցք, որով մի ամենամեծ անիրավություն հանդիպել է անմեղությանը. մի անիրավություն, որի հիշատակը պետք է ցավ պատճառե ամեն մի ձեզապէս ազգասեր սրտի, և անշուշտ պետք է բորբոքե մի ար-

դար բարեկությամբ և բարձրաձայն հատուցումն պահանջելով։ Թեպետ մինչև այժմ կամք չունի ցավ պատրաստել իմ չզիտացող հայրենակիցներին, բայց այս բուպեիս ստիպված եմ Հյուսիսամիայլի լուսսի տակ մերկացնել խավարապաշտների խարդախությունքը. բացի ձեզանից չունինք մեք հասարակաց բերան և մասնավորներին ցավակից։

1859 թվին, նոյեմբ. 2-ին մեր Թիֆլիզի Ներսիսյան դըպրոցը ցույց տվեց մի խայտառակ իրողություն։ Պիտո է ասել այստեղ, որ այս անցքից քանի մի ամիսներով առաջ արձակվեցավ դպրոցի տեսուչ Պետրոս Շանշյանցը, որ Ներսես կաթողիկոսի հատուկ կոնդակով կարգված էր, և նորա փոխանակ կացուցվեցավ Դ. Արզանյանցը այն խորհրդով, որ բռնավորական վարեցողությամբ և ճնշողությամբ դաստիարակե դպրոցի որդեգիրքը. նույն խորհրդով դրվեցավ վերակացու Հ. Քաթանյանցը. սա բավական մարդասեր հոգու տեր լինելով, պաշտպանում էր անմեղությամբ հալածված որդեգիրներին։ Դպրոցի հոգաբարձուքը և քաղաքիս առաջնորդը կամեցան հեռացնել Հ. Քաթանյանցին, որովհետև յուրյանց հոգով և կամեցողությամբ չէր շարժվում։ Հալածվածքը տեսանելով թե կամեին արտաքսել յուրյանց միակ պաշտպանին, դիմեցին աղաչանքով դեպի Արզանյանցը, հոգաբարձու Թայիրյանցը, նաև դեպի առաջնորդը, որ դոքա չզրկեն յուրյանցից սիրելի վերակացուն։ Բայց նոքա անտես առնելով աղաչավորների խնդիրքը, արտաքսեցին Քաթանյանցը։ Հրաժարման գիշերը շատ աղետալի է եղել. որդեգիրքը և վերակացուն հրաժարական համբույր տալով միմյանց, հեծեծանքով լցուցել են դահլիճը. բոլոր որդեգիրքը շտապել են Արզանյանցի մոտ կրկին աղերսելու, որ եթե կար մի հնար, աշխատե՛ր հեռու պահել ուսումնարանի մեջ Հ. Քաթանյանցին. բայց նա ներսից յուր սենյակի դուռը փակելով, սպառնացել է խնդրողների վերա. հեռ վաղել են որդեգիրքը երեկոյի 9 ժամին դեպի առաջնորդը, խնդիրք առնելու։ Առաջնորդը պատգամ է դուրս ուղարկում «Ձեր հիմարությունը վաղը կը տեսանեմ»։ Դուրս ուղարկում են որդեգիրքը մեծ և փոքր միասին հեռ են դառնում դեպի խեղճ որդեգիրքը մեծ և փոքր միասին հեռ են դառնում դեպի յուրյանց տխրագին բնակարանը. բայց ինչ... դուռները փակած ներսից, պոլիցիայի սպասավորքը (կվարտալնիրքը), նո-

Յա հետ դեսյատնիկներ, ծեծում են, կապում են խեղճ երեխայքը, ոմանք փախչում են, ոմանք թաքչում են, ոմանք գալիս են հանգստանալու յուրյանց տեղերում: Դղրդյունը դադարում է, ապա գալիս են հոգաբարձուքը, և Կ. Թայիրյանցը որոտալով որդեգիրների վերայ, նոցանից 5 մեծերին ուղարկում է դեպի պոլիցիա, իսկ մնացյալներին բրածեծ է առնում: Ի՛նչ դպրոց... հիմնադիրը գերեզմանի մեջ պիտո է շարժ դա, յուր կարգած հոգաբարձուների և առաջնորդի հոգատարությունը լսելով:

Առաջնորդյան պահուն առաջնորդը տեղեկանում է յուր սիրելի հոգաբարձուների մեծագործությանը, մարդ է ուղարկում, հանել է տալիս պոլիցիայից այն խեղճ էակները և իբր թե շատ մեղավորին ներում է. արի՛ տես Թայիրյանցը՝ որոտալով և փքանալով գալիս է պիղատոսի ատյանը, որ արձակել տա որդեգիրքը և սկսանի դատել. իսկույն բարկանում է նա, տեսանելով, թե արձակել են նորա կապածքը, զայրանում է, շունչը կտրվում է. անհապաղ գրում է առաջնորդին կամ հեռացնել դպրոցից այն տասն և չորս աշակերտքը, որ փաստորականք են, Շանշյանցի և Նազարյանցի հոգի ունին, կամ թե արձակեն նորան հոգաբարձական պաշտոնից: Առաջնորդը իսկույն գալարվում է և ոլորվում է օձի պես, որովհետև այդ երկուքը ծածկում են միմյանց գաղտնիք, և այս բնատուր է մեր ասիական հոգեւորներին, որ մինչև յուրյանց կեղտը մի մարդ չգիտենա, նորան ոչ կալատվին, և ոչ կդովին. այսպես ևս մոտերումս դպրոցի արծաթով մի նոր կառք և այլ շատ բաներ ընծայել էին առաջնորդին. հայտնի բան է, որ այդպիսիքը ընդունելի են նորան: Թիֆլիզի բոլոր իշխանները և ուսումնականքը գնում են առաջնորդի մոտ և խնդրում են արձակել հոգաբարձուքը: Բայց նա խարդախությամբ պատճառ է բերում, թե նոցա հաստատությունը այդ պաշտոնի մեջ, հանգուցյալ Ներսես կաթողիկոսի կոնդակով է եղած, ուրեմն յուր կողմից համարձակություն չկար, խախտել այդ կոնդակի զորությունը: Առաջնորդին պատասխանում են, մի՞թե Շան-

¹ Սա այն մարդն է, որ յուր մարդությամբ երգվում էր ջնջել հիշատակը Հյուսիսափայլի և դորա հետ միասին այն որդեգիրքը, որոնց անուն էր տալիս նոր Նազարյանք:

շյանցի կոնդակը չէ գրած Ներսեսի ձեռքով, ապա որպես վստահացար դու արձակել Շանշյանցին: Այսպես նախատարար և զգվանքով դուրս է գնում հասարակությունը առաջնորդի մոտից: Այս բանը հասավ մեր սրբազնակատար մեծ քահանա Տեառն Մատթեոսի ականջին. բայց նորին սրբությունը դալով Թիֆլիզ, կրկին հաստատեց նույն մարդիկը հոգաբարձու, և գնալով էջմիածին, այնտեղից գրեց և մարդիկ որոշեց, որ քննության ատյան բանան հոգաբարձուների վերա. քննության գործը մնում է տակավին անկատար: Ոհ, մեծ է շատ մեր հույսը նորընտիր կաթողիկոսի վերա, ո' չյուսիսափայլ ազգասերների ականջին քաղցրանուն և ախորժեկ:

Ահա իրողության իսկությունը այստեղ. թող այլապես գիտացողքը այս և այն բանը ավելի մանրամասնաբար պատմեն, քան թե պատմեցի ես: Բայց այժմ տեսանենք, թե ինչ պատահեցավ այն խեղճ որդեգիրներին որ արձակվեցան: Ժամանակը նույնմբերի ամիսն էր, ինչպես ասվեցավ վերևումը, ուրեմն ցուրտ ձմեռնային: Այդ արտաքսածքը անտուն, անօթեան, բարեկամք ու կարեկիցք ևս շատ սակավ, այն ողորթ երկրը երկար միջոց Թիֆլիզի փողոցները չափելուց հետո, հազիվ հազ կարողացան յուրյանց համար օրական հաց ճարել — վա՛յ անօգնականին — և ճանապարհներ պատրաստել դեպի լույսը առաջ խաղալու: Բայց սոցա վերա կրկին անգամ հալածանք բարձրացավ, և այժմ բռնությամբ ստիպում են նորանց տիրացուական փարաջա հագցնել, որ, ստիպողների պատճառաբով, պիտանի լինին ազգին, բայց ճշմարտությանամ են, թե օձը փոքրուց պիտո է սպանած: Այս աշակերտներից երեքը որ են Գ.Գ. Գ.Յ. և Մ.Ն. վառվռուն աշխույժ հոգով երիտասարդներ են, որոնց օբսկուրանտները անուն են դրել Նազարյանք: Իսկ Գրիգոր Տեր Հարությունյանց և Հարություն Տեր Գրիգորյանց, սոքա հանդիսացան, ինչպես Հուդան յուր ընկերների մեջ. թո'ղ մրոտվի սոցա երեսը, որ մյուս անգամ չլինին Հարության գործիք. բայց մնացյալների վերա անօգուտ է խոսել: Սոցանից մի քանիսը բարերարներ գտանելով, ցանկանում են գնալ Եվրոպա ուսանելու, բայց հոգևոր կառավարությունը արգելում է և ստիպում է նորանց կամ

հատուցանել նոցա դաստիարակութեան վերա գործ դրած ար-
ծաթը, կամ թե տիրացուի փարաջա հագնել. ի՛նչ դատաս-
տան... բռնութիւն առես, սոցա վերա են առնում, սորանց
են պոլիցիա տանում, սորանց են փաստորական անվանում,
սորանց են դուրս քշում որպէս ավազակներ: Թեպետ այս
խղճալիքը ձեռացապիր են տալիս, թե հետո կամեին լինել
կեկղեցական պաշտոնյայք, բայց այժմ ցանկանում են ուսումն
առնուլ, բայց ոչ. կառավարութիւնը անհամար է դորան,
տեղում. այդ ևս շատ է որքան գիտութիւն ունեք: Հայտնի
բան է, որքան տղետ լինին սոքա, այնքան ևս ավելի կաշառք
կտան քահանայանալու ժամանակին և կուրորեն կհնա-
ղանդին ¹:

Ո՛վ հրատարակող աղգաշահ օրագրի, գրեցի Ձեզ այս պա-
տահարը (որ կարելի է լսած լինեք) և խնդրում եմ արձա-
նացնել նորան Ձեր թերթերի մեջ ազգի առաջև, մանավանդ
այն անմեղների այսքան անարժան չարչարանքը, որ բարե-
միտ քրիստոնյա ընթերցողքը կարեկցեն և օգնեն անիրավա-
բար հալածվածներին: Հույս ունինք մեր մարդասեր կաթողի-
կոսից, որ նա եթե դրամով ձեռնհաս չլինի այս անբաղդ
հայազգի զավակներին, գոնե չփակե և նոցա ճանապարհը:
Ճշմարտութեան հակառակորդները հրավիրում եմ հանդես գալ
և ցուցանել յուրյանց քաջութիւնը, տղամարդութիւնը, թե կա
մի այդպիսի բան դոցա մեջ. բայց բռնութեամբ հալածել ան-
մեղ մանուկները համարում ենք մի վատթար, կանացի թու-
լութիւն և անզորութիւն: Ձեզանից, պարոն Հրատարակող,
խնդրում ենք օր մի առաջ ավանդել մեր նամակը ազգի գի-
տութեանը, թող Հյուսիսամիայլը արձակի յուր կարող թեւերը և
սարսափ տարածե բռնավորի և չարագործի վերա: Եթե նապո-
լեոն առաջինի համար պարծանք էր յուր զենքը, որով ջախ-
ջախեց նա ինկվիզիցիոնի զորութիւնը Սպանիայի մեջ, ապա
մի՞թե Ձեր գրիչը չէ բերելու Ձեզ այն պարծանքը, որով պետք
է խորտակվի մեր արեղանների բռնակալութիւնը և դավաճա-
նութիւնը. եթե ոչ այժմ, գոնե գալոց օրերում կզարթնի հայը

¹ Այս հոգևորների ուսել խմելը ալգիների մեջ, կռճանիս, Թեկեթ,
Միրանավոր, Շահնաբատ և Նոջիվանքումը շուտով կգրեմ Ձեզ լիովին, որ
պետք է Թիֆլիզի պարծանքի համար:

յուր մահաքուն թմրությունից և նոցա նանիկները մի կողմ ձգելով, կաղաղակե. «Խաղաղություն քո հողացած ոսկրներին, ո՛ր Հյուսիսափայլ»:

Մնացեք բարով, աղգաշեն մարդ, մնացեք բարով Հ... Հ...¹
մնամ միշտ անձնադիր բարեկամ ձեր

Գարեգին Ստեփանոսյան Փարսադանյանց բիֆլիզցի:

Այսքան մեր պատվելի նամակագիրը: Այժմ մի փոքր քրքրենք այս նամակի բովանդակությունը և հաշիվ ու համար տանք մեզ թե ի՞նչ պիտո է եզրակացնել դորանից թե Թիֆլիզի առաջնորդի, թե հոգևոր դպրոցի և թե նորա հոգաբարձուների վերա: Առաջինի անզգաստությունը և ամենևին անհոգությունը յուր հոգևոր խնամարկության տակ եղած դըպրոցի բարեկարգության մասին, երևում է արդեն մեր նամակագրի համարյա՝ թե յուրաքանչյուր տողից. նույն իսկ շարժող հոգին, որով պիտո է դաստիարակվելին մանուկները դպրոցի մեջ, երևում է շատ ախտավոր և անարժան մեր լուսավոր ժամանակին, մի կատաղի ֆանատիկոսություն, մի հոգի ընդդեմ ամենայն քրիստոնեական ուսման, որ վերացնելով ստրկության օրենքը, տվել է մեզ ազատության օրենք: Եվ ինչպես Քրիստոսը, մեր երկնավոր վարդապետը ուսուցել է մեզ, նույնպես ուսուցել են և պարտական էին ուսուցանել բոլոր առողջամիտ ականավոր հարքը քրիստոսյան եկեղեցու Հայաստանի մեջ: Բայց աշակերտքը թիֆլիզյան հոգևոր դըպրոցի հալածվում են, հայհոյվում են փաստորականք, Շանշյանք, Նազարյանք, չգիտեմ, ինչյա՛նք և անարգաբար դպրոցից քարշվում են դեպի պոլիցիա, որովհետև հանցավորք էին փաստորական, Շանշյան և Նազարյան անունով: Ո՞վ են այդ աղանդապետքը փաստորականք, Շանշյանք և Նազարյանք, և ի՞նչ է դոցա աղանդի իսկությունը, դոցա մոլորությունքը և արտուղությունքը քրիստոնեական ուսումից. Փարսադանյանցի նամակից ոչինչ լսում չենք, բացի լոկ անուններից, որ հայհոյության պատճառով լավում են Թիֆլիզի հոգևոր ուսումնա-

¹ Այստեղ երկու բառ է դրել մեր նամակագիրը, որ շատ շատ կարող էր լինել մեր գերեզմանի վերա տապանագիր. բայց մեր կենդանությանը ալգպիսի բառեր հանձն առնուլ կարող չենք, ուր մնաց, թույլ տալ տպել մեր օրագրի մեջ:

բանի մեջ: Բայց ասենք մեր սիրելի հայերին նախ և առաջ որ պատտորականք (Տաճկաստանի հայերի մեջ մանավանդ) ասվում են այժմյան պրոտեստանտք (այսինքն բնդդիմախոսք պապականության): Բառս պատտորական կամի ասել մի շատ խեղացի բան, այսինքն հովվական, որովհետև պրոտեստանտների քահանայքը լատինական (pastor) պատտոր բառով ասվում են հովիվք, որ ավելի գործածական է հասարակ կեցության մեջ քան թե բուն դերմանական ձայները geistlicher Hirt (հոգևոր հովիվ): Հայերի թանձր տգիտությունը հարկավոր էր միայն, այդ պատտորական բառին տալ մի թյուր, աղանդավոր խորհուրդ. այդ միևնույն էր, եթե ասեինք, թե Հայք հովվականք չեն, այլ զայլականք, նոցա քահանայքը հովիվներ չէին, այլ զայլեր, տես, պատվելի հայ ազգ, թե քո աբեղաների տգիտությամբ որտեղ է հասանում եղբակացությունը, ամենեկին պարզ տրամաբանելով: Սորանից բացահայտ է, որ փաստորականքը աղանդավորք չեն, այլ մի այնպիսի քրիստոնյա ազգ, որ յուր քահանաներին, բուն սուրբ դրքն խոսքով, ասում է հովիվք: Ո՛վ են Շանշյանքը և Նազարյանքը. այդպիսի հերձվածք չկան պատմության մեջ, ոչ Եվրոպայումը և ոչ Հայաստանումը: Արդարև եղել է մի պարոն Պետրոս Շանշյան մի ժամանակ Թիֆլիզի մեջ ամենայն բարեմբտությամբ և յուր հասկացողության շափ աշխատելով Հայոց մանուկների իմացական ու բարոյական դաստիարակության վերա, և մի քանի ժամանակ, ինչպես լսում ենք մեր նամակագրի նամակից, հանդուցյալ ներսես կաթողիկոսի կոնդակով վերադառնալ Թիֆլիզյան հոգևոր դպրոցի: Առանց մի մասնավոր բարեկամություն ունելու պ. Պետրոսի Շանշյանի հետ, լինելով նորան մի լոկ ծանոթ անձն, պարտական եմ ասել այստեղ, թե ինչ խեղացի հայ Թիֆլիզից թե գրով և թե բերանով խոսակցություն է ունեցել իմ հետ, միշտ լսած եմ ես նորա գովասանությունը և շնորհակալություն նորանից: Ուրեմն այս պատվելի պարոնը, պիտո է մի հայրենասեր և օգտակար, մի բարեպաշտ և առաքինի գործ արած լինի Թիֆլիզեցոց մեջ, որ յուր անձը սիրելի ու հարգելի է կացուցել նոցա: Հերձվածող, վնասակար մարդ լինելով, կարող չէր նա ոչ սեր և ոչ հարգություն գտանել:

Բայց պ. Շանշյանցը իբրև մոլորեցուցիչ վնասակար մարդ, հոգևոր դպրոցի վերատեսչության պաշտոնից. ապա որպես նորա հետևող հալածվում է պ. Քաթանյանցը, հետո անարգաբար դեպի պոլիցիա են քարշվում դպրոցի որդեգիրքը, ըստ որում հանցավորք էին կուսակցությանը Շանշյան կամ Նաղարյան հերձվածողության: Թո՛ղ այժմ ատյան դա Նաղարյանցը, որ մինչև այսօր ազդի մեծ բաժնից, թեև ամենավատթար բաժնիցը հայհոյվելով և նույնիսկ Թիֆլիզի առաջնորդի վայր ի վերո անմիտ թշնամական բամբասանքներից հալածված և վնասված, լուռ է մնացել մինչև այժմ, ընդարձակելով յուր սիրտը քրիստոնեական համբերությամբ և ներողամտությամբ. թող նա խոսե յուր պատվելի ազգի դատաստանի առաջև այսպես. «ով հայրենական ժողովուրդ իմ, ահա ես և ահա դու. համարձակ երեսով կանդնած եմ քո առաջև և հարցանում եմ քեզանից. ասա՛ դու ինձ, ձեռքդ դնելով սրտիդ վերա և աչքդ վեր բարձրացնելով դեպի երկինք, դեպի քո Արարչի անաշու դատաստանի աթոռը. ասա՛ դու ինձ արդարությամբ և խղճմտությամբ, ե՛րբ իբրև քո մատենագիր ուսուցիչ, երբ իբրև օր ու գիշեր քո համար աշխատող օրագիր հեղինակ, մոլորեցուցել եմ քեզ, ուսուցանելով մի բան, որ ընդդեմ էր քո և իմ Քրիստոսի վարդապետությանը: Այո՛ սիրելով և պատվելով քեզ իբրև մարդ և Քրիստոսի խոստովանող, համարձակ լեզվով հանդիմանել եմ քեզ իբրև եղբայր, ցավեցուցել եմ քեզ իբրև բժիշկ այրելով ու խաբելով քո շատ և փտած վերքերը, բայց այդ բոլորը պարտական եմ եղել ես առնել, աչքիս առաջև պահելով քո առողջության հետքեր և իմ սուրբ պաշտոնի խորհուրդը: Այո՛ ես քո խորհուրդը և իմ սուրբ պաշտոնի խորհուրդը՝ արեղանելույր առաջնորդներին, քո տգետ և դարանագործ արեղանելին, քո քրիստոնյա փարիսեցիներին հանդիպել եմ խիստ և կծու խոսքերով, և այլապես կարող չէի, որովհետև դոքա այդքան երկար ժամանակ և այժմ ես ամենայն հնար գործ են դրած և գործ են դնում պահել քեզ միշտ անասնության մեջ, որ դու երբեք աչք չբանաս և չճանաչես քո մարդկային և քրիստոնեական արժանավորությունը. բայց դու ասա՛ ինձ, քրիստոնեական արժանավորությունը եմ քեզ, խաբեություն մի՞թե ինչ որ ես մինչև այժմ ուսուցել եմ քեզ, խաբեություն է եղել, կամ թե դորանով կամեցած եմ ես քեզնից մի թանկ

գին ստանալ իմ ուսուցչական պաշտոնիս համար. ասա ինձ,
 խնդրեմ, ի՛նչ վնաս, ի՛նչ մոլորութիւն, ի՛նչ աստվածընդդեմ
 և բարոյականութեան հակառակ միտք, խոսք, զրույց տեսել
 եւ դու իմ գրվածների մեջ. քո տգիտութեան շափով ու կշռով
 չեմ վարվել ես, իմ պատմական գործերի մեջ իբրեւ բարեխիղճ
 աշխատավոր հեղինակ եմ ըրոպական հարազատ ազբյուրներից
 քննելով և զննելով հանել եմ ճշմարտութիւնը և հստակ ու
 մշակած աշխարհաբար լեզվով հանձնել եմ քեզ: Ես կատա-
 րել եմ իմ պարտականութիւնը գիտութեան դատաստանի
 առաջ, ամենակին հեռանալով այն հայազգի պապական արե-
 ղանների գրվածներից, ուստի դու այսքան տարիք թույն ես
 միայն ճաշակել: Մի գործ եմ կատարել և քո համար, որ ոչ
 մինը քո որդիներից մինչև այժմ կատարել չէ քո այժմյան
 լուսավորութեան համար, միայն թե կամենայիր դու պատ-
 րաստական սրտով վաշելել քո համար զարգարած հոգևոր
 սեղանը: Այս բոլորը անմտաբար մոռանալով, կամ թե այս
 իմ բոլոր, արշուճով վաստակած վաստակներիս համար, որ
 մտել են քո գնահատումը, կամի՞ս դու ինձ հայհոյել մոլորեց-
 նողի և աղանդավոր և վնասակար մարդու անունով. կամի՞ս
 դու թույլ տալ որ մի տգետ արեղա, յուր թշվառ անձնական
 թշնամութեան և վրեժխնդրութեան կամքը լցուցանելու համար,
 աղանդավորի անուն զնն իմ վերա և իմ անունով հալածե
 Հայոց զավակները, որ ըմբռնված էին իմ գրվածների և Հյու-
 սիսափայլի լուսից, որ խնդրում էին և սիրում էին այդ լույսը: Ոչ,
 ոչ, քա՛վ լիցի, աղաղակում ես դու մատնացույց առնելով
 ինձ այն գրավոր շնորհակալութիւնքը և այն մտերիմ սիրո
 վկայութիւնքը որ զանազան ժամանակներում ուղարկած ես
 դու ինձ: Չունիմ տեղիք տարակուսելու քո անկեղծութեան
 վերա, իմ սիրելի ազգ. մանավանդ որ քո խոսքը և մի գեղե-
 ցիկ գործ դարձավ սույն իսկ տարու մեջ: Սորանից բացա-
 հայտ է արդեն, մինչև ձեռքով շոշափելի, որ մեծապատիւ
 առաջնորդը Թիֆլիզի յուր անձնական կույր թշնամութեամբ
 դեպի այս և այն մարդը առաջնորդվելով կառավարում է յուր
 ուսումնարանը և կամենալով ծածկել յուր գործերի կեղտոտ
 աղբյուրքը, պատտորականութեան և չգիտեմ թե ինչ մտացա-
 ծին հերձվածական անունով հալածում է թե Շանշյանցի և թե

Նազարյանցի ընդունողքը: Հերձվածողը ինքն է, եթե կամի լսել մեղանից, որ չենք վախենում նորանից կա դեռևս օրենք, եթե ոչ հայերի մեջ, գոնյա մեր երկրորդապատիվ հայրենի Ռուսաստանի մեջ, և այդ օրենքի պահապանը է ինքն Ալեքսանդր Նիկողաևիչը, մեր արդար, բարի, ազատասեր օգոստափառ կայսրը. ոչ ես և ոչ հայոց ազգը, լինելով այդպիսի թագավորի քաղաքացի, կարող չենք լինել մի Հայոց արքեպիսկոպոսի ստրուկ և ծառա: Ասացինք. թո՛ղ լսե և լավ որոճա յուր մտքի մեջ: Մեք կպատվինք մի հայոց արքեպիսկոպոս, եթե նա ինքը գիտեր յուր անձը պատվել և յուր բարոյական և հոգևոր առաքինությունը պատվելի կացուցանել ազգի մեջ:

Այժմ խոսենք նույն իսկ դպրոցի և նորա հոգաբարձուների վերա: Դպրոց ասած բանը պիտո է գտանվի մի բարոյական կրթած ու դաստիարակված գիտնական մարդու իշխանության տակ, որ գիտե թե ինչ խորհուրդ ունեւր մանուկների դաստիարակությանը մի ազգի ապագայի համար: Մի այդպիսի մարդ է Թիֆլիզի առաջնորդը: Եպիսկոպոսք և արքեպիսկոպոսք շատ կան հայերի մեջ, որովհետև այդպիսի պատվւնների հասանելու համար ոչինչ կրթություն հարկավոր է հայերի մեջ, ուրեմն և դորանով բան ապացուցանել կարելի է: Մեք խոսում ենք այս տեղ ներքին արժանավորության և իմացական ու բարոյական արժանավորության վերա, այն հոգևոր պաշտոնավորի վերա, որ պիտո է իշխանական հրաման վա՜նք մի հոգևոր դպրոցի մեջ: Պ. Շանշյանցը իբրև կանդիդատ իրավաբանության Մոսկվայի համալսարանի, և Ֆրանսիայում մի քանի ժամանակ կացած մարդ, այո՛ և երկար տարիք առանձնապես պարապելով ուսման, իհարկե կարող էր շատ պիտանի լինել հայերին Թիֆլիզի հոգևոր դպրոցի մեջ, փոքր ի շատե եվրոպական առողջամիտ ուղղություն տալով Հայոց մանուկներին և արդարև պիտանի է եղել, բոլոր թիֆլիզեցոց բարեմիտների միաբան վկայությամբ. բայց այսպիսի մարդը անպիտան է համարվել Թիֆլիզի առաջնորդի աչքում, ըստ որում հակառակ է գտանվել նորա հոգու ուղղությանը և ի՛նչ ֆանատիկոս ուղղություն, աղանդավոր էր Շանշյանցը, ավերում էր մանուկների միտքը, նույնպես վնասակար էր Բաթանյանցը որպես հետևող Շանշյանցի աղանդին. ուրեմն,

Ներկուքին ևս պիտո էր արձակել, և արձակում են: Կարգում են Շանշիևի փոխանակ մի նավարեկված մարդ, պ. Արզանյանցին, այն պայմանով, որ նա հրով ու սրով բնաջինջ առնե աշակերտների մեջ Շանշյանցի, Քաթանյանցի, այո՛ և հեռավոր Նազարյանցի վատթար հոգին, որ մտել է աշակերտների մեջ: Բայց սոքա աղաչավոր են լինում մեծավորների առաջև, հետ պահել կամ դարձուցանել զոնյա բարեմիտ Քաթանյանցը, որ եղած է աշակերտների բարեկամ և պաշտպան, անխրավ հալածանքի երեսից: Աշակերտների աղաչանքը մերժում է վերատեսուչ Արզանյանցը. նոքա կամին դիմել խնդրվաճքով յուրյանց հոգևոր հոր ոտքը, բայց սա չկամի իսկույն ունկն մատուցանել աշակերտների ցավին. «նոցա հիմարությունը վաղը կտեսնե» — ասում է պատվական սուրբ հայրը: Աշակերտքը ետ են դառնում դեպի դպրոց, յուրյանց քնակարանքը, որ հանգստանան, բայց ի՛նչ. պոլիցիայից կվարտալնիյ և դեսյատնիկ, նոցա առաջնորդ թայիրյանցը ընդունում են ապստամբ աշակերտքը, թակում են նորանց տմարդարար, և հինգ աշակերտ ուղարկվում է պոլիցիա: Սքանչելի դործ, ասիական բարբարոսություն արժանի պործ: Մարդ կարգալու՜ ալսպիսի լուրեր ստիպվում է մտածել, թե դոքա երազի մեջ անցը էին. բայց ոչ. մի խոշոր ստուգություն, բուն արթնություն մեջ: Հարցանում ենք, ի՛նչ դործ ունի կվարտալնիյ կամ դեսյատնիկ մարդը մի դպրոցի մեջ, որ ինքը պիտո է ունենալ յուր առանձին տնտեսությունը թե պատժի և թե վարձատրության մասին դեպի յուր արժանի կամ պարտական աշակերտքը: Թայիրյանցը իբրև հոգաբարձու ուսումնարանի չունեի համարձակություն պոլիցիական մեծավորի պաշտոն կատարել հոգևոր դպրոցի պատերի մեջ. դորանով նա անարդում էր և անարգել է դպրոցը, շինելով նորան հանցավորների տուն. բայց այդտեղ դառնվում էին հայոց մանուկներ և ուսման աշակերտք, ուրեմն դաստիարակության սուրբ տեղում, որ կարելի չէ պղծել ալսպիսի բռնակալ ընթացքով աշակերտները քարշելով դեպի պոլիցիայի բանտը: Անջնչելի խայտառակություն թե հոգաբարձուի և թե հոգևոր դպրոցի առաջնորդի անվանը: Նրկորդ, հարցանում ենք, ի՛նչպես է վստահացել հոգաբարձուն առանց առաջնորդի թույլտվության ալսպիս

անարգաբար վարվիլ հայոց մանուկների հետ և երեկոյի 10 ժամուն տնից ու տեղից անգթաբար դուրս քարշ տալ աշակերտքը դեպի պոլիցիա. մի հոգևոր դպրոցի աշխարհական հոգաբարձու կարող էր խոսել ու տեղիք ունենալ դպրոցի նյութական անտեսության մեջ: Եթե ուսումն ու դաստիարակություն ստացած մարդ էր, կարող էր այո՛ փոքրի շատեհ հսկել և դասատուության ընթացքի վերա, առանց մեջ խառնելիլու: Բայց Թալիրյանցը մի տղետ և անուս մարդ, դարձել է ամենակարող հրամայող Թիֆլիզի հոգևոր դպրոցի մեջ, մինչև որ և հայոց վիճակավոր արքեպիսկոպոսը պիտո է գլուխ խոնարհեցնե նորան, և նորա կամքով վարվի, ըստ որում — ինչպես ասում է մեր նամակագիրը — այդ երկուքը գիտելով միմյանց գաղտնիք, ստիպված են միմյանց տեղիք տալ: Վայ քեզ, Հայոց ազգ, Թիֆլիզի մեջ. ի՛նչպես կարողանում ես ականատես լինել այդքան խայտառակության, առանց երկինք ու երկիր դրոգելու և ամենայն հնար գործ դնելու հարգի կացուցանել քո իրավունքը: Մի՞թե քո զավակների ամոթը և անարգությունը չէ քո սեփականը: Գիտեմ ես, ով հայ ազգ, դու համբերել ես քո ասիական բռնակալների իշխանության տակ ամենայն տեսակ անարգության. քո կինը և աղջիկը բռնությանը դուրս է քարշել քո տանից պարսիկ խանը և Շահը, դու եղել ես մի անմոռն (լուռ) անասուն նորա տմարդության գավաղանի տակ. բայց ես զարմանում եմ քո վերա, որ դու այդքան անպատվություն կարող ես տանել քո հատուկ հայի ձեռքից մի քրիստոնյա տերության մեջ. հրեշտակային համբերություն. ոչ մի դատապարտելի համբերություն: Ես ներում չեմ քեզ, մինչև այդ աստիճան մոռանալ քո մարդկության պատիվը, քո զավակների պատիվը, քո ազգի պատիվը: Պատճառ, քո անպատվությանը, անպատվում ես դու և ինձ, և քո բոլոր անվանակից և ազգակից հասարակությունը բոլոր աշխարհի վերա: Պահանջում եմ ձեզանից մեր բոլոր հայկական ազգի անունով, որ դուք, իմ սիրելի մեր բոլոր հայկական ազգի անունով, որ դուք, իմ սիրելի Թիֆլիզեցի եղբարք, օր մի հառաջ շտապեք քերել Ձեր վերաթիֆլիզեցի եղբարք, օր մի հառաջ շտապեք քերել Ձեր վերայից այն անլսելի խայտառակությունը, որ հասել է Ձեզ անցյալ տարու նոյեմբերի 2-ին:

Ստ. Նազարյանց:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջաբան	3
Գլուխ առաջին—«Հյուսիսստիայլ»-ի հիմնադրման սլառ- մությունը	9
Գլուխ երկրորդ — 60-ական թվականները արևելահայ սլաւրերական մամուլը և «Հյուսիսստիայլ»-ը	48
Գլուխ երրորդ — «Հյուսիսստիայլ»-ում արժանի ված խըն- դերները	87
Գլուխ չորրորդ — Նալբանդյանը և «Հյուսիսստիայլ»-ը	186
Գլուխ հինգերորդ — Նաղարյանը խմբագիրը	209
Հավելված	233



ՄԱՐԳՈ ՀԱՄԱՐՁՈՒՄԻ ՄԵԹԱՐՑԱՆ

«ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼ» ԱՄՍԱԳԻՐԸ

Հրատ. խմբագիր՝ Արմ. Շ. Հակոբյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան
Վերստուկող սրբագրել՝ Խ. Պ. Ղադիրյան


ՎՅ 05224

Պատվեր 1219

Տիրաժ 4000

Եր. Գ. Լ. Խմբ.-հրատ. խորհրդի որոշում № 1, 7/1 1958 թ.,
Հանձնված է արտադրության 26/11-1958 թ.: Ստորագրված է տպագրու-
թյան 20/V-1958 թ.: Թուղթ $84 \times 108 \frac{1}{32}$: Տպագր. 16,5 մ. + 7 ներդիր
= 13,89 պլաթ. մ.: Հաշվ.-հրատ. 12,06 մ.: Հեղ. 11,4 մ.:
Գինը կազմով՝ 9 ռ. 25 կ.

Երևանի Պետական համալսարանի հրատարակչության տպարան,
Կերովի փող. № 12:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0024072

ЦЕНА

11

4816